Եղիշե Չարենց

ԵՐԵՎԱՆԻ ՈՒՂՂԻՉ ՏՆԻՑ

Իրերի դժբախտ բերումով ես առիթ ունեցա մոտ վեց ամսվա ընթացքում բավականին ծանոթանալու Երևանի Ուղղիչ Տան կյանքին, և այժմ ես ուզում եմ նկարագրել այդ հետաքրքիր վայրը, որը թեկուզ կա, գոյություն ունի և ապրում է մեր աչքի առաջ իր յուրօրինակ կյանքով, սակայն — ես համոզված կարող եմ այս ասել — ոչ միայն լայն մասսաները, այլև հասարակական կյանքով ապրող մահկանացուների գերազանց տոկոսը ոչ մի հասկացողություն չունի այդ աշխարհի մասին: Իմ ստացած տպավորությունները ես այժմ գրի եմ
առնում «հիշողությամբ», որովհետև, դժբախտաբար, ժամանակին հնարավորություն չեմ ունեցել գրավոր «նյութեր հավաքելու», ինչպես այդ անում են հմուտ գրականագետները, երբ ընկնում են որևէ արտասովոր աշխարհ: Աներաժեշտ է ասել նաև, որ ես այստեղ պատմելու եմ միմիայն «տպավորություններ» և բնավ հավակնություն չունեմ զբաղվելու խորհրդային կյանքի այդ, ես կասեի զարմանալի անկյան ուսումնասիրությամբ: Այս իմաստով իմ դիտողությունները կունենան անշուշտ բավականին սուբյեկտիվ բնույթ, սակայն ես մխիթարում եմ ինձ այն հույսով, որ դրանք զուրկ չեն լինի որոշ «մարդկային» հետաքրքրությունից: Բացի այս՝ իմ տպավորությունները ես գրի եմ առնում այժմ սեփական հաճույքի համար, քանի որ ինձ քաղցր տխրություն է պատում յուրաքանչյուր անգամ, երբ ես հիշում եմ Երևանի Ուղղիչ Տունը և այն հասարակ մարդկանց, որոնք բավականին ժամանակ ինձ ընկերներ եղան այդ թեկուզև զարմանալի ու յուրօրինակ, բայց այնուամենայնիվ փակ աշխարհում...

I. Մուտքը, ձանձրույթը, Մնոյի քամանչան և հանելուկային ծափահարությունները

1926 թ. սեպտեմբերի 5-ի գիշերը, ժամը 12-ին, քրեական բավականին ծանր մի հանցանքի համար ես ձերբակալվեցի և տարվեցի Երևանի միլիցիատան քրեական բաժինը: Ուղիղ մի շաբաթ այդտեղ մնալուց հետո, մի քամի ու փոշի երեկո, Երևանի միլիցիապետի ուղեկցությամբ ես տեղափոխվեցի Ուղղիչ Տունը, որ գտնվում է այսպես կոչված «Նոր կայարարանի» դիմացը, զորանոցների կողքին:

Հարկավոր է ասել, որ ես մինչև այդ ոչ մի հասկացողություն չունեի մեր ուղղիչ տների մասին, ոչ մի անգամ չէի եղել նրանցում: Գիտեի միայն, որ նախկին բանտերը մեզանում վերածված են հիմա ուղղիչ տների, իսկ թե ի՛նչ են ներկայացնում նրանք իրենցից՝ այդ մութ էր ինձ համար այնքան, որքան մութ ու անհրապույր էր այն երեկոն, երբ միլիցիատան կառքը կանգ առավ Ուղղիչ Տան փակ դարբասների առջև, և ես կառքի լապտերի աղոտ լույսի ներքո կարդացի ձախ կողմից փակցրած քառակուսի ցուցանակը. —

Ն.Գ.Ժ.Կ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ

ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ

Դարբասի փոքրիկ դռան վերևը կար մի երկաթյա թակոց, որով և միլիցիապետը թակեց Ուղղիչ Տան դուռը: Բախումից անմիջապես հետո դռան ձախ կողմից բացվեց մի փոքրիկ պատուհան, որի միջից երևաց զինվորականի գլխարկով մի դեմք: Ցած ձայնով ասվեցին ինչ-որ խոսքեր, որից հետո դուռը բացվեց, և մենք մտանք Ուղղիչ Տունը — առաջ ես, հետո միլիցիապետը: Կյանքի այլ պարագաներում առաջինը մտնելը նշան է հարգանքի, իսկ այստեղ այդ, իհարկե, մի քիչ այլ իմաստ ուներ, իբրև մարդկային հարաբերություն... Այս ամենը թողեց ինձ վրա ծայր աստիճանի ծանր, ճնշող տպավորություն. — մշուշոտ, վայրկենական զառանցանքի նման մտքիցս անցավ Ֆյոդոր Դոստոևսկու «Մեռյալ տունը», և ինձ թվաց, թե կյանքը, աշխարհը, իմ բոլոր կապերն ու ծանոթությունները, անգամ արևն ու կապուտակ երկինքը մնացին մեր հետևից փակված դարբասի այն կողմը, իսկ թե ի՛նչ էր ինձ սպասում դարբասի այս կողմը — այդ մութն էր դեռ ինձ համար և այդ մթությամբ՝ ճնշող ու անձկալի:

— Դեպի ձա՛խ, — կարգադրեց միլիցիապետը, և մենք շուռ եկանք դեպի ձախ և մտանք Ուղղիչ Տան հիվանդանոցը, ուր ինձ հատկացվեց այսպես կոչված «մեկուսացման սենյակներից» մեկը: Միլիցիապետը գլուխ տվեց և հեռացավ, դուռը փակվեց — և ես մնացի ինքս ինձ հետ՝ մեկուսացման սենյակում: Դա մի փոքր սենյակ էր, ուր դրված կար մի երկաթյա մահճակալ և մի նստարան: Մի բան, որ ծայր աստիճանի ճնշող ազդեցություն է ունենում ինձ վրա — փոքրիկ սենյակներն են: Չգիտեմ ինչու, ես սիրում եմ սրահանման, կամ սարայանման սենյակներ՝ առանց կահավորության: Մի մահճակալ, մի նստարան, մի գրասեղան — այս է եղել իմ ամբողջ երազանքը կահավորության ասպարեզում: Այնպես որ այս տեսակետից ես այնքան էլ դժգոհելու իրավունք չունեի. — պակասում էր միայն գրասեղանը, այն էլ հույս ունեի մյուս օրը խնդրելու: Ապա այդ սենյակն ուներ մի այլ հարմարություն ևս, որը կիսով չափ բռնում էր նրա հիմնական պակասության, փոքրության, տեղը: Դա — ծայր աստիճանի բարձր առաստաղն էր, — մի բան, որ նույնպես պատճառում է ինձ անասելի բավականություն: Միլիցիապետի հեռանալուց հետո ես առաջին հերթին չափեցի սենյակի մեծությունը. — 8 քայլ երկարություն, 4 քայլ լայնություն: Հետո նայեցի լամպին — բարձր էր կախված: — Այնքան, որ նույնիսկ նստարանի վրա կանգնած ամենաբարձրահասակ մարդը չէր կարող հասնել: «Հարկավոր է լամպը մի փոքր իջեցնել, որպեսզի հնարավոր լինի պարապել» — մտածեցի ես, սակայն հետո իմացա, որ լամպը դիտմամբ է բարձր կախված. ո՞վ իմանա ի՛նչ կալանավորներ են ընկնում այս «մեկուսացման սենյակը». տրամադրության վատ ժամանակ կարող են

իրենց վնասել... Մոռացա պատուհանը. — սենյակն ուներ մի բավականին մեծ պատուհան, որ նայում էր դեպի բակը: Չգիտեի՝ գիշերը կարելի է բանալ, թե ոչ: Եվ քանի որ նման տեղերում մարդ ավելի շուտ տրամադրվում է արգելված բաներ ենթադրել — որոշեցի, որ, երևի, արգելված է, և իմ պատուհանից բացվող տեսարանի ուսումնասիրության խնդիրը թողի հետևյալ օրվան, երբ հիմնովին կծանոթանամ Ուղղիչ Տան ներքին կանոնադրությանը:

— Ահա՛ և Ուղղիչ Տունը, — մտածեցի ես սենյակն ուսումնասիրելուց հետո, նստեցի մահճակալի վրա և սկսեցի նայել դիմացի պատին: Լուռ էր. ոչ մի ձայն: Ժամը կլիներ երեկոյան յոթը, և ես չգիտեի, թե ինչպես պիտի լուսացնեմ այդ անտանելի գիշերը: «Լավ, — մտածում էի ես, — ենթադրենք այս գիշեր մի կերպ լուսացրի — բա վա՞ղը, մյուս օ՞րը, և ո՞վգիտե, թե քանի՛, քանի՛ այսպիսի գիշերներ»: Ծանր, քարի նման, իջավ իմ կրծքին ու ճնշեց իմ սիրտը մարդուս ամենամեծ թշնամին աշխարհում — ձանձրույթը: Կարելի է ընտելանալ տխրությանը, անգամ սիրել տխրությունը, կարելի է սիրել անհուսությունը և թախիծը, — բայց ընտելանալ ձանձրույթին՝ դա նշանակում է ընտելանալ մահվան: «Իսկ, հետաքրքիր է, ի՞նչ է կատարվում այնտեղ — այն մյուս կորպուսներում, կամերաներում» — մտածեցի ես, զգալով, որ միտքս սկսում է արդեն ելք փնտրել մահացու ձանձրույթից: Ու բնազդով վեր կացա, մոտեցա պատուհանին, բաց արի պատուհանը: Եվ այն, ինչ բացվեց իմ աչքերի առաջ և հասավ իմ լսողությանը՝ թողեց ինձ վրա մի այնպիսի տպավորություն, ինչպիսի տպավորություն կարող է թողնել, ինչպես ենթադրվում է ընդհանրապես, անջուր անապատն ընկած բեդվինի վրա կանաչ օազիսը: Բաց պատուհանի միջից ես տեսա դիմացը մի շարք լուսավոր պատուհաններ և այդ պատուհաններից իմ ականջին հասան երգի, մանդոլինի, սրինգի, քամանչի և բարձր խոսակցության ու ծիծաղի ձայներ: Այդ բոլոր ձայների միջից ամենից հմայիչն էր սակայն քամանչի կրծքային, թավ ձայնը, որ քսվում էր սրտիս, ինչպես վիոլոնի քաղցրաթախիծ նվագ: Քամանչի ձայնը գալիս էր հենց դիմացի պատուհանից, առաջին հարկից,— իսկ մյուս ձայները — երկրորդ հարկից: Ինձ բավականին տարօրինակ և անհասկանալի թվաց այն, որ վերի հարկի պատուհաններից մի քանիսում լույսը կրկնակի վառ էր, քան մյուս պատուհաններինը: Ինչո՞վ բացատրել այդ: Եվ ապա՝ ինձ բավականին շփոթեցրեց և մի այլ հանգամանք. — երգի, մանդոլինի և սրինգի ձայները գալիս էին ոչ թե անմիջապես վերի պատուհաններից, այլ խորքից. պարզ էր, որ նվագում ու երգում էին ոչ թե հենց այդ պատուհաններն ունեցող կամերաներում, այլ ավելի դենը, ներսում: Այնինչ միանգամայն որոշ էր, որ քամանչա նվագում են ներքևի հարկի հենց այն կամերայում, որին պատկանում է դիմացի պատուհանը: Ես դեռ այս մտքերով էի զբաղված, երբ վերևում հանկարծ նվագն ու երգը դադարեց — և իմ ականջին հասավ... մի բուռն ծափահարություն... Միանգամայն պարզ էր, որ ծափահարում է ոչ թե մի կամերայի բնակչություն — ասենք մի 15 — 20 մարդ, այլ շատ ավելի հոծ, բազմամարդ հասարակություն: Այս բոլորն ինձ համար մութն էր դեռ, համարյա հանելուկ: Ես զանազան ենթադրություններ էի անում: Երևի հավաքվել

ուրախանում են մի մեծ կամերայում, կամ միջանցքում, — մտածում էի ես, երբ հանկարծ ծափահարությունները դադարեցին և վերևի հարկում տիրեց մեռելային լռություն: Ներքևի հարկում միայն, դիմացի կամերայում, դեռ քաղցր լալիս էր իր արևելյան տխրությունը մանկահասակ աղջկա կրծքային ձայնով աներևույթ քամանչան– — և ես զգում էի, որ չկա արդեն այն անտանելի ձանձրույթը, որը մի վայրկյան առաջ սպառնում էր ինձ խեղդել, որ նա արդեն փոխվել է իմ սրտում մի անուշ տխրության... Այդպիսի տխրություն է պատում մարդկային սրտին գարնանային առավոտները, երբ մարդ ելնում է դաշտ ու նայում դեպի հեռուները տանող ճանապարհներին: Եվ ոչ թե ծանր ու ճնշող, այլ թեթև ու հեշտ է այդ տխրությունը, որովհետև նրա միջով մարդ խորը, խորը ճաշակում է կյանքի անհունությունն ու անեզրությունը, զգում է, որ անսահման է կյանքը և կրում է իր մեջ դեռ անհուն ու անսպառ գանձեր ու կարելիություններ: Եվ թող պարադոքս չթվա, եթե ասեմ, որ ըստ էության խորը օպտիմիստական է այդ տխրությունը — այդպիսի՛ ահա խոր օպտիմիստական տխրությամբ է համակված և Բեթհովենի հերոսական երաժշտությունը, որն այնքան սիրում էր Վլադիմիր Իլյիչ Լենինը... Հենված իմ «մեկուսացման սենյակի» պատուհանի գոգին՝ ծարավ ալկոհոլիկի նման ես խմում էի դիմացի պատուհանից սուրացող քամանչի տխրությունը, երբ վերևի պատուհաններից կրկին լսվեց մի բուռն ծափահարություն և, միևնույն ժամանակ, բացվեց իմ սենյակի դուռը և ներս մտավ հիվանդանոցի ծառայողը:

— Թեյ ուզո՞ւմ եք, — ասաց նա մոտենալով և, ժպտալով, ավելացրեց. — Պատուհանը չի կարելի երեկոները բանալ. արգելված է:

— Ի՞նչ ծափահարություն է, — առանց այլևայլության, առանց պատուհանը փակելու, հարցրի ես նրան և ցույց տվի դիմացի պատուհանները,— և ինչո՞ւ է այնտեղ լույսն ավելի պայծառ, քան մյուս կամերաներում:

— Այնտեղ Ուղղիչ Տան կուլտբաժինն է, — պատասխանեց ծառայողը, — այսօր «կենդանի լրագիր» է:

Հիվանդանոցի ծառայողի այս խոսքերից հետո ինձ միանգամայն հասկանալի դարձան թե՛ երգը, թե՛ նվագը, թե՛ծափահարությունները և թե՛ դրանցից հետո տիրող երկար լռությունը:

— Իսկ ո՞վ է նվագում քամանչեն — այնտեղ, — ցույց տվի դիմացի պատուհանը:

— Մեր կալանավորներից է, Մնոն է — շատ լավ կնվագե, չէ՞...

— Շա՛տ լավ, ընկե՛ր, ավելի՛ քան լավ... Իսկ մինչև ե՞րբ կարելի է նվագել...

— Մինչև երբ որ ուզեն — կուզեն թող մինչև լույս նվազեն...

— Թեյ չեմ ուզում, — ասացի ես ծառայողին, — ավելի լավ է թույլ տվեք, որ պատուհանը բաց մնա...

Եվ մենք գաղտնի համաձայնության եկանք, որ ես պատուհանը կիսաբաց կթողնեմ, բայց չեմ մոտենա ու չեմ կանգնի պատուհանի առջև: Հետո նա դուրս գնաց և դուռը ծածկեց:

— Այստեղ այնքան էլ մռայլ չէ, ինչպես մտածում էի ես, կամ ինչպես եղել է քեռի Դոստոևսկու «Մեռյալ տանը» — ասացի ես ինձ և, պառկելով մահճակալի վրա, սկսեցի լսել Մնոյի երաժշտությունը: Այդ երեկո — իմ Ուղղիչ Տուն մտնելուս առաջին երեկոն — ես երկար լսեցի այդ նվագը, և այդ նվագն ինձ համոզեց, որ դեռ չի վերջացել կյանքը, որ անսպառ է նա ու անհուն և կրում է իր մեջ անթիվ ու անսպառ բույրեր ու կարելիություններ: — Շնորհակալություն Մնոյին: Եվ այն հիվանդանոցային ծառայողին, որ բաց արեց իմ առջև վերևի հարկից եկող նվագի ու ծափահարությունների գաղտնիքը: «Այստեղ էլ մարդիկ են ապրում, ինչպես դուրսը, և, ինչպես երևում է, ունեն, ինչպես դուրսը, ապրելու և ուրախանալու բոլոր հնարավորությունները» — ասացի ինքս ինձ և պառկեցի քնելու:

Իսկ հետևյալ առավոտ ես արթնացա բավականին հանգիստ տրամադրությամբ — և այդ օրվանից իմ առջև սկսեց հետզհետե բացվել միանգամայն անծանոթ, աներևակայելի, իր յուրօրինակությամբ և անսպասելիությամբ համարյա զարմանալի մի աշխարհ...

II. Ծաղկանոցը, Ուղղիչ Տան պետը, արհեստանոցները և կալանավոր կանայք

Հետևյալ առավոտ արթնանալիս ես այն զգացումն ունեի, որ մի լավ բան կար երեկ գիշեր քնելուս վայրկյանին և այդ «լավ բանը» ինչ գնով էլ լինի հարկավոր է հիշել: Ու հիշեցի իսկույն - ախ, հա՛, Մնոյի նվագն էր և վերևի ծափահարությունները...

Շտապ հագնվեցի և առաջին հերթին լայն՝ բաց արի պատուհանը և նայեցի... Եվ այն, ինչ որ բացվեց իմ աչքերի առջև — ես չեմ մոռանա երբեք, ինչպես մարդ չի կարող մոռանալ իր կյանքի ամենապայծառ վայրկյանները: — Պարզ, անամպ առավոտ էր, կապույտ երկինք: Իմ պատուհանից մինչև դիմացի կորպուսը բավականին ընդարձակ, մաքուր մի բակ էր և այդ բակի մեջտեղը, իմ պատուհանից դեպի ձախ, ուր բակը ավելի էր լայնանում — փռված էր իմ դեմ մի փոքրիկ, բայց զարմանալի գեղեցիկ ծաղկանոց: Գուցե ոչ մի առանձին բան չկար այդ ծաղկանոցում, գուցե դրսի աշխարհում նա չթողներ իմ վրա և ո՛չ մի տպավորություն, բայց այստեղ, Ուղղիչ Տան պատերի ներսում, ուր ես սպասում էի տեսնել գորշ պատեր ու մռայլ ամայություն, — այստեղ այդ փոքրիկ ծաղկանոցը թողեց ինձ վրա անասելի պայծառ տպավորություն: Նրա շուրջը, ինչպես և բակի այլ տեղերում, դրված էին ցածլիկ, երկարավուն նստարաններ: Մի քանի կալանավորներ նստած դրանց վրա

գիրք կամ թերթ էին կարդում, մի քանի ուրիշները շրջում էին բակում ու զրուցում: Յուրաքանչյուրն իր զգեստներով, քաղաքացիական հագուստով, այնպես որ մի վայրկյան եթե մոռանալու լինեիք Ուղղիչ Տան պատերը՝ կարող էր թվալ՝ թե ազատ քաղաքացիներ են քաղաքային բուլվարում: — Ես դեռ հափշտակված նայում էի այդ փոքրիկ ծաղկանոցին և ագահաբար շնչում առավոտվա թարմ օդը, երբ սենյակիս դուռը բացվեց և ներս մտավ ինձ անծանոթ մի անձնավորություն: Ես հեռացա պատուհանից և ընդունեցի նրա բարևը:

Երեսունհինգին մոտիկ, միջահասակ, լայնաթիկունք, ժամանակից առաջ կիսասպիտակած մազերով: Բաց դեմք: Առաջին հայացքից կարելի է ասել, որ բանվոր է եղել, բայց վաղուց թողել է բանվորությունը: Հագուստը՝ սովորական խորհրդային ծառայողի հագուստ: Քաղաքացիական շալվար, նույն գույնի բլուզ: Զենք չունի:

Նա սեղմեց ձեռքս և ասաց իր ազգանունը: Ես լսել էի, որ այդպես է Ուղղիչ Տան պետի ազգանունը և անմիջապես, օգտվելով առիթից, հարցրի՝ ցույց տալով պատուհանից երևացող բակը.

— Ինձ կարելի՞ է այնտեղ...

— Ոչ, չի՛ կարելի, — ասաց նա հանգիստ՝ ուղիղ նայելով աչքերիս. — այնտեղ քաղաքական կորպուսն է: Ձեզ կարելի է գնալ քրեական կորպուսի բակը, որը ոչնչով վատ չէ դրանից:

Եվ անսպասելի ժպտաց:

— Իսկ ո՞ր ժամերին:

— Երբ որ կամենաք: Առավոտից մինչև երեկո թե՛ կամերաների, թե՛ կորպուսի դռները բաց են: Բակ չի կարելի դուրսգալ միայն ժամը երեկոյան 7-ից հետո, իսկ մինչ այդ կալանավորներն ազատ են: Իսկ գիշերները փակվում են միայն կորպուսի դռները, կամերաների դռները երբեք չեն փակվում: Երեկոները կալանավորները մինչև ժամը 12-ը կարող են գնալ կուլտբաժին, եթե կա ներկայացում կամ կենդանի լրագիր, իսկ եթե ներկայացում-բան չկա՝ մինչև ժամը 9 — 10-ը՝ գրադարան-ընթերցարան:

— Այս ձեր Ուղղիչ Տունն սկսում է ինձ բավականին հետաքրքրել, — ասում եմ ես ժպտալով:

— Դեռ կծանոթանաք, կտեսնեք: Առայժմ ասեք՝ ի՞նչ է ձեզ հարկավոր:

Եվ նա նայում է սենյակին:

— Մի գրասեղան: Ուրիշ ոչինչ:

— Շատ լավ, ես կկարգադրեմ, որ բերեն: Իսկ այժմ ես, գնամ — հարկավոր է բանվորներ ուղարկել:

— Ի՞նչ բանվորներ:

— Դրսի աշխատանքի: Ուղարկում ենք կալանավորներին դրսի աշխատանքի:

— Պահակո՞վ:

— Ոչ: Առանց պահակի: Մշտական թույլտվություններ ենք տալիս, գնում են դրսի աշխատանոցներում աշխատում: Այսօր հարկավոր է թույլտվությունները փոխել, հների ժամանակն անցել է:

Իսկ ի՞նչ արհեստանոցներ են դրանք:

— Դրսում առայժմ ունենք կոշկակարանոց և դերձականոց: Իսկ ներսում՝ հյուսնոց, դարբնոց, խոզանականոց և այլն: Ա՛յ, երբ որ թեյ խմեք վերջացնեք՝ եկեք տեսեք:

Եվ Ուղղիչ Տան պետը ելնում է դուրս:

Ես արագ լվացվում եմ և անմիջապես բակը վազում: Հիվանդանոցից դուրս գալիս՝ աջ կողմը ձգվում է բակը՝ մինչև Ուղղիչ Տան պատը, դիմացը՝ գրասենյակն է, որից այն կողմը՝ քրեական բակի դարբասը, իսկ ձախ կողմը քրեական կորպուսի պատը: Այդ ժամանակ, երբ ես նոր էի ընկել Ուղղիչ Տուն՝ հիվանդանոցից դեպի աջ, կամ դրսից մտնելիս՝ դեպի ձախ, մինչև պատը ձգվող տարածությունը դեռ դատարկ էր. այնտեղ ցցված կար միայն ջրմուղային մի խողովակ, որի առջևը լվացվում էին կալանավորները: Երբ ես դուրս եկա բակ՝ տեսա մի խումբ մարդիկ, որ լվացվում էին այդտեղ, կամ շրջում: Նրանցից մի քանիսը գրավեցին իմ ուշադրությունը:

Մաքուր, կոկ հագնված, սափրված, ինտելիգենտ դեմքերով երիտասարդներ:

— Ովքե՞ր են դրանք, — հարցրի հիվանդանոցի ծառայողին:

— Գրասենյակը կաշխատին:

— Կալանավորնե՞ր են, թե դրսից են գալիս:

— Կալանավորներ են:

«Այ քեզ տարօրինակ կալանավորներ» — մտածեցի ինքս ինձ, — «նայես ի՞նչ գործերով են բռնված»:

Գնացի պետի առանձնասենյակը: Միջակ մեծությամբ մի սենյակ, գրասեղան, մի քանի նստարաններ: Կարծում էի, թե մուտքի առաջ պահակ
կլինի. չկար: Կալանավորներն ազատ մտնում ու դուրս էին գալիս զանազան խնդիրքներով: Երբեմն ներս մտա՝ պետի հետ խոսում էր մի տարիքոտ գյուղացի կալանավոր:

— Ինչո՞ւ համար ես ուզում քաղաք գնալ, — հարցնում էր պետը կալանավորին:

Օղլուշաղս է էկե գեղեն, էրթամ տեսնիմ...

— Է, թող ինքը գա՝ տե՛ս:

Կալանավորը նայում է գետին և ամոթխած ժպտում:

— Լա՛վ, — ասում է պետը՝ այդ պերճախոս փաստարկումից հետո ինքն էլ ժպտալով. — գնա՛ մինչև ժամը 5-ը, բայց չուշանաս: — Քանի՞ տարով ես վճռված:

— Երեք:

— Ինչքա՞ն ես նստել:

— 8 ամիս:

— Խիստ մեկուսացում ունե՞ս:

— Ունեի՝ անցած շաբաթ հանեցին:

— Կերթաս առանց պահակի, բայց տես՝ չխմես:

Պետը զանգահարում է: Կողքի գրասենյակից մտնում է մի պաշտոնյա, որին կարգադրվում է թույլտվություն գրել այդ կալանավորի համար– և կալանավորը պաշտոնյայի հետևից մտնում է գրասենյակ:

— Ուզո՞ւմ եք, — ասում է Ուղղիչ Տան պետը վեր կենալով և դիմելով ինձ. — գնանք մեր արհեստանոցները տեսեք: Ես սիրով համաձայնում եմ, և մենք գնում ենք արհեստանոցները:

Առաջին արհեստանոցը, որ մենք մտնում ենք, դարբնոցն է: Գտնվում է Ուղղիչ Տան մուտքից անմիջապես դեպի աջ: Արհեստանոցը փոքր է, անհարմար: Շինում են երկաթյա մահճակալներ, թիթեղե վառարաններ և այլն:

— Այս տարի մտադիր ենք բոլոր փայտե կոյկաները փոխել երկաթե մահճակալների, — ասում է պետը. — մի մասը, քաղաքական կորպուսում, արդեն փոխել ենք, հիմա կամաց-կամաց փոխելու ենք և մյուսները: Արհեստանոցը փոքր է, մտադիր ենք հիվանդանոցի բակում նոր արհեստանոցներ շինել:

Ապա անցնում ենք հյուսնոցը: Սա ավելի ընդարձակ է, քան դարբնոցը, սակայն նույնպես չի բավարարում պահանջին: Այստեղ շինում են պահարաններ, սեղաններ, կոյկաներ և այլն: Այստեղից մենք ելնում ենք դուրս և գնում խոզանականոցը, որ գտնվում է Ուղղիչ Տան գրասենյակի վերևը՝ երկրորդ հարկում:

Վերի հարկը բարձրանալիս՝ իմ ուշադրությունն են գրավում մի քանի կանայք, բոլորն էլ տարիքոտ: Թեկուզ հագնված են ոչ այնքան էլ վատ, բայց նման են «գաղթական» նանեների:

— Ովքե՞ր են, — հարցնում եմ պետին:

— Կալանավոր կանայք, վերի հարկում են ապրում:

— Ինչո՞ւ են բռնված:

— Մեծ մասամբ «միջնորդության» համար: Իսկ այն մեկը թուրք կին է՝ ամուսնու հետ միասին ձերբակալված է սահմանն անցնելու համար:

— Սալամ-ալեյքում, բաջի՛ , — ժպտալով ասում եմ ես թուրք կնոջը, որի դեմքը ներքևից մինչև քիթը և վերևից մինչև աչքերը ծածկված է:

Նա արագ շրջում է երեսը և մտնում իրենց կամերան: Քահ-քահ նրա հետևից ծիծաղում են հայ կանայք, և մենք մտնում ենք խոզանականոցը:

Խոզանականոցը բավականին ընդարձակ մի աշխատանոց է, բաղկացած երկու սենյակից: Առույգ, ժիր՝ աշխատում են կալանավորները՝ կապույտ գոգնոցներով, և մարդ մոռանում է, որ գտնվում է Ուղղիչ Տանը, հին տերմինով ասած՝ բանտում: Խոզանականոցը Ուղղիչ Տան ամենից լավ դրված արհեստանոցն է, և նա բավականին հասույթ է տալիս ինչպես Ուղղիչ Տանը, այնպես էլ այդտեղ աշխատող կալանավորներին:

Այդտեղից մենք անցնում ենք կողքի սենյակը, ուր ծրարներ են պատրաստում:

— Իսկ երեկոյան, կամ, կուզեք հիմա՝ կարող եք գնալ կուլտբաժինը և տեսնել այնտեղ մեր նկարչական արհեստանոցը, ուր նաև շրջանակներ և այլ իրեր են պատրաստում: Այժմ ինձ ներքևում սպասում է Նիկոլաևը, մեր տեխնիկը, որ նոր արհեստանոցների նախագիծ է պատրաստել: Ուզո՞ւմ եք՝ գնանք միասին տեսնենք:

Մենք դուրս ենք գալիս, որ գնանք գրասենյակ և այդտեղ, միջանցքում, մեզ կրկին հանդիպում են կին կալանավորները: Նրանցից մեկը մոտենում է պետին:

— Ընձի պապիրոս տո՛ւր, — ասում է կարճ ու կտրուկ:

— Ու, թաղե՛մ գլուխդ, — երեսը իբր թե ամոթխածությունից մի կողմ շուռ տալով՝ ասում է նրան մյուսը:

Ուղղիչ Տան պետը տալիս է առաջին կնոջը մի գլանակ և դառնալով դեպի ինձ.

— Ճանաչո՞ւմ ես մեր Անուշին ու Մարգարիտին, — ասում է ժպտալով:

Այս խոսքերի վրա կրկին քահ-քահ ծիծաղում են Մարգարիտն ու Անուշը և մտնում կամերա: Հետագայում, երբ զանազան պատճառներով քաղաքի հետ ունեցած իմ կապը կտրվեց, նրանք լվանում էին իմ սպիտակեղենը, մաքրում շորերը, — մի խոսքով՝ ցույց էին տալիս դեպի ինձ շատ բարեկամական վերաբերմունք, որին իբրև շնորհակալություն ես նվիրում էի նրանց ծխախոտ, կամ գլանակներ: Մեկ-մեկ էլ Ուղղիչ Տան խանութից գնում էի նրանց համար էժանագին քաղցրավենիներ, որ այդ քառասունն արդեն անց, համարյա պառաված նանեներին մեծ հաճույք էր պատճառում: — Այդ չնչին նվերներից առանձնապես ուրախանում էր Անուշը, որի մգլած դեմքը փայլում էր հրճվանքից:

Նայես ի՞նչ են անում հիմա նրանք՝ Մարգարիտն ու Անուշը...

III. Քրեական կորպուսը. — բակը. — կամերաները. —

կալանավորներից ստացած իմ առաջին, ընդհանուր տպավորությունը

Երբ մենք Ուղղիչ Տան պետի հետ միասին մտանք գրասենյակ՝ դուրս եկավ, որ տեխնիկ Նիկոլաևը, որի նախագիծը մենք եկել էինք տեսնելու, ինչ-որ տեղ է գնացել: Վերադառնալու էր մի, կամ կես ժամից հետո, ուստի ես թողի գրասենյակը և գնացի քրեական կորպուսը նայելու: Ուղղիչ Տանը ես դեռևս ոչ մի ծանոթ չունեի, ուստի գնացի մենակ:

Գրասենյակից դուրս գալիս դեպի ձախ, հինգ քայլ հեռավորության վրա, գտնվում է քրեական կորպուսի դարբասը: Դա փայտյա մի մեծ դուռ է, որ փակվում է այդ դռանն անհամապատասխան մի փոքրիկ կողպեքով:

Դուռը փակ էր, իսկ դռան առջև կանգնած էր մի կալանավոր՝ դռան բանալին ձեռին: Այդ հանգամանքն առաջին հայացքից ինձ զարմացրեց. ինչպե՞ս են վստահում կորպուսի բանալին մի պատահական կալանավորի... «Գուցե և ո՞չ պատահական» — անցավ իմ մտքով և այդ անմեղ կալանավորը թողեց ինձ վրա մի դաժան ու անողոք Ցերբերի տպավորություն: Հետագայում ես իմացա, որ զուր էին իմ կասկածները թե՛ այդ դարբասի, թ՛ե կալանավորի մասին: Քրեական կորպուսի այդ դարբասը ոչ մի կապ չուներ Ուղղիչ Տան ներքին հսկողական սիստեմի հետ: Նա փակ էր պահվում միայն նրա համար, որպեսզի կալանավորներն առանց գործի գրասենյակ կամ հիվանդանոց չգնան, չխոնվեն այդ տեղերում և չխանգարեն պարապմունքներին: Իսկ այդ դռան առջև ընդհանրապես կանգնեցնում էին ամենախեղճ կալանավորներին, որովհետև նրանք այդտեղ կատարում էին հասարակ դռնապանի դեր:

— Կարելի՞ է անցնել:

Նա իսկույն բաց արեց դուռը, — կողպեքը չէր էլ կողպած, այլ միայն անցկացրած էր օղակներին, — և ես մտա քրեական կորպուսի բակը:

Դիմացս ինչ-որ միհարկանի մի շենք էր, և ես քայլերս ուղղեցի դեպի նա: Մի քանի քայլ գնալուց հետո թեքվեցի դեպի աջ. դուրս եկավ, որ այդտեղ Ուղղիչ Տան խոհանոցն է ու բաղանիքը:

Ինչպես ճանապարհին, այնպես էլ խոհանոցում ու բաղանիքում, որ այդ օրը չէր աշխատում, ինձ հանդիպում էին զանազան կալանավորներ՝ խումբ-խումբ ու առանձին-առանձին: Նրանք բոլորն էլ զննող հայացքներով ինձ էին նայում, և ինձ մի փոքր անհաճո էին այդ հայացքները: Ես էլ նայում էի նրանց, և նրանք բոլորն էլ ինձ թվում էին փակ, իրենց մեջ քաշված, խոժոռ ու անսիրալիր մարդիկ, որոնք ինձ հետ երբեք չեն ընկերանա ու չի ստեղծվի երբեք իմ և նրանց միջև հասարակ մարդկային փոխհարաբերություն: Նրանց նայելով՝ ես հիշում էի Դոստոևսկու և Դորոշևիչի հերոսներին ու սիրտս ճմլվում էր մենակությունից: «Նայես պիտի լինի՞, որ անցնեմ այս մարդկանց միջով և նրանք ինձ պարզապես բարևեն ու ժպտան — բարևեն ու ժպտան» — այս էր իմ միակ երազանքը այդ վայրկյանին, և ես բնազդաբար պատի մոտով էի գնում, որ նրանց չանհանգստացնեմ, չգրավեմ նրանց ուշադրությունը: Ես կարո՞ղ էի իմանալ առաջին իսկ վայրկյանից, որ նրանցից շատերը, դե, բոլորն համարյա, շատ ընկերական ու հասարակ մարդիկ են, և ես մի շաբաթ անց կունենամ այստեղ շատ ընկերներ ու բարեկամներ... Իհարկե, այնպիսի ընկերներ ու բարեկամներ, ինչպիսիք մարդ ունենում է բոլոր պատահական տեղերում — գնացքներում, երբ երկար ճանապարհ է գնում, ռազմաճակատում և այլն:

Բաղանիքը փակ էր, իսկ խոհանոցում առանձին ոչինչ չկար: Հսկայական պղինձներ, ինչպես զորանոցներում: Խոհանոցային շապիկներ հագած մի քանի

կալանավոր, որոնցից մեկը ջուր էր լցնում պղինձները, իսկ մի քանիսը պատի մոտ նստած՝ գետնախնձոր էին մաքրում: Ահա և ամբողջը: Ուստի ես առանց երկար սպասելու դուրս եկա այդտեղից և քայլերս ուղղեցի դեպի քրեական կորպուսը:

Դեմը — քրեական կորպուսի բակն էր, մի ընդարձակ բակ, համարյա մի փոքր դաշտ: Բակն Ուղղիչ Տունը շրջապատող պատերից բաժանված էր փայտյա ցցերի վրա խփված երկաթալարերով, որոնց և պատերի միջև մնում էր չորս քայլաչափ տարածություն: Այդտեղ շրջում էր զինվորական պահակը՝ հրացանը ձեռին:

Պատերից անդին, հեռուն Երևանի գորշ բլուրներն էին, որոնք երեկոները դառնում էին կարմիր-պղնձագույն... Դրանք ինձ հիշեցրին լայն ու ազատ աշխարհը, և ես ինձ զգացի որբ ու աշխարհից կտրված:

Նայեցի շուրջս: Կորպուսի պատերի տակ ու դեմը, երկաթալարերից քիչ այս կողմը՝ խումբ-խումբ նստոտած էին զանազան կալանավորներ: Ուրիշները շրջում էին բակում ու զրուցում: Նրանցից և ոչ մեկը դեռ ինձ չէր ճանաչում և ինձ թվում էր համառորեն, որ՝ որպես տկլոր մարդը բուլվարում՝ այդպես էլ ես նրանց մեջ գրավում եմ բոլորի զարմացող ու հեգնող ուշադրությունը: Այդ զգացումը ամրացնում էր իմ մեջ և այն հանգամանքը, որ բոլորն էլ նայում էին ինձ երկար, զննող հայացքներով, և ինձ առաջին անգամից դժվար էր կարդալ, որ այդ հայացքների միջից ինձ նայողը-պարզ մարդկային հետաքրքրությունն է նորեկով և այն էլ այնպիսի մի նորեկով, որի մասին նրանք, այսպես թե այնպես, լսել էին:

Անցա նրանց միջով և մտա քրեական կորպուսը: Անցնելիս ես նայում էի նրանց և աշխատում գուշակել նրանց հանցագործությունների տեսակն ու որակը: Եվ այն կալանավորները, որ այդտեղ առաջին անգամից ինձ թվացին խոժոռ մարդասպաններ և անողոք բանդիտներ — հետագայում, երբ ես նրանց հետ ծանոթացա և իմացա գործերը — դուրս եկան կալանավորներից ամենաանմեղները... Եվ — ընդհակառակը: Համարյա բոլոր նրանք, որ իմ ուշադրությանը չէին արժանացել իրենց դեմքերով ու արտաքինով, որոնք թվացել էին ինձ անվնաս, երևի թյուրիմացությամբ այստեղ ընկած, խեղճ ու ողորմելի մարդիկ — հենց դրանք էին, որ դուրս եկան ամենածանր հանցանքների համար դատապարտվածներ...

Առաջին անգամից քրեական կորպուսի ներսը թողեց ինձ վրա ծայր աստիճանի ծանր, ճնշող տպավորություն: Մուտքի երկաթյա դուռը, միջանցքների տոմետե հատակը, հաստ պատերը և կամերաների կլորաձև, նույնպես երկաթյա դռները — այս ամենը բավական էին մորմոքով լցնելու յուրաքանչյուր նորեկի սիրտ... Դա նախկին ցարական նահանգական բանտն էր, ցարական մռայլ ու բութ պետական ոճը: Ո՞վ իմանա, ինչե՛ր են կատարվել այստեղ, այս մռայլ միջանցքներում, երբ շրջում էին այստեղ ցարական պահակները և մռայլ բանտապետները. ինչքա՛ն հոգիներ են մորմոքել ու մեռել, — մտածում էի ես ու նայում շուրջս: Չնայած որ միջանցքներում

լույսը միանգամայն բավարար էր, սակայն առաջին անգամից այդ միջանցքները թողին իմ վրա մռայլ, մութ, անօդ գալերեյաների տպավորություն: Երևի մի քիչ և ա՛յլ լիներ տպավորությունս, եթե ես առաջին անգամ կորպուսը մտնեի ոչ թե մենակ, այլ որևէ ծանոթի ուղեկցությամբ:

Քրեական կորպուսի ներքևի հարկի միջանցքը մտնելով, ես նախ զնացի դեպի ձախ և դեմ առա մի փակ դռան, որի մոտ, փայտյա աթոռի վրա, նստած էր մի հսկիչ:

— Ի՞նչ դուռ է, — հարցրի հսկիչին:

— Էստեղ սեկրետներն են, վարի սեկրետները, — պատասխանեց հսկիչը և կարծեց, թե ինձ մի բան հասկացրեց: Հետագայում ես իմացա, որ այդտեղ, ինչպես և դրա վերևը՝ երկրորդ հարկում, Ուղղիչ Տան մեկուսարաններն են, ուր մեկուսացվում են քննության տակ գտնվող կալանավորները մինչև դատի օրը: Դատից հետո նրանք տեղափոխվում են կամերաները կամ ազատվում:

Վերադարձա ետ ու հասա միջանցքի մյուս ծայրը, հինգ կամերա կար միայն ներքևի հարկում: Կամերաների դռները բոլորն էլ բաց էին և ազատ ներս ու դուրս էին անում կալանավորները: Հսկիչներ չկային: Միակ հսկիչը նա էր, որ նստած էր մեկուսարանի առջև:

Առաջին անգամ ես մտա քրեական կորպուսի առաջին կամերան, որ գտնվում է միջանցքի ծայրում: Այդտեղից սկսվում են աստիճանները, որոնք տանում են վերև կուլտբաժին:

Լայն, լույս, հսկայական պատուհաններով, ընդարձակ մի սենյակ էր դա, որի մեջ, պատերի երկայնքով, դրված էին քսանի չափ փայտյա թախտեր: Պատերը մաքուր սպիտակացրած էին, առաստաղը նույնպես: Առաստաղի մեջտեղից բարակ երկաթալարով կախված էր մի էլեկտրական լամպ: Հատակը, ինչպես երևում էր, նոր էին մաքրել: Կամերան դատարկ էր: Անկյունում միայն, անկյունի թախտի վրա երկու կալանավոր նստած՝ ինչ-որ զրույց էին անում: Երբ ես ներս մտա նրանք բարձրացան և մոտեցան ինձ: Բարևեցին:

— Ովքե՞ր են այստեղ մնում:

— Կալանավորներ, — ժպտացին նրանք, կարծես ուզում էին ասել, որ դա ինքնին հասկանալի մի բան է, որ բացատրություն չի պահանջում:

— Բա որտե՞ղ են:

— Գործի են գնացել: Էս կամերում էս երկուսս ենք անգործ: Ես կամերը մաքրողն եմ, իսկ էս էլ — թույլ է, չի կրնա աշխատի:

— Որտե՞ղ են աշխատում:

— Հյուսնոցում, մի մասն էլ դրսի արհեստանոցներում:

— Ինչո՞ւ համար ես դատված, — հարցրի կամերը մաքրողին:

— Գողության, — ժպտալով պատասատնեց նա: Դա մի քսաներկու-քսաներեք տարեկան, գյուղական արտաքինով երիտասարդ էր. հիվանդոտ, դեղին դեմք ուներ ու շուտ-շուտ թարթվող աչքեր:

— Իսկ դո՞ւ, — հարցրի մյուսին:

— Ես շնողցի եմ, — ասաց նա կարճ, կարծես դրանով բացատրված էր ամբողջը: Եվ այդ այդպես էլ էր. հետո ես իմացա, որ Ուղղիչ Տան բոլոր շնողցի կալանավորները բռնված են մի գործով՝ Շնողի բջիջի հայտնի գործով:

Դուրս եկա այդտեղից և մտա մյուս կամերաները: Բոլորն էլ նույն մեծությամբ, բոլորում էլ, միջին հաշվով՝ մոտ քսան կոյկա: Բոլոր կամերաներում էլ ընդամենը երկու-երեքական հոգի կային, մնացածները գտնվում էին բակում, կամ արհեսատնոցներում:

Բարձրացա վերևի հարկը. նույնը, ինչ որ ներքևում: Այստեղ, սակայն, իմ ուշադրությունը գրավեցին մի քանի թուրք կալանավորներ, բոլորը գյուղացի: Եվ մեկ էլ այս վերևի կամերաներում աչքի էր զառնում այն հանգամանքը, որ կոյկաների վրա թափված անկողինները կամ կալանավորների այլ գույքը շատ ավելի աղքատիկ էին, քան ներքևի կամերաներում: Շատ կոյկաների վրա անկողիններ ամենևին չկային, դրանց փոխարինում էին ճղոտած փալասներ կամ պարզապես պարկեր: Այնինչ, ներքևի կամերաներում, կոյկաների համարյա 3/4 ծածկված էր տնային անկողիններով, տնային գույնզգույն վերմակներով և սպիտակ բարձերով: Պարզ էր՝ վերևի կամերաներում ապրում էր ավելի չքավոր բնակչություն, քան ներքևում: Մաքրությունը նույնն էր. ինչպես միջանցքներում, այնպես էլ կամերաներում հատակների վրա չէիք տեսնի մի լուցկու կամ գլանակի մնացորդ:

Մինչ ես զբաղված էի այդ ամենի թեթևակի ուսումնասիրությամբ՝ կամերաներից ներս ու դուրս էին անում զանազան կալանավորներ և ոտից գլուխ տնտղում ինձ իրենց կասկածոտ հայացքներով: Սկսեցի իջնել ներքև ու մտածել ինձ հանդիպած կալանավորների մասին և աշխատել դրանց, ըստ արտաքին տպավորության, բաժանել որոշ խմբերի: Ինչպես բակում, այնպես էլ կորպուսում ինձ հանդիպած կալանավորների մեծ մասը գյուղացիներ էին, ըստ ազգության՝ համարյա կեսը թուրք: Ապա, ըստ քանակի, գալիս էին քաղաքաբնակ լյումպենները: Այդպիսի

տիպերի ես առաջ հաճախ հանդիպում էի Երևանի արևմտյան, զանգուամերձ ծայրամասում, այդտեղի սրճարաններում, գարեջրատներում և խանութներում: Եթե Երևանը ունի «մութ անկյուններ» — դրանք հենց այդ ծայրամասում են գտնվում: Առավոտները ժամը 5-ին, կամ երեկոները, մթնելուց հետո, ես հաճախ գնում էի այդ կողմերը և երկար թափառում: Այդտեղ մութ, խորհրդավոր, կեղտոտ անկյուններ կան, որ պինկերտոնյան գրականության մեջ հաճախ նկարագրվող որջերն են հիշեցնում: Մի տեսակ լյումպենական կնիք ունեն իրենց վրա այդ մութ որջերի բնակիչները, որոնք առաջին հայացքից աչքի են ընկնում, եթե ընդհանրապես ճանաչել ես դրանց: Եվ ահա, Երևանի Ուղղիչ Տան քրեական կորպուսի վերի հարկի կամերաներում ու միջանցքում ես հանդիպեցի բավականին թվով մարդկանց, որոնց նախապես տեսել էի վերոհիշյալ ծայրամասում: Եվ ես չսխալվեցի: — Վերևի կամերաներում ապրողների բավականին աչքի ընկնող մասը լյումպեն-ռեցիդիվիստներ էին և, ինչպես ես հետագայում տեղեկացա հիշյալ «մութ որջերի» հերոսներ: Դրանցից շատերի հետ հետագայում ես բավականին բարեկամացա և բավականին պրիմիտիվ ու իրենց տեսակի մեջ հետաքրքիր մարդիկ էին դրանք — Բաղդասարը, Լազգին, Մաչոն, Խուժան Խաչոն, Լյուսեյինը, Վալոն...

Ապա գալիս էին նախկին խորհրդային ծառայողները, որոնց մյուս խմբերի կալանավորները «ինտելիգենտ» էին անվանում: Դրանց մեջ կարելի էր հաշվել և այն մի երկու զինվորականներին, որոնք ինձ հանդիպեցին այդ օրը: Այս էր իմ առաջին խմբավորումը՝ Ուղղիչ Տան բնակիչներից ստացած իմ առաջին տպավորությունից հետո — և դա, ընդհանուր առումով, ճիշտ դուրս եկավ, երբ ես հետագայում ավելի մոտիկից ծանոթացա Ուղղիչ Տան բնակչությանը:

Գյուղացիներ, լյումպեններ և նախկին խորհրդային ծառայողներ — ահա՛, ընդհանուր առումով, քրեական կորպուսի բնակչության սոցիալական կազմը: — Իհարկե, ինչպես իմ հետագա դիտողությունները պարզեցին՝ և դա այլ կերպ չէր էլ կարող լինել՝ այս խմբերից յուրաքանչյուրը ևս իր հերթին կարելի էր ենթարկել շերտավորման, մասնավորապես գյուղացիականը: — Կային չքավոր գյուղացիներ և կային կուլակներ, որոնք Ուղղիչ Տան բնակչության ներքին, կենցաղային շերտավորման խնդրում ոչ մի դեր չէին կատարում: Գյուղացիներն ընդհանուր առումով ապրում էին իրենց կենցաղով, լյամպեններն՝ իրենց, իսկ նախկին խորհրդային ծառայողները՝ իրենց: Այս տեսակետից էլ նրանք ինձ հետաքրքրում էին. — կալանավորական ներքին կենցաղի տեսակետից: Այն հասարակությունը, ուր ես ընկել էի,— արտաքին աշխարհից կտրված, առանձնացված մի հասարակություն էր, որի մեջ, բացի ընդհանուր սոցիալական օրենքները՝ պե՛տք է որ նշանակություն ունենային և մի շարք այլ, սպեցիֆիկ օրենքներ, որ բխում էին Ուղղիչ Տան պայմաններից: Այդտեղ պետք էր որ լինեին զուտ-կալանավորական, դրսի աշխարհում ոչ մի նշանակություն չունեցող, շահեր, որոնց իբր վերնաշենք՝ պիտի գոյություն ունենային կալանավորական՝ ներքին-կենցաղային հասկացողություններ ու բարոյական նորմեր: Ինձ ամենից առաջ հարկավոր էր ծանոթանալ այդ

հասկացողություններին ու նորմերին, որպեսզի ես հնարավորություն ունենայի մուտք գործել դեպի այդ հասարակության սիրտը, հավասար անգամ դառնալ այդ հասարակության, թափանցել նրա էության խորքը և հասկանալ նրա հոգեբանությունը...

Մտածելով այս ամենի մասին՝ ես կրկին իջա քրեական կորպուսի բակը և սկսեցի նայել կալանավորներին: Այո՛. գյուղացիներ, լյումպեններ և նախկին խորհրդային ծառայողներ: Նրանք շրջում էին, դեսուդեն գնում, զրուցում, — իսկ ես կանգնած էի մենակ և միտք էի անում, թե նայես այս երեք խմբերից որի՞ ձեռքին է գտնվում կալանավորական ներքին ռեժիմը՝ ո՛չ թե վարչական, այլ կենցաղային իմաստով: Կալանավորների ո՞ր տարրն է արդյոք այս խայտաբղետ հասարակության ներքին հեգեմոնը՝ կալանավորական բարոյական նորմերի ու իդեալների կրողը: Ներսում, իրենց մեջ, իրենց առօրյա ընկերական-կենցաղային հարաբերություններում և ո՛չ թե վարչական կարգով, ըստ Ուղղիչ Տան պաշտոնական ռեգլամենտի: Մտածում էի, որ սրանք երևի կունենան իրենց ազդեցիկ մարդիկ, իրենց ավտորիտետները... Եվ աշխատում էի գուշակել, թե ինձ շրջապատողներից ո՞րը կարող է այդպիսին լինել...

Սակայն ինձ ճնշում էր մենակությունը, և ես բնազդաբար քայլերս ուղղեցի դեպի գրասենյակը: Մի հաճելի, փրկարար գյուտ արածի նման՝ ուրախացած հիշեցի, որ արդեն ժամանակ է գնալու պետի առանձնասենյակը՝ նոր արհեստանոցների նախագիծը տեսնելու...

Եվ ես քայլերս արագացրի ու մի անհետաձգելի գործով զբաղված մարդու մտահոգությամբ մտա Ուղղիչ Տան գրասենյակը, պետի առանձնասենյակը:

IV. Կրկին Ուղղիչ Տան պետը, Նոր արհեստանոցների հիմնադրությունը, Բենժամենի մազերը և Լազգու կարծիքը կանանց մասին

Երբ մտա պետի առանձնասենյակը՝ այդտեղ արդեն նստած էր տեխնիկ Նիկոլաևը, որի գլխարկից ես ենթադրեցի, որ դա հենց այդ անձնավորությունը պետք է լինի: Կալանավոր էր, դատված վատնումի համար, գնում էր դրսի աշխատանքի և շատ քիչ էր երևում Ուղղիչ Տանը: Թե ինչպե՞ս էր տեղի ունեցել նրա վատնումը՝ ես այնպես էլ չիմացա, սակայն Ուղղիչ Տուն ընկնելուց հետո նա բավականին աշխատել էր այդ տան համար և այժմ պատրաստել էր Ուղղիչ Տան բակում կառուցվելիք նոր արհեստանոցների հատակագիծը, որը և բաց արեց նա, ու մենք սկսեցինք նայել:

Դա կապտավուն, կարծես մի փոքր յուղոտ, հատկապես այդ նպատակի համար գործածվող, մագաղաթանման մի թուղթ էր, որի վրա նկարված էր արհեստանոցների հատակագիծը և ֆասադը: Սև մելանով գծած, կողք-կողքի, երկարավուն քառանկյունիներ, յուրաքանչյուրի մեջ երկու պատուհան և մի դուռ, ու այդ ամենի վերևը՝ բարակ ժապավենի նման կտուրը:

Հարկավոր էր տեսնել Ուղղիչ Տան պետի աչքերը այն վայրկյանին, երբ Նիկոլաևը բաց արեց այդ կապույտ մագաղաթը և տվեց նրան նայելու... Ես շատ եմ տեսել մարդկանց՝ նրանց ուրախության ու տխրության պահերին, բայց նման անմիջական, լիաթոք, համարյա մանկական ուրախություն, որ փռվում է մարդու ամբողջ դեմքի վրա — ես տեսնում էի առաջին անգամ:

— Տեսե՛ք, է՛,- բացականչեց Ուղղիչ Տան պետը՝ մատը դնելով ապագա արհեստանոցների կտուրին, — էս մեր արհեստանոցներն են լինելու... Պատկե՛ր է, կատարյա՛լ պատկերք...

Անսպասելի կերպով լրջացրեց դեմքը և ավելացրեց.

— Մինչև ձմեռ միտք ունեմ վերջացնելու:

Ու զանգը տվեց հանկարծ, կանչեց քարտուղարին:

— Կանչի՛ր անմիջապես Բենիկին:

Ու մինչ այդ, ինձ համար հանելուկային, Բենիկի գալը՝ մերթ ինձ, մերթ Նիկոլաևին նայելով՝ նա ցույց էր տալիս կապտավուն թղթի վրայի սև քառանկյունիները և հիացած կրկնում.

— Մեր արհեստանոցներն են լինելու, է՜ ...

Ապա բռնեց իմ ձեռքը, կարծես ես հակաճառում էի նրան, և բացականչեց.

— Ո՛չ մի կալանավոր չպիտի անգործ մնա, հասկանո՞ւմ եք՝ ո՛չ մի կալանավոր... Մաքուր, լույս, մեծ արհեստանոցներ... Իսկ հետո՝ մեքենայացում ենք մտցնելու, բա՜ս, — մեքենաներ ենք գնելու... Միայն թե չխանգարեն:

— Ո՞վ կարող է խանգարել:

— Ո՞վ գիտե, — ասաց նա կամացուկ և նրա դեմքի բաց ժպիտն անմիջապես փոխվեց խստագույն լրջության: Առհասարակ զարմանալի բնավորություն ուներ այդ մարդը. - կատարելագույն դերասանի նման նա կարողանում էր տիրապետել իր դեմքի մկաններին: Լիաթոք ծիծաղի ժամանակ կարող էր հանկարծ, մի ակնթարթում, լրջանալ և այս փոփոխությունը նրա դեմքի վրա երբեմն կատարվում էր այնքան անակնկալ, որ մարդ մնում էր շվարած:

Ես ուզում էի ինչ-որ բան հարցնել, բայց այդ վայրկյանին դուռը բացվեց և ներս մտավ «Բենիկը»:

Դա մի 23 — 24 տարեկան կալանավոր էր, նախկին խորհրդային ծառայող, որ վատնումի համար դատապարտված է եղել «պատժի առավելագույն չափին» — գնդակահարության, բայց Կենտգործկոմը ներում է շնորհել՝ փոխելով գնդակահարությունը տասնամյա կալանքի: Ես նրան դեռ դրսից գիտեի և ինձ հայտնի էր, թե իրերի ի՛նչ դժբախտ բերումով էր նա հասել վատնումի թեք ճանապարհին: Սրտագին բարևեցի նրան, որից հետո Ուղղիչ Տան պետը բացականչեց.

— Բենի՛կ, հավաքիր բանվորներիդ և այսօրվանից սկսենք ներսի պատերի համար հողե աղյուսներ պատրաստել: Արհեստանոցներն սկսում ենք... Էլ ձգձգելու ո՛չ մի կարիք չկա: Պլանը պատրաստ է — մնում է գործի անցնել...

— Լա՛վ, — լայն ժպտաց Բենիկը, — ինչքա՞ն է հարկավոր...

— Յոթ-ութ հազար հատ: Բանվորներիդ ասա թե՛ փողը կստանան, թե աշխատանքային օրերը կհաշվենք: Սկսե՛ք, քանի անձրևները չեն սկսվել...

— Բա հիմքը գցե՞լը, — Հարցրեց Բենիկը, որ ինչպես երևում էր, տեղյակ էր աշխատանքներին. — ե՞րբ ենք հիմքը գցում:

— Վաղը, մյուս օրը հիմքը կգցենք, մինչև էդ ցուցակագրիր բոլոր որմնադիր- վարպետ կալանավորներին: Կա՞ն:

— Խ՞ի չկան: Հրեն մեկը — Համոն:

— Ո՞ր Համոն:

— Թիթեղագործը: Հի՞նչ գործ ասես ձեռիցը կգա:

— Է՞լ:

— Է՛լ կա, ամենքին էլ կցուցակագրեմ: Մենակ դու շտապի քանի թեզ ա՝ հիմքը գցենք: Մաղարիչը քեզանից...

— Թխի՛ գա:

Եվ Ուղղիչ Տան պետ ու կալանավոր ձեռքերը իրար խփեցին հանուն այն ապագա արհեստանոցների, որոնց հատակագիծը նկարել էր մի այլ կալանավոր՝ Նիկոլաևը:

— Դե հիմա գնանք վերջնականապես տեղը որոշելու, — ասաց պետը և վեր կացավ տեղից՝ ձեռին Նիկոլաևի հատակագիծը: Ես, նա, Բենիկը և Նիկոլաևը դուրս եկանք գրասենյակից և մտանք հիվանդանոցի բակը:

Հիվանդանոցից դեպի ձախ՝ մինչև պատը ընկած էր մի ընդարձակ բաց տարածություն: Ուղղիչ Տան պետը ցույց տվեց այդ տարածությունը:

— Ուզում ենք կամ էստեղ շինենք, կամ քրեական կորպուսի բակում: Իմ կարծիքով էստեղ ավելի է հարմար, քանի որ անգործ կալանավորները էստեղ չեն խանգարի: Իսկ էնտեղ կխանգարեն:

Գնացինք և քրեական կորպուսի բակը: Ընդհանուրի կարծիքն այն էր, որ ավելի հարմար է հիվանդանոցի բակում: Այդպես էլ որոշվեց, և Ուղղիչ Տան պետը մի անգամ ևս հրահանգելով Բենիկին, որպեսզի նա անմիջապես անցնի վարպետների և աշխատավորների ցուցակագրությանը թողեց մեզ այդտեղ և ինքը գնաց գրասենյակ ընթացիկ գործերով զբաղվելու: Նրա հետևից, իր նախագիծը ձեռին, գնաց և Նիկոլաևը: Ես և Բենիկը, որին ես, չգիտեմ ինչու, հենց առաջին անգամից սկսեցի «Բենժամեն» անվանել, մնացինք մենակ:

— Դե՛, ո՞նց ես, Բենժամե՛ն, պատմի՛ր տեսնենք... Ո՞նց եղավ, ո՞նց մահվան դատապարտվեցիր և ո՞նց իմացար ներման լուրը...

Է՛յ ի՞նչ պատմեմ, — ասաց նա մի կողմ նայելով և, կարծես բնազդաբար, հանեց գլխարկը: Նայեցի՝ այդ 24 տարեկան երիտասարդի մազերը տեղ-տեղ սպիտակել էին, ինչպես 50 տարեկանի մազեր...

Ապա նա պատմեց իր յոթնօրյա սպասումի պատմությունը, և դա, այդ պատմությունը, տխուր էր, ինչպես տխուր էին այդ վայրկյանին իրա Բենժամենի աչքերը: Մահվան դատավճռից հետո յոթ օր նա սպասել էր իմ «մեկուսացման սենյակի» դիմացը գտնվող մի այլ «մեկուսացման սենյակում» և այնքա՛ն էր ընտելացել այն մտքին, որ իրեն ահա-ահա տանելու են գնդակահարելու, այնքա՛ն էր ընտելացել, որ երբ եկել ու հայտնել են նրան, որ պատժի առավելագույն չափը փոխարինված է տասը տարվա կալանքով, նա, — երևակայո՞ւմ եք, — տխրել էր, կամ, ինչպես ինքն էր ասում, «տխրվել»:

— Ե՛ս մեռնեմ՝ տխրվեցի, — ասում էր Բենժամենը՝ միշտ մի կողմ նայելով, խուսափելով իմ հայացքից — հե՛նչափ տխրվեցի, որ էլ ասելու չի՛…

Եվ երբ մի վայրկյան ես բռնեցի նրա հայացքը՝ նրա աչքերում իրոք որ տխրություն կար, մահ տեսած աչքերի մշուշոտ տխրություն... Խե՜ղճ Բենժամեն:

Մինչ այդպես, քրեական կորպուսի բակում կանգնած, Բենժամենը պատմում էր ինձ իր տխուր պատմությունը ես ուշիուշով նայում էի բակում անցնող-դարձող կալանավորներին: Պատկերը կրկին նույնն էր, ինչ որ իմ առաջին այցելության ժամանակ: Կալանավորների մեծ մասը գյուղացիներ էին, ապա՝ լյումպեններ, և

ապա՝ ինչպես ասում էին կալանավորները «ինտելիգենտներ»: Այս վերջինները թվով ամենից քիչն էին, կային և մի երկու նախկին զինվորականներ: Նորից, ինչպես և առաջին այցելությանս ժամանակ, բոլորն անխտիր անցնելիս նայում էին ինձ, կարծես զննում էին ինձ աչքերով, հայացքներով փորձում: Այնինչ Բենժամենին նայում էին ընտանեվարի ժպիտով, մեկ-մեկ որևէ միջանկյալ խոսք էին ասում, կամ ընկերաբար խփում նրա ուսին և աչքով անում, — մի հանգամանք, որ այնքան էլ չէր կարող ինձ անտարբեր թողնել... «Երևի ինձ են հեգնում, որպես նորեկի» — մտածում էի ես և ինձ մի փոքր նվաստացած զգում Բենժամենի առջև: Ամեն տեղ ընդհանրապես կասկածոտ է լինում նորեկի հոգեբանությունը, սակայն կալանավորների աշխարհում այդ կասկածոտությունը հասնում է գերազանց չափերի և ստանում մի ուրույն, աննկարագրելի բնույթ: Այստեղ դա ոչ միայն կասկածոտություն է, այլև բնազդական զգացմունք, որ այս փակված մարդկանց անհրապույր աշխարհը դժկամ ու անսիրալիր է ընդունում յուրաքանչյուր նորեկի, թաքուն, տարերային թշնամանքով ու նսեմացնող հեգնանքով: Թվում է, թե հակառակը պետք է լիներ. - գալիս է, այսպես թե այնպես, մի բախտակից, մի դժբախտության ընկեր, որին նույն դառը բախտն է վիճակված, ինչ որ իրենց: Կյանքի բոլոր այլ պայմաններում նորեկ բախտակիցն ընդունվում է եթե ոչ լիակատար հարգանքով, գոնե ո՛չ համառ, տարերային դժկամությամբ ու թշնամանքով: Այդպես չէ սակայն կալանավորների աշխարհում: Ես միանգամայն համոզված կարող եմ ասել — հետագայում ես բազմիցս առիթներ ունեցա այս բանում միանգամայն համոզվելու — որ մարդկային ո՛չ մի այլ հասարակություն, ո՛չ մի այլ կոլեկտիվ այնքան անվստահությամբ ու տարերային թշնամանքով չի ընդունում իր մեջ որևէ նորեկի, որքան կալանավորների աշխարհը: Յուրաքանչյուր նորեկ կալանավորների կողմից ամենից առաջ արժանանում է ծաղրի ու հեգնանքի — և, ես կասեի՝ ոխակալ հեգնանքի: Կարծես այդ հեգնանքն ու ծաղրը ասում են նորեկին. — հը, ի՞նչ էիր կարծում՝ մեզանից լա՞վ ես, էսպես տեղ չե՞ս ընկնի... Քանիցս ես ներկա եմ եղել, երբ կամերա է մտել որևէ նորեկ: Համարյա միշտ ընդունել են նրան խայթող, ոչնչացնող, հրող քրքիջով: — Իհարկե, սա ես ասում եմ ընդհանուր առումով, պատահում են և կալանավորներ, որ սկզբից ևեթ հարգանք են ներշնչում դեպի իրենք, սակայն այսպիսիները բացառություն են կազմում: Շատերի վերաբերմամբ հեգնանքը, կամ ծաղրը, իհարկե, չի կարող այնպիսի բացարձակ բնույթ կրել, ինչպես ասացինք վերևը: Սակայն այս կամ այն ձևով կալանավորների այդ վերաբերմունքը գտնում էր իր արտահայտությունը, իսկ ինչ վերաբերում է դժկամ անվստահության սա արդեն ընդհանուր օրենք է, որ, իմ կարծիքով, չի վերցնում և ո՛չ մի բացառություն: Դեռ նոր էր ինձ համար այդ շրջապատը և դեռ անծանոթ էին ինձ մարդիկ և նրանք, ում ես հետագայում ճանաչեցի ու ընտելացա և անգամ սիրեցի շատերին, որպես հասարակ մարդկանց ու լավ ընկերների — սկզբում ընդունում էին ինձ զսպված, փակ անվստահությամբ, որը թեկուզ ամեն կերպ աշխատում էին թաքցնել, բայց երևում էր ամեն ինչից, անգամ նրանց ժպտալու ու նայելու եղանակից: Ինձ հետ համեմատած՝ արդեն բավականին ստաժավոր կալանավոր էր Բենժամենը: Համարյա բոլորին ճանաչելուց բացի՝ գիտեր նաև, թե ո՛րը ինչ գործով է դատված: Ուստի սկզբից ևեթ ես

որոշեցի օգտվել նրանից, իբրև չիչերոնեից, և ստանալ ինձ այնքան հետաքրքրող այդ մարդկանց մասին սկզբնական, թռուցիկ տեղեկություններ:

Հիշում եմ՝ հենց որ անցնում էր մեկը՝ ես նախ մտքիս մեջ, ըստ նրա արտաքինի, կամ դեմքի արտահայտության, փորձում էի որոշել նրա հանցագործության տեսակը և ապա հարցնում էի Բենժամենին, — և միշտ սխալվում էի ու չարաչար սխալվում: Եվ միայն այդտեղ ես հասկացա, որ մարդկային դեմքը շատ անհույս հայելի է մարդկային բնավորությունը և ներքին աշխարհը ճանաչելու համար: Մանավանդ այդ աշխարհում, ուր կան հոգեբանական զարմանալի օրենքներ, տարօրինակ օրենքներ: Օրինակ, առաջին հերթին հենց այն զարմանալի օրենքը, որի մասին ես արդեն հիշատակել եմ նախորդ գլխում: —

Համարյա միշտ ամենածանր սպանություններ կատարած մարդիկ դուրս էին գալիս նրանք, որոնց դեմքի վրա կարելի էր կարդալ միմիայն... ամենասուրբ անմեղություն: Նայում ես՝ ըստ արտաքինի, դեմքով ու խոսելաձևով, խեղճ, անմեղ, անշառ մարդու տպավորություն է թողնում: Հարցնում ես ինչի՞ համար է բռնված.

— Սպանությա՛ն: Սպանել է ու թալանել:

Նրանցից շատ-շատերը նույնիսկ քաշվում էին մարդու հետ խոսելիս: Հետագայում ես տեսա մեկին, որը երեք սպանություն էր կատարել, սպանություններից հետո միանգամայն անվրդով կերպով եկել էր ու լվացել բուլվարում իր արյունոտ ձեռքերը, բայց ինձ հետ խոսելիս կարմրում էր, ինչպես ամոթխած աղջիկ…

Մենք Բենժամենի հետ կանգնած զրույց էինք անում կալանավորների մասին, երբ մեզ մոտեցավ երեսունին մոտիկ, սև սատինե շապիկ հագած, միջահասակ, վտիտ, գյուղական դեմքով, բայց կարտուզ դրած մի կալանավոր:

— Կալիդորներ լավ հիստկեցինք, մնաց հայաթ, — ասաց նա Բենժամենին և ժպտաց:

— Ծանոթացի՛ր, — ներկայացրեց նրան Բենժամենը. — մեր Լազգին է, սանիտարական սեկցիայի նախագահի օգնականը:

Ես սեղմեցի Լազգու ձեռքը, և նրա դեմքը բավականությունից վարդի տեսք ընդունեց:

— Ինչո՞ւ համար ես բռնված:

— Հե՜չ: Չնչի՛ն բանի: — Ո՞նց թե չնչին բանի:

— Բյա հի՞նչ: Մե՛ կնկա խամար: Պոռնիկ կնկա խամար:

— Ի՞նչ արիր որ...

— Հե՞չ: Գլուխը կտրի դրի ոտքերու արանք: Հարբած ի: Բոնին բերին:

— Բա դա հե՞չ է, որ ասում ես «հեչ»:

— Բյա հի՞նչ: Կնիկն հի՞նչ և կնկա խամար բռնեն՝ թալեն Ուղղիչ Տուն: Աշխարք հենքա՛ն կնիկ կա... Շնի՛ց շատ:

Ուղիղ երեսիս նայելով՝ երեխայի նման լայն ժպտաց Լազգին և վազեց կորպուսը՝ մաքրության հետևելու: Նայեցի Բենժամենին՝ նա էլ էր ժպտում երեխայի նման: Խոսք չգտա ասելու:

Սակայն հետագայում, երբ ավելի մոտիկից ճանաչեցի նրանց և սկսեցի ավելի խոր թափանցել նրանց հոգեկան պրիմիտիվ աշխարհը — ես հասկացա, որ այդ տարօրինակ աշխարհում մարդկային լեզուն նույնքան խաբուսիկ է, որքան և դեմքը: Նրանցից շատ-շատերը շատ ավելի լավ ու «մարդկային» մարդիկ էին, քան իրենք ցույց էին տալիս՝ «հերոս» երևալու այն պրիմիտիվ հասկացողությամբ, որ ունեին նրանցից շատերը: Գուցեև այդ «հերոսությամբ» նրանք ուզում էին ծածկել հանցանքի ու ամոթի այն ներքին բնազդական զգացմունքը, որ հատուկ է բոլոր մարդկանց անխտիր, բայց բոլորն անխտիր, հայտնի չէ, թե ինչո՞ւ աշխատում են թաքցնել թե իրենցից և թե ուրիշներից...Հանցագործների այս յուրօրինակ գծի վրա առաջին անգամ կարծեմ, եթե չեմ սխալվում, ուշադրություն է դարձրել Ֆյոդոր Միխայլովիչ Դոստոևսկին: Համենայն դեպս ես ինքս այս բանում ավելի քան համոզվեցի, երբ բավականին ծանոթացա ինչպես նույն այդ Լազգու, այնպես էլ շատ նմանների հետ:

...Հիշո՞ւմ ես, Լազգի՛, ինչպես մեր այն երկար գիշերներին դու «Հիրգուն կուգա» ու «նագան» էիր երգում և պատմում ձեր գյուղի հարսանիքների, դաշտային աշխատանքների, չարի ու բարու մասին, և քո դեմքն այդ հրաշալի պահերին գունատվում էր ու հոգևոր տեսք ընդունում, ինչպես ոգևորված արտիստի դեմք:

— «Վա՛յ վա՛յ, նագա՛- նը,
հի՛մ օգ-նա՛կանը,
յո՛թ կը-ռա՛կանը,
հի՛մ պա-խա՛ պանը,
վա՛յ վա՛յ նագա՛ն ջան,
վո՛ւյ, վո ւյ, նագա՛ն ջան...»:

Ես քեզ չեմ մոռանա, Լազգի:

V. Կուլտբաժնի թատերական սրահը, զարմանալի Համոն, Եֆիմ Բրավելմանի աչքերը և — «Բնությունը ամեն տեղ բնություն է, ընկեր Բելոգուրով»

Այդ օրը ես և Բենժամենը միասին գնացինք նայելու Ուղղիչ Տան կուլտբաժինը, և ես այնտեղից վերադարձա բավականին ոգևորված:

Քրեական կորպուսի մուտքից դեպի աջ և ձախ ձգվում է միջանցքը, որի երկայնքին գտնվում են կամերաները: Նախ մենք մտանք աջ կողմում գտնվող առաջին կամերան. կամերայում ոչ ոք չկար: Հարց տվի այդ մասին Բենժամենին:

— Գնացել են աշխատանքի: Այս կամերայում միայն մի հոգի կա անգործ. մնացածները բոլորն էլ աշխատում են հյուրանոցում և դուրսը:

Այդտեղից սանդուղքներով մենք բարձրացանք երկրորդ հարկը և մտանք կուլտբաժինը:

Սանդուղքի վերևը, հենց դիմացի պատից, կախված էր մի յուղաներկ նկար: Ծովային տեսարան էր՝ ափին էկզոտիկ բուսականություն: Տեսնելով, որ ես հետաքրքրությամբ նայում եմ նկարին Բենժամենն շտապեց բացատրել.

Մեր նկարիչներն են նկարել: Վերևում դեռ շատ կտեսնես: Այս մեկը նկարել է Բելոգուրովը:

— Ի՞նչ մարդ է:

— Ռուս զինվորական է. բռնված է լրտեսության մեղադրանքով. առաջ քաղաքական կորպուսում էր, այժմ քրեականն է տեղափոխված: Բայց ես չեմ հավատում, որ նրա մեղադրանքը հիմք ունենա...

Այս խոսքերով մենք մտանք Ուղղիչ Տան կուլտբաժնի թատերասրահը — և ես տեսա Բելոգուրովին:

Թատերասրահը նախկին երկու կամերաներից բաղկացած մի բավականին ընդարձակ սենյակ էր, մուտքից դեպի ձախ՝ բեմը, դեպի աջ՝ նստարանները: Վարագույրը բաց էր, և տեսարանը ներկայացնում էր անտառ: Վերևից թոկով կախված էր թղթե մի կիսալուսին, որը, ինչպես հետագայում ներկայացումների ժամանակ ես նկատեցի, համարյա բոլոր կալանավորներին անասելի հիացմունք էր պատճառում: Բեմի վրա, մի այլ դեկոր հատակին փռած՝ ինչ-որ բան էր սարքում սև բլուզ հագած մի երիտասարդ, համակրելի դեմքով կալանավոր, որ ոտքի կանգնեց և սկսեց հարգանքով դեպի մեր կողմը նայել:

— Սա մեր Համոն է, բեմի ռեկվիզիտորը, դեկորատորը, վարագույր բարձրացնողը և այլն: Ի՞նչ գործ ասես ձեռքից կգա, — շտապեց ներկայացնել նրան իմ չիչերոնեն: Ես մշուշոտ կերպով հիշեցի, որ կարծես տեսել եմ նրան, կամ լսել եմ նրա մասին ինչ-որ մի տեղ: Եվ հանկարծ գլխի ընկա:

— Սա նա չի՞, որ աշխատում է դարբնոցում, վառարաններ է շինում և վաղն էլ սկսելու է շարել արհեստանոցների պատերը...

Հե՛նց նա է, որ կա. պատվական տղա է,— ասաց Բենժամենը, լայն ժպտաց Համոյին, որ արդեն մոտեցել էր մեզ, և ձեռքը դրեց նրա ուսին:

Ես նայեցի Համոյին. երեսունին մոտ, բրյունետ, քիչ հիվանդոտ դեմքով, բարակ, նիհար. սև աչքեր, սև մազեր. մի ուսը մյուսից քիչ բարձր. նայում է՝ գլուխը պահած քիչ թեք. ստացվում է տպավորություն, թե վարից վեր է նայում: Նայելիս ժպտում է և շտապում փախցնել հայացքը: Կարծես դպրոցական է, որ քաշվում ու ամաչում է ուսուցչից:

— Ինչքա՞ն եք վճռված:

— Ութ տարի, — ասում է նա, ժպտում ու հեռացնում հայացքը:

— Ինչի համար:

— Սպանության:

Եվ հանկարծ վառվող աչքերով նայում է ինձ, ժպտում, ձեռքը դնում ուսիս և ոգևորված ասում.

— Այսօր թատրոն ունենք, անպատճա՛ռ եկեք: Շատ հետաքրքիր է, շատ հետաքրքիր...

Ու նայում է բեմին՝ հատակին փռված դեկորին:

— Դեկորացիան պիտի փոխեմ. առաջինը հարուստ սենյակ է հարկավոր, երկրորդը՝ աղքատ: Ունենք: Երկո՛ւսն էլ ունենք:

Եվ դեմքը փայլում է ուրախությունից: Հետո նա ընկերաբար մի երկու անգամ խփում է ուսիս, ժպտում ու մի ոստյունով թռչում բեմը՝ իր գործը շարունակելու:

Այս խոսակցության ընթացքում ես մեկ-մեկ նայում եմ շուրջս ուսումնասիրում եմ դահլիճը: Պատերին՝ յուղաներկ նկարներ, մեծ մասը բնության տեսարաններ: Իսկ դահլիճի 1/3 մասն ազատված է և այստեղ եռոտանիի առաջ աշխատում է մի բարձրահասակ, գունատ, նիհար կալանավոր: Բելոգուրովն է: Նրանից դեպի

ձախ, հենց նստարանի վրա, աշխատում է մի ուրիշը: — Նման է ուսանողի: Երիտասարդ է, դեղին, հրեական դեմքով. միջահասակ, հագին կապույտ շնյոտե բլուզ, գլխին արախչին: Մենք մոտենում ենք նրանց:

— Ընկեր Բելոգուրով և ընկեր Յեֆիմ Բրավելման, — ներկայացնում է իմ անփոխարինելի չիչերոնեն՝ Բենժամենը: Նկարիչները թողնում են իրենց աշխատանքը և մոտենում են մեզ:

Բելոգուրովը թողնում է կատարյալ դեգեներատի տպավորություն: Գունատ, հիվանդոտ դեմքի վրա բաց-կապտագույն աչքերը վախկոտ են ու խեղճ: «Դժվար թե նման ողորմելին ընդունակ լինի զինվորական լրտեսության», անցնում է մտքովս: Այնինչ միանգամայն հակառակ տիպ է Եֆիմ Բրավելմանը: Նայում է համարձակ, առանց քաշվելու: Աչքերում ինքնավստահություն ու թաքուն խորամանկություն: Իր մասին մեծ կարծիք ունի, երևում է ամեն ինչից:

— Ինչպե՞ս եք գտնում, — հարցնում է Բրավելմանը՝ ցույց տալով ձեռքի փոքրիկ տախտակը, որի վրա նա նկարում է ձմեռային –գյուղական գիշերվա մի շաբլոն տեսարան: Երևի հիշում եք էժանագին բացիկները՝ նման տեսարաններով: Ձյուն, խրճիթ, խրճիթի առաջ՝ խարույկ, պատուհանում՝ դեղին լույս, վերևը՝ ամպոտ երկինք, ամպերի միջից՝ սպիտակ, քիչ դեղնավուն լուսինը: — Սակայն Եֆիմ Բրավելմանը գոհ է և նույնիսկ — չափազանց: Նայում է աչքերիս և հայացքի մեջ հեգնող կասկած կա. — կարո՞ղ է արդյոք այս էֆիոպը հասկանալ այնպիսի մի նուրբ նկար, ինչպիսին է այս աննման տեսարանը... Եվ հենց նույն աչքերի խորքում կարդացվում է իր վճռական պատասխանը. — ո՛րտեղից... ի՞նչ նրա գործն է այդ...

— Հասկանո՞ւմ եք, — շտապում է արդարացնել նա իր աչքերի խոցող արտահայտությունը և, միևնույն ժամանակ, մեծահոգաբար մեղմել իր՝ մեզ վրա արած գերազանց տպավորությունը. — ինքնե՛րս ենք աշխատում... Ոչ ոք չկա, որից կարելի լինի խորհուրդ հարցնել... Եթե դուք բարի լինեիք մեզ խորհուրդներ տալու, շտկելու մեր սխալները...

Ասում է, բայց խորամա՛նկ, ինքնազոհ աչքերը, որոնց խորքում պսպղում է հազիվ նկատելի, կասկածոտ, հեգնական մի ժպիտ — շտապում են հերքել լեզվի ասածները: Աչքերն ասում են՝ «է, սիրելի՛ս, չհավատաս, քաղաքավարության համար եմ ասում... Մենք մեր գործը լավ գիտենք և ոչ մի կարիք չունենք ձեզ պես էֆիոպների խորհուրդներին...»:

Բայց լեզուն շարունակում է աշխատել. դե, լեզուն՝ ի՛ր համար. աչքերը՝ իրենց:

— Գիտե՞ք, սիրելի ընկեր, ես շատ եմ սիրում ձմեռային տեսարաններ... Ձմեռ... ձյուն... մի փոքրիկ խրճիթ... խարույկ... լուսին...

Ու հիացած նայում է իր նկարածին. — զո՛հ է, շատ է զոհ իրենից ու իր աշխատանքից Եֆիմ Բրավելմանը:

Մինչ Եֆիմ Բրավելմանն այդպես ցուցադրում է իրեն ու խորամանկ ժպտում — ներողամիտ հայացքը մերթ ինձ, մերթ Բենժամենին հառելով՝ լուռ լսում է Բելոգուրովը: Դեմքի արտահայտությունն այնպես է, կարծես ասելիս լինի, թե ինքն է ամաչում այդ անպատկառ Եֆիմի փոխարեն: Սպասում է, մինչև այս վերջինս վերջացնի իր անպատկառ ափեղցփեղությունը, որ ինքն սկսի իր տխուր զրույցը: Ես շուռ եմ գալիս դեպի նա և հարցնում.

— Որքա՞ն ժամանակ է այստեղ եք:

— Ութ ամիս:

— Դրսում նկարո՞ւմ էիք:

— Ոչ. այստեղ սկսեցի: — Եվ ամոթխած ժպիտն ու ներողամտություն հայցող աչքերը հեռացնում է մի կողմ,— տխուր նայում է իր նկարներին:

— Գիտե՞ք, — ասում է նա հետո՝ նայելով դեմքիցս այն կողմը, — այստեղ այնքան էլ հարմարություններ չկան... Մենյակ չկա, սովորեցնող չկա — ինքներս մեր ուժերով յոլա ենք գնում... Դժվար է այսպես մի բանի հասնել, առանց սովորեցնողի...

Եվ նա մի վայրկյան տխուր, լուրջ նայում է ինձ, և այնքան անձուկ է նրա հայացքը, որ անվերապահ կերպով հավատում ես նրան:

— Իզուր եք դուք ընդօրինակելով զբաղվում, աշխատեցեք բնությունից նկարել, էտյուդներ անել:

— Ա՛յ, շատ ճիշտ ասեցիք, — մեջ է ընկնում կրկին Եֆիմ Բրավելմանը. — բայց ի՞նչ բնություն կգտնեք Ուղղիչ Տանը...Եվ նույնիսկ... Երևանում...

Իսկ աչքերը ժպտում են, ժպտում են խորամանկ. «հո սպանեցի՞ հիմա, հիմա հո մեռա՞ր» — խորամանկ ժպտալով, չար խոցելով՝ ասում են Եֆիմի աչքերը: Այս անգամ ես եմ շրջում հայացքս, որպեսզի չտեսնեմ Եֆիմ Բրավելմանի վատ աչքերը:

Այստեղ մեզ մոտենում է քառասունին մոտիկ, լայն բաց արած կանաչ աչքերով, ինտելիգենտի դեմքով մեկը: Լայնաթիկունք է. Միջահասակ. լայն դեմքի մեջ պառավային, կանացի ինչ-որ բան կա. թե՛ դեմքը, թե՛ աչքերը վստահություն չեն

ներշնչում: Հարուստ ընտանիքից է երևում, կրթություն ստացած: Սուր, խոցող աչքերով տնտղում էիմ դեմքը, ձեռքերն իրար քսելով: Ու անմիջապես շուռ է գալիս, գնում է դուրս:

— Ո՞վ է, հարցնում եմ իմ չիչերոնեին:

— Հե՛չ: Նախկին խորհրդային ծառայող:

— Ի՞նչ գործով է բռնված:

— Յուրացման: — Ու տեսնելով, որ դեռ ես երկար պիտի տանջեմ նրան իմ այս ստերեոտիպ հարցով՝ ավանսով բացատրում է.

— Հենց հինչքա՛ն ինտելիգենտ տեսնես՝ իմաց կաց, որ դա յուրացում ա, յա վատնում: Էս մին բանում համարյա թե բացառություն չկա:

Մենք բաժանվում ենք նկարիչներից և բարձրանում բեմ՝ դեկորները նայելու: Եֆիմ Բրավելմանը գնում է շարունակելու իր գործը, իսկ Բելոգուրովը գալիս է մեր հետևից: Երևում է՝ ինչ-որ բան է ուզում ասել, բայց քաշվում է, սպասում է հարմար առիթի:

Բեմի վրա մեզ կրկին մոտենում է Համոն և ոգևորված, ոգևորությունից վառվող աչքերով սկսում է պատմել Ուղղիչ Տան թատերասրահի կառուցման հերոսական պատմությունը:

— Առաջ խո էս բոլորը չկա՞ր, — հենց այսպես էլ սկսում է նա, այդ զարմանալի Համոն, — դիփը մենք ենք շինե... էստեղ կամերներ էին, միջի պատը հանեցինք, մաքրեցինք՝ սկսեցինք պատերը ներկել: Առավոտու վեցից ոտի վրա էինք: Էլ ո՛չ հաց ուտել կար, ո՛չ չայ խմել: Դեկարացիաները շինեցին Եֆիմն ու Բելոգուրովը...

Լսելով իր անունը Բելոգուրովն օգտվում է առիթից և մոտենում է մեզ: Ես ևս, օգտվելով առիթից՝ հարցնում եմ՝.

— Դո՞ւք եք նկարել դեկորները և ներկել դահլիճը:

— Այո՛, ես և Բրավելմանը...

Բրավելմանը, որ սատանի հոտառություն ուներ և կատվի լսողություն, լսելով իր անունը՝ անմիջապես թողեց իր գործը և մոտեցավ մեզ: Ինչպե՞ս կարող էր մի տեղ իր անունը տրվել, և նա ներկա չգտնվեր: Բացի այս՝ նա իր նուրբ հոտառությամբ երևի զգաց, որ խոսքը դահլիճում կատարված աշխատանքների շուրջն է պտտվում — և

կարո՞ղ էր արդյոք չմասնակցել նա այդ զրույցին, նա, որ այնքան քրտինք է թափել այս դահլիճի համար և — երևակայո՞ւմ եք — չի ստացել փոխարենը և ո՛չ մի կոպեկ...

— Այսքան աշխատանք և ո՛չ մի կոպեկ, — ասաց Եֆիմ Բրավելմանը, տխուր, խոր հոգոց քաշելով:

— Իսկ ո՞վ է տալիս ձեզ այդ ներկերը, որոնցով դուք նկարում եք ձեր հրաշալի ձմեռային տեսարանները, — չհամբերելով՝ հարց տվի ես նրան՝ Եֆիմ Բրավելմանին:

— Կուլտբաժինը:

— Իսկ ի՞նչ են արվում նկարները:

— Ծախվում են, և մենք տոկոսներ ենք ստանում:

Ես հարցը համարում եմ փակված և, երբ շուռ եմ գալիս, որ իջնեմ բեմից ու գնամ դուրս՝ աչքերս հանդիպում են գունատ Բելոգուրովի ամաչկոտ, ներողություն հայցող աչքերին: Նա շատ ամաչեց այդ օրը իր հրեա ընկերոջ փոխարեն — այդ էին ասում նրա աչքերը, — ժողովրդի խոսքով ասած՝ Եֆիմ Բրավելմանի փոխարեն ամոթից գետինը մտավ այդ օրը այդ խեղճ, այդ անքանքար դեգեներատը՝ կալանավոր նկարիչ Բելոգուրովը, որ մեղադրվում էր զինվորական լրտեսության մեջ, բայց դրան մինչև օրս էլ ես չեմ հավատում, չեմ կարող հավատալ:

Երբ մենք դուրս եկանք դահլիճից և քայլեցինք միջանցքով, որ մտնենք կուլտբաժնի գրադարան-ընթերցարանը, մեր հետևից ստվերի պես բուսելով՝ նորից, երրորդ անգամ, մոտեցավ ինձ նկարիչ Բելոգուրովը: Իր դողդոջուն ձեռքով բռնելով իմ թևը՝ խորհրդավոր ժպիտը դեմքին ինձ պատի մոտ տարավ Բելոգուրովը և, նայելով գետնին, արագ-արագ ասաց,

— Չհավատա՛ք Եֆիմ Բրավելմանին: Նա խարդախ է ու խաբեբա: Նա գողանում է կուլտբաժնի ներկերը, իր համար նկարներ նկարում ու ծախում կալանավորներին...

Տեսնելով, որ ես շփոթվեցի և չգիտեմ ի՛նչ պատասխանեմ՝ նա արագ հեռացավ ինձանից, բայց մի քանի քայլ անելուց հետո կրկին մոտեցավ և միշտ ներքև, միշտ մի կողմ նայելով՝ խնդրեց.

— Մեզ մի ուսուցիչ է հարկավոր, ընկե՛ր, մի նկարիչ ուսուցիչ: Դուք երևի քաղաքում կունենաք ծանոթ նկարիչներ. խնդրեցեք, թող մի անգամ գան և մեզ ցուցմունքներ անեն...

Խե՛ղճ Բելոգուրով: Իր այդ խնդիրքով նա երևի ուզում էր շտկել քիչ առաջ թողած իր ո՛չ այնքան էլ գեղեցիկ տպավորությունը: Եվ, երևի մտածելով, որ դրանով է՛լ ավելի կսրբի իր հանցանքը, նա ավելացրեց.

— Իսկ մինչ այդ ես կաշխատեմ բնությունից նկարել...Բնությունը ամե՛ն տեղ էլ բնություն է — նույնիսկ Ե...

Երևի ուզում էր ասել՝ Երևանում, բայց իսկույն գլխի ընկավ ու շտապով շտկեց.

— Ուղղիչ Տանը...

Այո՛, բնությունը ամեն տեղ բնություն է, սիրելի Բելոգուրով, — նույնիսկ Ուղղիչ Տանը: Այս խոսքդ ես հավանեցի այն ժամանակ և կրկնում եմ հիմա, երբ գրում եմ տպավորություններս: Եվ, ինչպես այն ժամանակ այնտեղ, Ուղղիչ Տան կուլտբաժնի միջանցքում, այնպես էլ հիմա իմ սիրտը դառնությամբ է լցվում, երբ ես հարց եմ տալիս ինձ, թե ինչո՞ւ է այդ միևնույն բնությունը միևնույն խմորից թխում թե՛ հանճարներ, թե՛ դեգեներատներ...

«Բնությունը ամեն տեղ բնություն է» — այս մեկը դու լավ ասացիր, թանկագին Բելոգո՛ւրով:

VI. Ասլան-բիձեն, նրա զարմանալի կինը, կուլտբաժնի սխեման, թուրք պեյզանները, Բենժամենի իմաստությունը և նահիրյան Օտտո Վայնինգերը՝ Լագգին

Վերջապես մենք բաժանվեցինք Բելոգուրովից և մտանք գրադարան-ընթերցարանը:

Մի բավականին ընդարձակ սենյակ՝ դիմացը գրքակալներ: Դեպի աջ մի երկար սեղան՝ վրան զանազան թերթեր: Պատերին նկարներ ու դիագրամաներ:

Ներս մտնելիս առաջին հերթին իմ աչքին ընկավ մոտ 50– 55 տարեկան, բարձրահասակ, գյուղական հագուստով, ղազախեցու հսկա փափախը գլխին մի կալանավոր, որ դռան մոտ աթոռի վրա նստած թերթ էր կարդում:

— Սա էլ մեր Ասլան-բիձեն, — ուրախացած բացականչեց Բենժամենը և դառնալով նրան.

— Աբա՛ մի ծանոթացի էս մեր նոր ընկերոջ հետ, — ավելացրեց նա և բռնելով Ասլան-բիձի ձեռքը՝ քաշ տվեց դեպի ինձ:

Տղամարդու դեմք ուներ Ասլան-բիձեն. մազերը համարյա ամբողջովին սպիտակած էին, բայց առույգ էր, ինչպես երիտասարդ:

— Ինչի՞ համար ես բռնված, — տվի ես Ասլան-բիձին իմ մշտական հարցը:

— Ես գիդա՞մ, հնգե՛ր ջան: Ասում են՝ բանդիտ ես...

— Ո՞նց թե բանդիտ:

— Դե էդպես որոշեցին: Ամա, թե իմ գործը ուրիշ գործա, երգար պատմութեն ա...

Առհասարակ հարկավոր է ասել, որ Ուղղիչ Տուն ընկնելու հենց առաջին օրից ես նկատեցի, որ այստեղ չկա անգամ մի կալանավոր, որ իրեն հանցավոր համարի: Բոլորն էլ, նույնիսկ երկու-երեք սպանություն կատարած կալանավորները, միանգամայն անկեղծ բողոքում էին, որ ձերբակալել են իրենց, — կարծես ոչ թե իրենք էին կատարել այդ հանցագործությունները, այլ մի ուրիշը: Եթե նրանց լսելու լինեինք՝ դուրս կգար, որ իզուր տեղը հավաքել են անմեղ մարդկանց ու պահում են Ուղղիչ Տան պատերում: Եվ ամենահետաքրքիրն այն էր, որ նրանք, այդ հանցագործները, ո՛չ թե դիտմամբ, մտացածին ձևով էին իրենց արդար համարում, այլ դա նրանց մեջ բնազդի նման մի բան էր, համարյա բնախոսական մի նախապաշարմունք, որի դեմ հակաճառելն անհույս գործ էր, ինչպես ես համոզվեցի հետագայում: Գոյության դաժան պայքարի հետևանքով իր նորմալ շրջապատից առանձնացված «սոցիալական անասունի» տարերային բողոքն էր դա երևի իրեն առանձնացնողների դեմ, — խուլ, տարերային, մթին մի բողոք, որ անհաղթելի է, ինչպես յուրաքանչյուր բնազդ, և անընկճելի, ինչպես բոլոր սոցիալական բնազդները: Որպես այդպիսին, պարզ է, որ դա ոչ մի տրամաբանության չի ենթարկվում, ինչքան ուզում եք համոզեք կալանավորին, որ նա սպանելով կամ գողանալով՝ հանցագործություն է կատարել — նա էլի «իր համոզմունքին կմնա»: Կհամաձայնվի, իհարկե, որ կատարել է անթույլատրելի մի բան, սակայն ամեն կերպ կաշխատի արդարացնել իրեն ու վերջին հաշվով իր այդ ինքնարդարացումը կփոխի խուլ, տարերային բողոքի... Ո՞ւմ դեմ՝ ինքն էլ չգիտե: Սա բնազդ է, բնախոսություն, ինչ որկուզեք — սակայն սա փաստ է՝ համառ, որպես բոլոր փաստերը:

Ինչ վերաբերում է Ասլան-բիձին՝ նա հետագայում պատմեց ինձ իր գործը, և ես չգիտեի՝ հեքիա՞թ է այդ, թե մեր օրերի իրականություն: Ասլան-բիձեն ապրելիս է եղել գյուղում իր կնոջ հետ, որին սիրել է չափից ավելի, սակայն կինն ավելի է նրան սիրել, քան ինքը կնոջը: Ես շատ եմ լսել ու կարդացել սիրային պատմություններ, բայց նման զարմանալի պատմություն ես լսում էի առաջին անգամ և դժվարությամբ էի հավատում:

— Բայց արի տես որ՝ երե՛խա չունեինք, — պատմում էր Ասլան-բիձեն, — ու գեղում խոսք ընկավ, որ դա ոչ թե կնկանիցս ա, այլ իբրև ինձանից... Ըստեղ դե կնիկս է՛լ համբերեց ոչ, վեր կացավ հարևան գեղը գնաց ինձ համար նոր կնիկ ճարի, թե ինչ

ա՝շանց տա գեղին, որ ոչ թե ինձանից և էդ մեղքը, այլ իրանից... Դե ես էլ է՛լ համբերեցի ոչ, է՛լ կարացի ոչ, թե տանեմ էս անպատվութենը, փախա սարերը, դարձա ղաչաղ... Դուզ է, դարձա ղաչաղ, համա թե մարթ ասես ձեռք տվամ ոչ... Տասը տարուց ավել էդպես ղաչաղություն արի, վերջն էլ բալշևիկը եկավ բռնեց, թե ղաչաղ ես, բանդիտ ես...

Ահա՛ Ասլան-բիձի համառոտ պատմությունը, որն իր պրիմիտիվ ողբերգականությամբ կարող է մրցել շեքսպիրյան բոլոր ողբերգությունների հետ: Սակայն ինչպես ես հետագայում ուրիշներից իմացա՝ Ասլան-բիձեն մի «փոքրիկ» բան ինձանից թաքցրեց: Դա Ասլան-բիձի համար այն «աննշան հանգամանքն էր, որ ինքը 20 թվի ղազախի ապստամբության ժամանակ օգնելիս է եղել դաշնակներին և, կարծեմ, բավականին ակտիվ: Բայց, չնայած սրան, Ասլան-բիձեն արդենմիանգամայն անշառ մարդ էր և Կենտգործկոմը շուտով նրան ներում շնորհեց:

Ասլան-բիձի հետ առաջին անգամ հանդիպելիս ես դեռ չգիտեի նրա պատմությունը, սակայն նա իմ ուշադրությունը գրավեց և մի այլ բանով: Առաջին իսկ հայացքից ինձ տարօրինակ թվաց, որ նա թերթ է կարդում: Հարցրի.

— Սիրո՞ւմ ես կարդալ, Ասլան-բիձա:

— Խի՞ չեմ սիրում... Շա՛տ, — պատասխանեց Ասլան-բիձեն. — շնորհակալ եմ խորհրդային իշխանությունից… Ըստե՛ղ սովորեցի կարթալը, շկոլումը... Համ էլ ես կուլտբաժնի ցրիչն եմ. ըստեղ նստում գազեթ եմ կարթում սաղ օրը, օրըս էլ օր ու կես են հաշվում: Շե՛ն կենան իրանք. ես խորհրդային իշխանությունից գանգատ ունե՛մ ոչ...

Բացի Ասլան-բիձեն՝ ընթերցարանում սեղանի շուրջը նստած կային մի շարք կալանավորներ, որոնք բոլորն էլ թերթեր էին կարդում: Մեծ մասը գյուղացիներ էին, մի քանիսը թուրք: Դրանք կարդում էին լատինատառ «Ենի Յոլ»-ը:

Ուղղիչ Տան դպրոցում էին սովորել լատինական այբուբենը: Հետո, երբ մտանք դպրոցը, մենք տեսանք քսանի չափ թուրք կալանավորներ, որոնք ամենայն հեշտությամբ անցնում էին լատինատառ դասագիրքը:

Մինչ այդ՝ Բենժամենը կանչեց ինձ ընթերցարանի ձախ պատի մոտ և ցույց տվեց պատին փակցրած պլակատանման նկարը.

— է՛ս էլ հին ու նոր բանտերը — Բելոգուրովն է նկարել...

Ամենայն հետաքրքրությամբ սկսեցի զննել այդ նկարը:

Նկարը մեջտեղից բաժանված էր երկու մասի, ինչպես լինում է սովորական լուբոկներում, և յուրաքանչյուր մասում հինգ առանձին նկարներով տրվում էր հին, ցարական բանտի և նոր, խորհրդային Ուղղիչ Տան պատմությունը:

Աջ կողմում. 1. — Գյուղացուն վզակոթին տալով նետում են բանտ. 2. — Ոտներին գամում են շղթաներ. 3. — Փակ, մութ, կեղտոտ կամերա. հատակի վրա փռված բանտարկյալները թուղթ են խաղում, ծեծում ու զզզզում իրար. 4. — Կեղտոտ, հյուծված բանտարկյալին վզակոթին տալով հրում են դուրս. 5. — Ազատված բանտարկյալը հենց բանտի դռան մոտ ձեռքը կոխել է անցորդի գրպանը, իսկ փողոցի անկյունից վազում է ոստիկանը ազատված բանտարկյալին կրկին ձերբակալելու:

«Ահա՛ նախկին, ցարական ռեժիմի բանտը և ուղղիչ քաղաքականությունը» — լուբոկային իր պարզ, բոլորին հասկանալի լեզվով ասում էր Բելոգուրովի նկարի աջ կողմը:

Նկարի ձախ կողմը. 1. — Կալանավորը միլիցիոների հետ մտնում է Ուղղիչ Տուն. 2. — Կալանավորը աշխատում է հյուրանոցում. 3 — Կալանավորը դպրոցում. 4. — Ազատվող կալանավորը Ուղղիչ Տան գրասենյակում ստանում է իրեն հասանելիք աշխատավարձը. 5.-Ազատված կալանավորը գյուղի ճանապարհին՝ մի թևի տակ գրքեր, իսկ մյուսի տակ կապոց. երևի նվերներ է տանում իր կնոջն ու երեխաներին...

Այսպես էր պատմել խորհրդային Ուղղիչ Տան և ուղղիչ քաղաքականության մասին իր նկարի ձախ կողմում նույն այդ Ուղղիչ Տան կալանավոր Կոստանդին Բելոգուրովը:

Հետո մենք նայեցինք Ուղղիչ Տան պատի թերթը, որ կոչվում էր «Ճառագայթ»: Գրված էր երեք լեզվով՝ հայերեն, թուրքերեն, ռուսերեն: Ապա ես մոտեցա գրքակալներին և սկսեցի նայել գրքերը: Հայերեն, ռուսերեն, թուրքերեն: Քաղաքական գրականություն և բելետրիստիկա: Պետք է ասել, որ գրադարանն այնքան էլ հարուստ չէր: Հետագայում մենք մի քանի անգամով հարստացրինք այդ փոքրիկ գրադարանը:

— Ի՞նչ գրքերի կարիք է զգացվում, — հարցրի գրադարանապետին, որը միևնույն ժամանակ թե՛ ներկարար էր և թե՛ շրջանակներ շինող:

— Գեղարվեստական: — Տվեք ռոմաններ: Ուրիշ բան հարկավոր չէ: Քաղաքական գրքեր էլ են կարդում, բայց քիչ: Տվե՛ք բելետրիստիկա:

Այսպես է կարծեմ բոլոր բանտերում և ուղղիչ տներում: Մարդիկ երևի պահանջ են զգում կորցրած ազատությունը, դրսի ընդարձակ ու բազմապիսի կյանքն ապրել ու զգալ... գոնե գրքերում: Այսպես է կյանքը:

Գրադարան-ընթերցարանից հետո մենք մտանք կուլտբաժնի գրասենյակը, ուր ես ծանոթացա բաժնի վարիչի հետ, ևնա ինձ ցույց տվեց կուլտբաժնի սխեման:

Կուլտբաժինն ուներ հետևյալ սեկցիաները.-

1. Գրական, որի մեջ մտնում էին գրադարան-ընթերցարանը, պատի ու կենդանի լրագրերը և շախմատային ենթասեկցիան:

2. Թատերական, որ ուներ երեք խումբ. հայկական, թուրքական, ռուսական:

3. Նկարչական, որ բաժանվում էր երկու ենթաբաժնի՝ դպրոցական և արտադրական:

4. Երաժշտական, որ ուներ արևելյան երաժշտախումբ և երգեցիկ խումբ:

5. Իրավաբանական բյուրո, որի պարտականությունների մեջ էր մտնում կալանավորներին իրավաբանական օգնություն հասցնելը: Գրում էր խնդիրներ, հրավիրում էր պաշտպանների, կազմակերպում էր իրավաբանական հանրամատչելի զեկուցումներ և այլն: Իրավաբանական բյուրոն գտնվում էր հենց այդտեղ՝ գրասենյակում, և նրա սեղանի առաջ միշտ խռնված էին լինում կալանավորները՝ զանազան գործերով:

6. Ընկերական դատարան, որ ուներ դատախազական բաժին և իրավապաշտպանների կոլեգիա:

7. ֆիզկուլտուրայի. — այս սեկցիան կարծեմ մինչև վերջն էլ թղթի վրա մնաց. կալանավորները, մանավանդ գյուղացիք, խորշում էին ֆիզկուլտուրայից, որպես ամոթաբեր մի բանից: Հետագայում կազմակերպված մեր մի քանի զրույցները չտվին ոչ մի արդյունք:

Այս էր կուլտբաժնի սխեման: Սեկցիաների վարիչները կազմում էին կուլտկոմիսիա, որ ընտրվում էր կալանավորների ընդհանուր ժողովում: Այդտեղ էին ընտրվում նաև կուլտկոմիսիայի նախագահը և ընկերական դատարանի դատախազը: Իսկ ամբողջ կուլտբաժինը ղեկավարում էր կուլտբաժնի վարիչը, որը կալանավոր չէր և մտնում էր Ուղղիչ Տան վարչության մեջ՝ կոլեգիայի անգամի իրավունքով:

Դպրոցն առանձին էր և չէր գտնվում կուլտկոմիսիայի իրավասության ներքո: Նա առանձին գծով ենթարկվում էր կուլտբաժնի վարիչին և նրա միջոցով՝ Երևանի քաղլուսվարին, որը և նշանակում էր ուսուցիչներ: Դրսից միայն երկու ուսուցիչներ կային, մնացածները կալանավորներ էին, թվով վեց, որոնցից չորսը՝ թուրք: Դպրոցին կից կային և քաղգրագիտության ու գյուղատնտեսական խմբակներ, որոնցից

առաջինում աշխատանքները տանում էր կուլտբաժնի վարիչը, իսկ երկրորդում՝ երիտասարդ մի կալանավոր, նախկին գյուղատնտես:

Կուլտբաժնի վարիչի հետ միասին երբ մտանք դպրոցը, այդտեղ պարապում էր թուրքական խմբակը: Քսանի չափ թուրք կալանավորներ, բոլորը գյուղացի, պարապում էին լատինատառ դասագրքով:

— Հե՞շտ է, — հարցրի մեկին թուրքերեն, — և բոլորը միասին պատասխանեցին.

— Կոլա՛յ դը, կոլա՛յ դը…

Վերցրի մեկի տետրակը և սկսեցի բարձրաձայն կարդալ, հարկավոր էր տեսնել այդ պահուն նրա աչքերը՝ հասկանալու համար, թե ի՛նչ է նշանակում գեղջուկ մարդու հիացմունք հասարակ բաների առիթով:

Ես էլ էի հիացած, բայց ո՛չ թե իմ ընթերցանությամբ, այլ այդ թուրք պեյզանների առաջադիմությամբ: Հետագայում նրանք ինձ ցույց էին տալիս իրենց գրած նամակները, որոնք եթե վերածելու լինեիք հայերենի՝ դուրս կգային Թումանյանի Գիքորի հոր հռչակավոր նամակի համարյա տառացի պատճենները: Նույն ոճը, նույն անմիջական հետաքրքրությունը՝ հարազատ մարդկանց ու հարազատ կենդանիների անցուդարձով, նույն բարևները՝ յուրաքանչյուր բարեկամին առանձին, նույն գեղջկական միամիտ քերականությունը...

Սակայն իմ այդ առաջին այցը թուրքական խմբակին ինձ համար առանձնապես նշանակալից էր նրանով, որ ես այդտեղ առաջին անգամ հանդիպեցի Բաղդասարին, Ուղղիչ Տան հռչակավոր Բաղդասարին, որը նստած «լատիներեն» էր սովորում թուրք պեյզանների հետ միասին...

Բայց Բաղդասարի մասին — հետո:

Երբ դուրս եկանք դասարանից, չգիտեմ ինչու, կրկին մտանք թատերական դահլիճը և բարձրացանք բեմ: Զարմանալի Համոն դեռ զբաղված էր իր դեկորներով, իսկ Բելոգուրովն ու Եֆիմ Բրավելմանը դահլիճի վերևի մասում զբաղված էին իրենց նկարչությամբ: Ես այնքան էի տարվել իմ տեսածներով ու լսածներով, որ միանգամայն մոռացել էի ուր լինելս:Եվ ահա, չգիտեմ ի՛նչպես պատահեց, — ես սթափվեցի այն ժամանակ միայն, երբ մենք արդեն կանգնած էինք բեմի աջ կողմը, դեկորների հետևը գտնվող բաց պատուհանի առաջ... Այո՛, բաց պատուհանի, որի ճաղերի միջից երևում էր աշնանային Երևանը... Կարծես քնած էի, և սառը ջուր լըցրին գլխիս — այդքան անակնկալ էր տպավորությունը: Երևակայո՞ւմ եք՝ Երևանը, այդ տափակ տների ու գորշ այգիների մոխրագույն տեսարանը արավ ինձ վրա շշմեցնող, հարբեցնող, խենթացնող տպավորություն: Նայեցի Բենժամենին

նա էլ էր նայում Երևանին: Աչքերում թախիծ կար և անսահման, անսահման, ես կասեի՝ անասնական կարոտ... Մոտ երկու տարի էր, որ նստած էր նա Ուղղիչ Տանը — և երեք–չորս անգամ էր ընդամենը քաղաք գնացել:

— Ա, երանի՜ մարդ ա՛յ էն ծառը ըլեր, — ցույց տալով ինչ-որ հեռավոր մի կետ ասաց կամացուկ Բենժամենը, — հի՜նչ լավ կլեր...

— Չէ՛, ծառը լավ չէր լինի, մեկ է՝ չէիր կարող տեղիցդ շարժվել:

— Է, հո ազա՜տ կլեի՝ ջհանդա՜մը թե չէի շարժվի, — պատասխանեց նույն կամացուկ ձայնով Բենժամենը. — լավ ա մարդ դրսևում ծառ ըլնի, քան ըստեղ մարդ...

Մենք լուռ հեռացանք պատուհանից, և ես հետագայում միայն ինչպես հարկն է հասկացա Բենժամենի վերջին խոսքերի հավիտենական ճշմարտությունը — մի պարզ, պրիմիտիվ, ոչ միայն մարդկային, այլև կենդանական, բնախոսական ճշմարտություն, որի մասին միլիոնավոր բանաստեղծություններ կան տպված աշխարհիս բոլոր դասագրքերում:

Երբ մենք Բենժամենի հետ միասին իջնում էինք ներքևի հարկը՝ վառվռուն, կրակոտ աչքերով մեզ առաջ վազեց Լազգին.

— Հիշկե՛ք՝ լա՞վ ենք մաքրուկ, — ասաց նա և ցույց տվեց մաքուր սրբած միջանցքը: Եվ ապա — գաղտնի, հույժ կոնֆիդենցիալ, խորհրդավոր ժպիտը դեմքին մոտեցավ նա ինձ, աջ ձեռքը հովանոցի նման դրեց ականջիս վերևը, շրթունքները մոտեցրեց և հայացքը Բենժամենին հառած՝ ասաց ինձ իբր թե կամացուկ, բայց էապես այնպես, որ Բենժամենը ևս լսի.

— Մի նոր պոռնիկ կնիկ են բերուկ... Ի՛մ արև:

Ու ցատկելով մի կողմ՝ այծանման մկկաց:

Հետո լուրջ դեմք ընդունեց, ձեռքով ու քունքերով զարմացական շարժում արավ և ավելացրեց.

— Հնչի՞ կբերեն ըդրանց — չեմ խասկընա... Կնիկն ի՞նչ ա՝ բերեն դնեն բանտ՝ խաց տան ուտա... Կրակ տան՝ վառե՛ն:

— Ինչո՞ւ, Լազդի՛, նրանք էլ մարդ են մեզ պես:

— Մա՞րթ,— միանգամայն անկեղծ, ֆենոմենալ անկեղծությամբ բացականչեց Լազգին. — թե ըդրանք մարթ են՝ Լազգին շո՛ւն ա...

Ու բռունցքով ամուր խփեց իր կրծքին, շուռ եկավ — վազելով հեռացավ:

Ֆենոմենալ կնատյաց էր Լազգին. եթե ճեմարանավարտ լիներ՝ անպայման կդառնար մի նահիրյան Օտտո Վայնինգեր... այդ սքանչեփ Լազգին:

VII. Կուլտբաժնի պարետը, բողոքական տերտերը, Ուղղիչ Տան շախմատային չեմպիոնը, Մարգարիտը, Անուշը և կալանավորների բարոյական զարմանալի նորմերը

Երեկոյան ես բարձրացա կուլտբաժին՝ կալանավորների ներկայացումը տեսնելու:

Ժամը դեռ 6-ն էր: Ներկայացումը սկսվելու էր 7-ին, բայց ամբողջ կուլտբաժինը արդեն խառնվել էր իրար՝ պատրաստություններ էր տեսնում: Ես կրկին իմ անբաժան չիչերոնեի հետ էի՝Բենժամենի հետ:

Ներքևում, ուր սկսվում էին կուլտբաժին տանող սանդուղքները՝ կանգնած էին երկու կալանավոր և մարդ չէին թողնում վերև: Բաժանված էին տոմսեր, որոնցով և ժամանակին գալու էին կալանավորները: Միջանցքում անհանգիստ դեսուդեն էր վազում սանսեկցիայի ամենաեռանդուն աշխատակիցը՝ Լազգին. մաքրության էր հետևում:

Մեզ բաց թողին առանց տոմսի, և մենք բարձրացանք վերև: Մաքուր էր: Լույս: Սանդուղքի դիմացի պատին և վերը՝ միջանցքի պատերին — յուղաներկ նկարներ: Մարդիկ, հաճելի հոգսը դեմքներին, դեսուդեն էին վազում, կարծես գավառական թատրոն էր՝ տեղական սիրողների ներկայացումն սկսվելուց մի ժամ առաջ...

Առաջին հերթին իմ ուշադրությունը գրավեց մի գունատ, բարակ, բարձրահասակ, երազողի դեմքով երիտասարդ, որ, ինչպես գնդապետը պատերազմի դաշտում՝ եռուզեռի կենտրոնում կանգնած հրամաններ էր արձակում; Հարցրի ու իմացա, որ դա կուլտբաժնի պարետն է, Սուրենը: Շատ համակրելի դեմք ուներ այդ Սուրենը:

— Տեսնո՞ւմ ես մեր Սուրենին, — ցույց տվեց Բենժամենը:

— Ինչ գործով է:

— Սպանության: Դրանք երեք հոգի են, բոլորն էլ հենց էդպես ջահել տղերք: Հետով շանց կտամ:

Հետաքրքրված՝ ես մոտեցա Սուրենին: Այդ պահուն նա կանգնած էր դահլիճի երկրորդ դռան մոտ, որի միջով կուլտբաժնի գրասենյակն էին տեղափոխում իրենց նկարչական արհեստանոցն ու կիսավարտ նկարները Եֆիմ Բրավելմանը և Բելոգուրովը: Նրանց օգնում էին Ասլան -բիձեն և մի կաղ, կանաչ շինել հագած, ոտաբոբիկ կալանավոր, որ գրավեց իմ ուշադրությունը իր գունատ, աննորմալ դեմքով ու ծայր աստիճանի սև մորուքով ու աչքերով:

— Դա՞ ինչ մարդ է, — հարցրի ես զարմացած, մինչ իմ հետաքրքրության առարկան՝ երեսը իմ կողմը դարձրած՝ իդիոտային ժպիտով ինձ էր նայում, կարծես իր այդ ողորմելի ժպիտով հայցում էր, որ իրեն չխփեմ:

— Դա մեր տերտերն է, — կարճ պատասխանեց Բենժամենը, որ Ուղղիչ Տան բնակչության մասին ուներ սպառիչ տեղեկություններ:

Սակայն հետագայում ես իմացա, որ դա ոչ թե լուսավորչական տերտեր է, այլ բողոքական քարոզիչ: Ասում էր 23 տարեկան է, բայց թողնում էր 40 տարեկանի տպավորություն:Անպայման աննորմալ էր. բռնված էր կրոնական թռուցիկներ տարածելու համար: Թռուցիկներ, որոնցում նա մարգարեանալիս է եղել երկրային իշխանությանց անկումը և աշխարհի մոտալուտ կործանումը: Մի ամիս անց նրան արձակեցին:

— Ինչքա՞ն մարդ է տեղավորվում դահլիճում — հարցրի Սուրենին՝ նրա հետ ծանոթանալու նպատակով: Նա մեղմ ժպտաց, կարմրեց, նայեց իր կոշիկներին ու պատասխանեց.

— Մոտ երկու հարյուր: Փոքր է, դրա համար էլ տոմսերով ենք թողնում: Մի ներկայացումին մի կեսն է գալիս, մյուսին՝ մնացածները:

Խոսում էր գրական բարբառով, սակայն պարզ էր, որ ինտելիգենտ չէ: Խոսակցությունը շարունակելու հնարավորություն չկար շուրջի եռուզեռի պատճառով, ուստի ես բարեկամաբար ժպտացի նրան, և մենք բաժանվեցինք: Հետո ես ճանաչեցի նրան բավականին մոտիկից, և նա թողեց ինձ վրա չափազանց համակրելի, շնորհքով, ընդունակ երիտասարդի տպավորություն:

Մինչ կսկսվեր ներկայացումը՝ մենք մտանք գրադարան-ընթերցարանը: Լույս, տաք, մաքուր: Սեղանի շուրջը նստած թերթ էին կարդում տասի չափ կալանավորներ: Սեղանի վերևի անկյունում, դեմառդեմ նստած, շախմատ էրն խաղում երկու կալանավոր: Դրանցից մեկը սև, կոկ սանրած

մազերով, լայնաթիկունք, ցածրահասակ մի կալանավոր էր, մոտ 25 տարեկան,իսկ մյուսը՝ զինվորականի շորերով մի ռուս: Սև երիտասարդը խաղում էր բավական լավ: Առհասարակ երևում էր — դեմքի լուրջ, կենտրոնացած արտահայտությունից ու խոհուն աչքերից— որ, չնայած անտաշ, կոպիտ արտաքինին՝ մտածող մարդ է: Մի երկու սրամիտ, անակնկալ ընթացքով նա մատ տվեց դիմացինին ու ժպտալով նայեց մեր երեսին: «Լա՞վ է, չէ՞» — կարծեսասում էին նրա ժպտացող աչքերը: Ինչպես ընդունված է բոլոր շախմատային պարտիաների վերջում՝ պարտվողը նախ կարծես չհավատաց, որ «չկա փրկության դուռ», բնազդաբար ձեռքը իր թագավորին տարավ, մի երկու վայրկյան նայեց հարևան քառակուսիներին– և հանկարծ գլխի ընկավ, խառնեց խաղաքարերը: Խաղը վերջացած էր: Պարտվողի դեմքը տխուր էր ու բարկացկոտ, իսկ հայացքը թաքուն ամոթանք էր արտահայտում, ինչպես բոլոր անհաջող շախմատիստներինը:

— Դուք խաղո՞ւմ եք, — դիմեց ինձ սև երիտասարդը և ցույց տվեց խաղատախտակը:

Պրեստիժի խնդիր էր: Ես այնքան էլ ուժեղ չեմ այդ խաղում, բայց դիմացինիս ուժերն էլ դեռ լիովին անհայտ էին ինձ: Ռիսկ արի խաղացի և — երևակայո՞ւմ եք — տարա... Բայց պետք է խոստովանել, որ... համարյա պատահմամբ: Սխալմամբ նա իմ ձիու հարվածի տակ թողեց իր թագավորին և թագուհուն, որից հետո անձնատուր եղավ՝ իհարկե, փնթփնթալով, ինչպես դա ընդունված է նման պարագաներում: Առաջարկեց մի անգամ ևս խաղալ: Ռազմագիտական նկատառումներով ես, իհարկե, հրաժարվեցի և այդպիսով Ուղղիչ Տան մեջ այդ երեկո հռչակվեց իմ անունը, որպես առաջնակարգ շախմատիստի: Ինչպես ինձ ասացին՝ մինչ այդ Ուղղիչ Տան շախմատային չեմպիոնն է եղել իմ երիտասարդ խաղընկերը:

Սակայն նա հետագայում, ինչպես և սպասում էի, հանեց ինձանից իր շախմատային ոխը և վերականգնեց Ուղղիչ Տան շախմատային չեմպիոնի իր անբիծ անունը...

Երբ մենք բարձրացանք ու գնացինք դահլիճ, Բենժամենն ինձ ասաց.

— Գիտե՞ս ով էր դա... էդ շախմատիստը...

— Ո՞վ,

— Դա մեր Նիկոլն է, Սուրենի հընգերը: Հի՛նչ խելացի տղա յա... Լավ դերասանություն և անում:

— Ի՞նչ գործով է:

— Նույն գործով, սպանության: Դա՛ յա, Սուրենը, Խաչիկը: Մին հընգեր էլ ունեին ըստեղ հիվանդանոցում մեռավ... Մեսրոպ էր անունը:

— Հիմա ի՞նչ է անում:

— Ըստեղ մանտյորություն սովորեց, գնում ա դրսևի աշխատանքի: Էլ դժվար թե դրանք ըտենց բան անեն...

Արդեն ժամը յոթն էր, և կալանավորները խուռն բազմությամբ թափվեցին դահլիճը:

Դահլիճի մուտքի մոտ լուրջ, սֆինքսի նման գունատ ու ազդեցիկ կանգնած էր Սուրենը՝ կարգապահության էր հետևում: Ես կանգնած մուտքի մոտ նայում էի նրան, երբ պատահեց մի բան,որ իմ մեջ հիացմունք առաջացրեց դեպի այդ գունատ կալանավորը: Մի աժդահա գյուղացի կալանավոր, որին ինչպես երևում է այդ անգամ տոմս չէր ընկել՝ մտածել էր ներս մտնել իր սեփական տոմսով: Սուրենը նայեց նրա տոմսը, հասկացավ, ավելի գունատվեց և կամացուկ հրամայեց:

— Անմիջապես դո՛ւրս:

Կալանավորը համառեց: Եվ ահա Սուրենը, այդ միջահասակից քիչ բարձր, բարակ, գունատ երիտասարդը գրկեց աժդահա գյուղացուն, թեթև, թղթի նման բարձրացրեց նրան և տարավ դուրս:

Դահլիճում թնդաց հիացած կալանավորների բուռն ծափահարությունը: Սուրենը լուրջ, անայլայլ, գունատ դեմքով վերադարձավ իր տեղը և շարունակեց իր գործը:

Մինչ ես զբաղված էի այս հետաքրքիր բաներով՝ Բենժամենը կորավ: Դես եմ նայում, դեն — չկա: Ուզում էի գնալ ընթերցարանը նայել, երբ դահլիճում թնդաց նվագածությունը: Նվագում էին՝ ջութակ, թառ, դհոլ: Ներս մտա տեսնեմ՝ ջութակ նվագողը Բենժամենն է, իսկ դհոլ խփողը՝ Լազգին... Բեմից դեպի դահլիճ փայտյա բարյերով բաժանված էր մոտ երեք քայլաչափ տարածություն, ուր և նստած էին երաժիշտները:

Արդեն լիքն էր դահլիճը, վերջին հանդիսականներն էին արդեն մտնում դահլիճ. սակայն ամբողջ առաջին կարգը՝ ինձ անհայտ պատճառով ազատ էր թողնված: Կարծեցի վարչության համար է, բայց սխալվեցի: Մի քանի րոպե անց՝ երկու կին հսկիչների ուղեկցությամբ դահլիճ մտան կին-կալանավորները, թվով 10, և բռնեցին առաջին կարգը: Նրանց երթը գլխավորում էին Մարգարիտն ու Անուշը, որոնք իրենց բարձր հովանավորության տակ էին առել իրենց թուրք ընկերուհուն...

Մի գյուղացի տարիքն առած կին կար դրանց մեջ՝ ծծկեր երեխան գրկին: Հարցրի և իմացա, որ անհայտ նպատակով սպանել էր իր ամուսնուն: Երեխան թուխ, ժիր, փամփլիկ երեխա էր —գեղջուկ սևաչյա երեխա...

Հենց որ կանայք մտան՝ Լազգին անհանգստացավ: Աչքերը կրակ դարձան՝ վառվեցին: Այնպես էր խփում դհոլին, կարծես ոխ է հանում: Հետո նա հատուկ շարժումով դհոլը տվեց կողքին նստած մի կալանավորի, ինչ-որ բան ասաց Բենժամենին — և ահա դահլիճում թնդաց լեզգինկան, և Լազգին, այդ կնատյաց Լազգին, նահիրյան այդ Օտտո Վայնինգերը զարմանալի վարպետությամբ սկսեց պարել...

Հարկավոր էր տեսնել Լազգու պարը՝ հասկանալու համար, թե ո՛րքան ռիթմ ու երաժշտություն կա կովկասյան պարերում: Այդտեղ ես նոր գլխի ընկա, թե որտեղի՛ց էր առաջացել նրա անունը. Լազգին ճիշտ որ նման էր լեզգինի: Թեկուզ միջահասակ էր ու վտիտ, սակայն իսկական լեզգինի շարժուձև էր նրա շարժուձևը ու թուխ դեմքը՝ լեզգինի թուխ դեմք: Հագուստն էլ շատ էր նպաստում նմանությանը, սև սատինե, բարձր օձիքով շապիկ, մոխրագույն գալիֆե շալվար, փաթաթաններ, չստեր:

Պարում էր զարմանալի արագ, լեռնցու յուրօրինակ նազանքով, ու կատաղի հայացքներ նետում կանանց կողմը. չինական ֆոկուսնիկի նման՝ աչքերում խաղացնում էր կարծես կրակե խանչալներ...

— «Է՛, չե՛ս խաբի, Լազգի՛» — մտածում էի ես նրա կատաղի հայացքները դիտելով. — «Չափազա՛նց ես դու սիրում կանանց և խոցված ես դու երևում նրանցից... Ինչ լավ է, որ չես կարդացել Օտտո Վայնինգերի «Սեռ և բնավորություն»-ը, եթե ոչ՝ գունատ սեմինարիստի նման կսկսեիր հիմնավորել քո կնատյացությունը այդ կոպեկնոց փիլիսոփայությամբ... Խե՛ղճ Լազգի, սքանչելի՛ Լազգի...»

Երբ Լազգին վերջացրեց իր պարը՝ արագ ցատկեց իր տեղը, նստեց, խլեց դհոլը՝ դրեց իր ծնկներին և ագահ, անհանգիստ, վառվող աչքերով սկսեց տնտղել ու խոցել դեմը նստած կանանց դեմքերը: Դահլիճում ծայր առավ մի խելագար ծափահարություն: Հետո մի քանի տեղից միաժամանակ թնդաց մի կատաղի գոռոց.

— Անո՛ւշը, Անո՛ւշը, Անո՛ւշը...

Շուտով ամբողջ դահլիճը միացավ այդ գոռոցին, դոփեց, ծափահարեց, քրքջաց.

— Անո՛ւշը, Անո՛ւշը...

Պարզ էր. հրավիրում էին պարելու Անուշին: Նայեցի նրան և դժվարացա ծիծաղս պահել: Քառասունին մոտիկ, սև, սաթի նման պսպղուն, հարթ սանրած մազերով, թուխ, բորբսնած դեմքով, միջահասակ մի կին էր Անուշը՝ դատված «միջնորդության» համար: Ազգությամբ ասորի էր, բայց իսկի չէր կարելի կասկածել, որ հայ չէ: Չնայած տարիքին և դեմքի գեղջկական արտահայտությանը՝ «բարձր դասի» կնոջ հավակնություններ ուներ իր զգեստներում

ու սանրվածքում այդ Անուշը: Սև, կարճ զգեստներ էր հագնում, ինչպես գավառական գիմնազիստուհիև... սպիտակ գուլպաներ: Բարձրակրունկ կիսակոշիկներ: Խոսելիս ծամածռում էր բերանը, շրթունքները մանկականի էր նմանեցնում: Բառերը արտասանում էր մանկական առոգանությամբ: Մի խոսքով՝ նաիրյան, ղանթարային ֆորմացիայի հին պոռնիկ էր Անուշը՝ ռուս փողոցային կանանց քաղաքակրթության ենթարկված:

Կեղծ-զուսպ, կեղծ-ամաչկոտ հաճույքով, շինծու ամոթխածությամբ ընդունեց Անուշը կալանավորների կողմից իր հասցեին ուղղած այդ ահռելի օվացիան. գլուխը մանկան պես թեքեց Մարգարիտի ուսին, երեսը ծածկեց ձեռներով.

— Ամա՛ն, ես չեմ կրնա... ես կամչնա՛մ...

— Դե, լա՛վ, հա՛, մի՛ կոտրտվի, մեռնի՛մ համոթիդ, — հովանավորող, հասկացող հեգնանքով պատասխանեց Մարգարիտը և բամփեց Անուշին: Արժե այստեղ մի երկու խոսքով նկարագրել և՛ Մարգարիտին, որ ամեն ինչով Անուշի հակապատկերն էր, բայց նրա անբաժան ընկերուհին:

Հիսունին մոտիկ, բարձրահասակ, լիքը, մետաղագույն դեմքով — իսկական նաիրյան «մատրյոնա» էր Մարգարիտը, նաիրյան կես-գեղջկական, ծայրամասային «գրանդ դամա»: Շարժուձևը հանգիստ էր, վեհ ու սոլիդ: Մոնումենտալ կուրծք ուներ ու նստուկ, որոնցով կալանավորներին սրախոսությունների անսպառ նյութ էր մատակարարում: Բայց կալանավորները վախում ու քաշվում էին նրանից՝ երբեք չէին համարձակվի նրա հետ այնպես ցինիկ վարվել, ինչպես հաճախ Անուշի հետ էին վարվում: Սակայն ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար հարկավոր է ասել, որ Անուշը պակաս բավականությամբ չէ, որ ընդունում էր կալանավորների ծայր աստիճանի գռեհիկ, ղանթարային հաճոյախոսությունները:

Վերջապես, երկար կոտրատվելուց հետո, Անուշը վեր թռավ տեղից և զույգ ձեռքերով դեմքը ծածկած, այնպես որ մատների արանքից համենայն դեպս տեսնի դահլիճը, մոտեցավ բարյերին, որ անցնի ու սկսի իր պարը: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո — վեր է ոչ միայն զարմանքից, այլև մարդկային դատողությունից: Զարմանալի աշխարհ է կալանավորների աշխարհը և ունի իր աներևակայելի օրենքները և բարոյական զարմանալի նորմերը...

Անուշը, ինչպես ասացի, զույգ ձեռքերով դեմքը ծածկած մոտեցավ բարյերին, որ անցնի, բայց հանկարծ հատուկ շարժումով դեմքից հեռացրեց ձեռքերը, չանչ արավ դեպի այն կողմը, ուր լինելու էին երաժիշտները, ծիծաղեց — և արագ վազեց իր տեղը: Դահլիճում ծափահարությունը, աղմուկն ու ծիծաղը հասավ իր գագաթնակետին, կատաղի մոլեգնության: Առաջին վայրկյանին ես չհասկացա այդ

բոլորի իմաստը, բայց երբ մի անգամ ևս նայեցի երաժիշտների նստարանին — ամեն ինչ պարզվեց:

Երաժիշտները չկային:

— Ա՛յ տղա, ի՞նչու փախաք, — քիչ հետո հարցրի ես Բենժամենին, որ քիչ-շատ կրթություն ուներ և կարող էր քիչ բարձր մնալ այդ աշխարհում տիրող բարոյական նորմերից:

— Բա մարթ հեսքան մարթի առաջ կածի, որ պոռնիկ կնիկը պա՞ր գա, — առարկություն չվերցնող տոնով, առանց ամաչելու պատասխանեց Բենժամենը:

Ապշեցի: Խոսք չգտա ասելու: Լավ էր, որ այդ ժամանակ բարձրացավ վարագույրը, և ներկայացումն սկսվեց...

VIII. Բեմը, պիեսը, կալանավոր դերասաններն ու հանդիսականները, Անահիտը, Նիկոլը, Համոն, Եֆիմ Բրավելմանի կուպլետները - воздух

Վարագույրը բացվելուն պես աղմուկն անմիջապես դադարեց, և դահլիճում տիրեց մեռելային լռություն:

Բեմը ներկայացնում էր մի ցարական գեներալի սենյակ, ուր գեներալը, կինը և նրանց պատանի տղան սեղանի շուրջը նստած թեյ էին խմում:

Խաղում էին ինչ-որ անծանոթ մի պիես, որ հեղինակություն էր երկաթուղային մի բանվորի: Թե որտեղի՞ց էին գտել պիեսը, չգիտեմ: Երևի բերել էր կուլտբաժնի վարիչը, որ առաջ կայարանի բջիջի քարտուղարն էր եղել:

Պիեսի սյուժեն հետևյալն էր: Գեներալի տղան ըմբոստանում է հոր դեմ, կապ հաստատում հեղափոխականների, երևի կոմունիստների հետ, ուզում է ռումբով պայթեցնել հոր շտաբը, չի հաջողվում, ընկնում է գերի, բայց ազատվում է կարմիր բանակայինների ձեռքով, որոնք գրավում են քաղաքը և հաստատում խորհրդային իշխանություն: Մոտավորապես նման մի սյուժե էր, լավ չեմ հիշում, բայց էականը մեզ համար ոչ թե սյուժեն է, այլ կալանավորների խաղը և մանավանդ դահլիճի վերաբերմունքը դեպի բեմը:

Դեռ նոր էր սկսվել պիեսը, դեռ նոր էր գեներալը հարցնում իր զավակին, թե նա որտեղ է կորչում իրիկունները, երբ դահլիճը փոթկաց: Գեներալի խոսքերում ոչ մի ծիծաղելի բան չկար.պատանի հեղափոխականի դրությունն սկսում էր ողբերգական դառնալ — էլ ի՞նչն էր ծիծաղի պատճառը–…

Երևակայո՞ւմ եք՝ Անահիտը:

Հիվանդանոցում ծառայող մի կին էր Անահիտը, մոտ 25 տարեկան, կիսագրագետ, խեղճ, անհամարձակ մի կին: Խոսելիս շփոթվում էր, կարծես սայթաքում էր: Ձայնը կերկեր ու անհամարձակ: Բոլոր ներկայացումներին նա էր տանում աղախնի դերը: Եվ միշտ, բոլոր ներկայացումներին, ինչպիսի ողբերգական անցուդարձի ժամանակ էլ այդ դժբախտ դերասանուհին երևար՝ նրա տեսքն անգամ կալանավորներին անասելի զվարճություն էր պատճառում: Այժմ էլ հենց նա էր, որ մտավ գեներալին թեյ տալու և իր ողորմելի տեսքիմոգական կարողությամբ զվարթացրեց հանդիսականներին...

Հենց որ Անահիտը հեռացավ՝ դահլիճը խաղաղվեց: Ես ավելի կալանավորներին էի նայում, քան բեմին: Լարված ուշադրությամբ հետևում էին կալանավորները բեմի անցուդարձին և առանց քաշվելու, բարձրաձայն արտահայտում իրենց վերաբերմունքը: Երևում էր, որ բեմի անցուդարձը նրանք համարում են իրականության նման մի բան: Երբ հերոսը դժվար դրության մեջ էր ընկնում, դահլիճից խորհուրդներ էին տալիս նրան, քաջալերում, հրահրում: Ինձ մոտ նստած էր Ուղղիչ Տան պետը, և պիտի ասեմ, որ սա՛ էլ հետ չէր մնում մյուսներից: Ավելին: Երբ տեսա, թե ո՛րպիսի անմիջականությամբ է այդ հասարակ մարդկանց բազմությունն ընդունում բեմում կատարվածը, ի՞նչ պիսի կենդանի վերաբերմունքով է անդրադառնում ընկերների խաղին — ես ինքս էլ մեքենայաբար սկսեցի մասնակցել դահլիճի վերաբերմունքին, կալանավորների անմիջական ոգևորությանը: Խաղում էին կարծես ոչ միայն բեմի մի քանի դերասանները, այլ կալանավորների ամբողջ բազմությունը, ամբողջ դահլիճը: Այսինքն ո՛չ թե խաղում էին բառացի, այլ մասնակցում էին խաղին: Դերասանները, այսպես ասած, տոն էին տալիս, վարում էին խաղը, իսկ հանդիսականներն ամեն կերպ օգնում էին նրանց, քաջալերում, հրահրում, բայց ոչ թե որպես դերակատարների, այլ որպես գործող անձանց: Ուրախանում ու տխրում էին հերոսի հետ մեկտեղ և բարձր քրքջում հերոսի թշնամիների անհաջողությունների վրա: Դա ոչ թե խաղ էր կարծես, այլ մասսայական կենդանի գործողություն, որին այս կամ այն չափով մասնակցում էին բոլորը:

Այս ներկայացման ընթացքում ես հիշեցի մեր բոլոր մանվածապատ զրույցները նոր, կոլեկտիվ թատրոնի մասին, ուր հասարակությունը պետք է ո՛չ թե պասսիվ հանդիսատես լինի, այլ ակտիվ մասնակից — և հասկացա մի շատ հասարակ ճշմարտություն, որ առանձնասենյակում նստած չի կարող ըմբռնել ոչ մի հանճարեղագույն գեղագետ: Դա այն է, որ կոլեկտիվ թատրոն ստեղծելու առաջին նախապայմանը ոչ թե նոր թատրոնական տեխնիկան, կամ ինչ-որ առանձին ձևով գրված պիեսներն են, այլ — նոր հասարակությունը: Տվեք կենդանի, կյանքի հարաճուն ռեալիզմով դրված պիես և գեղագիտական զանազան քաղցրավենիներով չփչացած հասարակություն — և ինքնին կստեղծվի «կոլեկտիվ թատրոնը»: Ես տեսել

եմ սիրողների ներկայացումներ բանվորական, կոմերիտական, աշակերտական ակումբներում — և միշտ իմ տպավորությունը նույնն է եղել:

Այդ անմոռանալի ներկայացման ժամանակ իմ ուշադրությունը գրավեց և մի այլ հանգամանք: Կալանավոր դերասանների բոլորի էլ գրիմը շատ մակերեսային էր, բոլորն էլ խոսում էին իրենց սովորական ձայներով, իհարկե, աշխատելով մի քիչ թատերական շեշտ մտցնել իրենց առոգանության մեջ — մի բան, որ բավականին զվարճալի տպավորություն էր թողնում, — մի խոսքով՝ բոլորն էլ ոտով-գլխով մատնում էին իրենց ով լինելը, սակայն ամբողջ ներկայացման ընթացքում ես չնկատեցի, որպեսզի հանդիսականները նրանց դիմեին նրանց իսկական անուններով:

— Խփի՛ էդ գեներալին՝ սատկի, խփի՛, է՛, — քաջալերում էին հերոսին — և այսպես շարունակ:

Պարզ էր, յուրաքանչյուր հանդիսատեսի համար գեներալ խաղացողն այդ պահուն գեներալ էր և ուր՛իշ ոչինչ: Գեներալ, որին հարկավոր է խփել: Չեմ կարծում, որ որևէ թատրոնում, որևէիսկական դերասանի խաղ այդքան կենդանի կերպով շահագրգռե որևէ նրբակիրթ հանդիսատեսի:

Ես երբեք չեմ մոռանա Ուղղիչ Տան պետի խորհուրդը երիտասարդ հեղափոխականին, գեներալի կոմունիստ տղին, երբ վերջինս իր հոր շտաբում պատրաստվում էր ռումբը սեղանի դարակը դնելու, բայց այդ վայրկյանին դուռը բացվեց և մտավ գեներալի համհարզը:

— Փախի՛ մտի շկաֆը, փախի՛ մտի, — հուզված բացականչեց պետը և երբ տեսավ, որ արդեն ուշ է, որ համհարզն արդեն նկատեց հեղափոխականին նա, վեր թռչելով տեղից, ավելացրեց.

— Փախի՛ դեմի դռնով, դուռը բաց է, շո՛ւտ, է՛ , ա՛յ տնաշեն...

Բայց ինչպե՞ս փախչեր խեղճ հեղափոխականը, երբ, ըստ հեղինակի քմահաճույքի, պետք է գերի ընկներ, որպեսզի հետո ազատվեր կարմիրբանակայինների ձեռքով...

Ես չեմ մոռանա երբեք և ամբողջ դահլիճի բուռն, սանձարձակ քրքիջը, երբ կարմիրբանակայինները խուժեցին գեներալի շտաբը և սվիններով գետին գլորեցին գեներալին: Սանտիմենտալ մարդիկ չէին կալանավորները. գեներալի մահը նրանց համար ոչ թե մարդկային վախճան էր, որ որպես այդպիսին կարող է գոնե լուրջ, ո՛չ հեգնական վերաբերմունք պահանջել, — այլ ոխերիմ թշնամու անփառունակ անկում, որ միայն քրքիջ կարող է առաջացնել:

Հետագայում ես ներկա եղա և մի շարք այլ ներկայացումների, և կալանավորների հոգեբանության այս յուրօրինակ գիծն ինձ բավականին զարմացրեց: — Օրինակ՝ երբ «Պատվի համար»-ի վերջում «Որդեսպա՛ն» բացականչեց Էլիզբարովը և կաթվածահար ընկավ — ամբողջ դահլիճը բուռն, մոլեգին, միաբերան ծիծաղեց:

Կալանավորները ոխերիմ թշնամիներ են բարոյական կեղծ սանտիմենտալիզմի և, որպես անմիջական մարդիկ, հարկ չեն համարում թաքցնել իրենց անմիջական վերաբերմունքը — ահա իմ կարծիքով սրա միակ բացատրությունը:

Մի փոքրիկ հանգամանք ևս Ուղղիչ Տան այդ առաջին ներկայացումից անջնջելի հետք է թողել իմ հիշողության մեջ, և ես չէի կամենա մոռացության տալ այդ հետքը: Երկրորդ պատկերի ժամանակ, երբ վարագույրը բացվեց — բեմը ներկայացնում էր գեներալի շտաբը ռազմաճակատում: Բեմի հետևում մի քանի կալանավորներ ամենայն եռանդով խփում էին թիթեղե թերթերի, որ գնդացիրի ձայն ստացվի: Բեմի աջ կողմը, պատուհանի առաջ, զինվորականի շինելը հագին, գլխին սպայական գլխարկ, դեղին ուսդիրներով, պրոֆիլով, դեպի մեզ կանգնած էր գեներալի համհարզը և նայում էր հեռուն: Կարծես իսկ և իսկ ցարական սպա էր՝ իր ամբողջ կերպարանքով հարություն առած: Խաղացողի նայվածքի և կեցվածքի մեջ այնքան շնորհք կար,որ ես հիացած էի: Դեմքն ինձ ծանոթ թվաց, կարծես տեսել էի մի տեղ, բայց չէի հիշում:

— Թշնամին մոտենում է մեր դիրքերին, կրա՛կ դեպի աջ, շարքո՛վ, — ասաց այդ պահուն համհարզը — և ես անմիջապես հիշեցի...

Համո՛ն էր, մեր զարմանալի Համոն, Ուղղիչ Տան կուլտբաժնի անխոնջ աշխատակիցը, բուտաֆորը, դեկորատորը, երգեցիկ խմբի անդամը, որմնադիրը, թիթեղագործը: Հետագայում, երբ երկրաշարժից հետո Լենինականի համար մեծ կարիք զգացվեց թիթեղյա վառարանների, Համոն և իր երկու ընկերը Ուղղիչ Տան արհեստանոցում մի շաբաթվա–ընթացքում «շտապ կարգով» շինեցին 300 թիթեղյա վառարաններ,

Համոն, Աբգարը, Օսը:

Կալանավորների բուռն ծափահարությունների ներքո ներկայացումը վերջացավ, և քանի որ դեռ վաղ էր՝ հայտարարվեց, որ ընդմիջումից հետո «դիվերտիսմենտ» է լինելու:

— Հը՞, ո՞նց էր. լա՞վ սատկացրին գեներալին, — ուրախացած, վառվող աչքերով հարցրեց ինձ Ուղղիչ Տան պետը:

— Շա՛տ լավ, կեցցե՛ն, — պատասխանեցի ես՝ չգիտեմ ինչու ինքս էլ անչափ ուրախացած, կարծես իրոք որ մի ահռելի ճակատամարտ էր, որից մենք դուրս եկանք պատվով ու հաղթանակով:

Դիվերտիսմենտն սկսվեց նրանով, որ երաժիշտների նստարանը բարձրացավ բեմ, և նրանք նստեցին բեմի աջ կողմը, կտավե դեկորների ներքևը: Հետո նրանք սկսեցին նվաԳել, և Լազգին կրկին սկսեց պարել ու կրակե խանչալներ խաղացնել իր աչքերում, որոնք ճակատագրական մղումով շրջվում էին կանանց կողմը, կարծես այնտեղից քաշում էր Լազգուն անհաղթելի մի մագնիս: Հետո, երբ նա վերջացրեց ու մի առանձին շախով բեմից թռավ ցած կոնֆերանսիեն հայտարարեց, որ հիմա արտասանելու է Նիկոլը:

Եվ դիմացի դռնից բեմ մտավ Նիկոլը, և ա՛յն Նիկոլը, որից երկու ժամ առաջ ես խլեցի Ուղղիչ Տան շախմատային չեմպիոնի տիտղոսը, այժմ մանտյոր դարձած այդ երիտասարդ բանդիտը,Սուրենի ու Խաչիկի ընկերը:

Բավական անկեղծ ոգևորությամբ նա արտասանեց Հակոբ Հակոբյանի «Մեռան չկորան»-ը:

Դրանից հետո հայտարարվեց, որ ռուսերեն կուպլետներ կասի... Եֆիմ Բրավելմանը: Եվ ահա նույն դիմացի դռնից, իր ագահ աչքերը դեսուդեն պսպղացնելով, արախչինը գլխին՝ բեմ ելավ մեզ արդեն ծանոթ այդ երիտասարդ նկարիչը, Բելոգուրովի ատելի թշնամին, որ սիրում էր նկարել ձմեռային տեսարաններ, խարույկ ու լուսին: Նրա ելույթը կալանավորների կողմից ընդունվեց բուռն, տևական ծափահարությամբ:

—— Я спою сейчас куплеты, никому еще не петы, - սկսեց Եֆիմ Բրավելմանը կես-արտասանական, կես-երգեցիկ ձայնով, և դահլիճում տիրեց մեռելային լռություն: Սքանչելի կուպլետիստ էր Եֆիմ Բրավելմանը. թավ, կրծքային ձայն ուներ, հրեական առոգանություն և գիտեր անթիվ-անհամար սրամիտ կուպլետներ: Ես շատ եմ տեսել կուպլետիստներ, սակայն պիտի ասեմ, որ դրանցից ամենաքանքարավորը — Եֆիմ Բրավելմանն էր, այդ երիտասարդ ռեցիդիվիստը, որի մասին պատմում էին, թե նա նույն վարպետությամբ ու հեշտությամբ է կողպեքներ բացանում, ինչ վարպետությամբ ու հեշտությամբ երգում էր իր սքանչելի կուպլետները: Իբրև լեգենդ նրա մասին ասվում էր, որ նա վերջին անգամ ձերբակալվել է... Չեկայի նախագահի բնակարանում, ուր նա մտել է նրա վերարկուն թոցնելու: Երբ ես հարցրի Եֆիմին այս լեգենդի մասին՝ նա չափազանց բարկացավ: Ասաց, որ թշնամիների սարքած խոսք է, չհավատամ: Ծայր աստիճանի կասկածոտ էր ու ծածկամիտ: Թե ո՞րտեղից, ի՞նչպես էր նա Երևան ընկել — ես այնպես էլ չիմացա: Երբ մի անգամ նրան ես միամտաբար հարցրի, թե ո՛րտեղացի է ինքը,նա կասկածոտ աչքերը խրեց ուղիղ իմ բիբերի խորքը ու պատասխանեց.

— Հարցրո՛ւ քամուն: Դեռ աշխարհում այնպիսի մարդ չի ծնվել, որ իմանա Եֆիմի որտեղացի լինելը: Այո՛, ընկե՛ր:

Ու մի քանի անգամ ևս իր ասեղանման աչքերով փորփրելով հայացքս՝ շվշվացնելով հեռացավ:

Այսպես թե այնպես սքանչելի կուպլետիստ էր Եֆիմ Բրավելմանը, կատարյալ արտիստ: Եվ իր այս ընդունակությունն անգամ նա մսխում էր չափազանց մեծ զգուշությամբ, ժլատ էր իրայդ «երկնային գանձը» ցրելիս, ինչպես ժլատ էր «երկրային» գանձերի վերաբերմամբ: Լինում էր, երեկոները երբ մեր կամերան էր գալիս, խնդրում էինք, որ երգի: Երբեք չէր երգի:Կասկածոտ աչքերը կխրեր մեր բիբերը և կասեր.

— Ի՞նչ է ես մեքենա՞ եմ, որ երբ ուզենաք՝ աշխատեմ: Ես երգում եմ միմիայն տրամադրությամբ: Երբ տրամադրություն ունենամ:

Այսպես էր Եֆիմ Բրավելմանը:

Ուղղիչ Տան հասարակության մեջ առանձին հռչակ էին վայելում Եֆիմի «Воздух» կոչված կուպլետները: Եվ պետք է խոստովանել, որ նա, մանավանդ հետևյալ կուպլետը, երգում էրկատարյալ վարպետությամբ: —

«Воздух — это живой предмет,
И на неооом стоит вес свет.
Да, да, да — воздух.
Все слишно тут и там — воздух,
Коли деньги ты нам вручишь,
Воздух-и больше ничего…»

— Все-воздух, ты тоже воздух, — ամեն անգամ այս երգը լսելիս՝ ասում էր Ուղղիչ Տան պետը Եֆիմ Բրավելմանին, և նրա աչքերը փայլում էին մանկական անսահման բավականությամբ:

Եֆիմ Բրավելմանից հետո երգեցին ու արտասանեցին մի շարք ուրիշ կալանավորներ, պարեցին Լազգին ու Ղարաբալան, Երևանի հռչակավոր ծաղիկ ծախողը, որ Ուղղիչ Տուն էր ընկել մեկին դանակով վիրավորելու համար, պարեցին Նիկոլն ու Սուրենը: Ուղղիչ Տան պետի համառ միջնորդությամբ վերջ ի վերջո հնարավոր եղավ կոտրել երաժիշտների վայրի ինքնասիրությունը — և, կալանավորների զվարթ ձայնակցության ներքո, 17 տարեկան աղջկա նման կոտրատվելով, պարեց և՛ Անուշը... ու երեկոն վերջացավ:

Իմ կյանքի ամենաքաղցր երեկոներից մեկն էր այդ երեկոն, — ինչպես շո՛ւտ ամեն ինչ անցնում է ու դառնում հուշ ու հիշատակ:

Да, да, да — воздух…

Ես չեմ մոռանա երբեք Ուղղիչ Տան թատրոնում անցկացրած իմ այդ առաջին երեկոն, որի աղմուկը գժժում է իմ ուղեղում ու սրտում և՛ հիմա, երբ ես գրում եմ հիշողություններս: — Ու լեյտմոտիվի նման հիմա էլ հնչում է ականջիս Եֆիմ Բրավելմանի ձայնը, որ երգում է անընդհատ.

Воздух …

IX. Դարչոն ու Բաղդասարը, կամ միևնույն պատմությունը տարբեր վարիանտերով. վերջում մի քիչ հոգեբանություն

— ...Այդ օրը կիրակի էր, և առավոտվանից ինձ մոտ էր եկել իմ կինը՝ Արփենիկը...

Երեք օր էր չէի սափրվել՝ որոշեցի սափրվել: Գիտեի, որ Ուղղիչ Տանը, բաղանիքի շենքում, կա վարսավիրանոց: Կանչեցի հիվանդանոցային ծառայողին և խնդրեցի կանչել սափրիչին: Հինգ րոպե անց սենյակիս դուռը բացվեց և սպիտակ գոգնոցը հագին, գլուխը բաց, ձեռին ածելի և սափրելու ա՛յլ պարագաներ՝ մտավ սափրիչը:

Մոտ 30 տարեկան, միջահասակից բարձր, գունատ: Շեկ, կոկ սանրած մազեր, կապույտ աչքեր: Անգույն տպավորություն էր թողնում. խոսում էր թիֆլիսախառը բարբառով:

Երբ նա ածիլեց վերջացրեց երեսս և անցավ մազերիս, հարմար համարելով առիթը՝ անցա սովորական հարցուփորձիս.

— Ի՞նչ գործով ես բռնված:

— Սպանության:

— Ո՞նց եղավ:

— Եղավ, է՛լի: Թշնամութին էր՝ սպանեցի:

— Որտե՞ղ էր:

— Էստեղ, Երևանում: Մե մարթ էր, մե կնիկ: Մարթը պառավ էր, կնիկը մարթուց երիտասարդ. — Ուշ առավ հոգին:

— Ո՞նց սպանեցիր, մենա՞կ:

— Մենակ: Իրիգվա դեմին տունը մտա, դուռը կողպեցի: Տունը մենակ մարթն էր ու կնիկը: Մարթն էս օթախումն էր, կնիկը՝ էն: Առաջ մարթուն սպանեցի, հետով էլ կնկանը:

— Ինչո՞վ,

— Մարթուն բեբութով, կնկանը ձեռով: Բողաղիցը բռնեցի՝ քիչ անց հոգին փչեց: Ըսկի ձեն էլ հանեց ոչ:

— Կնո՞ջն ինչու բեբութով չսպանեցիր:

— Պա՛հ, քո տունը շինվի. կնիկն ի՞նչ է մարթ վրեն դանակ բանացնի: Կնկան պտիս խեխտես ա՛յ, էսպե՛ս:

Եվ նա աջ ձեռի բթամատով ու ցուցամատով օդ արավ՝ ցույց տվեց, թե կնոջն ինչպես պետք է խեղդել: Ու հերոսական կիսաժպիտով երեսը շուռ տվեց դեպի կինս. խեղճ կինս սարսափեց...

— Էսպես սպանեցի ու ջեր հլա երկու սհաթից ավելի ներքևումը մնացի: Դուռը նեքևից փակեցի, բանլիքը դրի ջեբս, որ հարևանները թե բան է գան՝ իմանան մարթ չկա տնումը, տեղ են գնացե:

— Բա ի՞նչ էիր անում էդքան ժամանակ:

— Սպասում էի, որ մթնի: Որ մթնեց, գնացի:

— Բաս ո՞նց բռնվեցիր:

— Պոեզդումը բռնվեցի: Դաստավերնի չկար կուշտս՝ կասկածով բռնեցին: Հետով գործը բացվեց...

— Ի՞նչ վճիռ տվին:

— Որոշվեց գնդակահարութին, հետով կենտգործկոմը փոխեց տասը տարով: Չունքի որ էս գործիցը կառավարութինը շատ օգուտ ունեցավ...

— Ո՞նց թե օգուտ ունեցավ:

— Սպանութենից հետով որ դրանց տունը խուզարկեցին՝ 150-ից ավել օսկի գթան, դիփ Նիկոլայի տասնոց... Դրա վրա, կառավարութինը որ էդ օգութը տեսավ՝ ներեց...

Ես ժպտացի: Ու նկատեցի, որ նա ուշադրություն չդարձրեց, չնկատելու տվեց ժպիտս:

— Անունդ ի՞նչ է:

— Դարչո՛: Շուլավերցի եմ: Պատահական բան էր իմ Երևան ընկնիլս: Հին թշնամութին ունեի՝ էդ պատճառով էկա: Սպեցիալնի էդ գործով էկա:

Այստեղ կինս խառնվեց մեր զրույցին.

— Իսկ ձեր խիղճը չտանջե՞ց, որ սպանեցիք...

Ձեր խիղճը հիմա չի՞ տանջում...

Դարչոն հեգնական-զարմացական, ներող ժպիտը դեմքին՝ պատասխանեց.

— Խի՞ղճ... Տղամարթն էլ բաս խի՞ղճ կունենա... էն էլ էդպես մուխաննաթ մարթկերանց... Դե, քույրի՛կ ջան, մարթս ի՞նչ է որ՝ հավի ճուտ. բողազիցը բռնեցիր՝ շունչը տվավ...

Եվ Դարչոն անայլայլ հանգստությամբ, հերոսաբար չխկացրեց մկրատը: Արդեն նա վերջացրել էր իր գործը, ուստի հավաքեց գործիքները, լցրեց գոգնոցը ու գնաց: Հենց որ նա դուրս եկավ սենյակից՝ կինս փաթաթվեց վզովս և, անկեղծ սարսափը դեմքին, բացականչեց.

— Չարենց ջան, էլ չկանչես դրան՝ վիզդ կկտրի...

Խե՛ղճ Արփենիկ: Նա չգիտեր և հետագայում ես առիթ չունեցա նրան պատմելու Դարչոյի իսկական պատմությունը: Նա այնպես էլ չիմացավ, թե կալանավորների աշխարհում որքան խաբուսիկ բան է լեզուն, որ նրանք ևս լիովին հետևում են դիվանագետների այն բարձրագույն իմաստությանը, թե լեզուն տրված է մարդուս իր իսկական մտքերն ու գործերը թաքցնելու համար:

Դարչոյի պատմությունը ո՛չ միայն կնոջս, այլև իմ վրա արավ ծայր աստիճանի ճնշող տպավորություն: Չմոռանաք, որ ես դեռ նոր էի ընկել այդ աշխարհը, դեռ նոր էի մոտենում մարդկանց, դե նրանք էլ դեռ ինձ «ինտելիգենտի» տեղ էին դնում, այսինքն մարդու, որին կարելի է և՛ ձեռ առնել, և՛ վրան մեծ տպավորություն թողնել իրենց չկատարած սարսափելի գործերով:

Երեկոյան Բենժամենին հանդիպելիս ես առաջին հերթին պատմեցի Դարչոյի հետ ունեցած զրույցս: Նա վերից վար նայեց ինձ կարեկցող, հեգնախառն հայացքով ու կարճ պատասխանեց.

— Չհավատա՛ս: Մին խոսքին էլ ա՝ չհավատաս:

— Ո՞նց թե, — հարցրի շվարած հո սուտ չէ՞ր ասում:

— Սո՛ւթ էր ասում՝ դեռ մի բան էլ ավելի: Առաջինը որ՝ դա մենակ հինքը չի արել էդ գործը:

— Բա ո՞վ է արել:

— Չորս հոգով են արել, չորս հընգերով: Հեն ա ընտեղ են դրա հընգերները՝ Բաղդասարը, Օսը, Համոն...

— Ո՛ր Բաղդասարը:

— Էս մեր Ուղղիչ Տան հիմիկվա կամենդանտը: Ներսևի կամենդանտը: Համոն էլ է՛ն Համոն է, որ հա՛մ թիթեղագործ է, հա՛մ բեմի դեկորատորը, հա՛մ էլ դերասանություն է անում: Օսն էլ նրա հընգերը՝ հե՛ն ա աշխատում ա դարբնոցում, փեչ ա շինում... Գնա՛ իմացի:

Քիչ հետո կուլտբաժնի միջանցքում մենք հանդիպեցինք Բաղդասարին: Հիշեցի, որ նրան տեսել եմ դպրոցում, թուրքական խմբակի դասին, ուր նա գրավեց ուշադրությունս իր աչքի ընկնող արտաքինով:

Հաղթ կազմվածքով, միջահասակից բարձր, լայնաթիկունք, բրոնզյա դեմքով մի երիտասարդ էր Բաղդասարը: Դեմքին մշուշ կար կարծես. չնայած իր հաղթ կազմվածքին և ծայր աստիճանի համարձակ բնավորությանը՝ նայելիս շուտ-շուտ թարթում էր աչքերը, երկար չէր դիմանում հայացքի: Խոսում էր բավական մաքուր հայերեն և ռուսերեն, բայց, երևում էր, որ կրթություն չունի: Ամեն ինչից երևում էր, որ ինտելիգենտ չէ, բայց բանվոր էլ չէր: Քաղաքում մեծացած կատարյալ լյումպեն էր՝ աչքաբաց ու համարձակ: Ուղղիչ Տանը, կալանավորների շրջանում, քաջ տղամարդի, համարձակ մա՛րդու հռչակ էր վայելում, և ես հետագայում շատ առիթներ ունեցա համոզվելու, որ ինքը չափազանց գնահատում է իր այդ համարումը և ամեն ինչ կանի՝միայն թե չզրկվի դրանից: Ավելին՝ քաջ մարդու համարում ունենալը նրա միակ դավանանքն էր կյանքում, միակ կրեդոն և իդեե-ֆիքսը:

Բենժամենը մեզ ծանոթացրեց: Ես պատմեցի նրան Դարչոյի պատմությունը, և նա ևս, Բենժամենի նման Ժպտալով, կարճ ասաց ռուսերեն:

— Սո՛ւտ է:

— Պատմեցեք խնդրեմ, եթե կարելի է... Ես շատ եմ ուզում իմանալ:

— Ինչո՛ւ չէ, եթե կամենում եք՝ խնդրեմ:

Եվ այդտեղ, կուլտբաժնի միջանցքում կանգնած, պարզ ու կապակցված շարահարությամբ, միանգամայն անկեղծ ու հանգիստ նա մեզ պատմեց մարդկային այդ եղերականպատմությունը, որը, ինչպես երևում էր, նրա համար անցած-գնացած պատմություն էր՝ զուրկ հուզական բովանդակությունից:

— Ես աշխատում էի տեքստիլ սինդիկատի պահեստում, հակեր էի բաց անում, — այսպես սկսեց Բաղդասարն իր պատմությունը, — բայց ինձ կրճատեցին: Մնացի անգործ: Մի օր էլ հանդիպեցի Դարչոյին, ծանոթացա: Նույնպես անգործ էր. եկել էր Թիֆլիսից, գործի էր նայում: Մի օր էլ գինետանը նա ինձ ասաց, թե գործ կա, եթե ուզում եմ, եթե տղամարդ եմ՝ կարող ենք գլուխ բերել: Ու ինձ ծանոթացրեց Համոյի ու Օսի հետ, որոնք իբրև թիթեղագործներ աշխատում էին մի թիթեղագործի արհեստանոցում: Համոն իբրև վարպետ, իսկ Օսը որպես աշակերտ: Դրանք մեզ ասացին, որ իրենց խազեինը տանը, թե՛ մեծ փող ունի, թե՛ ուրիշ հարստություն: Ինքն է ու իր կնիկը: Ինքը պառավ, ժլատ մարդ էր, բանվորի հոգի հանող. Կրճատում էր դրանց աշխատավարձը, փողը չէր տալիս և այլն: Որոշեցինք գործը գլուխ բերել և սկսեցինք սպասել մի հարմար առիթի: Վերջը որոշեցինք, որ մի իրիկուն գնանք դրանց տունը՝ իբր Համոն ու Օսը ուզում են հաշիվներն ստանան, որ գնան Թիֆլիս, իսկ մենք էլ, դե, ընկերներ ենք՝ եկել ենք միասին: Էդպես էլ արինք: Կիրակի իրիկուն էր ժամը մոտավորապես վեցը:Գնացինք դրանց տունը: Հենց դռան մոտերքը շրջում էր մի միլիցիոներ: Դուռը վրա դրինք: Համոն հայտնեց, թե եկել են հաշիվներն ստանան, որ գնան Թիֆլիս: Սենյակում ինքն էր ու պառավ կնիկը: Ուրիշ ոչ ոք չկար: Ինքը կարծես թե կասկածեց, բայց բան չասավ: Ես աչքով արի Օսին ու հասա բռնեցի դրան. որ բկիցը բռնեցի՝ Օսը դանակով տվեց: Երկար չէր մեռնում. բերանը սրբիչով փակեցի, որ չբղավի: Դարչոն ու Համոն էլ հենց նույն ժամանակ խեղդեցին կնոջը: Կինը շուտ շունչը փչեց... Հենց որ բերանը փակեցին՝ շունչը փչեց: Փակեցինք դռները և սկսեցինք իրերը քրքրել: Բան չգտանք: Ասի, որ շոր-մոր չհավաքեն, բայց չլսեցին: Դարչոն հագավ խազեինի վերարկուն: Քիչ-միչ արծաթեղեն կար՝ հավաքեցի մի կապոց արի: Հետո Դարչոն թե՝ գնամ տեսնեմ միլիցիոներն էնտե՞ղ է թե չէ, գամ իմաց տամ՝ գնանք: Ու գնաց: Էն գնալն էր, որ գնաց: Հետո գնացին Համոն ու Օսը: Հետո էլ ես դուրս եկա՝ փոքրիկ կապոցը ձեռքիս: Հազիվ մի քանի քայլ էի արել՝ միլիցիոները նկատեց: Ձայն տվեց, որ կանգնեմ: Չկանգնեցի: Շուռ եկա կողքի փողոցը, միլիցիոները հետևիցս: — Տեսա հնարք չկա՝ կապոցը նետեցի: Ու մինչև միլիցիոները կվերցներ կապոցը՝ թռա ցանկապատով, ընկա մի բակ: Բակից — մի ուրիշ բակ, հետո վերարկուս հանեցի գցեցի ուսերիս, գլխարկս կոխեցի գրպանս ու

դուրս եկա փողոց: Դեմս նույն միլիցիոները: Ինձ թե էսպես էսպես մի մարդ չտեսա՞ք:
— Չտեսա: Էլ չնայեց՝ գնաց: Շուռ եկա մյուս փողոցը — ազատվեցի:

— Բա ո՞նց բռնվեցիք:

— Օսի հիմարության պատճառով: Առանց անցագրի նստում է գնացք, որ գնա Թիֆլիս: Բայց էդ էլ դեռ ոչինչ: Մի ինչ-որ կայարանում իջնում է գնացքից և մտնում... ուղիղ կայարանի հետախուզական բաժինը: Թե ինչո՞ւ է մտնում՝ ինքն էլ չգիտե, հիմարը: Բռնում են յախից՝ ի՞նչ մարդ ես: Արդեն իմացած են լինում էդ գործի մասին: Տեսնում են, որ թուղթ չունի՝ ձերբակալում են: Ուղարկում են էստեղի քրեական բաժինը: Էստեղ մեր Օսը խոստովանում է, բայց մեզ չի մատնում: Սակայն, դե, նրա հետքով մեզ էլ բռնեցին: Որոշեցին գնդակահարություն, բայց փոխեցին տաս տարու:

— Իսկ ինչո՞ւ փոխեցին, — հետաքրքրվեցի իմանալ Բաղդասարի կարծիքը: Պարզ էր, որ սա դժվար թե Դարչոյի միամիտ բացատրությունը տա:

— Փոխեցին, որովհետև խոստովանվեցինք մեր մեղքը: Չուբարը համոզեց, որ խոստովանվենք: Ասաց, որ եթե խոստովանվենք՝ կներեն: Մենք էլ խոստովանվեցինք:

Մի փոքր լռելուց հետո՝ ավելացրեց,

— Մեկ էլ ի նկատի ունեցան մեր սոցիալական դրությունը և խազեինինը: Նա՛խս մարդ էր, բոլորին հայտնի էր նախսությունը:

Եվ այս բոլորը Բաղդասարը պատմեց սառը, հանգիստ տոնով, էպիկական անատարբերությամբ: Պատմելիս նայում էր ուղիղ երեսիս, բայց շուտ-շուտ թարթում էր աչքերը:

— Բայց ինչո՞ւ եք դուք այդպես հետաքրքրվում, — հանկարծ, պատմել -վերջացնելուց հետո, հարցրեց Բաղդասարը: Եվ ես Բաղդասարի հայացքում ինձ համար դեռ անհասկանալի կասկածանք նկատեցի, կասկածոտ անհանգստություն:

— Հե՛նց այնպես, Բաղդասա՛ր, հետաքրքրության համար...

Բաղդասարը ներողամիտ ժպտաց, բայց ես նկատեցի, որ նա չբավարարվեց իմ պատասխանով: Աչքերում դեռ կասկած կար ու թաքուն անվստահություն: Հետագայում միայն, երբ ես բազմաթիվ առիթներ ունեցա նրա հետ խոսելու — ինձ հասկանալի դարձավ թե՛ նրա կասկածը և թե՛ այդ ծածուկ անվստահությունը:

Բայց այս ամբողջ պատմության մեջ քիչ հետո ինձ զարմացրեց և մի այլ հանգամանք, որ մի պահ ինձ համար հանելուկային բան դարձրեց այդ մարդկանց

հոգեբանությունը: Բաժանվելով Բաղդասարից՝ մենք գնացինք ընթերցարան և երբ, երկու ժամ անց, իջանք քրեական կորպուսի միջանցքը՝ այդտեղ մեզ հանդիպեց Դարչոն: Ինչպես երևում էր՝ Բաղդասարն արդեն պատմել էր նրան մեր զրույցը և երեսովը տվել նրա հանդուգն ստախոսությունը: Երբ մեզ տեսավ Դարչոն՝ թվաց, թե ուզում է խուսափել հանդիպումից, բայց ես մոտեցա նրան և առանց այլևայլության ասացի:

— Այ մարդ, ինչո՞ւ խաբեցիր առավոտը... Ես արդեն ամեն ինչ իմացա:

Դարչոն առանց մազաչափ անգամ այլայլվելու՝ մի պահ անթարթ, ուղիղ նայեց աչքերիս խորքը և պատասխանեց, դառնալով Բենժամենին.

— Գնացել Բաղդասարին սուտ -սուտ բաներ է պատմել, հմի էլ ի՛նձ է ասում... Իբրև իրան ասել եմ թե գործը մենակ ինքս եմ արել... Ե՞ս — էդպես բան — կանե՞մ...

Ու նախատող հայացքով իմ կողմը նայեց. «ափսո՛ս է քեզ» — զարմանալի անկեղծությամբ ասում էր այդ հայացքը... Սակայն ամենացավալին Բենժամենի պատասխան հայացքն էր. սա է՛լ այնպես էր նայում, կարծես ինքն էլ էր կասկածում, որ Դարչոն ընդունակ լինի սուտ բաներ հնարելու. գուցե ե՞ս եմ ստել և ոչ թե Դարչոն...

Ծայր աստիճանի կասկածոտ մարդիկ էին կալանավորները — դա պարզ նկատելի էր հենց առաջին հայացքից: Եվ այս հանգամանքի ոչ միայն բացատրությունը, այլև հիմնավորած «փիլիսոփայությունը» հետագայում ինձ տվեց այդ նույն Բաղդասարը, որ, իմ կարծիքով, որպես կալանավոր ամենաամբողջական տիպն էր ամբողջ Ուղղիչ Տանը և, որպես այդպիսին՝ ուներ թե՛ իր աշխարհայացքը, թե՛ իր բարոյական նորմերի կոդեքսը և թե՛ յուրահատուկ-լյումպենային իր կենսափիլիսոփայությունը:

Այո՛. ծայր աստիճանի կասկածոտ, թերահավատ մարդիկ էին կալանավորները և նրանցից շատ-շատերի, ինչպես նույն այդ Բաղդասարի մեջ այդ գիծը հասնում էր հիվանդության: Եվ հիմա, այս գիրքը գրելիս, ամբողջ ժամանակ ծակում է ուղեղս մի միտք, որ կարելի է ձևակերպել հետևյալ հարցով.

— Նայես ի՞նչ պիտի մտածեն այս գիրքս կարդալիս իմ կալանավոր ընկերները, իմ բարեկամները՝ Լազգին, Բենժամենը, Համոն, Օսը, Եֆիմ Բրավելմանը, Բաղդոն...

Եվ մանավանդ Բաղդասարը՝ բրոնզյա դեմքով ու երկաթյա մկաններով այդ հաղթանդամ մանուկը, Ուղղիչ Տան այդ հռչակավոր Բաղդոն...

X. Ընկերական դատարանը, նախագահը, ատենակալները, դատախազը, հասարակական մեղադրողը և պաշտպանները, մեղադրյալները, և կալանավորների վերաբերմունքը դեպի այս ամենը

Երբ առաջին անգամ ես ներկա եղա Ուղղիչ Տան ընկերական դատարանի նիստին՝ քննվում էր խոհանոցի չորս ծառայողների գործը, որոնք մեղադրվում էին մթերքներ յուրացնելու մեջ:

Ընկերական դատարանի նախագահը մի նախկին գյուղխորհրդի նախագահ էր, գյուղացի, դատապարտված յուրացման համար: Որպես ընկերական դատարանի նախագահ՝ ընտրված էր կալանավորների ընդհանուր ժողովում: Ատենակալները նշանակվում էին կուլտբաժնի կողմից՝ յուրաքանչյուր գործի համար առանձին, գործը լսվելուց անմիջապես առաջ: Այդ անգամ ատենակալներ էին թիթեղագործ Համոն և մի թուրք կալանավոր՝ ինձ անծանոթ: Մի երիտասարդ, ինտելիգենտ կալանավոր ստանձնել էր դատախազի պաշտոնը: Կուլտկոմիսիայի կողմից նշանակված կար նաև հասարակական մեղադրող:

«Մեծ» գործ էր, կալանավորներն հուզված էին և, որպեսզի մեղադրյալները զոհ չգնան թերի վերաբերմունքի՝ դատարանը մեղադրյալներին պաշտպանելու համար նշանակել էր չորս իրավապաշտպան — բոլորն էլ, իհարկե, կալանավորներ: Պաշտպաններից մեկը Բենժամենն էր, երկրորդը՝ Եփրեմը, երրորդը Հրաչը և չորրորդը՝Սահակ անունով մի կալանավոր. Առաջին երեքը ինտելիգենտներ էին, նախկին խորհրդային ծառայողներ, բոլորն էլ յուրացման գործով, իսկ չորրորդը բանվոր էր, մանտյոր՝ դատապարտված մի ինչ-որ կոոպերատիվի դրամարկղ կողպտելու համար:

Մեղադրյալներից երկուսը հայ էին, երկուսը թուրք: Հանցանքը գլխավորապես հայերին էր վերաբերում, որովհետև նրանք էին խոհանոցի «պատասխանատու» աշխատավորները: Մեկը խոհարարն էր, մյուսը օգնականը: Թուրքերը տեխնիկական ծառայողներ էին՝ կարտոֆիլ մաքրողներ:

Դահլիճը ծայրեիծայր լիքն էր կալանավորներով: Ինձ ոչ այնքան հետաքրքրում էր դատը, որքան կալանավորների վերաբերմունքը: Եվ այդ վերաբերմունքն ինձ համար բավականին անակնկալ էր, սակայն իրենց, կալանավորների տեսակետից՝ միանգամայն բնական:

Բեմի մեջտեղը դրված էր մի սեղան, շուրջը նստարաններ: Աջ կողմում դատախազի ամբիոնն էր, ձախում՝ հասարակական մեղադրողի: Պաշտպանները նստած էին ներքևում, ուր ներկայացումների ժամանակ նստում էին երաժիշտները: Հենց այդտեղ էլ դրված էր մի երկար նստարան, որի վրա տեղ էին բռնել մեղադրյալները:

Բեմի մոտ՝ գունատ, լուրջ՝ կանգնած էր Սուրենը, կուլտբաժնի պարետը: Ընկերական դատարանի նիստերի ժամանակ նա անմիջապես ենթարկվում էր դատարանի նախագահին:

— Դատարանը գալիս է, ոտքի՛, — առաջինը մտնելով հայտարարեց դատարանի քարտուղարը, զինվորականի շորերով մի երիտասարդ, որ միևնույն ժամանակ աշխատում էր գրասենյակում: Զերբակալված էր յուրացման գործով. բավականին լավ ձայն ուներ և հաճախ երգում էր ներկայացումներին:

Քարտուղարի հետևից մտան դատարանի նախագահը և ատենակալները: Բոլորը ոտքի կանգնեցին:

— Հանուն Հանրապետական Ուղղիչ Տան Ընկերական Դատարանի՝ նիստը հայտարարում եմ բացված: Լսվում է գործ ըստ մեղադրանքի...

Մեղադրականը ձևակերպված էր ի՛սկ և իսկ այնպես, ինչպես «իսկական» դատարաններում: Մեղադրականը կարդալուց հետո դատարանի կազմը նստեց. նստեցին և բոլորը: Նախագահը կարդաց մեղադրյալների անունները: Բոլորը ներկա էին: Հետո նա հարց տվեց կողմերին՝ անջա՞տ հարցաքննել, թե իրար ներկայությամբ: Դատախազը, ինչպես հարկն է, պահանջեց հարցաքննել առանձին առանձին, պաշտպաններն իրենց հերթին առարկեցին դրա դեմ — և դատարանը, իհարկե, որոշեց ընդունել դատախազի առաջարկը: Հարցաքննությունը պիտի սկսվեր գլխավոր մեղադրյալից՝ խոհարարից:

— Ընկեր պարե՛տ, դուրս տարեք մնացածներին և առանձնացրեք, կարգադրեց նախագահը, և Սուրենը դուրս տարավ նրանց:

Իսկ և իսկ՝ ինչպես «իսկական» դատարաններում…:

— Սերյոժա Մարությանը դո՞ւ ես:

— Ե՛ս եմ,

— Պատմի՛ ր տեսնենք, ընչի՞ են քեզ մեղադրում:

— Ես գիտե՞մ՝ ընչի: Էսքան ժողովրդի առաջ ասում եմ, որ մի թաք հատ կարտոֆ էլա կերած չկամ...

Բայց հենց այդ ժամանակ դատախազը գնդակով տվածի նման վեր է թռչում տեղից.

— Ընկե՛ր նախագահ, — բացականչում է նա՝ դեմքին որքան կարող է խիստ արտահայտություն տալով. — խնդրում եմ մնացած մեղադրյալներին անմիջապես հեռացնել դահլիճից...

— Նրանք արդեն հեռացված են:

— Ոչ. նրանք գտնվում են դահլիճում:

Բոլորը շուռ են գալիս... «Մեկուսացված» մեղադրյալները երեքն էլ հանգիստ բազմել են վերջին կարգում: Դահլիճում թնդում է կալանավորների զվարթ քրքիջը: Սուրենը մտահոգված գնում է նստարանների արանքով անառակ մեղադրյալներին մեկուսացնելու:

— Ընկեր Մարության, շարունակե՛ցեք...

— Ի՞նչ պտի շարունակեմ: Ալլա՛հ բիլլահ՝ չեմ կերե, չե՛մ կերե, չե՛մ կերե...

Դահլիճում կրկին թնդում է կալանավորների քրքիջը: Նախագահը մի քանի վայրկյան զանգահարում է կատաղի, շարունակում է հարցաքննությունը:

— Հարցեր ունե՞ք տալու, — դիմում է նախագահը դատախազին: Դատախազը՝ լուրջ, նուրբ ժպիտը դեմքին՝ հարցնում է.

— Ասացե՛ք խնդրեմ, քաղաքացի Մարության, չի՞ պատահել, արդյոք, որ մթերքը պղնձի մեջ լցնելուց առաջ որոշ քանակությամբ բրինձ կամ յուղ վերցրած լինեք...

Մարությանը, որ նախկին միլիցիոներ է՝ դատապարտված մեկին ապտակելու համար, դեմքը շուռ է տալիս դեպի հանդիսականները: Դեմքին զարմանք կա, վիրավորանք, «էսպես էլ խայտառակությո՞ւն» — ասում են աչքերը:

Դահլիճը քրքջում է:

— Ընկե՛ր Մարության, դատարանին նայեցե՛ք:

— Ախր, հընգե՛ր նախագահ, էնպես բան ա ասում մարդ՝ ամոթից գետինն ա մտնըմ... ե՞ս — բրնձի գո՞ղ...

Բռունցքով խփում է իր գլխին, իբր ուտում է իրեն: Դահլիճում կրկին թնդում է լիաթոք քրքիջը:

— Իսկ չի՞ պատահել, — նույն սիրալիր. պաշտոնական ժպիտը դեմքին՝ շարունակում է դատախազը, — որ դուք փլավից բանից եփած լինեք ձեզ համար ու որոշ քաղաքացիների հետ՝ կերած...

Դահլիճում զվարթությունը հասնում է իր գագաթնակետին: Մեղադրյալ Մարությանի աչքերից արյուն է կաթում: Բարկությունից ձեռքը տանում է իր բլուզի օձիքին, ձգում, բաց է անում կուրծքը, բռունցքով խփում է կրծքին ու նստում:

— Ընկե՛ր Մարության, ոտքի՛. հարցաքննությունը դեռ չի վերջացել: Մարությանը վեր է թռչում տեղից և քայլերն ուղղում դեպի դուռը:

— Էլ չե՛մ կրնա, հընգեր դատավոր, չե՛մ կրնա, — ասում է Մարությանը կիսով չափ շուռ գալով դեպի նախագահը. — ես կերթամ՝ առանցի ընձի ի՞նչ կուզեք — որոշեցեք...Ես հոժար եմ:

Ու իբր խեղճացած՝ հպատակություն հայտնողի ամենայն պատրաստականությամբ՝ ծռում է մեջքը ու խոնարհ գլուխ տալիս դատարանին: Տպավորությունը դահլիճի վրա՝ ծայրահեղ է: Կալանավորները դոփում են հաճույքից, ծափահարում: Պարզ է, որ դահլիճի համակրանքը մեղադրյալի կողմն է: Մարությանն անմիջապես ըմբռնում է այդ և փոխում իր գործելակերպը, նահանջից անցնում է հարձակողականի.

— Ախր էդ դատախազն օր էդպես կխոսա՝ քիչ ա մնըմ սիրտս պատռի... Հերիք չէ՞ մեր միսը կրծեն էդ ինտելիգենտները... Հիմի ռաբոչո՛ւ վլաստ է:

Դահլիճն այնքան է գոհ այս հարձակումից, որ վրնջում է բառացի, ճիչ, աղմուկ, աղաղակ, բուռն ծափահարություն:

— Բրավո՛, Սերյոժա, — լսվեց մի բացականչություն: Նայեցի՝ Բաղդասարն էր:

Նախագահը զանգահարում է կատաղի, դատախազի աչքերը հուր են ցայտում, պաշտպանները զվարթ ծիծաղով հայտնում են մեղադրյալին իրենց բավականությունը: Վերջապես դահլիճը հանդարտվում է, և նախագահը հարցնում է դատախազին.

— Ուրիշ հարցեր չունե՞ք:

— Առայժմ ոչ: Բայց խնդրում եմ քարտուղարին մտցնել արձանագրության մեջ, որ մեղադրյալը վիրավորանք հասցրեց դատարանի կազմին...

— Քեզի՛, ընչի՞ կազմին, — բացականչում է տեղից Մարությանը, և հարցը համարվում է փակված:

Ապա նախագահը մեղադրյալին կրկին կանգնեցնում է ոտքի, և նրան հերթով զանազան հարցեր են տալիս հասարակական մեղադրողն ու պաշտպանները:

— Ասացե՛ք, խնդրեմ, ընկ. Մարության, — հարցնում է հասարակական մեղադրողը. — հայտնի՞ է ձեզ, որ կալանավորներից շատերն ապրում են բացառապես խոհանոցի ճաշով:

— Լա՞վ: Պարոն ինտելիգենտներն են մենակ դրսիից բան-ման ստանում:

— Ուրեմն ձեզ համար պա՞րզ է, որ ընդհանուր կաթսայից վերցնողը իր ընկերոջ վերջին թիքեն է վերցնում:

— Յա՞, — զարմանում է Մարությանը. — ընչի մենք մարդ չե՞նք. էդքան բան էլ չենք հասկընա... Խո շնից ծնած չե՞նք:

Կրկին ծիծաղում է դահլիճը, և կալանավորների համակրանքը կրկին մեղադրյալի կողմն է: Սակայն միանգամայն փոխվում է նրանց վերաբերմունքը, երբ սկսում են հարցեր տալ պաշտպանները: Դահլիճը լռում է ու կենտրոնանում: Վերանում է աղմուկն ու ծիծաղը: Երբեմն-երբեմն միայն լսվում են հավանության բացականչություններ:

Վերջապես վերջանում է Մարությանի հարցաքննությունը, նրան դուրս են տանում, և գալիս է մյուսը: Այսպես հարցաքննվում են բոլորը, և կալանավորների տրամադրությունը միշտ դեմ է դատախազին ու հասարակական մեղադրողին: Հարցաքննվում են և՛ վկաները, ու խոսքը տրվում է դատախազին. — սկսվում է կողմերի վիճաբանությունը:

— Քաղաքացի՛ դատավորներ, — բեմական դիրք տալով իր կեցվածքին և կեղծ - հռետորական շեշտէ՝ ձայնին — սկսում է դատախազը. — Ի՞նչ գործ ենք մենք քննում...

Եվ կես ժամից ավելի տևող մի ճառով, չնայած դահլիճի աղմուկին ու հաճախակի ընդհատումներին, նախաքննության թղթերից ու վկաների ցուցմունքներից մեջբերումներ անելով, վերամբարձ տոնով ու նախադասություններով դատախազը փորձում է ապացուցել, որ մեղադրյալները պարբերաբար գողացել են ընդհանուր կաթսայից ընդհանուրի մթերքը և.. փլավ կերել: Ծայր աստիճանի ծիծաղելի, զավեշտական տպավորություն էին թողնում Ուղղիչ Տան ընկերական դատարանի այդ հռչակավոր դատախազի նախադասությունները իրենց ձևի ու բովանդակության զավեշտական անհամապատասխանությամբ: Բարձր, վերամբարձ, հռետորական «կեղծ–կլասիկ» ոճ և… 1/2 ֆ. յուղ, 5 հատ կարտոֆիլ, փլավ... Պետք է սակայն ասել, որ այդ ոճն ընդհանուր էր, հատուկ բոլորին՝ թե՛ դատախազին, թե՛ հասարակական

մեղադրողին, թե՛ պաշտպաններին: Նույնիսկ մանտյոր-պաշտպանը, որ բոլորովին չէր տիրապետում գրական բարբառին — նա էլ էր
աշխատում «իսկական» պաշտպանի պես խոսել, — մի բան, որ նրանց հասկացողության մեջ զուգորդվում էր հռետորական անբնական ոճի և «գրաբար» բառերի հետ: Այս տեսակետից կատարյալ երեխաներ էին
կալանավորները: Հարկավոր էր տեսնել, թե ի՛նչ կատաղի ճակատամարտի էին փոխվում կողմերի ռեպլիկները միանգամայն պարզ ու անվիճելի բաների շուրջը, որպեսզի միանգամայն պարզ լիներ, որ դատախազների ու պաշտպանների քղանցք հագած կալանավորները ավելի շուտ ձևով, արվեստով էին տարված, քան քննվող գործի բովանդակությամբ: Կարծես երեխաներ էին, որ մեծերի դեր էին խաղում և ամեն ջանք գործ դնում, որպեսզի «իսկական» երևան: Եվ սա պատճառում էր նրանց ամենախորը բավականություն...

Դատախազի ճառի ընթացքում զայրույթից եռում էր Մարությանը. վեր էր կենում, նստում, բռունցքով խփում էր կրծքին, ընդհատում, կալանավորներից օգնություն հայցում աղերսական հայացքներով: Իսկ երբ դատախազը, ապացուցված համարելով մեղադրանքը՝ անցավ պատժի չափին և պահանջեց չորսին էլ հեռացնել խոհանոցից և մի ամսով ղրկել աշխատանքային օրերից — Մարությանի կատաղությունն իր գագաթնակետին հասավ:

— Ե՛ս ընձի կգյուլլեմ, — բացականչեց նա վեր թռչելով տեղից. — է՛ն աստված՝ փորումորս կտամ դանակով կփրթեմ...

Դահլիճը կրկին թնդաց ծիծաղից ու բացականչություններից: Զվարթ համակրանք արտահայտելով դեպի մեղադրյալը՝ կալանավոր հանդիսականները հեգնեցին ու խոցեցին դատախազին: Երբ զանգի և ձեռքերով սեղանին խփելու օգնությամբ վերջապես խաղաղություն հաստատեց դահլիճում նախագահը, խոսքը տրվեց հասարակական մեղադրողին:

Այստեղ արդեն հարկավոր է ասել, որ ինչպես մեղադրյալների հարցաքննությունից, այնպես էլ մանավանդ վկաների ցուցմունքներից միանգամայն պարզ էր, որ մեղադրյալները հանցավոր են: Մի շարք փաստեր կային ապացուցող, որ նրանք բավականին ժամանակ օգտվել են ընդհանուր կաթսայից: Ավելին՝ դատից մի օր առաջ կամերաներում և միջանցքներում, ինչպես նաև կուլտբաժնում ու գրասենյակում կալանավորները բողոքում էին նրանց դեմ և պահանջում անմիջապես հանել նրանց խոհանոցից: Մի քանիսը նույնիսկ գրավոր բողոք էին ներկայացրել Ուղղիչ Տան վարչությանը, որը և գործն ուղղել էր ընկերական դատարանին: Այս բոլորը հայտնի էր ինձ արդեն, ուստի ինձ համար միանգամայն անսպասելի էր, առաջին պահուն համարյա անհասկանալի՝ կալանավորների վերաբերմունքը դեպի դատախազի մեղադրական ճառը: Բայց ես շուտով գլխի ընկա, որ կալանավորների բացասական, թշնամական վերաբերմունքում դեպի

դատախազը՝ էապես խոսում էր այն ընդանուր ատելությունը, որ ունեին նրանք ընդհանրապես դեպի դատախազները: Ընկերական դատարանի դատախազը դատախազ էր նրանց աչքին՝ անկախ այն գործից, որի առթիվ նա հանդես էր եկել: Իսկ նրա հանդեպ կեցած մեղադրյալը այդ պահուն մեղադրյալ էր սոսկ, ճիշտ այնպես, ինչպես եղել են իրենք «իսկական»դատարանում: Ինչպես ներկայացման ժամանակ գեներալի դերը խաղացող կալանավորը նրանց աչքին իսկական, կոնկրետ գեներալ էր, որի գլխին իրենք էլ հաճույքով կխփեին — այնպես էլ ընկերական դատարանի դատախազը տվյալ դեպքում ընդհանրապես դատախազ էր, ուրիշ ոչինչ: Սա դեռ հասկանալի էր և նրանց տեսակետից բացատրելի: Սակայն ինձ ուղղակի ապշեցրեց կալանավորների նույնպիսի վերաբերմունքը նաև դեպի հասարակական մեղադրողը: Թվում էր, թե այն բոլոր դիմումներից ու բողոքներից հետո, որ նրանք հայտնում էին մեղադրյալների հասցեին մինչև դատը, Ուղղիչ Տան վարչությանը տված բողոքից հետո, վերջապես ի նկատի ունենալով, որ նրանք դիպել էին իրենց անմիջական, նյութական, կենսական շահերին, — այս ամենից հետո թվում էր, թե նրանք համերաշխ պետք է լինեն գոնե հասարակական մեղադրողին, որ իրենց իսկ շահերից էր խոսում, իրե՛նց իսկ անունից: Սակայն այդպես չեղավ: Երբ մոտ 15 րոպե տևող իր ճառով հասարակական մեղադրողն ապացուցեց մեղադրյալների անհանդուրժելի հանցանքն ընկերական կոլեկտիվի հանդեպ և պահանջեց խիստ պատիժ — դահլիճը սառը մնաց և ոչ մի բանով հայտ չբերեց իր համերաշխությունը: Ճիշտ է, սրա խոսելու ժամանակ տեղի չունեցավ ոչ մի անպատեհություն, բայց երբ նա վերջացրեց իր խոսքը՝ պատասխանը լռությունն էր, սառը, զուսպ, անտարբեր լռությունը:

Այնինչ դրանից հետո երբ խոսեցին պաշտպանները՝ նրանց յուրաքանչյուրի ճառը ծածկվում էր բուռն ծափահարությամբ: Եվ յուրաքանչյուր ծափահարությունը բուռն համակրանքի ցույց էր պաշտպանների ու մեղադրյալների հասցեին — մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ցույց թշնամանքի ու ատելության դեպի մեղադրողները:

Եվ այստեղ ես նոր հասկացա, որ կալանավորների համար մի ընդհանուր շահ կա, որ վեր է բոլոր մնացած շահերից: Դա — եթե կարելի է այսպես ասել– ազատության, մեղավորանքից ազատ լինելու խնդիրն է: Կալանավորը երբեք չի մոռանում, որ ինքը կալանավոր է, այսինքն ազատազուրկ. երբ էլ լինի, ինչ պարագաներում էլ լինի՝ նա միշտ զգում է, որ ինքը նախ կալանավոր է և ապա — մարդ, գյուղացի, բանվոր, ինտելիգենտ: Սա — միակ հանգամանքն է և սրա հետ կապված շահը միակ շահը, որ ընդհանուր է բոլոր կալանավորներին, կապում է նրանց իրար և նրանց սոցիալապես խայտաբղետ բազմությունը այս հողի վրա դարձնում կոլեկտիվ: Այս հանգամանքից դուրս նրանք իրար հետ ոչ մի ընդհանուր կապ չունեցող մարդկանց բազմություն են, սովորական մարդկային բազմություն, որի մեջ շերտավորումը գնում է ընդհանուր օրենքներով՝ ըստ սոցիալական խմբերի, ինչպես դրսի աշխարհում:

«Մի՞թե սրանք ոչ մի հանրային, կոլեկտիվ շահ չե՞ն կարող գիտակցել, միթե անհնարի՞ն է սրանց մեջ հանրային կյանքը» — սկզբի պահին շվարած մտածում էի ես, երբ տեսա նրանց վերաբերմունքը դեպի հասարակական մեղադրողը: Սակայն ես անտես էի առնում այն հիմնական հանգամանքը, որի հանդեպ նսեմանում էին բոլոր մնացած խնդիրները: Մանավանդ որ,ինչպես ես շուտով նկատեցի, նրանց բացասական, թշնամական, լավագույն դեպքում անտարբեր վերաբերմունքը դեպի հասարակական մեղադրողը ո՛չ թե վերաբերում էր նրա ասածներին ըստ էության, այլ անձամբ նրան, իբրև մեղադրողի, իբրև մեղադրող, դատապարտող կողմի: Այս բանում ես միանգամայն համոզվեցի, երբ կողմերի վիճաբանությունից հետո դատարանը գնաց խորհրդակցության և վերադառնալով կարդաց դատավճիռը: Դատարանը որոշել էր չորսին էլ հանել խոհանոցից և անունները գրել սև տախտակի վրա:

Բոլորը գոհ էին: Եվ երբ, փոխարինողներ չլինելու պատճառով, նրանք մի քանի օր ևս շարունակեցին մնալ խոհանոցում բոլորը պահանջում էին, որ որոշումը ի կատար ածվի, և պահանջում էին ո՛չ թե ընկերական դատարանից, այլ Ուղղիչ Տան վարչությունից:

Չէին սիրում կալանավորները ընկերական դատարանը, ամեն կերպ խուսափում էին նրանից: Եվ շատ գոհ էին լինում, երբ նրանց որևէ հանցանքը քննում ու որակման էր ենթարկում ոչ թե ընկերական դատարանը, այլ — վարչությունը: Թերևս այս բանում որոշ դեր էր խաղում և այն, որ վարչության առաջ «խայտառակվելը» հանրային հանգամանք չէր համարվում, այնինչ ընկերական դատարանին ներկայանալը հանրային խայտառակություն էր, որից ամեն կերպ խուսափում էին կալանավորները...

XI. Թե ինչպես շինվեցին նոր արհեստանոցները. խոսվում է նաև սիրո, եռանդի ու ամոթանքի մասին

Նոր արհեստանոցների կառուցումն սկսվեց նրանով, որ մյուս առավոտ Բենժամենի հավաքած բանվորներն սկսեին մի կողմից փորել արհեստանոցների հիմքը, մյուսները այդ հողից աղյուսներ պատրաստել: Երբ ես առավոտյան ժամը յոթին դուրս եկա բակ՝ աշխատանքը եռում էր արդեն:

— Է՛ս է սկսեցինք, — ուրախացած ցույց տվեց Ուղղիչ Տան պետը, որ կանգնած նայում էր աշխատանքներին. — քանի օրերը լավ են՝ միջի պատերի համար աղյուսներ պատրաստեք, հետո հեշտ է: Դե, տղե՛րք ջան, ձե՛զ տեսնեմ, որ վերջացրինք՝ քեֆ ենք անելու...

Հետո կրկին դառնալով ինձ՝ բացատրեց.

— Սայլերն ուղարկեցի մատերիալի. վաղը մյուս օրը կսկսենք շարել պատերը... Քարի-բանի համար փող կա, ինչ մնում է փայտին ու թիթեղին՝ մի տեղից խոստացել են, հույս ունեմ՝ կստանանք...

Հարկավոր է հենց այս գլխից ասել, որ այդ նոր արհեստանոցների կառուցումն սկսվեց համարյա թե ոչնչով և գլուխ եկավ բացառապես պետի եռանդի շնորհիվ: Եռանդի ու ամեն ինչ խորտակող կամքի մի ամբողջ էպուպե էր այդ արհեստանոցների կառուցումը, աշխատանքային մի դյուցազներգություն, որին հավասարապես մասնակցում էին թե Ուղղիչ Տան վարչությունը, թե՛ կալանավորները: Դրսի աշխարհում, իհարկե, առանձին մի բան չէր նման մի պարզ շենքի կառուցումը, բայց Ուղղիչ Տան պայմաններում դա հերոսություն էր, համարյա մեծագործություն, որ բավականությամբ էր լցնում բոլոր կալանավորների սիրտը: Ճիշտն ասած երբ ես առաջին անգամ տեսա այն մի տասը կալանավորին, որ Նաիրյան դանդաղկոտությամբ, առանց սիստեմի ու ռիթմի, փորում էին հողը, ու մյուսներին, որ այդ հողը ցեխ շինած կոխոտում էին բոբիկ ոտներով, որպեսզի աղյուսներ պատրաստեն — ես չհավատացի, որ այդ գործը կարող է գլուխ գալ երբևէ:

Հայտնեցի կասկածս պետին, և նա հեգնական, վերից վար չափող ժպիտը դեմքին՝ պատասխանեց.

— Կգա: Էն էլ ո՛նց. երկու ամսից պատերն ու տանիքը պատրաստ կլինեն:

Այդ աշխատանքների ընթացքում իմ ուշադրությունը գրավեց հետևյալ հանգամանքը: — Շենքի կառուցմանը մասնակցող կալանավորների մեջ չկար և ո՛չ մի մասնագետ՝ եթե չհաշվենք հյուսներին, որ շինեցին դռներն ու պատուհանները և տեխնիկ Նիկոլանին, որ միայն հատակագիծն էր քաշել ու քաշվել մի կողմ: Մնացած աշխատավորները տարբեր արհեստների տեր կալանավորներ էին՝ շատերը ռեցիդիվիստ գողեր, սակայն բոլորն էլ շատ շուտ ընտելացան աշխատանքին և հայտ բերեցին բավականին հնարագիտություն: Երբ ցեխը պատրաստվեց երևան եկան փայտյա աղյուսային կաղապարներ, որոնց մեջ սկսեցին լցնել ցեխը: Պատրաստողները ռեցիդիվիստներն էին՝ Խուժան-Խաչոն, Վալոն, Աշոտը, Հյուսեինը, դրանցից որևէ մեկը դրսում դժվար թե զբաղված լիներ որևէ աշխատանքով:

Բայց դրանց բոլորի շարքում ամենից զարմանալին էլի նույն Համոն էր — այդ զարմանալի Համոն: Հենց որ երկրորդ օրը փորեցին - վերջացրին հիմքի տեղը՝ նա ասպարեզ եկավ որմնադիրի գործիքներով և սկսեց շարել հիմքը: Տեխնիկ Նիկոլանն ասում էր, որ դրանից լավ դժվար թե շարի որևէ որակյալ վարպետ: Իսկ երբ, երկու ամիս անց, պատերն ու կտուրը պատրաստ էին՝ Համոն և իր ընկերը, Օսը, սկսեցին թիթեղել կտուրը: Դա արդեն նրանց մասնագիտությունն էր, որին նրանք տիրապետում էին ամենայն հմտությամբ: Յուրաքանչյուր առավոտ ժամը յոթից

սկսվում էր աշխատանքը, և հիվանդանոցի բակը լցվում էր աշխուժով ու եռանդով: Գուցե այդ աշխատանքն ինձ առանձնապես հմայիչ էր թվում այն պարզ պատճառով, որ տեղի էր ունենում փակված մի վայրում, ուր մարդ այսպես թե այնպես իրեն «կես մարդ» է զգում առանձնացված դրսի լայն աշխարհից, կարծես հակադրված այդ աշխարհին, որպես անհավասար պլեբե: Հարկավոր է կալանավոր լինել՝ հասկանալու համար այս զգացմունքը: Արդեն այն վայրկյանին, երբ մարդ ձերբակալվում է՝ իրեն հակադրված է զգում բոլոր ազատ մարդկանց,որպես պլեբե՝ պատրիցիների... Ապա այդ աշխատանքը տեղի էր ունենում մի վայրում, որի հետ մանկութ կապված են մեր մտքում բոլորովին այլ պատկերացումներ: Ես շատ էի կարդացել գրքերում, որ նախկին բանտերում աշխատանքը տաժանելի մի բան է եղել բանտարկյալների համար: Այս մասին առանձնապես շեշտել է Դոստոևսկին իր հռչակավոր գրքում: Սակայն խնդիրն այն է, որ նախկին բանտերում ու աքսորավայրերում աշխատանքը եղել է պարտադիր ու ծանր, հաճախ հոգնեցնող ու անիմաստ, այնինչ մեր Ուղղիչ Տանը դա սովորական մարդկային աշխատանք էր, որի համար ոչ միայն վարձատրվում էին կալանավորները, այլև նրանց յուրաքանչյուր օրը օր և կես էին հաշվում — մի բան, որ կալանավորի համար վեր է ամեն վարձատրությունից: Այսպես թե այնպես՝ չափազանց հաճելի էր յուրաքանչյուր օր տեսնել դրսի աշխարհից առանձնացված այդ մարդկանց՝ Ողղիչ Տան բակում աշխատելիս:Աշխատանքով տարված՝ նրանք մոռանում էին իրենց մեկուսացած դրությունը և դառնում զվարթ ու սիրալիր: Առանձնապես զվարթ մարդիկ էին հյուսները. սպիտակ, չոր փայտի տաշեղներում կորած՝ աշխատանքի ընթացքում ձեռ էին առնում իրար, սրամիտ անեկդոտներ պատմում կալանավորուհիների մասին, առանձնապես հեգնում Անուշին ու Մարգարիտին...

Դրանց մեջ կար մի երիտասարդ շնողցի, գյուղական իգիթի ռոմանտիկ արտաքինով. տղամարդու կեցվածք ուներ և երազողի աչքեր: Անունը դրել էի Իգիթ. միշտ մոտենում էի ու հետը զրուցում գյուղի տղաների ու աղջիկների, զանազան հերոսական ու ռոմանտիկ նյութերի մասին: Զվարթ տղա էր. չնայած թախծոտ աչքերին՝ միշտ սրախոսություններ էր անում և պատմում գյուղական առակներ: Մի օր էլ ես նկատեցի, որ նա կորցրել է իր զվարթությունը, լրջացել ու տխրել: Գլուխը սովորականից ավելի էր խոնարհել տաշած տախտակի վրա, հայացքը ծածկում էր ինձանից: Կարծեցի տխուր լուրեր է ստացել ընտանիքից, հարցուփորձ արի՝ բան չպատասխանեց: Ձեռնթափ հեռացա Իգիթից և արդեն խաչ էի դրել մեր բարեկամության վրա, երբ հանկարծ, միանգամայն պատահական կերպով, Իգիթի գաղտնիքը բացվեց, և մենք կրկին դարձանք զվարթ բարեկամներ...

Այդ ժամանակ Ուղղիչ Տուն էին բերել 18 տարեկան մի աղջիկ, որ ձերբակալվել էր գողության համար, սակայն ասում էին, որ փոքր քրոջն էլ է խեղդել, թեկուզ ըստ գործի այդ բանում նա չէր մեղադրվում: Թուխ դեմքով, բարակ բարձրահասակ մի աղջիկ էր նա, այդ Մանիշակը. կատվի աչքեր ուներ ու նուրբ, մանկական իրան: Բոլոր

ռեցիդիվիստներն անմիջապես սիրահարվեցին վրան և վազ չէին գալիս նրանից իրենց բավականին գռեհիկ հաճոյախոսություններով: Սակայն չար, աչքաբաց, չնայած տարիքին՝ արդեն «տեսարաններ տեսած» աղջիկ էր Մանիշակը և հեշտ չէր նրան գրավելը, նույնիսկ եթե ի նկատի չունենանք Ուղղիչ Տան անհարմար պայմանները: Կանայք ապրում էին, ինչպես գիտենք, գրասենյակի վերևը գտնվող կամերաներում, որոնք միանգամայն առանձնացված էին քրեական կորպուսից: Միակ տեղը, ուր կանայք կարող էին հանդիպել կալանավորներին գրասենյակի միջանցքն էր: Եվ ահա մի կիրակի երեկո, ժամը մոտավորապես յոթին, ես տեսա Իգիթին՝ կանգնած այդ միջանցքում, այն դռան մոտ, որը տանում էր դեպի վեր կանանց կամերաները: Երեսը սափրել էր ու բեխերը ոլորել, ինչպես իսկական գյուղական մի իգիթ: Երբ ինձ տեսավ՝ մտավ դռան հետևը, ես էլ չնկատելու տվի: Իսկույն մտքովս անցավ Մանիշակը... Եվ երբ, քիչ անց ես մտա այդ դռնով, որ իբր բարձրանամ վերև՝ տեսա Իգիթին ու Մանիշակին քնքշորեն իրար փաթաթված, ինչպես գյուղական սիրահարներ...

— Ա՛յ տղա, բա խի՞ էիր տխրել, — հարցրի ես Իգիթին երկրորդ օրը, երբ նա աշխատում էր բակում դռներ էր շինում նոր արհեստանոցների համար:

Իգիթը ժպտալով նայեց երեսիս, աչքերը տրորեց և ասաց.

— Ե՛ս էդ Հյուսեինի...

Ուրիշ ոչինչ: Սակայն ես անմիջապես հասկացա, որ պարտված է արդեն Հյուսեինը, այն երիտասարդ ռեցիդիվիստը, որը ևս Մանիշակի ինքնագոհ ասպետներից էր և սկզբներում կարծես սկսում էր գրավել Ուղղիչ Տան այդ գեղեցիկ Դուլցինեայի սիրտը...

Սակայն հարկավոր է ասել, որ Ուղղիչ Տան պայմաններում դժվար թե սիրային արկածը համբույրից դենն անցներ, — բայց ի՜նչ քիչ բան էր այդ փակված աշխարհում Մանիշակի նման մի չքնաղ Դուլցինեայի թեկուզև ամենաթեթև համբույրը...

Իգիթի ու Մանիշակի՝ այս ռոմանտիկ պատմությունը չգիտեմ ինչու իմ հիշողության մեջ կապված է մնացել նոր արհեստանոցների կառուցման պատմության հետ, թեկուզ դրանց մեջ եղած միակ առնչությունն այն էր, որ Իգիթը հյուսն էր և աշխատում էր արհեստանոցների վրա: Բայց ինչքան ես հիշում եմ այդ նոր արհեստանոցները, հիվանդանոցի բակը ծածկված փայտի տաշեղներով — անմիջապես աչքիս առաջ են գալիս Իգիթն ու Մանիշակը՝ իրիկվա կիսախավարում քնքշորեն իրար փաթաթված, ինչպես գյուղական սիրահարներ... Երեք ամիս հետո, երբարհեստանոցները կառուցվեցին — Մանիշակն էլ ազատվեց ու գնաց, և այսպիսով վերջացավ Իգիթի ռոմանտիկ պատմությունը:

Յուրաքանչյուր առավոտ, ժամը ուղիղ 9-ին, գալիս էր աշխատանքները տեսնելու Ուղղիչ Տան պետը, և բոլորի սիրտը լցնում եռանդով ու լավատեսությամբ:

Դե, տղե՛րք ջան. քիչ մնաց, է՛ս և պատերը վերջացրինք՝ երկուշաբթի օրվանից սկսելու ենք տանիքը...

Այնինչ դեռ պատերը նոր էին սկսել շարել և դժվար էր հավատալ, որ նրանք երբևիցե կբարձրանան այնքան, որ հնարավոր լինի «սկսելու տանիքը»:

Մենք, անգործ կալանավորներս, հաճախ մոտենում էինք Համոյին ու մյուսներին, որ շարում էին պատը, և ձեռ առնում նրանց.

— Էսպես հույս ունենանք, որ էկող գարունքին էս մի պատը քու բոյին կլինի...

Համոն նայում էր մեզ, թևով քիթը սրբում ու ասում.

— Ձեր օգնությամբ կշինենք... էկող գարունքին չեղավ՝ էն մեկել գարունքին ձեր բոյին կլի...

Ու զվարթ շարունակում էր աշխատանքը. կոտրում էր քարերը, դարսում, հավասարեցնում ու թոկով չափում ուղղությունը:

Վալոն, Խուժան-Խաչոն և մյուսները երբ վերջացրին աղյուսները՝ սկսեցին քարերը տաշել: Կամ երբ դրսից բերում էին մատերիալը՝ սայլերից տեղափոխում էին շենքի մոտերքը, զատում, դարսում:

Երկու շաբաթ հետո պատերն արդեն այնքան էին բարձրացել, որ այլևս կանգնած անհնարին էր դասել: Եվ ահա, մի առավոտ երբ բարձրացա՝ տեսնեմ պատի երկայնքով իրարից հինգ քայլ հեռավորությամբ փոսեր են փորում և կանգնեցնում բարձր գերաններ: Հետո դրանց վրա տախտակներ խփեցին, որոնց մեխեցին, հորիզոնական դիրքով, ուրիշ տախտակներ — ու բարձրացան վրան պատը շարունակելու: Մենք ևս բարձրացանք այդ տախտակների վրա, բայց ոչ թե աշխատելու, այլ դրանց վրայից դրսի աշխարհին նայելու — թեկուզ այդ «աշխարհը»միմիայն դիմացի զորանոցներն էին, դրանց պատերն ու պատուհանները... Եվ դա մեզ, կալանավորներիս, մեծ հաճույք էր պատճառում... Իսկ երկու շաբաթ անց խփեցին գերանների վրա և երկրորդ հարկի տախտակները — ու այս անգամ այդ տախտակների վրայից մենք արդեն տեսնում էինք ոչ միայն զորանոցների պատերն ու պատուհանները, այլև հեռուն: Դա արդեն կատարյալ հաճույք էր, համարյա ազատություն...

Արդեն կեսից ավելի բարձրացել էին պատերը, երբ հանկարծ սկսեցին աշնանային անձրևները, և մի քանի օրով աշխատանքը դադարեց: Համոն ու մյուսներն այդ օրերին

մռայլ շրջում էին քրեական կորպուսի միջանցքներում և շուտ-շուտ բակ վազում տեսնելու համար, թե ե՞րբ է փոխվելու եղանակը... Կարծես որբացել էր Համոն և վախենում էր, որ մեր չար մարգարեությունը կատարվի, ու գործը մնա «էկող գարունքին»: Բայց շուտով եղանակները լավացան, և նրանք անցան աշխատանքի:

Նոր արհեստանոցների համար իբր չորրորդ պատ՝ պիտի ծառայեր Ուղղիչ Տան պարիսպը, որի վերևի մասը սակայն մի փոքր ծուռն էր, և միտք առաջացավ այն քանդելու և նորից դարսելու: Եվ ահա մի առավոտ, երբ դուրս եկա հիվանդանոցից, տեսա, որ պարիսպն սկսել են քանդել: Մինչև կեսօր նա արդեն հարկ եղած չափով քանդած էր, ու աշխատող կալանավորները, ինչպես և Բենժամենը, կանգնած էին փողոցում ու հաղթական ինձ էին նայում, որպես ազատվածներ... Ես ևս շտապեցի անցնել այնտեղ, և քանդած պարսպի այն կողմը կանգնած՝ մենք նայում էինք քաղաքին, որ հեռավոր Դամասկոսի նման մեզ գրավիչ էր թվում և մեր սիրտը լցնում կարոտով ու տխրությամբ...

— Դե՛, դե՛, նե՛րս գնացեք, — կարգադրեց հսկիչը, և մենք մեծ դժգոհությամբ անցանք այն միակ քայլը, որ մեզ բաժանում էր դրսի լայնարձակ աշխարհից:

Երկու օր անց արդեն շարված էր պարիսպը, և Բենժամենը նրա վրա կանգնած՝ կարգադրություններ էր անում բանվորներին և մեկ-մեկ հայացքը հառում հեռուն դեպի դյութական Երևանը:

Կրկին սկսվեցին անձրևները, և աշխատանքները կրկին դադարեցին: Սա արդեն կատարյալ կատաստրոֆ էր, որովհետև շուտով սկսվելու էին ցրտերը: Եթե անձրևները մի քիչ երկարտևեին՝ ճիշտ որ գործը «էկող գարունքին» էր մնալու, — մի բան, որ անհանգստություն էր պատճառում ոչ այնքան Համոյին ու մյուսներին, որքան Ուղղիչ Տան պետին: Գրազի նման մի բան էր դարձել նաև նրա համար այս նոր արհեստանոցների կառուցումը, որովհետև այն թերահավատ վերաբերմունքը, որ ունեին մեզանից շատերը, ինչպես երևում էր բաժանում էին նմարդիկ, որոնք մի քիչ ավելի բարձր էին գտնվում թե՛ մեզնից և թե նրանից՝ պետից: Ինչպես կարելի էր նկատել՝ կային և նյութական կարգի դժվարություններ և այնքան էլ հեշտությամբ չէին տրվում նրան հարկ եղած միջոցները: Շատ բան իր ռիսկից ու ձեռներեցությունից էր կախված, և պատահական անհաջողությունը կարող էր վերագրվել նրա անփութությանը և չմտածված ընթացքին: Բացի այս նա մտահոգված էր նրանով, որ ձմռան սկզբից արհեստանոցները տեղափոխի նոր շենքը և անցնի դրանց մեքենայացման-մի բան որ մեծ հնարավորություն պիտի բանար ամբողջ Ուղղիչ Տունը հետզհետե աշխատանքային գաղութի վերածելու... Սա նրա երազն էր արդեն, որն իրականացնելու համար նա չէր խնայում ո՛չ մի ջանք ու եռանդ:

Երբ կրկին լավացան եղանակները և բանվորները կրկին անցան աշխատանքի՝ Ուղղիչ Տան պետի ուրախությունը հասավ իր գագաթնակետին: Եվ

որովհետև իր հոգեբանությամբ անմիջական մարդ էր՝ իր այդ ուրախությունը նա արտահայտեց այսպես.

— Դե՛, տղե՛ք ջան, էս ա՝ վերջացրինք…Հենց որ վերջացրինք՝ լուսանկարիչ եմ կանչելու՝ մեզ նկարի... Համո՛, քեզ հենց էդպես ցեխոտ երեսով՝ էդ մեդալը դոշիդ:

«Մեդալը: Նույն ցեխն էր, գաջախառն սպիտակ ցեխը, որ շքանշանի նման զարդարել էր Համոյի սատինե սև բլուզը:

Հետաքրքիր մարդ էր նա, Ուղղիչ Տան պետը, և՛ իբրև բնավորություն: Ամուսնացած էր և ուներ երեխաներ, որոնց սիրում էր չափազանց: Երբեմն բերում էր Ուղղիչ տուն և ծանոթացնումմեզ հետ, Երբեմն, հանկարծ, գործի ամենատաք պահերին, կամ երեկոները, երբ գալիս էր իր առանձնասենյակում պարապելու (նա բանֆակ էր հաճախում) կվերցներ հեռախոսի փողը և կզանգահարեր տուն.

— Վարդո՛ւշ, երեխաները քնա՞ծ են...չէ՞, կանչիր մի հեռախոսի մոտ... Դո՞ւ ես, Սպարտա՛կ...

Ու դեմքը կփայլեր ուրախությունից. Մի երկու բան կհարցներ, կասեր.

— Դե՛, բավական է, գնա քնի՛, Չէ՛, ես էսօր ուշ կգամ,- ու կկախեր հեռախոսի փողը. կարծես թարմացած՝ կշարունակեր աշխատանքը:

Երկու ամիս անց, երբ արդեն համարյա պատրաստ էին արհեստանոցները՝ նա բերեց իր երեխաներին, բարձրացրեց նոր արհեստանոցների կտուրը, տարավ ներս, ցույց տվեց ամբողջը և հաճույքից, բավականությունից փայլող դեմքով ասաց իր երեխաներին.

— Բաս, շինեցի՛նք:

Եվ ապա, ցույց տալով ինձ.

— Իսկ էս քեռին չէր հավատում...

Եթե երեխաները լավ դիտել իմանային՝ պիտի տեսնեին, որ իմ պատասխան ժպիտի մեջ ակնածանք կա դեպի իրենց հայրիկը, դեպի այդ երկդասյան կրթությամբ բանվոր-վարչագետը — և, իմ թերահավատության համար՝ մի փոքր ամոթանք...

XII. «Նիկալայի պադվալները», ժանգոտած շղթաները, թուրքական թատերախումբը, Գաճաճը, Ռահիմը, Միսաքը, Լյուբան և Բաղդասարի փախուստը

— Երթանք Նիկալայի պադվալները տեսնենք, հրեն բաց են արել, որ միջին փետ ածեն, — ասաց ինձ մի անգամ Բենժամենը, երբ ես դուրս եկա բակ՝ կուլտբաժինը գնալու:

Դրանից մի օր առաջ, երբ մենք շրջում էինք քրեական կորպուսի բակում՝ նա ինձ ցույց էր տվել կորպուսի աջ անկյունից դեպի վեր բարձրացող ծխնելույզը և խորհրդավոր հարցրել.

— Գիդա՞ս դա հինչ ա:

— Երևի ծխնելույզ:

— Չէ մի պոզեր... Դա Նիկալայի պադվալների օդանցքն ա: Դա շինված ա, որ պադվալներն օդ գնա՝ ընտեղ ածած բանտարկյալները չխեղդվեն:

Եվ ապա, ցույց տալով այդ օդանցքից մոտ քսան քայլ այս կողմը՝ կորպուսի ներքևի պատը — բացատրել էր.

— Այ, տեսնո՞ւմ ես էս տեղը, սրա տակին մին նեղ միջանցք կա, ոնց որ կանավը: Ընտեղ են քցելիս ըլել բանտարկյալներին, դրանք էլ սողալով գալիս են ըլել՝ պառկել էս օդանցքի տակ, որ օդի պակասությունից խեղդվեն ոչ: Էս անցքից օդը գնում և լցվում էտ միջանցքը: Ես մտած տեսած կամ...

Երևանի Ուղղիչ Տունը նախկին նահանգական բանտն էր, որքան հայտնի է ինձ հին բանտարկյալների պատմածներից, ցարական ամենադաժան բանտերից մեկն էր եղել:

Այս բանում ես լիովին համոզվեցի, երբ տեսա այսպես կոչված «Նիկալայի պադվալները»:

«Նիկալայի պադվալները» գտնվում են Ուղղիչ Տան ձախ կորպուսի ներքևը և այժմ վերածված են փայտի պահեստի: Իջնելով մի քանի աստիճաններ՝ մենք մտանք մի ընդարձակ ներքնահարկ, որ ոչ մի պատուհան չուներ: Վառեցինք լուցկին և տեսանք, որ կիսով չափ մեջը փայտ է լցրած. բացել էին, որ մնացած փայտն էլ լցնեն: Ես կարծում էի, թե հենց դա է, որ կա, բայց Բենժամենը բռնեց իմ ձեռից և մոտեցրեց դիմացի պատին: Կրկին վառեցի լուցկին — և տեսա հռչակավոր «միջանցքը», որի մեջ մարդ կարող էր տեղավորվել միմիայն նստած, իսկ առաջ գնալ՝ չորեքթաթ: Միջանցքի դուռը պոկած էր — չկար:

— Մտնենք նայենք, — ասի Բենժամենին:

— Ես մին անգամ մտել եմ — էլ ցանկություն չունեմ: Ինքդ կարող ես մտնել էլ, տեսնել էլ:

Եվ ես մտա: Նախապես, իհարկե, տեղեկացա, որ փոսեր չկան — և մթության մեջ մոտ քսան քայլ գնացի չորեքթաթ: Վառեցի լուցկին՝ դեռ շարունակվում էր միջանցքը: Օդը հեղձուցիչ էր արդեն, սակայն ես մի հինգ քայլ նորից գնացի ու կրկին վառեցի լուցկին: Դեռ ծայրը չէր երևում: Շնչել արդեն դժվար էր. խոնավ, հեղձուցիչ օդը քերում էր աչքերս, ուստի ես բարվոք համարեցի վերադառնալ: Սակայն, համենայն դեպս, խղճի հանգստության համար, մի երկու քայլ ևս առաջ գնացի և այն է՝ ուզում էի վերադառնալ, երբ ձեռքըս դիպավ երկաթի. խոնավ երկաթի: Վառեցի լուցկին, որ համարյա թե չէր լուսավորում օդի պակասության շնորհիվ — և աղոտ լույսի ներքո տեսա... մի զույգ ժանգոտած շղթաներ: Բանտային ձեռքի շղթաներ՝ կոտրած կողպեքներով: Վերցրի շղթաները, շուռ եկա և վերադարձա: Հեռվում քարայրի մուտքի նման երևում էր միջանցքի մուտքը: Շարժվեցի դեպի այն նույն անմխիթար ձևով —շարժվելու մի ձև, որ բացի ծայր աստիճանի անհարմար լինելը՝ նսեմացնում է մարդուս իր սեփական աչքին, իջեցնում անասունի աստիճանի:

Երբ ես դուրս եկա և մոտեցա Բենժամենին, որ կանգնած դռան մոտ ինձ էր սպասում մենք երկար-երկար նայեցինք միջանցքից հանված շղթաներին և երկար ժամանակ ո՛չ ես էի խոսում, ո՛չ նա:

— Նայես հո՞ւմ կոներին է եղել... — ասաց վերջապես Բենժամենը և ձեռքը խփեց շղթաներին: — Իմանաս հի՞նքն ա կոտրել-քցել, թե հետո՞վ են քցել...

Այս հարցին, դժբախտաբար, ո՛չ ես կարող էի պատասխանել, ոչ շղթաները, ուստի նա փոխեց զրույցի ընթացքը:

— Մինչևի պատը հասա՞ր:

— Չհասա:

— Մին քիչ էլ որ գնայիր՝ կհասնեիր: Հետով շուռ կգայիր դիպա ձախ էդպես միջանցքը գնում և մինչևի էն խողովակի ներքևը: Էն, որ դրսևից քեզ շանց տվի: Համ էլ ասում են, թե ընտեղ մին մարդաբոյի կարցերներ կան, էնպես որ մարդ անջաղ կաղնի...

— Ո՞նց թե՝ ասում են: Բա ասում էիր ինքդ գնացած կա՞ս:

— Դե ես չասի՛, որ մինչևի վերջը գնացած կամ: Ես մինչևի պատն եմ գնացել... Բայց հաստատ գնացողներ կան՝ էդպես են ասում:

Մենք վերցրինք «Նիկալայի պադվալներից» հանած ժանգոտած շղթաները և գնացինք կուլտբաժին, ուր մեր արած գյուտը ռեկվիզիտոր Համոյին մեծ հաճույք պատճառեց:

— Էս լա՛վ բան եղավ, — բացականչեց նա ուրախացած, — դերերի ժամանակ մին-մին հարկավոր է գալիս՝ չի ճարվում:

Ու «Նիկալայի պադվալներից» հանած այդ ժանգոտած շղթաները Համոն մտցրեց մեր թատրոնի գույքի ցուցակը՝ իբրև բեմական ռեկվիզիտ:

Թատրոնում այդ ժամանակ ինչ-որ պիես էր փորձում թուրքական խումբը: Խաղացողների մեջ աչքի էր ընկնում մի փոքրիկ, համարյա գաճաճ, թուրք կալանավոր: Մոտ 30 տարեկան, մանր, պսպղուն աչքերով: Ինչպես դեմքը, այնպես էլ ձայնը թողնում էր դեգեներատային, ծայր աստիճանի անհրապույր, հրող տպավորություն:

— Ինչի՞ համար է վճռված, — հարցրի Համոյին:

— Սարումը տղա է բռնաբարել, հետո քարով սպանել, — պատասխանեց Համոն: Հենց այդ ժամանակ մեզ մոտեցավ Ռահիմը:

Դա բարձրահասակ, շատ համակրելի դեմքով, մաքուր հագնված մի կալանավոր էր՝ դատապարտված մաքսանենգության համար: Հարցրի նույն գաճաճի մասին: Ռահիմն ամոթխած հայացքը շուռ տվեց դեպի պատը ու կամացուկ պատասխանեց:

— Ճի՛շտ է:

— Ո՞նց է եղել:

— Դե սարում չոբան է եղել, հետո մի անգամ բռնել է էդ երեխին՝ բռնաբարել: Հետո քարով ջնջխել է գլուխը... Երեխան էլ թուրք է եղել, — առանձին մի շեշտով, շեշտակի նայելով դեմքիս՝ հարկ համարեց պարզաբանել Ռահիմը, կարծես դրանով ուզում էր թեթևացնել իմ աչքին գաճաճի զարհուրելի հանցանքը:

— Դա նշանակություն չունի, Ռահի՛մ, երեխան թուրք է եղել, թե հայ, — ասացի ես, նույնպես շեշտակի, զննող հայացքով նայելով Ռահիմին: Ռահիմն իր ամոթխած հայացքը հեռացրեց իմինից, ու տիրեց ծանր լռություն:

Իսկ այդ ծանր, ճնշող լռության մեջ հնչում էր գաճաճի սուր, ճղճղացող, կեղծ ձայնը: — Հետագայում ներկայացման ժամանակ իմացա, որ նա խաղում է մոցիքուլ կնոջ դեր...

Թուրքական խմբի հետ խաղում էր և մի հայ կալանավոր՝ Միսաք անունով: Դա գողության համար դատված մոտ 35 տարեկան, կիսագյուղացի մի կալանավոր էր, որ Ուղղիչ Տանը հայտնի էր, իբրև անմրցակից սրախոս: Աշխատում էր Ուղղիչ Տան պահեստում, տնտեսական մասում. քաղաքից մթերքներ էր տեղափոխում, մեկ-մեկ էլ վերադառնում էր հարբած: Այդ պատճառով քիչ մնաց զրկվեր աշխատանքից, սակայն շուտով կարողացավ զսպել իրեն և կրկին շահել վարչության վստահությունը: Չնայած

զվարթ բնավորությանը՝ սիրում էր բեմից արտասանել բանաստեղծություններ, բայց անպայման տխուր ու ողբերգական: Դերեր էլ երբեք չէր վերցնի կոմիկական, սիրում էր հերոսական, կատաղի, ռոմանտիկ-պաթոսային դերեր, ինչպես «Նամուսի» հերոսի դերը:

Բացի Միսաքից՝ թուրքական խմբի փորձին մասնակցում էր նաև մի ռուս բարձրահասակ, բարակ կալանավորուհի, որ ձերբակալված էր նույնպես միջնորդության համար և իրեն առանձինէր պահում մնացած կալանավորուհիներից՝ Անուշից, Մարգարիտից, Զանեից, Մանիշակից և այլն: «Արիստոկրատ» էր պահում իրեն և որպես դրա բարձրագույն արտահայտություն՝ ծխում էր բարակ գլանակներ և պուդրա էր գործածում: Շուտ-շուտ հիվանդանում էր և օրերով պառկում հիվանդանոցում: Նրա մասնակցությունը թուրքական ներկայացումին այն էր, որ նա երկրորդ գործողության ընթացքում հարսի անխոս դերը պիտի տաներ և պիտի պարեր «Ուզունդարա» կոչված արևելյան պարը: Պարի ժամանակ ներկաներից յուրաքանչյուրը պետք է նրան դեպի ինքը քաշեր, որպեսզի մենակ իր հետ պարի, որից և պիտի առաջանար կոնֆլիկտը և հարսանիքը խանգարվեր: Գլխավոր հերոսի դերը կատարում էր Միսաքը և այնպիսի կատաղությամբ էր դեպի ինքը քաշում Լյուբայի թևը, որ վերջինս վերջ ի վերջո բարկացավ, լաց եղավ և հրաժարվեց մասնակցել ներկայացումին: Սակայն նրան մի կերպ համոզեցին պայմանով, որ Միսաքը մի փոքր զսպի իր կատաղի ոգևորությունը...

Թուրքական խմբի ռեժիսորն ու վարիչը Մեյիդ-Միրզա անունով մի ծայր աստիճանի խաղաղ երիտասարդ կալանավոր էր, որ միշտ խոսում էր շշուկով: Մեղադրվում էր թուրքական հյուպատոսի հետ կապ ունենալու մեջ. սակայն մեղադրանքը չապացուցվեց, և նա շուտով ազատվեց: Աշխատում էր խոզանականոցում, միևնույն ժամանակ դասատու էր դպրոցում: Ներկայացումների ժամանակ միշտ տանում էր «եվրոպականացած» թուրք բուրժուաների դերեր:

Ծայր աստիճանի լավ էր կազմակերպված թուրքական խումբը և շատ ավելի հաճախ էր ներկայացումներ ունենում, քան հայկականը կամ ռուսականը: Խմբի անդամների մեջ կար կատարյալ համերաշխություն և չպատահեց, որ կուլտկոմիսիան քններ խմբում առաջացած որևէ անհամաձայնություն, ինչպես այդ լինում էր հաճախ մյուս խմբերում:

Այդ երեկո Ուղղիչ Տանը պատահեց և ա՛յլ մի դեպք, որ անջնջելի տպավորություն է թողել իմ հիշողության մեջ– գուցե մասամբ այն պատճառով, որ դա տեղի ունեցավ «Նիկալայի պադվալների» իմ վրա թողած ծանր տպավորությունից հետո:

Երեկոյան ժամը մոտավորապես ութին ես գնացի Ուղղիչ Տան գրասենյակը, ուր հավաքված զրույց էին անում կալանավոր ծառայողները: Հանկարծ մռայլ ներս մտավ

հերթապահ հսկիչը, որ քրեական կորպուսն էր գնացել ստուգումի, և կամացուկ, ինչպես մեռելների մասին են խոսում, ասաց՝

— Բաղդասարը փախել է...

Տիրեց մեռելային լռություն: Բոլորն իրար նայեցին:

— Ամեն տեղ նայեցի՞ր, — հարցրեց մեկը:

— Ամեն տեղ նայեցի — չկա: Կուլտբաժինը բեմի ներքևը աստիճանների ներքևը, — ո՛չ մի տեղ չկա:

Եկան և մյուս հսկիչները ու միասին գնացին՝ որոնումը շարունակելու:

Բաղդասարը, եթե հիշում եք, այն կալանավորն էր, որ Համոյի, Օսի և Դարչոյի հետ միասին սպանել էր մի ծերուկի և կնոջը ու դատապարտվել 10 տարվա կալանքի: Հախուռն բնավորություն ուներ և շատ էր նեղվում Ուղղիչ Տանը: Հիշում եմ՝ մի օր առաջ, երբ հավաքված զրույց էինք անում հիվանդանոցի բակում, — արևոտ, պարզ օր էր, և մարդու միտքը բնազդաբար ճախրում էր Ուղղիչ Տնից դուրս, — ես հանկարծ պատահմամբ հարցրի Բաղդասարին.

— Որ քեզ հաջողվի այս պատերից անցնել՝ կարո՞ղ ես էնպես փախչել, որ չբռնեն...

— Պա՛հ, — զարմացավ Բաղդասարը. — մի րոպե թող ինձ թող տան ոտս դարբասից դենը դնեմ — հազար մանեթ կտամ ինձ հասնողին...

Ես անմիջապես հիշեցի մեր այս պատահական զրույցը այն պարզ, արևոտ օրը ու Բաղդասարի վառվռուն աչքերը՝ երբ նա ասում էր վերոհիշյալ խոսքերը — և սրտումս լիակատար հաջողություն մաղթեցի Բաղդասարին: Բայց հենց այդ վայրկյանին ներս մտավ հսկիչներից մեկը և ուրախացած բացականչեց,

— Բաղդասարին գտանք...

— Ո՞րտեղ էր, — հարցրինք միաձայն:

— Մտել էր արհեստանոցները և քանդում էր պատը: Երբ բաց արինք դուռը՝ ինքը դեմներս ելավ և ասաց՝ «Հը՛, ի՞նչ կա»: Ասես իրավունքով էր ընտեղ մտել, ու մենք իրան խանգարեցինք...

Մենք անմիջապես գնացինք արհեստանոցները, ուր կանգնած էին հսկիչները և Բաղդասարը: Մեզ տեսնելով՝ Բաղդասարն ասաց նույնը, ինչ որ ասել էր հսկիչներին.

— Հը՞ ի՞նչ կա...

Աչքերը թույն էին կաթում ու ծայրահեղ ատելություն: Ռունգները դողում էին, ինչպես կատաղի վազքից հոգնած նժույգի ռունգներ: Բայց հանգիստ էր. մինչև մեկուսացման սենյակը գնալը էլ ո՛չ մի խոսք չասաց:

Պարզվեց հետևյալը: Արհեստանոցները փակելուց առաջ պահվել էր հյուսնոցում, նոր շինված պահարաններից մեկում — ու վրան փակել էին դուռը: Սպասել էր լավ մթներ ու հետո անցնել աշխատանքի: Արհեստանոցի պատուհանները նայում էին փողոց. դրսում պահակ չէր կանգնում, այնպես որ դժվարը դուրս ելնելն էր: Դարբնոցից բերել էր մի շարք գործիքներ և սկսել էր փորել աջ պատուհանի ներքևը: Պատն աղյուսից էր դարսած. արդեն հանել էր քսանի չափ աղյուսներ: Եթե հսկիչները 20 րոպե ևս ուշանային — Բաղդասարը փախած կլիներ...

Բաղդասարին տարան փակեցին վերի մեկուսարաններից մեկում, իսկ ես գնացի կորպուսը դիտելու, թե ինչպես են անդրադառնում կալանավորներն այդ հետաքրքիր դեպքին:

— Անպատճառ մատնած կլեն ինտելիգենտները, — ասում էր մի կալանավոր, կարծեմ Միսաքը, երբ ես մտա ութերորդ կամերան, ուր ապրում էր նաև Բաղդասարը: Այդ կամերան իսկական ռեցիդիվիստների կամերայի հռչակ էր վայելում, ուստի ինձ հետաքրքիր էր իմանալ ամենից առաջ հենց այդ կամերայի կարծիքը:

Երբ ես ներս մտա՝ անմիջապես լռեցին, և յուրաքանչյուրը քաշվեց իր տեղը: Պիտի ասեմ, որ վաղուց արդեն, Ուղղիչ Տուն մտնելուս հենց առաջին օրից, ես նկատել էի այդ վերապահ, համարյա թշնամական վերաբերմունքը դեպի «ինտելիգենտները»: Սակայն անվստահության ու թշնամանքի նման հատու արտահայտության ես առաջին անգամ էի հանդիպում: Պարզ էր, որ ի՛նձ էլ չէին վստահում, իբրև «ինտելիգենտի»: Հետագայում, կնոջս մահվանից հետո, երբ ես դիտմամբ տեղափոխվեցի հենց այդ ութերորդ կամերան՝ մեր հարաբերությունները, իհարկե, շատ ավելի լավացան, բայց անվստահության որոշ տոկոս մինչև վերջն էլ մնաց և չէր կարող չմնալ, ինչպես ես հասկացա նրանց բավականին մոտիկից ճանաչելուց հետո:

Ինչ գնով էլ ուզում էր լիներ՝ ես որոշեցի զրույց բաց անել Բաղդասարի փախուստի մասին, ուստի, չլսածի տալով ինտելիգենտների մասին արված զրպարտությունը՝ ասացի.

— Քսան րոպե ուշ հասնեին՝ Բաղդասարը փախած կլիներ...

Ասացի անկեղծ ափսոսանքով, բայց ոչ ոք չարձագանքեց: Համառեցի, ցանկանալով ինչ գնով էլ լինի՝ կոտրել այդ անվստահության պատը:

— Նայես ի՞նչ կանեն Բաղդասարին:

Այստեղ արդեն չհամբերեց Լազգին ու դառնալով դեպի բոլորը և ոչ թե դեպի ինձ՝ ասաց.

— Բա՛ն էլ չեն կանա անեն: Տասը տարուն թյազադան տարի՞ պտի հավելցնեն... Համ էլ Լենին ասուկ ա՝ փախչելու խամար կալանավորին պատիժ չկա: Կալանավոր կալանավոր ա, որ փախչի, ադմինիստրացեն կանա թող չթորգա... Լենին էսպես ա ասուկ:

Չգիտեմ՝ ասե՞լ է Լենինը նման բան, թե ոչ, սակայն բնորոշ է, որ Լազգին անգամ Լենինի հեղինակությանը դիմեց՝ հռչակելու համար իր կարծիքը, որպես անհերքելի ճշմարտություն:

Բոլորը գոհ, միահամուռ ծիծաղով հավանություն տվին Լազգու խոսքին՝ միանգամայն համաձայն լինելով, որ ուրիշ բան չէր կարող ասած լինել Լենինը կալանավորների մասին:

Իսկ Բաղդասարին, փախուստի փորձ կատարելու համար, հետագայում դատարանը ենթարկեց երկու տարվա ազատազրկման, սակայն, քանի որ առանց այդ էլ նա արդեն ուներ ամբողջ տասը տարի՝ դատարանի այդ որոշումը փաստորեն ուներ միմիայն ձևական նշանակություն:

Այդպես էլ չհաջողվեց Բաղդասարի փախուստը, որ Ուղղիչ Տան անարկած կյանքի միապաղաղ մթնոլորտում նույնպիսի մի ռոմանտիկ արկած էր, ինչպես Իգիթի ու Մանիշակի սիրահարությունը...

XIII. Կալանավորների «Վարի խավը» և նրա վերաբերմունքը
դեպի «ինտելիգենտները», Միսաքի հռչակավոր ֆրազը, որպես այդ վերաբերմունքի դասական ֆորմուլ և Բաղդասարի փիլիսոփայությունը

Բաղդասարի փախուստի հաջորդ օրը Ուղղիչ Տանը համառ լուրեր էին պտտվում, որ նրա անհաջողությունը հետևանք էր «ինտելիգենտների մատնության»: Տալիս էին նույնիսկ որոշ անուններ: Իբրև գաղտնիք՝ հաղորդում էին իրար, որ Բաղդասարը սպառնացել է դանակով մատնողի «փորը թափել»: Այս շշուկները գլխավորապես գալիս էին վերի կամերաներից, ուր ապրում էին ռեցիդիվիստներն ու խիստ մեկուսացման ենթակա կալանավորները: Սակայն մնացած կալանավորների համակրանքը ևս այս հարցում նրանց կողմն էր, — խոսքս, իհարկե, կալանավորների «վարի խավի» մասին է, այսինքն Ուղղիչ Տան բնակչության

մասսայի, կալանավորական «գորշ» մասսայի, որ ապրում էր իր ներքին կալանավորական կյանքով և ուներ իր ուրույն, զուտ-կալանավորական հասարակայնության հասկացողություններն ու բարոյական նորմերը:

Շուտով սակայն պարզվեց, որ մատնության մասին խոսք անգամ չի կարող լինել, հուզված մտքերը հանգստացան, սակայն փաստը մնում էր փաստ, և նա չափազանց բնորոշ էր՝ կալանավորների այդ տարբեր խավերի փոխադարձ վերաբերմունքը հասկանալու համար: Կալանավորական մասսան առհասարակ հակադրում էր իրեն «ինտելիգենտներին», այսինքն նախկին ծառայողներին, կամ պարզապես նրանց, որոնք լիովին չէին ապրում Ուղղիչ Տան կենցաղով, կալանավորական ներքին, ուրույն կյանքով: Վերաբերվում էին նրանց խորը վերապահությամբ և դժվարությամբ էին ընդունում իրենց շրջանը: Եվ առիթ չէին փախցնում իրենց այդ վերաբերմունքն արտահայտելու: Փաստը կար և նրան հարկավոր էր տալ «գաղափարախոսական ձևակերպում»: Եվ այդ ձևակերպումը — մի քիչ, իհարկե, զավեշտական ձևով — հենց նույն այդ օրը իմ ներկայությամբ տվեց կալանավոր Միսաքը, ա՛յն Միսաքը,որ առանց այդ էլ սրախոսի հռչակ էր վայելում Ուղղիչ Տանը: Պատահեց այսպես: —

Այդ օրը ես գնացել էի թուրքական ներկայացման փորձին, որին, ինչպես գիտենք, մասնակցում էր և Միսաքը, որ լավ տիրապետում էր թուրքերենին: Երբ փորձը վերջացավ նրա հետ միասին մենք իջանք քրեական կորպուսի բակը: Այդտեղ մեզ դեմ ելավ բարձրահասակ, ինտելիգենտի դեմքով, 35 — 40 տարեկան, մի կալանավոր, որ աշխատում էր բանվորական սեղանում, իբրև գլխավոր հաշվապահ: Մինչ այդ էլ ես նկատել էի, որ նրան չեն սիրում կալանավորները, միշտ գանգատվում են նրանից, ատում են նրան, որովհետև նա խիստ վատ էր վարվում նրանց հետ, երբ նրանք գնում էին իրենց հաշիվներն ստանալու: Ես գիտեի նաև, որ նա դատապարտված է երեք տարով՝ յուրացման համար:

— Հաշիվներս ե՞րբ ես տալու, — մոտենալով հարցրեց նրան Միսաքը և վերից վար չափեց նրան իր հեգնական հայացքով: Հաշվապահն իր հերթին չոր, բարկացկոտ հրեց Միսաքին իր հայացքով և առանց պատասխանելու հեռացավ: Միսաքը զարմացած շվարած, բայց միշտ հեգնական ժպիտը դեմքին՝ երկա՛ր-երկա՛ր նայեց նրա հետևից, մինչև նա կմտներ քրեական կորպուսը, — և լուրջ, համոզված տոնով բացականչեց.

— Ափսո՛ս էն իրեք տարուն, որ քեզ են տվե... Քեզի պտի իրե՛ք օր տային — հլա էդ էլ մենծ պատիվ էր քեզպեսների համար... Ինչքան չեղնի ինտելիգենտ ես...

Ու շուռ գալով դեպի ինձ՝ ցույց տվեց իր երեք մատը, որ նա այդպես դրոշակի նման բռնած պահեց, մինչև մենք հասանք, քրեական կորպուսի դարբասին:

Այո, անհերքելի փաստ էր, որ կալանավորական մասսան, որը ճնշող մեծամասնությամբ բաղկացած էր գյուղացիներից, լյումպեններից և արհեստավորներից, ծայր աստիճան չէին սիրում ինտելիգենտներին: Իմ դիտողություններն այդ մասին՝ Ուղղիչ Տանը լինելուս ամբողջ ժամանակամիջոցին բերեցին ինձ հետևյալ եզրակացությանը: — Բենժամենի հռչակավոր ֆորմուլը, թե «ըստեղ ինչքան ինտելիգենտ տեսնես՝ իմաց կաց վատնումի համարա» — միանգամայն համապատասխանում էր իրականության: Կալանավորներն այդ գիտեին և մի տեսակ «կալանավորական արիստոկրատիզմի» զգվանքով էին անդրադառնում այդ հանգամանքին: Պետական դրամների յուրացումը, գաղտնի, հատակի տակից, մկան նման վատնումը՝հանցանքի ամենաստոր, «տղամարդու» համար անվայել տեսակն էր նրանց աչքին, և նրանք երբեք չէին թաքցնում իրենց այս տեսակետը: Ինտելիգենտ վատնողները նրանց աչքին թուլամորթ տղաներ էին, իրենց խոսքով ասած՝ «պարոններ», որոնք գողության ոչ թե բացարձակ, անմիջական, այլ գծուծ, տմարդի, ոչ տղամարդավայել ձևով ձգտելիս են եղել քաղքենական «պուդրայի» ու ճաշարանային «ընթրիքի» բարեկեցության: Վատնումը, յուրացումը նրանք համարում էին գողության մի ձև, որ զուրկ է ռիսկից ու քաջությունից — ահա թե ինչու նույնիսկ մանր-մունր գրպանահատները, դանթարում գյուղացու գրպաններից կուպեկներ թռցնող ռեցիդիվիստները ինտելիգենտ վատնողների վրա նայում էին վերից վար՝ խոր արհամարհանքով ու զզվանքով...

Եվ ահա թե ինչու Միսաքի վերոհիշյալ ֆրազը հաշվապահի հասցեին՝ շուտով կալանավորների մասսայի աչքին դասական ֆորմուլ դարձավ՝ արտահայտելու համար իրենց ծայրահեղ արհամարհանքն ու զզվանքը դեպի բոլոր «ինտելիգենտ» կալանավորները:

«Ափսո՛ս էն երեք տարին, որ ձեզ են տվել» — այսինքն դուք այնքա՛ն եք ողորմելի, որ անգամ արժանի չեք կալանավորվելու բարձր պատվին.- կալանավորական մասսայի՝ դեպի ինտելիգենտ-կալանավորներն ունեցած բարոյական գնահատության ավելի ճշմարիտ ֆորմուլ դժվար էր հնարեր: Կալանավորական վարի խավի դեպի ինտելիգենտներն ունեցած այս ծայր աստիճանի բացասական վերաբերմունքը Ուղղիչ Տան պատերում ավելի ևս խորանում էր նրանով, որ միանգամայն այլ էր կալանավորական այս երկու խավերի կենցաղը, ա՛յլ էին և նրանց շահերը Ուղղիչ Տան պայմաններում: Ինտելիգենտ-կալանավորները համարյա առանց բացառության դրսից ճաշ էին ստանում, բոլորն էլ համարյա ունեին լավ, մաքուր անկողիններ, ստանում էին սպիտակեղեն և այլն: Բացի այս դրանցից շատերն աշխատում էին գրասենյակում, կուլտբաժնում և բանվորական սեղանում, որի միջոցով, իհարկե, ձեռք էին բերում վարչության վստահությունը և լիովին օգտվում այդ վստահությունից քաղաք գնալու և այլ արտոնությունների խնդրում: Այնինչ կալանավորական մասսան ճնշող մեծամասնությամբ ապրում էր բացառապես կալանավորական պարենով, շատերն անկողիններ չունեին, նրանց 80%ը թեկուզ

աշխատում էր արհեստանոցներում, սակայն, իհարկե, այդ աշխատանքները չէին կարող ստեղծել նրանց համար թեկուզ հենց քաղաք գնալու այն դյուրությունները, որ ունեին գրասենյակում և բանսեղանում աշխատողները: Ուղղիչ Տան պարենը, իհարկե, լիովին բավական էր կշտանալու համար (օրական 21/2 ֆ. հաց, ցերեկը մի տեսակ ճաշ՝ շաբաթը երեք անգամ մսեղեն, առավոտ-երեկո թեյ, որի համար տրվում էր շաքար) —սակայն, իհարկե, այնքան էլ հաճելի տպավորություն չէր կարող թողնել այդ պարենով ապրող կալանավորի վրա միևնույն կամերայում, իր կողքին տնից ստացած ճաշով ապրող կալանավորը: Միևնույնը՝ քաղաք գնալու խնդրում: Կարելի է ասել, որ այս հարցը բոլոր կալանավորների համար ամենակենսական հարցն է, նրանց երազանքների անսպառ աղբյուրը, ուրախության ամենաբարձր առարկան: Հարկավոր է կալանավոր լինել, որպեսզի այս հասկանալ: Ոչ միայն քաղաք՝ Ուղղիչ Տան դարբասներից հինգ քայլ այն կողմ գնալը կալանավորին անասելի հրճվանք է պատճառում: Հիշում եմ՝ Ուղղիչ Տուն մտնելուց երկու ամիս հետո, երբ մի անգամ, կնոջս ճանապարհ դնելիս, հսկիչն ինձ թույլատրեց անցնել դարբասից և հինգ քայլ գնալ — ամբողջ աշխարհը կարծես ինձ նվիրեցին: Ուրախությունից ես համբուրում էի իմ սեփական մատները և, կնոջս հեռանալուց հետո, երկա՛ր դեռ նայում էի ճանապարհին...

— Դե լա՛վ, բավական է, դուռը փակում եմ, — կանչեց ինձ հսկիչը, և ես անսահման ափսոսանքով հետ եկա ինձ սահմանած հինգ քայլը ու կոտրած, տխրած սրտով մտա Ուղղիչ Տուն...

Էլ ինչպիսի՜ հաճույք պետք է լիներ — ազատ, առանց հսկիչի, մի անգամ քաղաք գնալը՝ մանավանդ մարդկանց համար, որ, Բենժամենի նման՝ արդեն ունեին կալանքի երկու տարվա ստաժ: Իսկ եթե այս ամենին գումարենք նաև ընտանիքի հոգսը — պատկերը լրիվ կլինի: Ճիշտ է, շաբաթը չորս անգամ այցելության օր էր լինում, և բոլորը կարող էին տեսնել իրենց հարազատներին, բայց, իհարկե, ա՛յլ բան է նրանց հետ Ուղղիչ Տանը հանդիպելը, և ա՛յլ բան՝ սեփական բնակարանում...

Ուստի միանգամայն հասկանալի էր, որ յուրաքանչյուր առավոտ, ժամը 9-ից, երբ պետը գալիս էր գրասենյակ, դեպի նա էին ձգվում կալանավորների երկար շարքերը՝ բոլորն էլ քաղաք գնալու խնդիրքով: Բոլորին միանգամից, իհարկե, չէր կարելի թողնել: Կային կալանավորներ, որոնց ամենևին չէր կարող թողնել: Շատերն իրենց քաղաք գնալու անհրաժեշտությունը պատճառաբանում էին ըստ երևույթին այնպիսի հնարովի բաներով, որ ծիծաղելի էին իրենց միամտությամբ սրանց էլ, իհարկե, չէր կարելի թողնել: Պետը մեծ վարպետ էր կալանավորների հոգեբանությունը հասկանալու գործում, ուստի 20 խնդրողից հնգին հազիվ էր հաջողվում գնալ քաղաք: Կար և վստահության խնդիր: Ի՞նչ իմանաս չի՞ փախչի, չի՞ հարբի և խայտառակություններ չի՞ անի արդյոք այս կամ այն կալանավորը, որոնց բոլորի համար վերջին հաշվով պատասխանատու էր ինքը պետը: Բոլորին իր հինգ մատի նման նա հո չէ՞ր կարող ճանաչել և վերաբերվել լիակատար վստահությամբ: Այնինչ

ինտելիգենտ կալանավորներից շատերը, որ քաղաքում ունեին բազմաթիվ ծանոթություններ, աշխատում էին գրասենյակում և այլուր — իհարկե, ավելի հաճախ էին հաջողացնում քաղաք գնալ, և այս հանգամանքը շարժում էր կալանավորական մասսայի նախանձն ու ատելությունը: Ինչպես դրսում նրանք այս մասսայի աչքին եղել են, երևացել ու թվացել են առանձնաշնորհյալ մարդիկ — այնպես էլ նրանք, շարունակում էին թվալ Ուղղիչ Տան պատերում, և կալանավորների մասսան առիթ չէր փախցնում արտահայտելու նրանց հանդեպ իր խուլ, բնազդական դժգոհությունը: Այս բանը լիովին հասկանալու համար չպետք է մոռանալ, որ Ուղղիչ Տունն իր բնակչության կողմից միշտ ի նկատի է առնվում որպես բոլոր այդտեղ ընկնողներին միանգամայն հավասարեցնող հիմնարկ, ուր չպետք է լինեն ոչ մի տեսակի առանձնաշնորհումներ: Եթե դրանք եղել են դրսում՝ապա տեղ չպետք է ունենան այստեղ, այդ բոլորն էլ հավասարեցված են հավասար իրավազրկությամբ: Այս բանը կալանավորական մասսան շատ լավ էր հասկանում և հաճախ արտահայտում էր բացարձակ: Կալանավորների ընդհանուր ժողովներում միշտ խոսք էր լինում այս մասին և, չնայած Ուղղիչ Տան վարժության ու կուլտկոմիսիայի ջանքերին՝ ամեն կերպ վերացնել այս դժգոհությունը, — դժգոհությունը մնում էր, կար և խորն էր, որպես դրսի աշխարհից բերված խոր, դարավոր սոցիալական բնազդ, որը լիովին կարելի է վերացնել միմիայն դասակարգերի լիակատար վերացումով...

Մի բան էլ կար սակայն, որ բացի վերոհիշյալ պատճառները՝ լարում էր կալանավորական մասսան ինտելիգենտների դեմ: Դա այն էր, որ նրանք գրասենյակը կամ բանվորական սեղանը ծառայության մտնելով՝ միանգամայն կարծես մոռանում էին իրենց կալանավոր լինելը և շատ անգամ ավելի չինովնիկական վերաբերմունք էին ցույց տալիս դեպի կալանավորները, քան վարչության բոլոր ներկայացուցիչները՝ միասին վերցրած: Այս տիպի ամենացայտուն ներկայացուցիչն էր վերոհիշյալ հաշվապահը, որը կալանավորների «դասակարգային» ատելության խորհրդանիշն էր դարձել: Վարչությունը նրան վաղուց հանած կլիներ, եթե փոխարինող ճարվեր: Երբ այդպիսին ճարվեց՝ նրան անմիջապես հանեցին, սակայն կալանավորները դեռ երկար հիշում էին նրան իրենց... ուշունցներում:

Այո, խորն էր կալանավորական մասսայի, այսինքն ճընշող մեծամասնության ատելությունն ու անվստահությունը դեպի ինտելիգենտները, և վարչությունն ու կուլտկոմիսիան ջանք չէին խնայում գոնե որոշ չափով այն վերացնելու, բայց հաջողություն չէին գտնում և, ի նկատի ունենալով վերոհիշյալ պատճառները՝ կարելի է ասել, որ դժվար էր գտնել: Իսկ երբեմն այդ փորձերը վերջանում էին կատարյալ կուրյոզով: Հարկավոր է ասել, որ կալանավորների մասսան հաճախ խոսք էր բաց անում անգամ այն մասին, թե կուլտկոմիսիան գտնվում է «ինտելիգենտների ձեռին»: Չնայած նրան, որ այդ կոմիսիան ավելի քան մասսայական կուրս էր բռնել, կոմիսիայի կազմի մեջ կային գյուղացիներ ու բանվորներ, թատերական խմբերի անդամների մեծ մասը «վարի խավից» էր, ներկայացումների ժամանակ առաջին կարգերը

հատկացվում էին նրանց և այլն: Սակայն որպեսզի կուլտաշխատանքի մասսայականացումն ավելի խոր գնա՝ մի անգամ կուլտկոմիսիան որոշեց կենդանի լրագրի ծրագրի մեջ մտցնել մի գյուղացի կալանավորի զեկուցումը՝ մեղվաբուծության մասին: Գյուղացին գործնականորեն բավականին տեղյակ էր այդ առարկային, ինքն էլ «վարի խավում» սեփական մարդ էր համարվում: Բայց որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ նրա երևալուն պես... ամենադաժան կերպով նրան ծաղրեցին: Ծաղրեց հենց կալանավորների «վարի խավը», կալանավորական մասսան, և ոչ միայն ծաղրեց, այլև ոչ մի կերպ հնարավորություն չեղավ դահլիճում խաղաղություն մտցնելու, որպեսզի խեղճը շարունակեր իր զրույցը: Հռհռում էին, բարձրաձայն նկատողություններ անում, սրախոսում, սուր փոթկացնում, ոտքերը քսում հատակին: Այնպես որ վերջ ի վերջո ստիպված եղավ ինքն է՛լ ծիծաղել ու հեռանալ ամբիոնից՝ կալանավորների հեգնական «բուռն ծափահարությունների» ու ծիծաղի ներքո: Վերջն էլ անունը դրին «մեղվաբույծ», որ արտասանում էին մի փոքր աղավաղած, և բավականին անպատշաճ բան էր ստացվում... Անունը կնքողը, իհարկե, Միսաքն էր, և այդ անունն այնպես կպավ խեղճին, որ նրա ազատվելուց հետո էլ դեռ երկար հիշում էին նրան այդ չարաբաստիկ անունով:

Իսկ կալանավորական «վարի խավի» դեպի ինտելիգենտներն ունեցած այդ անվստահության «փիլիսոփայությունը» մի անգամ տվեց ինձ Բաղդասարը, երբ ես արդեն ապրում էի ութերորդ կամերայում:

— Ինքնե՛րդ հասկացեք, — ասում էր նա ինձ (ի միջի այլոց նա մինչև վերջն էլ ինձ հետ «դուք» ով էր խոսում, չնայած որ մեր առաջին– երկրորդ հանդիպումից ես արդեն անցել էի «դու»-ի) — ինքնե՛րդ պատկերացրեք՝ ես ո՞նց կարող եմ ձեզ հետ ընկեր լինել, ընկերանալ ձեզ հետ, կամ Բենժամենի հետ, երբ դուք ինձ հետ հավասար կալանավոր երբե՛ք չեք կարող լինել: Ես ապրում եմ բացառապես Ուղղիչ Տան տվածով, իսկ դուք ամեն ինչ ստանում եք դրսից: Ես կարող եմ կռվել մեկի հետ և մեկուսարան ընկնել, իսկ դուք էդ բանը երբեք չեք անի: Իմ հույսը միայն իմ վրա է, իսկ ձեր, Բենժամենի, մյուսների, որոնց ճանաչում են՝ վարչության ու դրսի ծանոթների: Ու էսպես հազար բան: Եթե ես էստեղ կալանավորների մեջ որոշ անուն ունեմ՝ շնորհիվ մի՛միայն իմ ուժերի և էստեղ ցույց տված վարվեցողության: Երբ ես էստեղ ընկա՝ ինձ ոչ ոք չէր ճանաչում, ո՛չ կալանավորները, ո՛չ վարչությունը: Ես ինքս ինձ ճանաչացրի: Այնինչ եթե դուք անծանոթ Ուղղիչ Տուն ընկնեք՝ դժվար թե կարողանաք կալանավորների մեջ էն հարգանքն ունենալ, ինչ որ ունեք էստեղ:

Եվ նրա ասածների մեջ կար, անշուշտ, որոշ ճշմարտություն: Հետագայում ես շատ առիթներ ունեցա նրա հետ թե՛ այս, թե՛ այլ բազում նյութերի շուրջը զրուցելու և տեսա, որ խելքը գլխին տղա է Բաղդասարը, և իր նախապաշարմունքները հետևանք են դառն, անողոք պայմաններում ապրած կյանքի, — պայմաններ, ուր միակ որոշող

պայմանը՝ սեփական բռունցքը, ճարպիկությունն ու աչքաբացությունն է, և ուր մարդը մարդուն գայլ է՝ բառիս իսկական իմաստով:

Կալանավորական «վարի խավի» ամենացայտուն ներկայացուցիչն ու ճանաչված պարագլուխն էր Բաղդասարը, և ես շատ գոհ եմ նրանից, որ նա ինձ անսպառ նյութ տվեց՝ ինչպես կալանավորական «վարի խավի» հոգեբանությունը, այնպես էլ նրա յուրահատուկ, ուրույն փիլիսոփայությունը հասկանալու համար:

XIV. Լի օրը Ուղղիչ Տանը, կամերաները, գրասենյակը, արհեստանոցները և այլն

Առավոտվա ժամը վեցից, իսկ ձմեռը յոթից սկսում է արթնանալ Ուղղիչ Տունը: Արթնացնելու հատուկ ժամ չկա. առհասարակ ոչ ոք չի արթնացնում: Արթնանում են կալանավորներն իրենք և գնում են լվացվելու:

Կալանավորների առավոտյան ստուգումը կատարվում է ժամը հինգին կամ վեցին, երբ դեռ կալանավորները քնած են լինում: Ավագ հերթապահը մտնում է կամերաները, համարում քնած կալանավորներին և դուրս գալիս:

Մինչ կալանավորները գնում են լվացվելու, կամերա մաքրողները գնում են թեյի ու մթերքի: Կալանավորների կողմից կամերա մաքրողներ են նշանակվում առհասարակ ամենախեղճ կալանավորները, կամերա մաքրող լինելը մի տեսակ նվաստացուցիչ բան է համարվում համարյա բոլոր կալանավորների աչքին: Կամերա մաքրողի պարտականությունների մեջ է մտնում կամերան մաքրելը, թեյ և մթերքներ բերելը, դրանք բաժանելը, կեղտոտ ամաններ լվանալը և հսկելը կամերայում, որպեսզի կալանավորների բացակայության ժամանակ իրերը չկորչեն: Իր այս ծառայությունների փոխարեն կամերա մաքրողն ստանում է բաժանելուց հետո մնացած հացը, որ ավելանում է մանավանդ այն պատճառով, որ միշտ լինում են կալանավորներ, որոնք հացն ստանում են դրսից:

Թեյից հետո կամերաները համարյա դատարկվում են: Դրսի աշխատավորները գնում են քաղաք՝ գործի, Ուղղիչ Տան ներսում աշխատողները գնում են արհեստանոցները, գրասենյակ, բանսեղան, կուլտբաժին: Կամերաներում մնում են միայն անգործները, որոնք կալանավորների ընդհանուր թվի համարյա մի քառորդն են կազմում: Դրանցից բացի՝ կորպուսում մնում են նաև քննության տակ գտնվողները, որոնք պահվում են առանձին կամերաներում, մեկուսարաններում և նույնիսկ բակ դուրս գալու իրավունքից օգտվում են օրական երեք անգամ՝ յուրաքանչյուր անգամ կեսից մեկ ժամով: Դրանք էլ շուտով ելնում են բակ, և կամերաներում ու միջանցքներում մնում են միայն մաքրողները, որոնց գլխին անմիջապես կանգնում է Լազգին՝ սանիտարական սեկցիայի փոխնախագահը: Ավլում են, մաքրում կամերաներն ու միջանցքները, Լազգին տեղից տեղ է վազում և հրամաններ արձակում: Աչքերը պսպղում են եռանդից, իսկ ձեռին

ֆոկուսնիկի նման խաղացնում է մի բարակ փայտիկ, որպեսզի ազդեցիկ երևա: Իսկ բակում, բաղանիքում. խոհանոցում և այլուր մաքրություն է հաստատում Ուղղիչ Տան պարետը, նույնպես կալանավոր: Մի ժամանակ պարետ էր Բաղդասարը, իսկ հետո նրան փոխարինեց մի լենինականցի կալանավոր, — բարձրահասակ, թիկնեղ, աժդահա մի երիտասարդ, որ իր պարտականությունները կատարելիս թողնում էր տնային գնդապետի տպավորություն: Նա մեր Ուղղիչ Տունն էր ընկել այն մոտ հիսուն կալանավորների հետ, որոնք երկրաշարժից հետո մեզ մոտ տեղափոխվեցին Լենինականից: Նրանց հետ միասին մեզ մոտ տեղափոխվեց և՛ նրանց պետը, որ նշանակվեց մեր պետին օգնական: Դրանց տեղափոխումը զուգադիպեց հենց այն ժամանակամիջոցին, երբ Բաղդասարի փախուստից հետո մեզանում պարետային տագնապ էր առաջացել, չգիտեինք՝ ո՞ւմ նշանակել: Եվ ահա լենինականցի օգնականն առաջարկեց իր թեկնածուին, կուլտկոմիսիան համաձայնվեց — և կալանավորները հանաքով ասում էին, թե մեզ մոտ հաստատվում է լենինականցիների դիկտատուրա...

Առավոտվա այդ պահերին գրասենյակում տիրում էր գործնական եռուզեռը. — կալանավորներ են ուղարկում դատարան, նորերն են ընդունվում, որին ազատում են, ո՛րն արձակուրդ է գնում, մի խոսքով՝ գործ շատ կա — միայն թե աշխատիր: Իսկ երբ ժամը 9-ին գալիս է պետը՝ աշխատանքը գրասենյակում հասնում է իր գագաթնակետին:

Պետը, Ուղղիչ Տուն մտնելով, նախ՝ մոտենում է նոր կառուցվող արհեստանոցներին: Յուրաքանչյուր օր պատերը բարձրանում են, հենց այդտեղ, բակում, շինում են դռներն ու պատուհանները, նոր եկած սայլերի վրայից կալանավորները թափում են քարերը, մյուսները հղկում են ու տաշում այդ քարերը: Համոն արդեն շարում ու շարում է պատը, իսկ Բենժամենը,որ այդ աշխատանքների ընդհանուր հսկիչն է՝ դեսուդեն վազելով հրամաններ է արձակում:

Երբ պետը մոտենում է Համոյին՝ սա մի րոպե թողնում է աշխատանքը, քիթը թևով սրբում ու ժպտալով հարցնում.

— Ընկե՛ր պետ, էսա վերջացրինք. մաղարիչը ե՞րբ ես տալու...

Պետը միշտ միևնույն պատասխանն է տալիս.

— Երբ որ վերջացրինք՝ լուսանկարիչ եմ կանչելու՝ բոլորս միասին նկարվենք...

Երևում է, որ այդ գաղափարը չափազանց դուր է եկել նրան. դեմքը լայնանում է ժպիտից, ու աչքերը փայլ են ստանում:

Հետո պետը գնում է հին արհեստանոցները՝ հյուսնոցը, դարբնոցը, խոզանականոցը, ոսկերչանոցը: Ամենուր եռում է աշխատանքը, ամենուր նա մտցնում է եռանդ ու ոգևորություն: Արհեստանոցներից նա բակով մտնում է կորպուսը, ուր նրան դեմ է վազում Լազգին:

— Հընգե՛ր պետ, հիշկա լա՞վ ենք մաքրուկ...

— Լավ չէ՛ — ասում է պետը՝ շեշտակի նայելով Լազգուն. երևում է, որ ծիծաղը գալիս է, բայց զսպում է իրեն:

— Դե ասա՝ Լազգին գլուխ տա քարին՝ մեռնի, — վիրավորված պատասխանում է Լազգին և ձև է անում, իբր թողնում է հեռանա, սակայն տեսնելով պետի աչքերում թաքնված ժպիտը հարձակողականի է դիմում.

— Հընչի՞ լավ չէ…

— Պատերը մաքուր չեն. ա՛յ, տե՛ս:

Պետը ցույց է տալիս պատի վերի մասը, որը իրոք չափազանց փոշոտ է, տեղ-տեղ՝ կեղտոտ: Լազգին մի վայրկյան շփոթվում է, չի իմանում՝ ինչ պատասխանի, բայց հանկարծ գտնում է և ուրախ բացականչում.

— Ընտեղ ձեռ չի խասնի...

Երևում է, որ ինքն էլ բավարար չի համարում իր փաստարկումը, բայց ցույց չի տալիս, ո՞վ գիտե՝ գուցե և անցնի:

— Չի խասնի՝ նարդվան դրեք, — ասում է պետը կեղծ– բարկացած:

— Էդ մեկ ճիշտ, ասիր, — անձնատուր է լինում Լազգին, և պետը ազատություն է տալիս իր զսպած ծիծաղին: Անցնում է կատակի.

— Լազգի՛, արի քեզ տանք Անուշին:

— Հի՞նչ ասիր, — վիրավորված բացականչում է Լազգին: Ընչ՞ի Լազգին շո՞ւն ա...

Թարմացած նայում է շուրջը, երևում է, որ ավելի հատու պատասխան է փնտրում և հանկարծ ավելացնում է.

— Լավ և Անուշ տանք Պարուրին... խի՛ խի՛...

Պարույրը նոր պարետն է, որ հենց այդտեղ՝ կանգնած է պետի կողքին: Նրա ու Լազգու մեջ խուլ հակամարտություն կա, «քաղաքական» ընդհատակյա պայքար, որ նրանք ամեն կերպ աշխատում են թաքցնել, բայց երբեմն, ինչպես ներկա դեպքում, նա հանկարծ բարձրացնում է գլուխը և դառնում ընդհանուրի սեփականություն...

Այդտեղից պետը մտնում է մեկուսացման կամերաները, որոնք առանձնացված են մնացած կամերաներից, միշտ փակ են պահվում և ուր տեղավորվում են քննության տակ գտնվող, նոր բերված կալանավորները:

Պետք է նկատել, որ մեկուսացման կամերաները փոքր են, քիչ են և միշտ նրանցում ծանր օդ կա կանգնած, որովհետև մի փոքրիկ կամերայում երբեմն թափված են լինում հինգ-վեց կալանավոր: Լիքն է և այդ կամերաների փոքրիկ միջանցքը, որ առանձնացված է կորպուսի ընդհանուր միջանցքից միշտ փակ պահվող դռնով:

Երբ պետը մտնում է՝ բոլորը ոտքի են կանգնում: Ընդհանուր կամերաներում եթե դա նշան է ոչ պարտադիր հարգանքի՝ այստեղ հետևանք է վախի, որովհետև այստեղի բնակիչները դեռ նորեկներ են, և ո՞վ գիտե՝ Ուղղիչ Տան մասին ինչե՛ր են պատկերացնում: Սրանց մեջ կան և ռեցիդիվիստներ, որ արդեն անցել են այս դպրոցը, երրորդ, չորրորդ անգամն են այստեղ ընկնում: Սրանք անմիջապես շրջատատում են պետին և թափում նրա գլխին իրենց անսպառ հարցերի անսպառ տարափը.

— Մեր գործը ե՞րբ է լսվելու...

— Դատախազը ե՞րբ է գալու, — և այլն, և այլն, և այլն — նման անթիվ հարցեր:

Սակայն պետը չի դարձնում սրանց վրա ոչ մի ուշադրություն և մոտենում է նոր բերված կալանավորներին:

— Դու ինչի՞ համար ես. խուլիգանությա՞ն, — հարցնում է նա մի երիտասարդի, որ ձեռքերը գրպանները դրած անտարբեր նայում է նրան: — Կալանավորը ժպտում է:

— Դու է՛լ, դու է՛լ, դու է՛լ, — խփում է պետը ցուցամատով մի քանիսի կրծքին: — Բոլորը լուռ են: — Պետը ճիշտ է գուշակել:

— Իսկ դու անպատճառ կնիկ բռնաբարած կլինես, — մոտենում է նա հանկարծ մի ածդահա, մոտ քառասուն տարեկան գյուղացու, որ վախեցած նայելով պետին՝ քորում է իր կուրծքը:

— Դե ջահելութեն էր — պատահավ...

Պետը հեգնական նայում է նրան, հայացքով վերից վար չափում ածդահա հասակը.

— Լա՛վ ջահել ես... Քառասուն կա՞ս:

— Էդքան եմ:

— Ո՞նց էղավ:

Գյուղացին ամոթխած երեսը շուռ է տալիս՝ ամաչում է իբրև:

— Անպատճառ հարևանիդ կնիկը կլեր, — շարունակում է պետը:

— Դրկիցինս էր, — համաձայնվում է կալանավորը:

— Խաբեցիր գոմը տարար՝ կովը կթել տալու...

Գյուղացին ժպտում է ու հորթի հոտն առած կովի նման՝ երեսը շուռ է տալիս դեպի պատը:

Եվ պետը այդ աժդահա գյուղացու գրի առնելու ո՛չ այնքան էլ հարմար պատմությունը վերջացնում է մի սուր կատակով, որին հաջորդում է կալանավորների միահամուռ ծիծաղը, զվարթ քրքիջը:

— Դու գողությա՞ն, — դառնում է պետը մի ո՞ւրիշի:

— Գողության...

Եվ այսպես, համարյա առանց սխալվելու, նա որոշում է, թե ո՛վ ինչ գործով բռնված կլինի, հետո հարցուփորձ է անում նրանց կարիքների մասին, կարգադրություններ անում հսկիչներին և դուրս գալիս:

Զարմանալի հոգեբան էր պետը: Բավական է նայեր կալանավորին՝ և արդեն կհասկանար թե՛ նրա ինչ տիպի հանցագործ լինելը, թե՛ նրա բնավորությունը, թե՛ «փորացավը»:

Մի անգամ առավոտյան իր այդ շրջագայության ժամանակ երբ նա մտավ մեկուսարանը՝ դեմ ելավ նրան աժդահա գյուղական այրված դեմքով, սպիտակամորուս, բայց բավականին առույգ մի եկեղեցական: Դուրս եկավ, որ վարդապետ է՝ բերված է Սևանից:

— Տղա ե՞ք բռնաբարել, — հարցրեց պետը լուրջ՝ շեշտակի նայելով վարդապետին:

— Այդպե՛ս են ասում, — պատասխանեց վարդապետը խրոխտ:

— Սո՞ւտ է:

— Զրպարտություն է. Հուսիկ վարդապետը սարքեց, որ թեմիս ինքը տիրանա: Իբրև թե ծովում լողանալիս վանքի ծառայողի երեխային եմ անպատվել: Բժշկական քննություն կատարվեց՝ չհաստատեցին:

— Ծառայողն ամուսնացա՞ծ էր:

— Ամուսնացած էր:

— Կնիկը վանքո՞ւմ էր ապրում:

— Վանքումն էր ապրում:

— Որտե՞ղ եք քնում հիմա:

Վարդապետը ցույց տվեց. քնում էր մի փոքրիկ կամերայում՝ չորս ուրիշ կալանավորների հետ: Ասաց, որ կոյկա չունի:

— Երկուսին կհանեք, կթողնեք կամերայում վարդապետին ու երկու ուրիշ կալանավորի: Կոյկա կտաք: Թույլ չտաք, որ անհանգստացնեն, — կարգադրեց պետը հսկիչներին և ապա,դառնալով վարդապետին, ավելացրեց.

— Ոչինչ, մնացեք մի երկու օր, գործը կպարզվի: Եթե կարիք կունենաք՝ կասեք: Կարող եք հսկիչի միջոցով, կարող եք գալ գրասենյակ:

Ինձ, ճիշտն ասած, մի քիչ զարմացրեց պետի այդ առանձին հոգատարությունն այդ վարդապետի հանդեպ: Ես ծանոթ էի վերջինիս գործին, համարյա կասկած չկար, որ մեղադրանքը ճիշտ է: Կային ինչպես վանականների, այնպես էլ ուրիշների վկայություններ: Գիտեի նաև, որ պետը ավելի քան չի սիրում եկեղեցականներին, էլ ինչո՞ւ պիտի այդ գեղջուկ վարդապետը, որ մեղադրվում էր այլանդակ մի հանցանքում, պետի առանձին հոգատարությանն արժանանար: Ուստի երբ դուրս եկանք մեկուսարանից՝ ասի.

— Շատ հոգատար էիր այդ վարդապետի վերաբերմամբ...

— Անմեղ է, — ասաց նա համոզված, վճռական շեշտով. — զրպարտություն կլի:

— Իսկ վկայությունն՝ը, ես կարդացել եմ գործը...

— Սարքած բան է, վարդապետներն են սարքե, — ասաց նա՝ առարկություն չվերցնող տոնով. — գլո՛ւխս կկտրեմ՝ թե որ սարքած չլի:

— Բայց ինչո՞ւ ես կարծում, որ սարքած է — համառեցի ես:

Պետը լուրջ նայեց ուղիղ աչքերիս, մի երկու վայրկյան լռեց և հանկարծ ժպտալով ասաց.

— Տո, ծառայողի կնիկը թողած՝ մարդ երեխի հետևից կընկնի՞: Անհնար բան է, չհավատա՛ս:

Եվ նա չսխալվեց: Երկու օր հետո, երբ տեղի ունեցավ դատը վարդապետն արդարացավ և ազատվեց...

Մեկուսարաններից հետո, պետն իր այդ առավոտյան շրջագայություններին մտնում էր խոհանոցը, նայում մթերքներին, մաքրությանը, եթե բաղանիքի օր էր լինում՝ մտնում էր բաղանիք և ապա անցնում գրասենյակ:

Արդեն ժամի տասն է կամ տասնմեկը: Գրասենյակի առաջ խռնված՝ արդեն սպասում են նրան՝ քաղաք գնալու խնդրագրերը ձեռներին՝ անհամբեր կալանավորները:

— Այսօր ոչ ոք քաղաք չի գնա, — կտրուկ ասում է նա. — իզուր տեղը մի՛ք սպասի:

Սակայն կալանավորները շատ լավ գիտեն, իրենց ամենօրյա փորձից, որ պետն այդ ասում է այնպես, վախեցնելու համար, որպեսզի չնչին պատճառաբանություններով չանհանգստացնեն: Ու մեկը մյուսի հետևից անվստահ մտնում են պետի առանձնասենյակը:

— Դու ինչո՞ւ համար ես ուզում քաղաք գնալ:

— Բլուզս ճղվել է՝ բլուզ գնեմ...

— Հսկիչին կտաս՝ կգնի: Դո՞ւ:

— Երեխես հիվանդացել է, գնամ տեսնեմ...

Պետը փորձող աչքերով նայում է կալանավորին, սա քաշ է գցում գլուխը:

— Քանի՞ տարեկան է:

- Հինգ...

— Վաղը կգնաս, — ասում է պետը կտրուկ, և երբ կալանավորը պատասխանում է.

— Լավ, դու գիտես, — ու գնում է դուրս՝ պետը դառնում է հաջորդ կալանավորին.

— Հը, դո՞ւ էլ նրա պես խաբելու ես էկե...

Կալանավորը լուռ է: Դեմքին ո՛չ ժպիտ կա, ո՛չ հերքումի արտահայտություն:

— Տուր տեսնեմ թուղթդ — ասում է պետը:

Կալանավորը լուռ տալիս է թուղթը: Պետը կարդում է, բարձրացնում գլուխը և նայում կալանավորին:

— Ասում ես տունը հաց չկա... է, որ գնացիր՝ որտեղի՞ց պիտի ճարես: — Գողությո՞ւն պիտի անես...

Կալանավորը չի պատասխանում: Կիսագյուղացի է, ինչպես երևում է ծայրամասի բնակիչ: Անհամարձակ մարդ է երևում:

— Որտե՞ղ ես աշխատում, — շարունակում է պետը:

— Սելերու վրեն, արհեստանոցներու համար քար եմ կրըմ:

— Ստանալիք ունե՞ս:

— Մե քանի մանեթ պտի էղնի... Խնդրում եմ դուրս գրես՝ տանեմ էրեխեքիս...

— Դե էդպե՛ս ասա, տնաշենի հարիֆ, — բարկանում է պետը և զանգահարում: Մտնում է քարտուղարը:

— Ընկերոջը դուրս գրեք բանսեղանից ստանալիքը և 2 ժամով քաղաք: — Ինչքա՞ն ես վճռված, — դառնում է կալանավորին:

— Տարի կես:

— Ինչքա՞ն ես նստել:

— Վեց ամիս:

— Խիստ մեկուսացում ունե՞ս:

— Չէ:

— Առանց հսկիչի, — կարգադրում է պետը քարտուղարին և անցնում հաջորդին:

Եվ այսպես մեկը մյուսի հետևից մաղվում են կալանավորները, և պետն անցնում է Ուղղիչ Տան վարչական, տնտեսական և այլ ընթացիկ գործերին:

Իսկ կուլտբաժնում այդ ժամանակ եռում է աշխատանքն արտադրական արհեստանոցում և իրավաբանական բյուրոյում: Դահլիճում փորձում է իր հաջորդ ներկայացումը հայկական, թուրքական կամ ռուսական խումբը: Բելոգուրովը և Եֆիմ Բրավելմանը պատկերներ են նկարում: Ընթերցարանում թերթ են կարդում գործի չգնացած կալանավորները: Ասլան բիձեն ընթերցարանի սեղանի վրա կռացած՝ ինչ-որ բան է գրում, իսկ բողոքական տերտերը, որ միևնույն ժամանակ կուլտբաժնի ցրիչն է՝ դռան մոտ նստած կարդում է Բենիկ վարդապետի եկեղեցական պամֆլետները:

Ես մոտենում եմ նրան:

— Դու հավատո՞ւմ ես աստծուն, — հարցնում եմ շեշտակի:

— Այո՛, կհավատամ: Ես անիկա շա՛տ կսիրեմ:

— Անիկա ո՞ւր կբնակի, — հարցնում եմ ես:

— Կխնդրեմ՝ մի՛ հեգնեք: Ես այդպես կհավատամ...

— Քանի՞ տարեկան ես:

— Քսաներեք:

Ասում է քսաներեք, սակայն քառասունի տեսք ունի: Դեղին, լայն, հիվանդոտ դեմք. սև քահանայական մորուք. սև մազեր: Ձայնը բարակ է, համարյա կանացի. կատարյալ դեգեներատ է՝ ողորմելի ու խեղճ:

— Ի՞նչ էիր անում դրսերում:

— Ամերիկյան որբանոցին մեջ էի. որբ էի. հետո գյուղերը ավետարան կտարածեի, աստուծո խոսքը կքարոզեի...

— Ինչպե՞ս ես հավանում Բենիկ վարդապետի գրությունները:

— Ես անոնք շա՛տ կսիրեմ: Միշտ կկարդամ: Եկեղեցականներու շնականությունը կգրե...

Առավոտյան այս պահերին դպրոցը չի աշխատում: Պարապմունքները դպրոցում տեղի են ունենում երեկոները, երբ կալանավորներն ազատվում են աշխատանքից:

Եվ այսպես կալանավորների 75%-ն անցկացնում է իր օրը՝ ո՛րն արհեստանոցներում, ո՛րը գրասենյակներում, ո՛րն էր կուլտբաժնի զանազան սեկցիաներում: Իսկ անգործ կալանավորներիմի մասը կարդում է

ընթերցարանում, մյուսները շրջում են բակում, կամ իրենց կամերաներում նստած զբաղվում են նարդի, շախմատ, կամ «կատորժանին» կոչված խաղերով: Դրանցից մի քանիսը երաժշտական գործիքների վրա նվագել են սովորում, մի քանիսն էլ իրենց օրն անց են կացնում հացի խմորից համրիչներ, մարալներ կամ վարդատունկեր շինելով:

Ժամը երկուսին հավաքվում են ճաշի և ապա՝ նույնը, մինչև երեկո:

Վերջապես Ուղղիչ Տան պատերից ներս է սողոսկում մութը, լամպերը վառվում են, կալանավորների հոծ բազմությունը դառնում է աշխատանքից, փակվում են կորպուսի դռները, և սկսվում է Ուղղիչ Տան երեկոն՝ լի աղմուկով ու կարոտով, որովհետև օրվա այդ պահերին է մանավանդ, որ կալանավորներն ամենից ավելի խորն են զգում ազատազրկման ամբողջ դառնությունը…

XV. Ուղղիչ Տան երեկոն ու գիշերը

Երեկոյան ժամը յոթին փակվում էին կորպուսի դռները, և սկսվում էր Ուղղիչ Տան երեկոն...

Շաբաթը երեք-չորս անգամ կալանավորներն զբաղված էին լինում ակումբում: Կա՛մ ներկայացում էր լինում, կա՛մ ընկերական դատ, կա՛մ կենդանի լրագիր: Կենդանի լրագրի համարը կազմված էր լինում երեք կամ չորս փոքրիկ զեկուցումից՝ քաղաքական, գյուղատնտեսական, բժշկական կամ գիտական հանրամատչելի նյութերի շուրջը: Դասախոսում էին բացառապես կալանավորները: Զրույցներից շատերը պատկերազարդ էին լինում, պատկերները նկարում էին Եֆիմ Բրավելմանը և Բելոդուրովը: Զեկուցումներից հետո տրվում էին հարցեր, երբեմն էլ տեղի էին ունենում փոքրիկ դիսպուտներ: Զեկուցումների արանքում երգում էին, կամ արտասանում ոտանավորներ, իսկ վերջում անպայման տեղի էր ունենում դիվերտիսմենտ, որը և վերջանում էր նվագով ու պարով:

Շաբաթը, կամ երկու շաբաթը մի անգամ տեղի էին ունենում կալանավորների ընդհանուր ժողովներ, ուր քննվում էին Ուղղիչ Տան ներքին կարգապահության ու կենցաղին վերաբերող խնդիրներ: Այդ ժողովներին միշտ ընդարձակ ճառերով հանդես էր գալիս Ուղղիչ Տան պետը, որ ուներ խոսելու շատ յուրօրինակ ձև: Խոսում էր առակներով, մասալներով, խոսելու ընթացքում հանկարծ դառնում էր այս կամ այն կալանավորին, կենդանի օրինակներ բերում և այլն: Նրա ելույթները միշտ առաջ էին բերում մտքերի բուռն փոխանակություն, որին շատ անգամ մասնակցում էին նույնիսկ Վալոն, Խուժան-Խաչոն, Եֆիմ Բրավելմանը և Բաղդասարը: Հռետորների ճառերը միշտ թարգմանվում էին թուրքերենի և ռուսերենի, այնպես որ վերջիններս էլ միշտ կենդանի մասնակցություն էին ունենում ընդհանուր ժողովներին: Վերևում

մոռացա հիշատակել, որ կենդանի լրագրերի ժամանակ ևս զեկուցումներից երկուսը հայերեն էին լինում, իսկ երկուսը՝ թուրքերեն ու ռուսերեն:

Երբեմն էլ դրսից էին հրավիրում դասախոսներ՝ հանրամատչելի զրույցներ անելու զանազան հարցերի շուրջը: Ես չեմ մոռանա երբեք մի այդպիսի զրույց, որ կազմակերպված էր քիմիայի մասին: Կուլտկոմիսիան համալսարանից հրավիրել էր մի քիմիայի դասախոս, որ եկավ՝ քիմիական փորձերի համար հետը բերած երկու խոշոր արկղ պարագաներով: Դահլիճը լեփ-լեցուն էր կալանավորներով, սակայն ցանկացողների մեծ մասը դեռ դուրսն էր մնացել՝ տեղ չլինելու պատճառով: Դահլիճում ավելացված էր լույսը, սեղանի վրա փայլում էին ապակյա զանազանաձև սրվակներ, շշեր ու խողովակներ, որոնք կալանավորների վրա մոգական տպավորություն էին թողնում: Բավականին սրամիտ մարդ էր դասախոսը և կարողացավ ըմբռնել դահլիճի հոգեբանությունը: Նա իր փորձերը ցույց էր տալիս նախ իբրև ֆոկուսներ և ապա բացատրում: Առանձնապես մեծ տպավորություն էին թողնում այն փորձերը, որոնց ժամանակ պայթյուն էր առաջանում: Սակայն հետաքրքիրն այն է, որ չնայած դասախոսի ծայր աստիճան հանրամատչելի բացատրություններին — այնուամենայնիվ կալանավորները նրա բացատրություն ներն ընդունում էին որոշ թերահավատությամբ և անվստահությամբ: Կարծես վախենում էին, որ նա կարող է խաբել իրենց, կամ ձեռ առնել: Ծայր աստիճանի կասկածոտ մարդիկ էին կալանավորները և ոչ մի բան առաջին անգամից չէին կարող հալած յուղի տեղ ընդունել: Բացի այս՝ ֆոկուսն ավելի էր հասկանալի ու հաճելի նրանց մտքին, քան գիտական փորձը: Կարծես հիասթափվում էին՝ զարմանալի փորձից հետո երբ լսում էին հասարակ բացատրությունը: Այնուամենայնիվ աշխատում էին չհավատալ՝ մի կողմից չցրելու համար հրաշալի պատրանքը, իսկ մյուս կողմից պատկերը լրացնում էր թերահավատությունը: Կալանավորների այդ թերահավատ վերաբերմունքի լավագույն ձևակերպումը տվեց Լազգին, որ ամբողջ դասախոսությանը հետևում էր հիացած, լայն չռած աչքերով, որևէ անակնկալ փորձից հետո անհանգիստ սրան-նրան էր նայում՝ չլինի՞ թե ուրիշները չեն հավատում, իսկ ինքը խաբվում է հիմարաբար... Սակայն տեսնելով, որ բոլորն էլ հիացած են՝ բարձրաձայն արտահայտում էր իր զարմանքը.

— Իյա՛...

Իսկ դասախոսությունից հետո նա ինձ ասաց,

— Ընդրա հե՛չ մեկ խոսքին էլ չեմ խավտա...

Ճերմակ ջուր դարձավ կարմիր ջուր — էլա՛վ գնաց... Թո էթա քաղքի տղոց խաբա:

Իսկ Բաղդասարն ասաց.

— Դուք կարո՞ղ եք հավի ձուն շշի մեջ մտցնել... Կուզե՞ք ասեմ՝ ոնց են անում...

Երբեմն էլ դրսից, բանվորական կամ կոմերիտական ակումբներից գալիս էին թատերախմբեր և տալիս փոքրիկ ներկայացումներ ու օպերետներ: Հաճախ գալիս էր թուրքական կոմերիտական խումբը, մի անգամ էլ եկավ մի ինչ-որ հայկական երգեցիկ խումբ, որի անդամների մեծ մասը «քաղքի աղջիկներ» էին, ինչպես ասում էր Լազգին... Այդ անգամ արդեն ոչ այնքան բովանդակությունն էր կալանավորներին զբաղեցնողը, որքան, եթե կարելի էր այսպես արտահայտվել, կատարողների ձևը... Կալանավորները լուռ, լարված նայում էին բեմի վրա բարձրացած այդ կենդանի հրաշքին, այդ լուսե աղջիկներին, որոնց սպիտակ պարանոցները և հոլանի թևերը, միայն դրանց տեսքը նրանց անասելի հաճույք էր պատճառում... Լազգին կրկին չհամբերեց և ընդմիջումի ժամանակ թռավ բեմ ու սկսեց իր «Հիրգուն կուգան»-ն ու «Նագանը»...Դեմքը գունատվել էր ու հոգևոր դարձել, աչքերը փայլում էին ոգևորության սրբազան տենդով: Լազգու ելույթը բոլոր կալանավորների կողմից ընդունվեց բուռն, մոլեգին ծափահարությամբ, այսպես թե այնպես՝ դա մի ցույց էր այդ երկնային արարածներին, թե մենք էլմարդիկ ենք և ունենք մեր փոքրիկ ընդունակությունները... Կեցցե Լազգին. այդ աննման հրաշքների առաջ նա ցեխովը չտվեց մեր բորբոքված ինքնասիրությունը:

Սակայն շաբաթվա ընթացքում լինում էին օրեր, երբ թափուր էր լինում կուլտբաժինը, և այդ օրերին էր ահա, որ իր կապարե թևերով Ուղղիչ Տուն էր մտնում ու իջնում կալանավորների հոգիներին մահացու ձանձրույթը:

Այդպիսի երեկոներին կալանավորների փոքրաթիվ մասը դպրոցում ու ընթերցարանում էր լինում, իսկ մեծ մասը՝ կամերաներում: Խումբ-խումբ հավաքվում էին կամերաների զանազան անկյուններում: Մեկը թառ էր նվագում, մյուսները՝ ծալապատիկ նստած կոյկաների վրա՝ դոմինո էին խաղում, չխկում էր նարդին ու հատ ու կենտ կամերաներում հնչում էր մանդոլնն ու դհոլը: Վերի կամերաներից մեկում մի քուրդ կար, որ բռնված էր սպանության գործով. սրինգ էր նվագում: Կալանավորները հավաքվում էին նրա շուրջը, լսում նրա միապաղաղ, տխուր,մայող նվագը և սկսում ցած ձայնով զրուցել դրսի աշխարհում թողած իրենց ընտանիքների, բարեկամների ու թշնամիների մասին: Եվ բոլոր այդ զրույցները վերջանում էին մեկի տված, արդեն բոլորի համար սովորական դարձած, սակայն հավիտյան հուզող հարցով.

— Նայես էս փետրվարին ամունիստ կա՞...

Կամ՝

— Կասեն գալող նոյեմբերին մեծ ամունիստ կա. բոլոր կալանավորն էթալու ա տուն...

Առհասարակ չկար մի այլ նյութ, որ այնքան հուզեր կալանավորների միտքը, յուրաքանչյուր օր այնքան վեճերի ու զրույցների առարկա դառնար, որքան այդ նյութը: «Ամնիստիա», կամ, ինչպես կալանավորներն էին ասում՝ «ամունիստ» — ահա՛ այն մոգական բառը, որ կենդանություն կարող էր պարգևել նույնիսկ մեռնող կալանավորին: Քաղաք գնացող կալանավորին ընկերներն անպայման կպատվիրեին.

— Մի իմացի ամունիստ-բան չկա՞...

Քաղաքից գալողին պիտի անպայման հարցնեին:

— Հը՞, ամունիստի մասին բան-ման չիմացա՞ր... «Ամունիստը» կալանավորների կենտրոնական իդեան էր, անսպառ երազանքների աղբյուրը, արթմնի զառանցանքը, իդեե-ֆիքսը: Հիշում եմ այսպիսի մի բավականին ծիծաղելի դեպք: —

Արտասահմանից եկած մի ծանոթ գրագիտուհի՝ իր ինժեներ բարեկամի հետ մի անգամ ինձ այցելության էին եկել: Ես նրանց ցույց տվի Ուղղիչ Տունը. խոհանոցը, բաղանիքը, կամերաները, կուլտբաժինը, արհեստանոցները: Կալանավորները հետևում էին նրանց հարգանքով ու ակնածանքով, իսկ երբ նրանք գնացին՝ Լազգին մոտեցավ ինձ և կամացուկ, խորհրդավոր հարցրեց.

— Հուսկի՞ց ին, ֆրյանկցուզա երկրե՞ն:

— Հա՛, Լազգի՛. ֆրյանկցուզա երկրեն:

— Ի՞նչ կասին՝ ամունիստ կա՞...

Եվ նույն հարցը տվին, բացի Լազգուց, այդ օրը շատերը:

«Լի» օրերին, այսինքն երբ ներկայացում-բան չկա, կուլտբաժինը բաց է լինում մինչև երեկոյան ինը: Մինչև այդ ժամը կարելի է գնալ թերթ կարդալ ընթերցարանում, գրքեր փոխել և այլն: Աշխատում է և իրավաբանական բյուրոն, որ կալանավորների համար խնդիրքներ է գրում զանազան հիմնարկների և ընդհանրապես ցույց է տալիս նրանց իրավաբանական օգնություն: Դահլիճում տեղի են ունենում փորձեր, դպրոցում պարապում է հերթական խմբակը: Աշխատում է նաև գեղարվեստական սեկցիայի արտադրական արհեստանոցը, որ գտնվում էր կուլտբաժնի գրասենյակում:

Այդ արհեստանոցում կալանավորները բարակ փայտից շրջանակներ, փոքրիկ պահարաններ և նման մանր-մունր գեղարվեստական իրեր էին շինում, որոնք և կիրակի օրերը վաճառքի էին հանվում քաղաքում: Հաճելի էր երեկոները մտնել այդ արհեստանոցը: Լույս, տաք, գոլ. երգում է բարակ սղոցը՝ զանազան նկարներ է կտրում բարակ տախտակներից: Մյուսները փայլ են տալիս այդ տախտակներին, հետո փակցնում են իրար: Բելոգուրովն ու Եֆիմ Բրավելմանն այդ

շրջանակների վրա նկարում էին բնության տեսարաններ. Բելոգուրովը համարյա միշտ ծովային տեսարաններ էր նկարում, իսկ Եֆիմ Բրավելմանը՝ գյուղական ձմեռային գիշերներ... Ջյուն, խարույկ, մի փոքրիկ խրճիթ, որի պատուհանից փայլում է տաք, գոլ լույսը, վերևում, սպիտակ ամպերի արանքից՝ դեղին կիսալուսին...

Այդ արհեստանոցում աշխատում էր մի գունատ երիտասարդ՝ Միշա անունով: Ձերբակալվել էր գողության ու խուլիգանության համար, ռեցիդիվիստ էր համարվում: Հայ էր, ասում էր պարսկաստանցի է, բայց հայերեն չգիտեր: Ռուսախոս էր ու ռուսական նուրբ դեմք ուներ. շեկ, ոսկեգույն, հարթ սանրած մազեր, կապույտ աչքեր: Կոկայինիստ էր, մորֆինիստ: Չնայած նիհար, նուրբ կազմվածքին՝ միանգամից կարող էր խմել մի թեյի բաժակ մաքուր դենատուրատ, առանց ջրի: Շնորհքով երիտասարդ էր՝ ամեն ինչ ձեռից կգար: Նկարում էր, նվագում համարյա բոլոր գործիքների վրա, հացից մարալներ էր շինում, փայտից շինում էր շրջանակներ: Երբեմն երեկոները կուլտբաժնից նա վերցնում էր գիթարը, և, երբ հավաքվում էին արտադրական արհեստանոցում, նվագում էր ռուսական, ուկրաինական, վրացական երգեր, կամ փողոցային տխուր, սրտառուչ, հախուռն եղանակներ: Եֆիմ Բրավելմանը, տեսնելով նրա հաջողությունը՝ ինքն էլ մեջ էր ընկնում և երգում էր իր անթիվ անհամար կուպլետները: Իսկ Բենժամենը վերցնում էր ջութակը և նվագում պարի եղանակներ, կալանավորները պարում էին, աղմկում — հետո դադարում էր աղմուկը, ու աշխատանոցը շարունակում էր իր գործը:

Այդպիսի երեկոներին, երբ մենք հավաքված արհեստանոցում՝ նվագում էինք, պարում ու աղմկում — հանկարծ, խորհրդավոր ժպիտը դեմքին՝ կմոտենար ինձ Բելոգուրովը և կսկսեր պատմել Եֆիմ Բրավելմանի գծուծ արարքները: Ես գիտեի, որ սուրբ ճշմարտություններ են Բելոգուրովի բոլոր ասածները Եֆիմի մասին, բայց չէի սիրում Բելոգուրովի այդ զրույցները: Տխուր մարդ էր Բելոգուրովը՝ բնությունը նրան տխուր աչքեր էր տվել ու խեղճ բնավորություն:

Կուլտբաժնի փակվելուց հետո բոլորը քաշվում էին իրենց կամերաները և տրվում խաղի, խոսակցության, նվագի, կամ՝ մեջքի վրա պառկած երազանքի ու ձանձրույթի: Սուրենի ընկերը, Խաչիկը, որը 25 — 26 տարեկան մի երազող երիտասարդ էր՝ փակված վագրի նման միջանցքում պատից պատ էր քայլում, ձեռքերը հետևը դրած, գլխակախ ու մելամաղձոտ: Ես հաճախ մոտենում էի նրան, հարցնում.

— Հը՛, Խաչիկ, ի՞նչ ես մտածում...

— Ի՜հ, ընկեր Չարյանց, ի՞նչ պտի մտածեմ, — ասում էր նա՝ առանց կանգ առնելու.- մի ամունիստ էլ չեղավ՝ էթայինք մեր գործին...

— Կլինի՛, մի վախի. գալող նոյեմբերին կազատվենք:

— Հո՞ւրա, է, չեկա՛վ, էդ անտերը, — պատասխանում էր նա սրտնեղած ու շարունակում քայլել հետ ու առաջ, հետ ու առաջ, անվերջ, անհանգիստ, մինչև քունը տաներ և գնար քնելու...

Չնայած իր այդ ներքին անհանգստության՝ արտաքուստ խիստ հանգիստ տղա էր Խաչիկը, ինչպես և նրա ընկերները՝ Սուրենն ու Նիկոլը: Ես գիտեի, որ նրանք դատապարտված են բանդիտիզմի համար, բայց գործի մանրամասնությունը լավ չէի իմանում: Մի անգամ երեկոյան, երբ Խաչիկը անհանգիստ ման էր գալիս անհանգիստ կորպուսի միջանցքում՝ ես, ըստ սովորության, մոտեցա նրան ու հարցրի.

— Հը՛, Խաչի՛կ, էլի մա՞ն ես գալիս:

— Բա հի՞նչ անեմ. ամունիստ էլ չեղավ՝ էթայինք մեր գործին...

Եվ հանկարծ, անսպասելի կերպով կանգնեց, նայեց ինձ շեշտակի և հարցրեց.

— Գալ տալի մե՞ծ ամունիստ կլի:

— Այո, Խաչիկ, շա՛տ մեծ. կարծում եմ, որ անպայման կազատվես:

Նա նայեց, ժպտաց և կասկածանքով ասաց.

— Վախում եմ մեզ չազատեն...Էրկու ամունիստ էղավ՝ մեզ վրա չտարածեցին...

— Ինչո՞ւ, Խաչի՛կ:

— Ախր, անտերը... Էրկու անգամին էլ թուրք ենք սպանե... Հարցը դառել ա ազգային... Ուզում էին գնդակահարեն՝ Կենտգործկոմը ներեց...

Հետագայում ես իմացա նրանց գործի մանրամասնությունը: Դուրս եկավ, որ նրանք չորս հոգանոց խմբով, թալանի նպատակով, հարձակումներ են կատարելիս եղել հատկապես թուրք տների վրա, որոնցից երկուսի ժամանակ կատարել են սպանություններ: Երեք–չորս գործից հետո միանգամայն թողել են բանդիտիզմը, երկու տարի ապրել այլ աշխատանքներով, ոչ մի հարձակում չեն կատարել, — և հանկարծ, միանգամայն պատահական կերպով բացվել է նրանց գործը, և նրանք Ուղղիչ Տուն են ընկել: Սուրենը, Նիկոլը, Խաչիկը և մի ուրիշը, որին ես չտեսա, որովհետև նա իմ Ուղղիչ Տուն ընկնելուց 2 ամիս առաջ վախճանվել էր Ուղղիչ Տան հիվանդանոցում: Ասում էին, որ այդ վախճանվածն է եղել դրանց ղեկավարն ու կազմակերպիչը,այդ միֆական Մեսրոպը: Նրա ուժի, բնավորության և «քաջության» մասին պատմում էին լեգենդներ...

Չնայած, որ ես ապրում էի հիվանդանոցում, բայց երեկոները միշտ անց էի կացնում քրեական կորպուսի կամերաներում՝ մասամբ նրանց կենցաղը դիտելու, մասամբ էլ մենակությունից ու ձանձրույթից չխեղդվելու համար: Եվ միշտ, որ երեկոյան էլ կամերաները մտնեի՝ պատկերը նույնն էր. խաղում են, նվագում, զրուցում: Չգիտեմ ինչու՝ կալանավորների աղմուկը, կամերաների իրիկնային ղժժոցը տխրեցնում էր ինձ. մարդիկ թվում էին անիրական ու ֆանտաստիկ, իսկ ամբողջ Ուղղիչ Տունը՝ անգո զառանցանք: Իմ ամբողջ էությամբ ես զգում էի, որ այդ մարդիկ, որ երգում են, ծիծաղում, վիճում, նվագում, կամ քայլում անկյունից անկյուն — չնայած երգին, նվագին, ծիծաղին ու սրախոսություններին տխո՛ւր են, այնքա՛ն տխուր, որքան առհասարակ կարող է տխուր լինել մարդ կոչվող արարածը: Եվ դա ճիշտ էր. դրա ամենալավ ապացույցն այն էր, որ երեկոները կալանավորները չափազանց ջղային էին դառնում, անհանգստանում էին, հասարակ բաների համար կռվի բռնվում, խոսքով խոցում իրար, հեգնում ու ծաղրում: Մարդկային անսահման հոգին էր ըմբոստանում ու ազատ ելք պահանջում, —ձգվելու, տարածվելու, շուռումուռ գալու, փողոց, դաշտ գնալու, ոսոխի ու բարեկամի տեսնելու, զգվելու ու կռվելու հնարավորություն: Եվ կալանավորներն ամեն մի հնարքի դիմում էին, ամենաաներևակայելի միջոցների՝ խեղդելու հուզական այդ ծայրահեղ թախիծը, ծայրահեղ անհանգստությունը:

Իսկ դե ի՞նչը կարող է ընդհանրապես ավելի լավ հանգստացնել, ելք տալ տխրող ու անհանգստացող մարդու կուտակված հույզերին, եթե ոչ՝ ծաղրը, հեգնանքը, դիմացինի նսեմացումը: Այսպես թե այնպես գոնե մեկից ոխ ես հանում, հետն էլ մի փոքր զվարճանում — ով ուզում է լինի այդ «մեկը», թեկուզ հարազատ ընկերդ: Ուստի միանգամայն թող զարմանալի չթվա, որկալանավորները զվարճանալու համար դիմում էին երբեմն — և բավականին հաճախ — հետևյալ միջոցին:

Մի անգամ երեկոյան ես գնացել էի վերի կամերաները: Երբ մտա ութերորդ կամերան տեսա Բաղդասարը սավանից հիվանդանոցային խալաթ է շինել, քորոցներով ամրացրել իր վրա, կոնատակին զանազան թղթեր դրել ու կանգնել է կամերայի մեջտեղը: Կալանավորները զվարթ ծիծաղում էին և խորհուրդներ տալիս, թե էլ ի՞նչ անի, որպեսզի իսկական բժշկի կերպարանք ստանա: Երբ նա վերջացրեց իր պատրաստությունները՝ մոտեցավ ինձ և խորհրդավոր կերպով ասաց,

— Գնա՛նք մեզ հետ. հետաքրքիր բան է լինելու:

Հետո նա արագ դուրս ելավ, նրա հետևից՝ կամերայի ամբողջ բնակչությունը: Նկատեցի, որ դրանցից մեկը ամանով ջուր է վերցրել ու թաքցրել վերարկուի տակ: Երթն արագ անցավ միջանցքով և մտավ ծայրի կամերան: Առաջինը՝ արագ, հատու քայլերով մտավ Բաղդասարը, հետևից երեք ուրիշ կալանավորներ, մյուսները մնացին դռան առջև կանգնած:

— Ո՞վ է էստեղ կամերային ավագը, — չոր, պաշտոնական հազալով՝ հարցրեց Բաղդասարը: Ավագն առաջ եկավ:

— Նոր կալանավորներ կա՞ն:

— Երկուսը կան:

— Ովքե՞ր են, ցո՛ւյց տուր:

Ավագը ցույց տվեց: Նորեկներն արդեն հանել էին շորերը և պառկել: Գյուղացիներ էին:

— Ձա՛յն տու՛ր դրանց. Ասա՛՝ բժիշկը եկել է քննելու:

Նկատեցի, որ ինչպես կամերայի ավագը, այնպես էլ մյուս կալանավորները ժպտում են, բայց չեն խանգարում: Պարզ էր, որ նրանք առաջին անգամը չէ, որ ներկա էին գտնվում նման տեսարանի և ա՛յն, ինչ տեղի էր ունենալու՝ նրանց այս գլխից մեծ հաճույք էր պատճառում:

Երբ ավագն արթնացրեց նորեկներին և հայտնեց նրանց, որ բժիշկը եկել է քննության՝ նրանք ճմռեցին աչքերը և թռան ոտքի: Վախեվախ մոտեցան բժշկին, այսինքն Բաղդասարին, և անասնական աչքերով սկսեցին նրան նայել:

Հենց այդ ժամանակ մոտեցավ Բաղդասարին մեզ հետ եկած կալանավորներից մեկն ու երկարեց նրան մի թուղթ:

— Ընկե՛ր բժիշկ, — ասաց նա կերկերացող ձայնով, — խնդրում եմ խնդիրքս չմերժես:

— Ժամանակը չէ՛, հետո՛, — բարկացավ Բաղդասարը, բայց թուղթը վերցրեց: Իբր կարդաց և պաշտոնական հայտնեց.

— Լա՛վ, վաղը կգաս հիվանդանոց:

Այս ամենը, ինչպես և հաշված էր, թողեց նորեկների վրա շշմեցնող տպավորություն. նրանց համար կասկած անգամ չմնաց, որ եկողը բժիշկն է — և ո՞վ իմանա, թե ի՛նչ իրավունքներ ունի...

Բաղդասարը մոտեցավ առաջին նորեկին.

— Կուրծքդ բա՛ց:

Նորեկը բաց արեց կուրծքը: Բաղդասարն ականջը դրեց կրկին, իբր լսեց:

— Լա՛վ: Հիմա մե՛ջքդ:

Նորեկը շուռ եկավ և վեր քշտեց շապիկը: Բոլորը լարված, ծիծաղները պահած՝ հետևում էին տեսարանին: Բաղդասարը մատիտի կտորով մի երկու անգամ զարկեց նրա մեջքին, հետո հայտնեց.

— Լա՛վ: Իջեցրո՛ւ:

Ու ցույց տվեց շալվարը: Նորեկը, հլու, իջեցրեց շալվարը: Եվ հենց այդ վայրկյանին հետևից մոտեցավ Բաղդասարի հետ եկած կալանավորներից մեկը և հետն ամանով բերած սառը ջուրըշաղ տվեց նորեկի տկլոր մարմնի վրա... Նորեկն անմիջապես վեր քաշեց շալվարը:

Կամերան թնդաց միահամուռ ծիծաղից: Բաղդասարը հեգնանքով խփեց նորեկի քթին, և նրանք նոր հասկացան, որ չարաչար խաբվեցին...

Ահա այսպիսի միջոցների էին դիմում կալանավորները գոնե քիչ զվարճանալու, ցրելու համար իրենց անսահման ձանձրույթն այն «զի» երեկոներին, երբ կուլտբաժնում ո՛չ ներկայացում էր լինում, ո՛չ կենդանի լրագիր:

Հետո նրանք ցրվում էին իրենց կամերաները, մեկը մյուսի հետևից պառկում — և քունը իջնում էր նրանց անհանգիստ, ձանձրացող սրտերին՝ անիրական երազներում գոնե տեղափոխելու նրանց և ա՛յն երջանիկ աշխարհը, որ գտնվում է Ուղղիչ Տան դարպասներից, պատերից անդին...

Սակայն երբ ես հետագայում տեղափոխվեցի քրեական կորպուսը՝ նկատեցի, որ կալանավորներից շատերը գիշերներն էլ են անհանգստանում, քնի մեջ խոսում են, շարժումներ անում, հայհոյում, ժպտում... Այս հանգամանքի վրա ևս, որքան հիշում եմ, իր ժամանակ ուշադրություն է դարձրել Ֆյոդոր Դոստոևսկին:

Անհանգիստ էին քնում կալանավորները, և ես սկզբներում ինձ բավականին վատ էի զգում, երբ մնում էի անքուն, իսկ շուրջս քնած մարդիկ խոսում էին, ժպտում, ճչում ու անհանգստանում: Իսկ իմ հարևան կալանավորը, մի երիտասարդ գյուղացի, քնի մեջ թափահարում էր ձեռքերը, սպառնում, մենամարտում ինչ-որ անհայտ ոսոխների հետ, որոնք սակայն նույնքան հեռու էին նրանից, որքան ինձ հեռու էր թվում այդ անքուն գիշերներին փրկարար լուսաբացը...

XVI. Նոյեմբերի 29-ը Ուղղիչ Տանը, կալանավորները գնում են քաղաք՝ երթի, ձայնազուրկների ցուցակը և մարդահամարը

Նոյեմբերի 29-ին, Հայաստանի խորհրդայնացման վեցերորդ տարեդարձի օրը, առավոտյան, երբ բաց արի կամերայիս դուռը դրսից, քրեական կորպուսի բակից և Ուղղիչ Տան գրասենյակից ականջիս հասավ մի բազմաձայն աղմուկ: Անմիջապես դուրս եկա բակ և տեսա, որ Ուղղիչ Տան գրասենյակի առաջ ու քրեական կորպուսի բակում խռնվել է կալանավորների բազմաղաղակ բազմությունը: Խոսում են, քաշքշում իրար, հրհրվում, առաջ քշվում, աղմկում, ծիծաղում, բացականչում: Մոտեցա հարցրի հիվանդանոցային ծառայողին.

— Ի՞նչ է, ինչո՞ւ եք իրար խառնվել:

— Գնում ենք քաղաք՝ երթին մասնակցելու, — ուրախ բացականչեց ծառայողը:

— Բա կալանավորնե՞րն ինչու են իրար խառնվել:

— Նրանք էլ են գալիս. հրեն ընկեր պետը ջոկում ա՝ ո՛վ գա, ո՛վ չգա...

Նայեցի՝ քրեական կորպուսի դռան առջև կանգնել է պետը՝ ուրախ, իրար խառնված կալանավորների ժխորում ու մեկ-մեկ ընտրելով՝ բաց է թողնում նրանց այս կողմը: Այստեղ իրար գլխի հավաքված բարձրաձայն զրույց են անում Ուղղիչ Տան գրասենյակի, բանվորական սեղանի և հիվանդանոցի ծառայողներն ու հսկիչները: Նրանցից մեկը բռնել էր կուլտբաժնի դրոշակը, իսկ Անահիտը, այն Անահիտը, որ բեմ դուրս գալիս միշտ զվարթացնում էր բոլորին — հավաքել է Անուշին, Մարգարիտին, Լյուբային, Մանիշակին և մի երկու այլ կալանավորուհիների ու բացատրում է նրանց, թե ինչպես պետք է գնան և ինչպես պետք է մասնակցեն երթին...

Մոտեցա պետին: Նրա շուրջը կատարյալ ճակատամարտ էր. բոլորն էլ ուզում էին գնալ քաղաք, սակայն պետին հարկավոր էր ընտրել այնպիսիներին, որոնց կարելի էր միանգամայն վստահել:

Մոտ մի ժամվա աղմուկից ու հարայհրոցից հետո վերջապես մի կողմ հավաքվեցին մոտ 80 կալանավոր, որոնք և պետք է քաղաք գնային տոնական երթին մասնակցելու: Նրանց բոլորի էլ դեմքը փայլում էր հաճույքից և ուրախություն նից: Մեծ մասը գյուղացի կալանավորներ էին, որոնց համար մեծ բավականություն էր ոչ միայն քաղաք գնալը, այլև տոնական երթին մասնակցելը, գիտեին, որ երաժշտություն պիտի լինի, պիտի անցնեն ժողովրդով լիքը փողոցներով, լսեն կառավարության անդամների ճառերը և ողջունեն նրանց, ինչպես մնացած քաղաքացիները: Առանձնապես դուր էր գալիս նրանց նաև այն հանգամանքը, որ նրանք գնալու էին առանց հսկիչների: Դրանցից մի քանիսը, ճիշտ է, պիտի մասնակցեին երթին, սակայն ոչ թե շարքի հետևից ու առաջից, կամ կողքերից, ինչպես հսկիչներ, այլ իբրև Ուղղիչ Տան ծառայողներ մնացած ծառայողների հետ միասին կալանավորների հետ խառը:

Կալանավորներին, տոնական երթին մասնակցելու համար, քաղաք ուղարկելու գաղափարն իրեն՝ պետին էր պատկանում, ուստի, եթե անպատեհություններ պատահեին, պատասխանատուն ինքն էր, սակայն նա հաստատ համոզված էր, որ բոլորն էլ կգնան ու հետ կգան առանց անպատեհությունների — ինչպես և պատահեց:

Դեռ սկզբից ես նկատել էի, որ ամբողջ ժամանակ պետի շուրջն է դառնում Եֆիմ Բրավելմանը. նա ևս ցանկանում էր քաղաք գնալ, բայց պետը չէր թողնում երևի կասկածելով, որ կարող է փախչել: Նա ամեն կերպ համոզում էր պետին, որ դա անհնարին է, որ ինքը, Եֆիմ Բրավելմանը, սրիկա հո չէ, որ ի չարը գործ դնե պետի վստահությունը: Սակայն ոչ մի բան չօգնեց, և Եֆիմ Բրավելմանը մնաց Ուղղիչ Տանը: Խայթվածի պես նա ամբողջ ժամանակ դեսուդեն էր վազում, սրան նրան դիմում, արդարացնում իրեն և աշխատում հանգստացնել իր խոցված ինքնասիրությունը: Պետի անվստահությունը նա վերագրում էր միմիայն չար լեզուների զրպարտություններին, ակնարկում էր, որ այդ գործում պակաս դեր չի խաղացել Բելոգուրովը... Ու դիմելով ամենքին հարց էր տալիս.

— Ասացեք խնդրեմ՝ դուք հավատո՞ւմ եք, որ ես կարող եմ փախչել...

Թեկուզ բոլորն էլ համոզված էին, որ եթե ամբողջ Ուղղիչ Տանը կա մեկը, որ ամենից շուտ կարող է փախչել — դա հենց Եֆիմ Բրավելմանն է, սակայն, քաղաքավարությունից դրդված, չէին արտահայտում իրենց կարծիքը: Վերապահ հայացքով միայն կարծես հասկացնում էին.

— Ո՞վ իմանա, կարող ես և փախչել...

Երբ նա ինձ էլ դիմեց իր վերոհիշյալ հարցով. — ես չթաքցրի իմ կարծիքը.

— Ո՞վ իմանա, — ասացի ես Եֆիմին — կարող եք և փախչել...

Նա խայթվածի նման ձեռքը կրծքին տարավ, աչքերը թույն արձակեցին, մի վայրկյան մտածեց երևի գտնելու համար մի այնպիսի փաստարկում, որ միանգամայն հողին հավասարեցնի մեր գծուծ կասկածները, — և ասաց.

— Ասացե՛ք խնդրեմ... Իմ մի ֆունտ շաքա՛րն է այստեղ, հասկանո՞ւմ եք՝ մի ամբողջ ֆունտ շաքարը — իսկ ես պիտի փախչեմ...

Ու թունոտ, ոչնչացնող մի հայացք խրելով իմ սիրտը՝ Եֆիմ Բրավելմանն արագ հեռացավ:

Իբրև այդ օրվա հետաքրքիր տպավորություններից մեկը՝ չեմ մոռանա նաև Խուժան-Խաչոյին: Դա մի կիսագյուղացի ռեցիդիվիստ-կալանավոր էր, երիտասարդ, բարձրահասակ, սև գանգուր մազեր ուներ, որ միշտ սանրում էր

խնամքով. նրա միակ հարստությունը հենց այդ մազերն էին, և նա ջանք չէր խնայում դրանց խնամելու: Այդ սև, պսպղուն մազերը նրա կեղտոտ գլխի ու հագուստների կողքին թողնում էին տարօրինակ տպավորություն. կարծես վարսավիրից գնած բեմական մազեր էին թյուրիմացաբար դրված այդ կեղտոտ, ճղոտած շորերով ռեցիդիվիստի գլխին: «Խուժան» անունը վաստակել էր Ուղղիչ Տանը կատարած բազում չարությունների համար, կռվում էր նորեկների հետ, հետները դրամ խաղում և այլն: Սակայն նրա արարքները ոչ լուրջ բնույթ էին կրում, երազանքն էր՝ դուրս գալ Ուղղիչ Տնից և իրենց գյուղը գնալ երկրագործությամբ պարապելու:

Պետը նրան ևս թույլատրել էր գնալ, բայց նա չէր գնում, որովհետև... շորերը ճղոտած էին: Ինչպե՞ս կարելի էր տոնական երթին մասնակցել՝ ճղոտած շորերով: Բայց մեծ ցանկություն ուներ գնալու ՝երևում էր բորբոքված, փայլող աչքերից:

Վերջապես բացվեցին Ուղղիչ Տան դարբասները, դրոշակակիրն առաջ անցավ, և մնացող կալանավորների ուռռաների, աղաղակների և նախանձոտ հայացքների ներքո կալանավորների երթը դուրս եկավ դարբասներից: Առջևից գնում էր դրոշակակիրը, նրան հետևում էին Ուղղիչ Տան ծառայողներն ու կալանավոր կանայք, հետո մնացած կալանավորները: Արդեն բոլորն էլ համարյա անցել էին դարբասներից, երբ հանկարծ հևիհև հասավ նրանց... Խուժան-Խաչոն: Նայեմ նոր բլուզ է հագել, նոր շալվար: Գլխարկ չէր գտել, սակայն նոր թրջած ու սանրած մազերըփայլում էին մի այնպիսի կատաղի փայլով, որ հազար գլխարկ արժեր...

Երկու ժամ հետո բոլորն էլ կարգով կանոնով վերադարձան քաղաքից և ոգևորված պատմում էին քաղաքի խուռն բազմության, երաժշտության և դրոշակների մասին: Առանձնապես գոհ էին, որ բոլորն ուշադրություն էին դարձրել իրենց երթին. հանաքով ասում էին, որ իրենց թողած տպավորությունը նման է եղել «ֆուրորի»...

Չգիտեմ ինչո՞ւ՝ իմ հիշողության մեջ կալանավորների այս երթի գնալը միշտ զուգորդվում է մի այլ դեպքի, որի մասին հիշելիս՝ միշտ իմ աչքի առաջ է գալիս Միսաքը, Ուղղիչ Տան հռչակավոր սրախոսը:

Խորհուրդների վերընտրության օրերին մի անգամ քաղաքից Ուղղիչ Տուն վերադարձավ Միսաքը և մտնելով կամերան՝ առանց առաջաբանի ասաց.

— Հո՛ղը մեր գլխըներին՝ ամունիստը դուրս է էկե — դուք բեխաբար...

Բոլորը վեր թռան տեղներից և շրջապատեցին նրան:

— Ո՞նց թե, ո՞վ ասավ, ի՞նչ ամունիստ...

— Հե՛ն ա կպցրել են պատերին, մեկը պոկի բերեցի՝ ասի մեր տղերքն ուրախանան...

Ու ձեռքը գրպանը կոխեց, հանեց չորս տակ ծալած մի թուղթ: Սակայն մինչև բաց անելը՝ թաթով խփեց Լազգու գլխին ու բացականչեց.

— Քե՛զ էլ են հիշուկ, բախտավարի գլուխ... Մարթահեսաբի են հաշիվե...

Ու բաց արեց թուղթը: Դա... Երևան քաղաքի ձայնազուրկների չեմ հիշում ո՛ր համար ցուցակն էր, որի մեջ տպված էին մեր կալանավորներից շատերի անունները:

Բոլորը շվարած մնացին: Ու թափվելով վրա՝ յուրաքանչյուրն սկսեց փնտրել իր անունը:

Բոլորն էլ, իհարկե, շատ լավ գիտեին, որ իրենք զրկված են քաղաքացիական իրավունքներից, բայց այդ ցուցակը բոլորի էլ վրա ծանր տպավորություն թողեց: Եվ հասկանալի է, թե ինչու: Դա մի կենդանի, կոնկրետ հիշեցում էր, որ իրենք կալանավորներ են, շրջանից արտաքսված մարդիկ: — Մյուս կողմից, երևի, հիշեցրեց ծանոթներին ու բարեկամներին, որ դրսում կարդալու են այդ ցուցակները և տխրելու կամ ուրախանալու:

Սակայն, չնայած ցուցակի թողած ընդհանուր տխուր տպավորությանը՝ կալանավորներից շատերը տխրում էին, որ իրենց անունը ցուցակում չկա: Կալանավորների տխրության ու հուզմունքի պահերին միակ փրկարար ելքը ծիծաղն է, հեգնանքն ու ծաղրը, ուստի նրանք սկսեցին հեգնել նրանց, ում անունները չկային ցուցակում:

Միսաքի բերած ցուցակը մեծ ֆուրոր առաջացրեց Ուղղիչ Տանը: Կամերայից կամերա էին տանում և բարձրաձայն կարդում: Եվ երբ կարդում էին որևէ ներկա գտնվողի անուն՝ վերջինս քաշ էր գցում գլուխը, մեղավորի նման ժպտում, իսկ մյուսները հռհռում էին բարձր, կարծես ցուցակում տպված էր մի հատու սրախոսություն...

Իսկ թուրք գյուղացի կալանավորները, ցուցակն Ուղղիչ Տուն ընկնելուց երկար դեռ անց, մեկ-մեկ գալիս էին ու խնդրում, որ նայեմ կա՞ արդյոք իրենց անունը, թե ոչ: Եվ երբ գտնում էի՝ նրանք երկար նայում էին իրենց համար անհասկանալի այդ սև նշաններին, օրորում էին գլուխները և հեռանում: Թե ի՞նչ էին մտածում նրանք՝ դժվար էր գուշակել, սակայն դեմքերի արտահայտությունից երևում էր, որ ցուցակում տպված սև նշանները նրանց ուղեղներում առիթ էին տալիս ոչ այնքան էլ զվարթ, կամ հաճելի մտքերի:

Այնինչ մարդահամարը կալանավորներին մեծ հաճույք պատճառեց: Իհարկե, կար և որոշ տխրություն՝ երբ հարցնում էին ընտանիքի անդամների մասին, բայց ընդհանուր առումով գոհ էին,որ իրենց էլ են մարդ հաշվում, ինչպես բոլոր մարդկանց, —

նրանց, որ դրսում են գտնվում, ազատ են ու չեն
կրում «կալանավոր» անունը: Առանձնապես ուրախացել էր Լազգին:

— Գրա՛, — ասում էր նա ցուցակագրող կալանավորին, — էնպե՛ս գրա՝ հմմեն ճանչնան... Լազգի չգրաս՝ Հա՛յկ դրա... Հայկ Խոյեցյան՝ հինքը քյավառցի...

— Կին ունե՞ս:

— Իյա՛... Ընձի կնի՞կ հուստա... Լազգին ի՞նչ կանա կնիկ... Քաղաք էնքա՛ն կնիկ՝ շնից շատ...

Նոյեմբերի 29-ի երեկոյան Ուղղիչ Տանը կայացավ միտինգ, որին ներկա էին համարյա բոլոր կալանավորները: Կուլտբաժնում նոր լամպեր էին դրել, դահլիճը զարդարել դրոշակներով: Նվագում էր կալանավորների
երաժշտախումբը՝ թառ, ջութակ, մանդոլին ու դհոլ: Կամ առանձին՝ դհոլ-զուռնա:

Երբ վարագույրը բացվեց՝ բեմի վրա, սեղանի շուրջը նստած էին կուլտբաժնի վարիչը, Ուղղիչ Տան պետը, կուլտկոմիսիայի նախագահը և կալանավորների ներկայացուցիչները: Ռուսների ներկայացուցիչը Բելոգուրովն էր, իսկ թուրքերի կողմից սեղանի, աջ կողմը բազմել էր մի գյուղացի կալանավոր՝ հսկա փափախը գլխին:

Միտինգը բաց արեց, կուլտկոմիսիայի նախագահը, որից հետո խոսեցին Ուղղիչ Տան վարչության և կալանավորների ներկայացուցիչները: Կալանավորներից երկուսը խոսելու փոխարեն արտասանեցին հատկապես այդ առթիվ գրված իրենց բանաստեղծությունները՝ առաջինը հայերեն, երկրորդը ռուսերեն: Այդ օրը լույս էր տեսել պատի թերթի ընթացիկ համարը՝ նվիրված նոյեմբերի 29-ին, ուր և տպված էին այդ բանաստեղծությունները:

Միտինգից հետո կալանավորները խաղացին երեք պիես՝ հայերեն,
թուրքերեն, ռուսերեն: Ներկայացումների ընդմիջումներին նվագում էին ու պարում. և նորից՝ աչքերում կրակե խանչալներ խաղացնելով՝ պարում էր ու կատաղի աչքերով կանանց կողմը նայում մեր Լազգին...

Երեկույթից հետո տրվեց ընթրիք, որ մեծ հաճույք պատճառեց կալանավորներին:

Այդ օրը Ուղղիչ Տանն անցկացրած իմ ամենահետաքրքիր օրերից մեկն էր, — և ես երբեք չեմ մոռանա այդ օրը՝ նոյեմբերի 29-ը Երևանի Ուղղիչ Տանը...

1926 թվի նոյեմբերի 29ը:

XVII. Ութերորդ կամերայի բնակիչները. «Անաշան» և «Կատորժանին»-ը, Հաջին և դավաճան ջութակը

Ուղղիչ Տնից դուրս գալուցս մի ամիս առաջ ես թողի հիվանդանոցում հատկացված իմ «մեկուսացման սենյակը» և տեղափոխվեցի քրեական կորպուսի վերի հարկը՝ ութերորդ կամերան:

Այդ կամերան Ուղղիչ Տանը հռչակված էր, իբրև անուղղելի ռեցիդիվիստների կամերա: Իմ այնտեղ տեղափոխվելու ժամանակ թեկուզ նա չուներ իր նախկին «անխառն» երանգը, սակայն էլի նրա բնակչությունը բաղկացած էր բավականին հետաքրքիր կալանավորներից: Այդտեղ էին բնակվում Բաղդասարը, Լազգին, Օսը, Դարչոն, Համոն և մի շարք ուրիշ յուրօրինակ ու հետաքրքիր մարդիկ...

«Ինտելիգենտներից» երկու հոգի միայն կային այդ կամերայում: Մեկը Բենժամենն էր, իսկ մյուսը Եփրեմ անունով մի չափազանց երիտասարդ կալանավոր, որին հետագայում ես շատ սիրեցի և կապվեցի նրա հետ: Դա նախկին խորհրդային ծառայող էր, որ Ուղղիչ Տուն էր ընկել յուրացման մեղադրանքով: Մենք միևնույն օրն էինք ձերբակալվել, և ես հիշում եմ, որ իմ ձերբակալության առաջին օրը, դեռ միլիցիայի քրեական բաժնում, ես տեսա նրան առավոտը լվացվելու գնալիս: Ամբողջ գիշերը ես անքուն էի մնացել ու ծխել, այնպես որ վերջացել էր ծխախոտս — և այնտեղ, քրեական բաժնում, նա ինձ տվեց մի տուփ էժանագին գլանակներ, որպիսիքը հետագայում Ուղղիչ Տանը ես տալիս էի Անուշին ու Մարգարիտին:

Ուղղիչ Տանը նա առանձնապես շահեց իմ համակրանքը իր փայլուն ընդունակություններով կուլտկրթական գործում և իր ընկերական վերաբերմունքով դեպի կալանավորները:

Երբ հայտնեցի ութերորդ կամերայում, որ իրենց մոտ եմ տեղափոխվելու՝ ուրախացան և անմիջապես մի քանիսը եկան իրերս տեղափոխելու: Իբր առանձին հարգանք՝ Համոն զիջեց իր տեղը անկյունում, պատուհանի ներքևը, որ ամենալավ տեղն էր համարվում:

Այդ երեկո, երբ ես կամերան էի գնում, նկատեցի: Որ միջանցքում, հենց հատակի վրա, կարպետների տակ մտած՝ պառկել են և պատրաստվում են քնելու ինչ-որ նոր կալանավորներ: Մոտեցա՝ թուրք կալանավորներ էին գյուղացիներ՝ բոլորն էլ ձերբակալված իրենց անչափահաս աղջիկներին ամուսնացնելու համար:

Մտա հարևան կամերաները: Բոլորն էլ լիքն էին կալանավորներով: Նրանցից շատերին ես արդեն ճանաչում էի: Մեծ մասը գյուղացիներ էին՝ դատապարտված

սպանության, գողության կամ այլ հանցագործությունների համար: Բավական քանակությամբ կային և .քաղաքի լյումպեններ՝ մեծ մասամբ գողեր ու խուլիգաններ: Կատարյալ «հատակ» էր և ինձ որոշ ժամանակ վիճակվեց ապրել այդ «հատակում»:

Մի բան, որ առաջին հայացքից աչքի էր զառնում այդ վերի կամերաներում — դա այն էր, որ դրանց բնակչության մեծ մասը զուրկ էր ամենատարրական հարմարություններից: Շատերը ո՛չ մատրաց ունեին, ո՛չ վերմակ: Շատերը քնում էին երկու ընկերով՝ մի վերմակի ներքո: — Խեղճություն էր, չքավորություն, անտերություն ու կեղտ... Ծանր տպավորություն էին թողնում այդ կամերաները մանավանդ գիշերները:

— Խեղճություն է, անսահմա՛ն խեղճություն,— ասում էի ես հաճախ Ուղղիչ Տան պետին, երբ նա գիշերները գալիս էր կամերաները նայելու. — հարկավոր է օգնել:

— Էս է՝ արհեստանոցները կարգի բերենք — գուցե հնարավոր լինի օգնելու: Գոնե մի-մի մատրաց էլ է տանք՝ էլի բան է:

Չգիտեմ՝ մինչև հիմա եղա՞վ արդյոք այդ հնարավորությունը՝ գոնե մի-մի մատրաց տալու այդ խեթերին, այդ «թշվառներին», ինչպես կասեր դրանց մասին ֆրանսացի մեծանուն վիպասանը:

Կալանավորական կյանքի մի շարք կողմեր, որ մինչ այդ անհայտ էին ինձ, առաջին անգամ իմ ուշադրությունը գրավեցին ութերորդ կամերան տեղափոխվելուց հետո: Սրան թերևս օգնեց և այն հանգամանքը, որ սկզբից ևեթ ես ինձ «հավասար» պահեցի նրանց հետ: Պայմաններն էլ ինձ համար այնպես էին դասավորվել, որ ես ուզած-չուզած՝ պիտի ապրեի նրանց պես, համարյա նրանց կենցաղով: Դրսից արդեն ես ոչինչ չէի ստանում, սպիտակեղենս, ինչպես և նրանք, տալիս էի լվանալու Անուշին ու Մարգարիտին, որի համար, ինչպես և նրանք, նվիրում էի նրանց հաց, ծխախոտ, կամ էժանագին կոնֆետներ: Ծխախոտի և այլ պետքերի համար փող գտնելու միակ հնարավորությանս այն հնարավորություններն էին, որ ունեին նրանք, ծախում էի իրերս, խանութից պարտք վերցնում և այլն: — Այնպես որ որոշ չափով մենք հավասար մարդիկ էինք, և այս հանգամանքն ինձ օգնեց մասամբ շահելու նրանց ընկերական վստահությունը:

Վերի կամերաների կյանքն ուսումնասիրելու խնդրում ութերորդ կամերան հարմար էր և ա՛յն տեսակետից, որ մի տեսակ ակումբ էր՝ բոլոր վերի կամերաների համար: Մեզ մոտ կային երաժիշտներ, որ երկար նվագում էին երեկոները և ունկնդիրների ահագին բազմություն հավաքում: Մեզ մոտ էր, վերջապես, և լյումպեն-ռեցիդիվիստների շտաբն ու նրանց պարագլուխը Բաղդասարը:

Մեր, այսինքն ութերորդ կամերայում, լյումպեններից բացի կային և մի քանի այլ կալանավորներ: Ամենից առաջ հարկավոր է հիշել երկու թուրք կալանավորների, որ թեկուզ մեր կամերայում էին բնակվում, բայց իրենց առանձնացած էին պահում, համարյա չէին մասնակցում կամերայի ընդհանուր կյանքին: Սպանության գործով դատապարտված երևանաբնակ թուրքեր էին դրանք, որ դրսից միշտ ուտելեղեններ էին ստանում, բայց երբեք չտեսա, որ մեկին հյուրասիրեին: Այնինչ մի անգամ — առաջին և վերջին անգամ– երբ Օսը տնից խմորեղեններ ստացավ, — գյուղական գաթաներ և փախլավաներ — հինգ րուպե անց՝ ոչ մի կտոր չմնաց: Մոր ուղարկած բավականին մեծ սնդուկում: Թուրք կալանավորներն աշխատում էին խոզանականոցում, առավոտները գնում էին, երեկոները գալիս: Ուղղիչ Տան ճաշը չէին ուտում, իսկ հացը հավաքում էին ու տալիս չքավոր կալանավորներին՝ իրենց մատուցած որոշ ծառայությունների հանդեպ, օրինակ՝ լվացքի, ամաններ լվանալու և այլն: Մեզ հետ համարյա չէին խոսում, բայց չէին էլ խանգարում մեզ: Մինչև լույս էլ աղմկելու լինեինք՝ չէին բողոքի: Չեզոք էին պահում միշտ իրենց՝ երբ կալանավորները վարչության հետ այս կամ այն վեճն էին ունենում: «Անշառ» մարդիկ էին, ինչպես ասում էր Բաղդասարը, և մեր կամերայի բնակչությունը դժգոհ չէր նրանցից:

Մեր կամերայում ապրում էին երկու պոլսեցի՝ Հաջին ու Միհրանը: Հաջին մոտ 35 տարեկան, միջահասակ, բաց կապույտ աչքերով և դեղին մազերով մի կալանավոր էր, խաղաղ, մեղմ բնավորությամբ, ինչպես և նրա ընկերը: Դատապարտված էր սպանության գործով — և մարդ դժվար էր հավատում, որ կապույտ աչքերով այդ խաղաղ մարդն ընդունակ է սպանության: Կամերայում հայտնի էր նրանով, որ ուդ էր նվագում: Մանդոլինի նման, սակայն մի փոքր մեծ, գործիք էր դա, տաճկական մանդոլին, որի հնչյունները մեղմ էին, ինչպես Հաջու բնավորությունը: Երեկոները ծալապատիկ նստում էր իր կոյկայի վրա, հավաքում էր շուրջը մի քանի ուրիշ պոլսեցիներ, երկա՛ր-երկա՛ր նվագում էր մեղմ, սրտաբեկ, տխուր երգեր՝ ձայնակցելով ուդին իր նույնպիսի մեղմ, սրտաբեկ ձայնով: Երգերի մեծ մասը տաճկական ժողովրդական երգեր էին, ինչպես և նրանց զրույցն էր տաճկերեն: Բացի պոլսեցիներից ու, կարծեմ, Միսաքից՝ ոչ ոք չէր հասկանում ու սիրում ուդը, այդ բաղանման գործիքը, որի ձայնը նման էր մեռնող երեխայի հառաչանքի:

Միհրանը 50-ն անց մարդ էր արդեն, նախկին մսագործ, որ մորթել էր իր ընկերոջը՝ խանութի շուրջը եղած վեճի պատճառով: Նույնպես մեղմ բնավորություն ուներ՝ չնայած ածդահա հասակին և բավականին բռի, կոպիտ արտաքինին: Սա էլ երեկոները ծալապատիկ նստած՝ ունկնդիր էր լինում Հաջու նվագին և մելամաղձոտ ու տխուր օրորում գլուխը: Ինչքան մոտենայի նրան այդ վայրկյանին՝ գլուխը կբարձրացներ ու կասեր.

— Շա՛տ անուշ կնվագե... Անո՛ւշ կուգա սրտիս...

Սրանք երկուսն էլ աշխատում էին արհեստանոցներում և օրվա մեծ մասը կամերայից դուրս էին անցկացնում:

Մեր կամերայում էր մնում նաև Միխո անունով մի նախկին բաղնիսպան, որ դատապարտված էր միջնորդության գործով: 50-ին մոտ մարդ էր. բարձրահասակ, գլխակախ, չոր: Մի բան կար դեմքի արտահայտության մեջ, որ հիշեցնում էր ներքինու: Դեմքը երկարավուն էր ու չոր, վրան դեղին մագաղաթ, այտոսկրները ցից, ինչպես մոնղոլի, սպիտակախառն, բորբսնած մազերը խուզած մեքենայով: Աչքերը մանր ու անարտահայտիչ, հայացքն իր մեջ քաշած, փակ, ինչպես բանալին կորած կողպեք: Մտերիմ ձայն ուներ ու խոսում էր կամացուկ, բայց տարօրինակ շտապ՝ բառերի վերջավորությունները կլանելով: Ասում էր նախադասությունը արագ — ու հանկարծ, անսպասելի՝ կտրում: Խոսելիս սովորություն չուներ երեսիդ նայելու. խոսում էր մի կողմ, կարծես երրորդ անձնավորության հետ էր խոսում: Լռակյաց էր. անլսելի քայլվածք ուներ, քարերի վրայով էլ քայլելիս լիներ՝ կարծես քայլում է խալիչայի վրայով: «Երևի մեծ դիվանագետ կլիներ, կամ մեծ ինկվիզիտոր, եթե ապրեր միջին դարերում ու այլ պարագաներում» — մտածում էի ես միշտ՝ Միխոյին նայելիս:

Գլխակախ, լուռ, ինքն իր մեջ խորասուզված՝ անլսելի քայլերով երեկոները քայլում էր Միխոն միջանցքում ու քաշում էր թազբեհը: Կամ մեկի կոյկային նստած՝ գաղտնի զրուցում: Մոտենայիր — անպայման կընդհատեր զրույցը՝ ինչի մասին էլ խոսելիս լիներ: Նստելու ձևն անգամ յուրօրինակ էր. նստում էր կոյկայի, կամ նստարանի եզերքին՝ չոր, ցից՝ կարծես հենց այնպես, մի վայրկյանքով է նստել — այս րոպեիս կբարձրանա ու կգնա: Խորը հետք են թողնում մարդկանց ամեն ինչի վրա արհեստները, դրա ամենալավ ապացույցն էր — Աադ զարմանալի Միխոն:

Նույն գործով դատապարտված՝ ապրում էր մեր կամերայում և՛ մի երիտասարդ՝ Կարո անունով: Բայց սա, ինչպես երևում էր, պատահական մարդ էր այդ ասպարեզում: Թառի՛ մեծ սեր ուներ և երազանքն էր՝ նվագել սովորել և դառնալ թառիստ: Մի փոքրիկ թառ ուներ, որով և զբաղվում էր ամբողջ օրը, սադափներ էր փակցնում վրան, նախշում, գեղեցկացնում: Նրանից վարակվելով՝ սկսեց իր ուղը սադափազարդել նաև Հաջին, բայց կարծեմ ավելի շուտ փչացրեց իր յուրօրինակ գործիքը, քան գեղեցկացրեց: Բացի սադափազարդելը՝ նա իր ուղը մի անգամ տարավ Եֆիմ Բրավելմանի մոտ և երեսին նկարել տվեց Մասիսները: «Մասիսն ու Արարատը» — ինչպես ասում էր նա՝ ցույց տալով մեծ ու փոքր Մասիսները: Նրա կարծիքով փոքր Մասիսի անունը Մասիս էր, իսկ մեծինը՝ Արարատ...

Կարոն ոչ միայն մեր կամերայում, այլև ամբողջ Ուղղիչ Տանը հայտնի էր և՛ նրանով, որ ասեղների և հասարակ մուրի միջոցով նկարազարդում էր կալանավորների մարմինները: Կրծքերին աղջիկներ էր նկարում, թևերին՝ սիրտ ու խարիսխ: Լյումպեն կալանավորների մեջ չափազանց տարածված էր այս: Կային

կալանավորներ, ինչպես օրինակ՝ Լազգին, որոնց ամբողջ մարմինը զարդարված էր նկարներով: Հետաքրքիրն այն էր, որ Լազդու բոլոր հարմար ու անհարմար տեղերի վրա նկարված էին... իհարկե, աղջիկներ: Միխոն ևս իր կրծքի վրա ռուս կին նկարել տվեց, իսկ թևերի վրա մանկահասակ աղջիկներ... Եֆիմ Բրավելմանը նախապես թղթի վրա քիմիական մատիտով նկարում էր հարկ եղած պատկերը, որը և թրջում էին ու փակցնում մարմնին: Հետո թուղթը հանում էին, և մարմնի վրա դուրս եկած ուրվագծով սկսում էր աշխատել Կարոն: Եֆիմ Բրավելմանը սրանից էլ, իհարկե, հասույթի աղբյուր էր ստեղծել, այնինչ Կարոն աշխատում էր միանգամայն անշահ լոկ արվեստի համար, որպես անշահ արվեստավոր...

Բացի սրանցից՝ ութերորդ կամերայում ապրում էին՝ Բաղդասարը, Օսը, Համոն, Լազգին, Դարչոն, Միսաքը և Գլդան անունով մի գյուղացի երիտասարդ, որը դատապարտված էր գողության համար: Սա հենց ա՛յն կալանավորն էր, որ խոսում էր գիշերները ու իր աներևույթ ոսոխների հետ մենամարտում: Կային և երեք գյուղացի կալանավորներ, բայց նրանք շուտով գնացին և չթողին իմ հիշողության մեջ և ո՛չ մի հետք: Ես դիտմամբ հիշատակելու համար առանձին պահեցի և՛ս երկու կալանավորի, որոնցից մեկը մեր կամերան մաքրողն էր, իսկ մյուսը՝մեր կամերայի «ավագը»: Կամերայի ավագ առհասարակ ընտրվում էր տվյալ կամերայի ամենաազդեցիկ կալանավորը: Նրա պարտականությունն էր հսկել մաքրությանը և միևնույն ժամանակ նա կուլտբաժնի ներկայացուցիչն էր համարվում տվյալ կամերայում: Այսպես էր, ընդհանրապես, բոլոր կամերաներում: Այսպես չէր սակայն ութերորդ կամերայում: Այստեղ ավագին դարձրել էին ավագ սպասավոր, որ ճաշ ու մթերքներ էր ստանում ու բաժանում և, միևնույն ժամանակ, մաքրում կամերան ու լվանում ամանները: Նրան իբրև օգնական նշանակել էին մի ուրիշին, որի հետ և միասին նրանք հոգում էին մեր «տնային» պետքերը: Առաջինը Անդրկասպյան երկրից մեր Ուղղիչ Տունն ընկած համարյա աննորմալ մի կալանավոր էր, դատապարտված գողության համար, երկրորդը՝ ամերիկյան որբանոցի մի նախկին որբ՝ նույնպես գողության գործով: Առաջինի անունն Արամ էր, երկրորդինը՝ Ազատ, բայց չգիտեմ ինչու ութերորդ կամերայի բնակիչներն այս վերջինիս շնորհել էին «Կնյազ» տիտղոսը...

Սրանցով սպառվում է ութերորդ կամերայի բնակչության անձնական կազմը:

Այս բոլոր կալանավորներից Ուղղիչ Տան զանազան հիմնարկներում աշխատում էին՝ թուրքերը, պոլսեցիները, Համոն, Օսը, Միսաքը, Դարչոն, որ Ուղղիչ Տան սափրիչն էր. Միխոյին բաղնիսպան էին կարգել, Բենժամենը բանսեղանի ցուցակագիրն էր, իսկ Եփրեմը՝ հաշվապահը: Լազգին, ինչպես գիտենք, սանսեկցիայի փոխ-նախագահն էր. մնացածներն անգործ էին և ամբողջ օրը թրև էին գալիս Ուղղիչ Տանը, կամ կամերաներում նստած զբաղվում էին զանազան գործերով: Կարոն իր թառին անվերջ սադափներ էր փակցնում, Բաղդասարը հացի խմորից համրիչներ կամ վարդատունկեր էր պատրաստում, իսկ մյուսներն անվերջ խազում էին

«կատորժանին» կոչված խաղը, որ բավականին անիմաստ մի խաղ էր — սակայն ինչո՞վ չէր զբաղվի անգործ կալանավորը, որպեսզի ազատվի ձանձրույթից:

«Կատորժանինը» խաղում էին այսպես: — Քսաննհինգ բարակ սրածայր, կլոր փայտիկներ էին, որոնցից հնգի վրա թվանշաններ կային
գրված՝ 5, 10, 15, 20, 25, կային և 2-նոց ու 3-նոց փայտիկներ, որոնց վրա թվանշանի փոխարեն քաշած էին լինում համապատասխան քանակությամբ գծիկներ: Մնացած փայտիկները համարվում էին մեկանոց: Ամբողջ խաղի էությունն այն էր, որ այդ փայտիկները բռի մեջ ի մի հավաքած՝ գցում էին սեղանին, կամ կոյկայի վրա, նայած թե ինչի՛ վրա էին խաղում, — և ապա մեկ-մեկ հավաքում, սակայն յուրաքանչյուր փայտիկ հարկավոր էր վերցնել այնպես, որ մյուսները չշարժվեն: — Վերցնելուց հետո հաշվում էին վերցրած փայտիկների քանակը: — Ահա և ամբողջ «կատորժանինը»:

Առաջին հայացքից կարելի է նկատել, թե որքա՛ն կռիվներ ու վեճեր կարող են ծագել այսպիսի մի «նուրբ» խաղի շուրջը,

— Ժաժա՛ց…

— Չժաժա՛ց...

Անապացուցելի բան է նկատելը, մանավանդ երբ նկատում են շահագրգռված կողմերը. — դե եկ որոշիր՝ «ժաժա՞ց», թե՞ «չժաժաց»...

Եվ ամբողջ օրը, մանավանդ երեկոները, ութերորդ կամերայում այդ վեճն էր՝ ժաժա՞ց, թե՞ չժաժաց: Խաղում էին բացառապես ծխախոտի վրա. վարպետներ էին համարվում Միհրանը և Բաղդասարը:

Դեռ կորպուս տեղափոխվելուց առաջ ես գիտեի, որ կան
կալանավորներ, որոնք «անաշա» են ծխում: Անաշան աֆիոնի նման մի բան է, որ հարբեցնում է ծխողին: Վնասակար բան է, թուլացնում է տեսողությունը և զրկում է կամքից ու ընդունակություններից: Դրա դեմ կռվելը չափազանց դժվար է, համարյա անհնարին՝ այն պարզ պատճառով, որ շատ քիչ տեղ է բռնում, մի գրամը բավական է չորս-հինգ ծխախոտի, իսկ յուրաքանչյուր ծխախոտը՝ հարբեցնելու համար: Ինչքա՛ն էլ մանրակրկիտ խուզարկեն՝ կարելի է անցկացնել: Եվ կալանավորներն անցկացնում էին ու ծխում:

Անաշայի ազդեցության յուրահատուկ կողմերից մեկն էլ այն է, որ ծխողին միանգամայն հիմարացնում է, համարյա դարձնում իդիոտ: Ծխողը թուլանում է, հիմարաբար ծիծաղում, հետո ծանրանում է գլուխը ու քնում:

Առաջին անգամ երբ ես տեսա անաշա ծխած մի կալանավորի՝ դա ինձ վրա թողեց համարյա միստիկական տպավորություն, որպիսի տպավորություն թողնում են

ընկնավորներն ու յուրոդիվիները: Դեռ ես չէի լսել անաշայի մասին, անունն անգամ չգիտեի: Երեկո էր, և ես գնացի 5-րդ կամերան, ուր այն ժամանակ մնում էր Բենժամենը: Դռնից անմիջապես աջ Սուրենի կոյկան էր, երբ մտա ներս տեսա Սուրենին, որ նստած էր իր կոյկայի ծայրին: Շուրջը հավաքվել մի քանի կալանավորներ — լուռ, խորհրդավոր՝ նրան էին նայում: Բան չհասկացա:

— Ո՞նց ես, — հարցրի Սուրենին:

Ուսերը վեր քաշեց, նայեց երեսիս և հիմարաբար ժպտաց: Մեկը ծիծաղեց: Հիվանդոտ, ո՛չ իր, իդիոտային ծիծաղով ծիծաղեց և Սուրենը: Կալանավորները հռհռացին: Ես ապշած սրան-նրան էի նայում, երբ Խաչիկը բռնեց իմ թևից, տարավ մի կողմ և կամացուկ ասաց,

— Անաշա է ծխել:

Եվ հետո, երբ տեսավ, որ չեմ հասկանում՝ բացատրեց, թե ինչ բան է անաշան, ո՞նց են ծխում և ի՛նչ ազդեցություն է ունենում ծխողի վրա:

Ութերորդ կամերայում անաշա ծխում էին շատերը: — Սակայն անաշա ծխելու ամենամեծ վարպետը Հաջին էր, ոչ թե մեր կամերայի ուդ նվագող Հաջին, այլ մի ուրիշ Հաջի, որ ապրում էր հարևան կամերայում, սակայն օրվա մեծ մասը մեզ մոտ էր անցկացնում:

Իր տեսակի մեջ շատ հետաքրքիր մարդ էր այդ Հաջին, որին մեր կամերայի Հաջու հետ չխառնելու համար՝ կանվանենք միմիայն «Հաջի», իսկ մերինին՝ «մեր Հաջի»:

Արդեն քառասուն տարեկան, բարձրահասակ, թխադեմ, սև, դուրս ընկած աչքերով, որոնք ունեին դեղնած սպիտակուցներ (վերջին երկու հանգամանքն էլ հետևանք էին անաշա ծխելու) —ահա Հաջու ընդհանուր նկարագիրը: Սև բլուզ էր հագնում, մազերը սանրում խնամքով: Օձիքի մի կոճակն արձակած: Վիրտուոզ գող էր, ռեցիդիվիստ, որակյալ աֆերիստ: Մի անգամ քաղաք գնաց Հսկիչի ուղեկցությամբ — և նրա աչքի առաջ կարողացել էր թռցնել մի սքանչելի ջութակ: Բավականին լավ ջութակ էր նվագում և սիրում էր ջութակը ամեն բանից ավելի: Երգում էր խզված, հարբեցողի ձայնով, ասում էր, որ լավ ձայն է ունեցել ժամանակին, բայց ձայնն էլ, ինչպես և տեսողությունը, կերել է անաշան: Արտիստի բարակ, երկար մատներ ուներ, որոնք դողում էին որևէ բան բռնելիս — նույն անաշայի հետևանքով: Տաճկաստանցի էր, կարծեմ Տրապիզոնի կողմերից, տաճկական սպա էր եղել. սքանչելի գրում էր ու խոսում տաճկերեն, ասում էր տաճկական կոլեջ է ավարտել, բայց դժվար էր հավատալ: Գրում էր բավականին տգետ բանաստեղծություններ, ասում էր, որ թուրքերեն երկու վեպ ունի գրած, որոնք, իբր,

հրատարակել է Ադրբեջանի Պետհրատը: — Սա ևս չեմ կարծում, որ համապատասխանի իրականության:

Վերջին անգամ Հաջին ձերբակալվել ու դատապարտվել էր մի բավականին հետաքրքիր գործով: Բաթումից գալիս է Լենինական ներկայանում, թե Աջարստանի կոոոպերատիվների ներկայացուցիչն է և եկել է Հայաստանի կոոպերատիվների հետ ծանոթանալու: Ներկայացնում է համապատասխան վկայականներ: Խնդրում է աջակցել, որպեսզի կարողանա ծանոթանալ ապրանքների գներին: Այս ամենի շնորհիվ ամեն տեղ ընդունում են լիակատար վստահությամբ և ցույց տալիս ուզած ապրանքները: Առաջին օրը մի խանութից գողանում է, պահելով վերարկուի տակ, մի քանի հատ շևրո, մի թոփ շևյոտ և մի դյուժին կանացի գուլպաներ: Հետո նորից: Երրորդ անգամ նկատում են ու ձերբակալում — և այդ համարձակ, բայց վերջի վերջո փոքրիկ աֆերիստը դուրս է գալիս Լենինականի քրեական բաժնին իր նախկին քաջագործություններով արդեն իսկ քաջ հայտնի ռեցիդիվիստ Հաջին:

Բայց և այնպես շատ սրտառուչ պատմություն էր Հաջու ջութակագողության պատմությունը: Նախքան այդ՝ Հաջին քանիցս ասել էր մեր կամերայում, ուր գալիս էր հաճախ՝ Բենժամենի ջութակը նվագելու.

— Ա՛խ, մեկ ջութակ ձեռք ձգեմ նե — բա՛ն չեմ ուզեր...

Մի անգամ էլ եկավ և հայտնեց բորբոքված, հուզմունքից կրակված աչքերով.

— Մեկ ջութակ եմ տեսել՝ տասնևութ տարեկան աղջիկ...

Եվ կարոտով ու քնքշանքով՝ համբուրեց իր մատների ծայրերը: Հետո ցուցամատը շարժելով, կարծես սպառնալով մեկին, ավելացրեց.

— Ինչպես ալ ըլլա՝ պիտի թռցնեմ... էն աստված՝ պիտի թռցնեմ... Ա՛յ կտեսնե՛ք:

Եվ նա, ինչպես արդեն գիտենք, թռցրել էր այդ ջութակը: Հսկիչի հետ ինչ-որ գործի պատրվակով գնացել էր քաղաք, մտել այն խանութը և թռցրել: Այնպիսի՛ զարմանալի վարպետությամբ, որ ո՛չ հսկիչն էր տեսել, ո՛չ խանութպանը: Սակայն բախտն այս անգամ ևս դավաճանել էր Հաջուն և այն էլ այնպիսի մի տեղում, ուր նա ամենից քիչ կարող էր կասկածել իր ուժերին: Ջութակը պահած է լինում վերարկուի ներքևը, և ահա, Ուղղիչ Տան դարբասներից մտնելիս՝ Հաջին քսվում է դռան երկաթներին, ու դավաճանում է նրան իր այնքան ջանքերով փախցրած սիրուհին... Լարերը զնգում են ու մատնում հսկիչներին Հաջու վերարկուի գաղտնիքը: Բարձրացնում են վերարկուն, տեսնում ջութակը և Հաջուն, ջութակի հետ մեկտեղ, ներկայացնում պետին: Պետը կանչում է խանութպանին և հանձնում նրան թռցրած ջութակը:

Այդ երեկո հուզված, բորբոքված, արյուն կաթող աչքերով մտավ մեր կամերան Հաջին, և նրա ձայնի մեջ լաց կար, տխրություն ու մորմոք, երբ նա ասաց.

— Դնգա՜ց շունշանորդին... Ձայն հանեց... Երանի թե ինձի տաս տարու նոր վճիռք տային, միայն թե չխլեին ինձմե այդ ջութակը...

Այդ երեկո մինչև գիշերվա կեսը անաշայով գլանակներ ծխեց Հաջին ու հուսահատ մորմոքաց: Եվ նա, այդ Հաջին, որ շատախոս էր ընդհանրապես լռակյաց էր դարձել այդ երեկո: Դեղին, անաշայից ավելի ևս ուռած աչքերով, երբեմն միայն մոտենում էր մեկնումեկիս ու գլուխը դառնորեն օրորելով, մղկտալով ասում.

— Դնգա՜ց շունշանորդին... Այդքա՜ն տեղ հասցուցի՝ դնգաց... Չենե՝ ո՜չ մեկ մարդ կրնար խլել Հաջու ձեռքեն այդ ջութակը...

Եվ հանկարծ սիրտ էր տալիս իրեն՝ սպառնալով ինչ-որ մեկին.

— Պիտի թռցնե՜մ... նորե՜ն պիտի թռցնեմ... Ես Հաջին չըլլամ…թե չթռցնեմ...

Սակայն միանգամայն պարզ էր, որ էլ ո՜չ ինքն է հավատում իր ասածին, ո՜չ ուրիշները:

Խե՜ղճ Հաջի...

XVIII. Դրամախաղը Ուղղիչ Տանը, վերաբերմունքը դեպի մատնիչները և Բաղդասարը՝ իբրև լյումպեն կալանավորների գաղափարախոս ու տեսաբան

Մի անգամ ցերեկը ես մտա մեր կամերան՝ տեսնեմ Բաղդասարը ծալապատիկ նստած է իր կոյկայի վրա, դեմն էլ ինձ անծանոթ մի թուրք կալանավոր՝ զար են գցում: Նախ մեկն էր գցում, հետո մյուսը: Խաղը կոչվում էր «բայբուրդ»:

Հետաքրքիր էր նրանց զար գցելու ձևը: Զարը գցում էին մի փոքր ցած կռացած, հետո հետ շրջվում, բարձրաձայն տնքում ու աջ բռունցքը խփում կրծքներին, կամ բաց ձեռքը՝ ծնկներին: Ստացվում էր մի տեսակ շախսեյ-վախսեյի տպավորություն:

Դրամ խաղալը խստիվ արգելվում էր Ուղղիչ Տանը, սակայն կալանավորները, գլխավորապես լյումպենները, խաղում էին գաղտնի: Ինչ միջոցների էլ վարչությունը դիմեր՝ անհնարին էր միանգամայն արմատախիլ անել այն: Հանրակեցության բոլոր օրենքները պարտադիր են բոլոր պայմաններում: Եթե ապրում ես մի կամերայում, որոշ հասարակության մեջ՝ ապա ուրեմն չպետք է դավաճանես նրանց տարբական շահերին: Մատնիչությունը մահացու մեղք է համարվում բոլոր կալանավորների մեջ անխտիր. նրանք ունեն իրենց չգրված բարոյական օրենքները — և վա՜յ նրանց, ովքեր կխախտեն այդ օրենքները: — Նրանք

կդառնան կալանավորական հասարակության պարիաները, չանդալաները, և, ինչպես հնդկական Մանուն է ասելիր հռչակավոր օրենսգրքում, թե «չանդալան չպետք է խմե աղբյուրների ջրից» — այնպես էլ յուրաքանչյուր կալանավոր ձեզ կասի, որ «մատնիչը չպետք է նստի ա՛յն սեղանի շուրջը, ուր նստում են մյուսները, չպետք է ուտի ընկերական հացը և խմի ընկերական ջուրը»: Անխոս, առանց այլևայլության, նա կենթարկվի բոլորի ատելությանը և արհամարհանքին, այնպես որ ինքն իր աչքին անգամ կդառնա, որպես շունը: Կալանավորական բարոյականության այս նորմերը առանձնապես անխախտ էին պահվում լյումպենների շրջանում, քանի որ սրանք մի տեսակ «պրոֆեսիոնալ» կալանավորներ էին, որոնց համար կյանքի ու մահու խնդիր էր վարչության հետ ունեցած փոխհարաբերությունը: Սրանք առանձին կաստա էին, մի ինքնամփոփ կաստա, որ իրեն հակադրում էր վարչությանը, և ով ընկնում էր նրանց շրջանը կա՛մ պիտի ենթարկվեր նրանց բարոյական նորմերին, կա՛մ հեռանար: Ծայրահեղ դեպքում նրանից պահանջվում էր «խիստ չեզոքություն» — այս իմաստով էր ահա, որ Բաղդասարը մեր կամերայի թուրքերին համարում էր «անշառ» մարդիկ:

Հարկավոր է ասել սակայն, որ նույն այդ լյումպենների շարքում կային մարդիկ, որ մի անգամ քաղաք գնալու համար իրենց բոլոր ընկերներին կծախեին: Վատն այստեղ այն էր, որ դրանք հայտնում էին վարչությանը իրենց ընկերների այս կամ այն անթույլատրելի արարքը ո՛չ թե քաղաքացիական գիտակցությունից դրդված, ելնելով բարոյական ուրիշ, ավելի բարձր նորմերից, այլ անձնական ամենամանր օգուտի համար, մի թաս «ռսպե ապուրի» ակնկալությամբ: Բայց վա՛յ նրանց, եթե նրանց արարքն իմացվեր: — Այդպիսիների թիվը սակայն այնքան էլ շատ չէր: Եթե անողներ էլ կային — անում էին գաղտնի, այնպես որ չէր իմացվում:

Մնում էին հսկիչները: Նրանք էլ հո չէի՞ն կարող միևնույն ժամանակ բոլոր կամերաներում լինել, հինգ կամերային մի հսկիչ կար միայն, որ շրջում էր միջանցքում, այնպես որ դրամ խաղացող կալանավորները, որոնք, ի միջի այլոց, այնքան էլ շատ չէին, այսպես թե այնպես, գտնում էին հնարավորություն՝ քիչ թե շատ խաղալու:

Երբ ես ներս մտա՝ խաղացողները կասկածոտ ինձ նայեցին, միայն այն, որ ես «ինտելիգենտ» էի, արդեն կասկած էր ներշնչում: Սակայն ինձ ճանաչող կալանավորները վստահեցրին նրանց խիստ արտահայտիչ նշաններով ու հայացքներով — և խաղը շարունակվեց: Քանի որ ես մտել էի նրանց շրջանը և ցանկություն ունեի շահելու նրանց վստահությունը՝ ինձ մնում էր առնվազն «չեզոքություն պահել» — և ես պահեցի:

Ընդամենը տասը րոպե տևեց նրանց խաղը: Հետո թուրք կալանավորը վեր կացավ, ձեռքերը ծափ տալու նման իրար խփեց և հեռացավ: Հարցրի Բաղդասարին.

— Որքա՞ն տարար:

— Խաղացողին չե՛ն հարցնի, թե որքան տարար, դա խոսք չի՛, դաստիարակի տոնով պատասխանեց Բաղդասարը ու քաշվեց մի կողմ: Նա տարել էր և հուզված էր երևում: Աչքերը փայլում էին, ռունգերը դողում: Շնչում էր ծանր ու ընդհատ:

Հետո ես շատ անգամ տեսա Բաղդասարին խաղալիս, տանելիս նա ավելի էր հուզվում, քան տարվելիս: Տարվելիս, օրվա որ ժամին էլ դա լիներ, հանում էր շորերը, մտնում անկողին, գլուխը ծածկում վերմակով ու քնում: Գուցե և չէր քնում, այլ տառապում էր անհանգիստ, ու ծածկում էր գլուխը, որ չնկատեն հուզմունքը: — Ո՞վ իմանա:

Մի անգամ երեկոյան, երբ ես վերցրել էի մի գիրք և ուզում էի կարդալ, — ութերորդ կամերան տեղափոխվելուս երրորդ, թե չորրորդ օրն էր. — հանկարծ ինձ մոտեցավ Բաղդասարը:

— Ընկե՛ր Չարյանց, եկեք խելք մրցենք:

— Ո՞նց թե «խելք մրցենք». ո՞նց մրցենք, Բաղդասա՛ր:

— Ա՛յ, ձեզ ասեմ: Ուզո՞ւմ եք՝ հետաքրքիր հանելուկներով:

— Լա՛վ, տո՛ւր:

Նա ասաց մի քանի հանելուկներ, որոնցից ոչ մեկը ես չկարողացա գուշակել: Նա խիստ գոհ, համարյա արհամարհանքով, սեփական գերազանցության խոր գիտակցությամբ ժպտաց և գնաց իր տեղը: Ես պարտված էի և գիտեի, թե դա ի՛նչ է նշանակում նրանց շրջանում: Ինչ գնով էլ լիներ՝ հարկավոր էր փրկել համարումս: Ուստի ես մոտ կանչեցի նրան և առաջարկեցի, որ լուծի մի հասարակ երկրաչափական խնդիր: Նա իսկի չուզեց էլ մտածել:

— Դա ի՞նչ բան է, որ դրա վրա մարդ մտածի... Դա սովորելո՞ւ բան է. ով սովորել է — կարող է... Դուք էնպես բան ասեք, որ խելքի բան լինի և ոչ թե սովորելու: Այ, օրինակ ասեմ՝Железо, пызо… Կարո՞ղ եք ռուսերեն մի բառ էլ գտնել, որ «зо»–ով վերջանա... Ձեզ երեք ամիս ժամանակ:

Մտածեցինք թե՛ ես, թե՛ Եփրեմը, թե՛ Բենժամենը՝ Չգտանք... Բաղդասարը, գոհ, գնաց պառկեց իր տեղը՝ միանգամայն համոզված, որ հողին հավասարեցրեց մեզ՝ ինտելիգենտներիս: Ուտեղից մեզ ասաց.

— Ձեր այդ կարդացած ու գրած գրքերը հենց մի կոպեկի էլ որ տաք՝ չե՛մ գնի... Դուք խե՛լք ասեք:

Պարզ էր. Բաղդասարին հարկավոր էր իր զենքով խորտակել: Հարկավոր էր գտնել մի այնպիսի հանելուկ, որ նա չկարողանար գուշակել, — բայց ո՞րտեղից գտնեինք մի այդպիսի հանելուկ:

Տարօրինակ ամբողջական տիպ էր Բաղդասարը և իր տեսակում՝ կատարյալ: Հզոր մկաններ ուներ և շատ էր պարծենում դրանցով: Կյանքի մեջ դրանք նրա միակ զենքն էին եղել գոյության պայքարում, և նա, դրանց վրա հենվելով՝ ստեղծել էր իր սեփական գերազանցության տեսությունը: Հպարտ էր, որ դեռ ոչ մի կալանավոր չի համարձակվել դիպչել իրեն և համոզված էր, որ ինչ շրջան էլ ընկնի՝ դրանցով կնվաճի իր տեղը: Այս դեռ մենք, իբրև ինտելիգենտներ, որ ա՛յլ պատկերացում ունեինք կյանքի ու պայքարի մասին, կարող էինք ներել: Սակայն նա բնազդով հասկանում էր, որ մենք կարող ենք այլ զենքով պարծենալ ու մրցել — և ահա նա այստեղ էլ ամեն կերպ ձգտում էր ապացուցել իր գերազանցությունը՝ միանգամայն անկեղծ համոզված, որ կյանքում, որը նրա համար սոսկ կենդանական պայքար էր եղել, ոչինչ չի կարող տրված լինել մարդկանց, որոնք զուրկ են մետաղյա մկաններից ու երկաթյա բռունցքներից: Այս վերջիններս էին Բաղդասարի աչքին Homo sapiens տեսակի գլխավոր հատկանիշները...

Եվ երբ մենք, ինտելիգենտներս, նրան մի անգամ ասինք, թե այն կյանքում, որով մենք ենք ապրում, շատ քիչ նշանակություն ունեն բռունցքներն ու մկանները — նա համոզված պատասխանեց.

— Գիտե՞ք ինչ. ես ձեզ կասեմ հետևյալը... նույնիսկ էն շրջանում, որտեղ դուք եք ապրում — դուք չեք կարող լինել առաջինները... Իսկ ես իմ շրջանում՝ կլինեմ:

— Ինչո՞ւ, Բաղդասա՛ր:

— Որովհետև, — ասաց նա կուրծքն ուռեցնելով և մկանները լարելով, — որովհետև բռունցքներ չունեք:

Ջեկ Լոնդոնի հերոսներից էր Բաղդասարը: Ալյասկայում իր ժամանակին նա կարող էր լավ «ոսկի որոնող» լինել, վերածնության շրջանում՝ կոնկվիստադոր, կամ կոնդոյտոր…

Իսկ հիմա... Հիմա մեր աշխարհում Բաղդասարը շատ-շատ կարող էր լյումպենների տեսաբան լինել, քաղաքի «մութ անկյունների» և Ուղղիչ Տների մեկուսացման կամերաների հերոս: Որովհետև՝ չնայած կամքին, որոշ խելքին և հզոր մկաններին՝ մանկական էր նրա հոգեբանությունը և տարրական էր այն միակ զենքը, որ նա ուներ բանեցնելու գոյության պայքարում:

— Լսո՞ւմ ես, Բաղդասա՛ր այն աշխարհում, ուր մենք ենք ապրում ու պայքարում, ո՛չ մի նշանակություն չունի առանձին անհատի մարմնական ուժը. ա՛յլ օրենքներ կան այստեղ և պայքարի ավելի անշոշափելի ու նուրբ զենքեր, որոնք սակայն շատ ավելի են մահացու ու հատու, քան քո մետաղյա մկանները և բրոնզյա բռունցքները…

Այսպե՛ս է, սիրելի՛ Բաղդասար:

Մի անգամ կամերայում նստած ես միտք էի անում, թե ի՞նչ է լինելու իմ քաղաքացիական դրությունը, երբ ես դուրս գամ Ուղղիչ Տնից. յուրաքանչյուր հիմնարկության հետ գործ ունենալիս պետք է հայտնե՞մ արդյոք, թե կալանավոր եմ եղել, դա պարտադի՞ր է արդյոք, թե ոչ: Մոտեցավ Բաղդասարը: Հետաքրքրվեցի իմանալ նրա կարծիքի, բայց ոչ թե ուղղակի հարցով, այլ կողմնակի ճանապարհով:

— Բաղդասա՛ր, — ասի ես միամտաբար, — որ դուրս գաս այստեղից՝ ինչո՞վ ես զբաղվելու:

Զարմացած նայեց երեսիս և ժպտաց ներողամտաբար, ինչպես մեծերն են ժպտում երեխաների միամիտ հարցերին:

— Ինչո՞ւ եք հարցնում:

— Հենց այնպես...

Ու զգացի, որ սխալ է մոտեցումս: Ուզեցի շտկել սխալս, բայց, ինչպես ասում են հոնքը շինելու փոխարեն աչքն էլ հանեցի: Հարցրի պարզապես.

— Եթե, ազատվելուց հետո, գործ ունենալու լինես որևէ հիմնարկության հետ՝ պիտի հայտնե՞ս, որ կալանավոր ես եղել:

Նա ավելի ևս զարմացած, համարյա ապշած, երկար նայեց երեսիս, զննող հայացքով տնտղեց դեմքս, ժպտաց ու կամացուկ ասաց.

— Լրտես հո չե՞ք...

Թեկուզ գիտեի կալանավորների, մասնավորապես Բաղդասարի, ծայր աստիճանի կասկածոտ լինելը՝ այնուամենայնիվ նրա այդ խոսքերը ծայր աստիճանի ծանր տպավորություն թողին իմ վրա:

— Չե՞ս ամաչում, Բաղդասա՛ր, — ասի ես Բաղդասարին, — պատվաբեր չի տղամարդուն այդքան կասկածոտ լինելը:

— Ո՞նց չլինեմ ընկեր Չարյանց — առանք զոջալու պատասխանեց Բաղդասա ը. — կյանքումս հենց ո՛ւմ որ հավատացել եմ զոջացել եմ: Մա՞րդ էլ մարդու հավատա... Հարազատ հո՛րս չեմ հավատա, էլ ո՞ւր մնաց ընկերոջ... Հենց ո՛վ ուզում է լինի:

Իր ապրած կենդանական կյանքի դառն փորձն էր խոսում Բաղդասարի շրթունքներով — և նրան դժվար էր հակառակը համոզել:

Ես այդտեղ նկատեցի մի հետաքրքիր գիծ ևս նրա հոգեբանության մեջ, որ ընդհանրապես հատուկ էր բոլոր կալանավորներին, իսկ, իհարկե, գերազանց չափերով՝ լյումպեններին: Նրանք չէին հասկանում զուտ տեսական, սկզբունքային հետաքրքրությունը որևէ հարցով: Մի բան, որ բխում էր, իհարկե, նույն կասկածամտությունից: Հեռավոր աստղերի մասին էլ հարցնելու լինեիր նրանց, նրանք կաշխատեին դրա հետևը թաքցրած որևէ գործնական, կոնկրետ նպատակի հետապնդում տեսնել, մի նպատակի, որը կարող է օգուտ տալ նրանց, կամ վնասել: Լինեին կարծես որսորդական շներով շրջապատված գազաններ, որ յուրաքանչյուր կողմից սպասում են վտանգի: Եվ այս տեսակետից էլ ամենաարտահայտված տիպը — Բաղդասարն էր:

Այդ օրը, երբ Բաղդասարը ցույց ավեց դեպի ինձ այդքան կասկածոտ վերաբերմունք՝ ես որոշեցի «վրեժխնդիր» լինել — իհարկե, փորձելու համար նրա բնավորության մի ա՛յլ կողմը ինքնասիրությունը: Այդ նպատակով ես որոշեցի դիպչել նրա ամենանուրբ տեղին՝ «տղամարդ», «քաջ» մարդ լինելու համարումին:

Երեկոյան ժամը 11-ին, կամ 12-ին, երբ բոլորն արդեն պառկել էին տեղերում և պատրաստվում էին քնելու — ես հանկարծ ասացի Բաղդասարին բարձրաձայն, որպեսզի լսի ամբողջ կամերան.

— Բաղդասա՛ր, ա՛յ, դու ամենաքաջ մարդն ես համարում քեզ ամբողջ Ուղղիչ Տանը, այնինչ այսօր մի քանիսն ինձ ասացին, որ քեզանից վախկոտն ամբողջ Ուղղիչ Տանը չկա... Որ դու հերոս ես միայն ռեցիդիվիստ լակոտների շրջանում...

Այդպիսի մի միտք մի քանի օր առաջ ճիշտ որ ինձ հայտնել էին լենինականցի կալանավորները, որոնք առհասարակ, որպես տոհմային լենինականցիներ՝ տառապում էին պարծենկոտությամբ, — բայց նրանց չէի հավատում: Իսկ Բաղդասարին ես այդ հայտնեցի վերացական ձևով, իբր «ոմանց» կարծիք՝ նախ մի փոքր նրան «խոցելու» և ապա՝ նրա վերաբերմունքն իմանալու համար: Եվ ես ափսոսացի ու զոջացի, որ արի այդ փորձը...

Իժի կծածի նման վեր թռավ իր տեղից, հենց որ իմ ասածի իմաստն ըմբռնեց. Բաղդասարը, և ամենից առաջ, որպես նախերգանք՝ մի հիսունհարկանոց

հայհոյանք ուղարկեց ասողների հասցեին: Աչքերը ոխով լցվեցին, թույնով ու անհանգստությամբ:

— Ո՞վ է ասում, — հարցրեց խռպոտ ձայնով, — ե՛ս նրանց — և այլն, և այլն: Չէ՛, մի դուք ասեք, ընկե՛ր Չարյանց, թե ո՞վ է էդ ասել, որ նրա՛ հետ ես խոսեմ, և ո՛չ թե ձեզ...

Ու դարձավ կամերային.

— Ո՞ր մեկի տակին է մինչև օրս պառկել Բաղդասարը. ո՞ւմ ճանապարհից մի կողմ քաշվել, որպեսզի նա անցնի... Ո՞ւմ առաջ է խեղճացել կամ ստորացել: Էն ո՞ր կալանավորն է, որ մի փոքր դիպել է Բաղդասարին ու պատասխան չի ստացել... Չէ՛: մի ասե՛ք, ընկե՛ր Չարյանց, թե ո՞վ է էդ ասող լածիրակը...

Եվ հանկարծ բարկացավ ինձ վրա:

— Գիտե՞ք ինչ, ընկե՛ր Չարյանց, էդ խոսքը հե՛չ ասելու խոսք չէր, որ դուք ինձ ասիք... Իսկի՛ տղամարդու խոսք չէր էդ խոսքը:

— Ես իմ խոսքը չեմ ասում, Բաղդասա՛ր, ուրիշներինն եմ ասում:

— Էդ ուրիշները թող գան ինձ ասեն, ինչո՞ւ են ձեզ ասում: Թող Բաղդասարի՛ն ասեն, որ իմանան պատասխանը... Իսկի՛ տղամարդու բան չի ուրիշի կռնակին բամբասելը...

— Ինչո՞ւ բամբասել, — ավելի տաքացրի ես նրան. — …մարդիկ մասնավոր խոսակցության ժամանակ իրենց կարծիքն են հայտնել: Չունե՞ն իրավունք:

Բաղդասարը խեղդվում էր բարկությունից, ուտում իրեն: Կատաղությունից քաշեց՝ քիչ մնաց ճղեր իր շապիկը: Հետո հանկարծ իբրև թե խեղճացավ, բայց էսպես փոխեց իր գործելակերպը:

— Լա՛վ, ընկե՛ր Չարյանց, — էն վերջին, հետին կալանավորից էլ հետինն է Բաղդասարը: — Էն Ազա՛տն էլ (այսինքն մեր կամերան մաքրողը, նախկին որբը) — ասլան է Բաղդասարից...Ուզո՞ւմ եք՝ կռանամ, թող Ազատը խփի...

Մի երկու վայրկյան պառկեց, գլուխը ծածկեց վերմակով, իբր վերջացած է համարում զրույցը, սակայն չհամբերեց, կրկին նստեց անկողնում: Կրկին ինձ դիմեց, բայց այնպես, որ լսեն բոլորը.

— Գիտե՛ք ինչ, ընկե՛ր Չարյանց. Ուղղիչ Տունը քաջության տեղ չի. Էստեղ քաջության տեղ չի՛: Ի՞նչ է, ուզում էիք, որ Բաղդասարն էստեղ փահլվանությո՞ւն աներ, ղոչի՞ խաղար, որ քաջ մարդ դառնար ձեր աչքին...

— Ես ոչինչ չեմ ուզում, Բաղդասա՛ր, հանգստացի՛ր:

Ուշադրություն չդարձրեց խոսքիս, շարունակեց.

— Տղամարդը սարումը ցույց կտա իր քաջությունը, կամ քուչումը... էստեղ մարդիկ կտեսնեք, գյուղացիներ՝ խեղճից էլ խեղճ... Էնպե՛ս սեֆիլ՝ գառից էլ գառը... էդ մեր Ազատն էլ որ խփի՝ ձայն չեն հանի: Բայց հապա մի դրանց սարում ռաստ եկեք... Ինձ պես տասին կուտեն ու անունս էլ չեն հարցնի՝ Բաղդասա՞ր է, թե Կարապետ... Գնացե՛ք էդ ձեր ասողներին ասեք, որ խեղճից էլ խեղճ է Բաղդասարը, Բաղդասարը հե՛չ: — Իսկի՛ ասելու խոսք չէր էդ ձեր ասած խոսքը, ընկե՛ր Չարյանց, իսկի՛ ասելու խոսք չէր…

Եվ այսպես՝ համարյա մինչև լույս բորբոքվեց ու անհանգստացավ այդ գիշեր Բաղդասարը, իսկ երբ քնեց քնի մեջ անգամ անհանգիստ շուռումուռ էր գալիս, ոտները դուրս հանում վերմակից, շրթունքները շարժում...

Առհասարակ հանգիստ բնավորություն ուներ՝ աշխատում էր պահել իրեն, որպես Ուղղիչ Տան ոլիմպացի: Հաճույքով հովանավորում էր նորեկ ռեցիդիվիստներին՝ եթե իր հովանավորությանն էին դիմում: Առհասարակ պահում էր իրեն, որպես լյումպենական պարագլուխ, ժիգանային ղեկավար: Եվ պարզ էր, որ խոր էր իմ խոսքերով հասցրած վերքը. այդ խոսքերից հետո Բաղդասարը շուտ չէր կարող հանգստանալ:

Եվ ես այդ գիշեր համոզվեցի, որ եթե նախկին բանտերում լիներ՝ Բաղդասարը կա՛մ կխեղդեր ինձ տեղնուտեղը, կամ կիմանար իրեն զրպարտողների անունները: Սակայն նա լավ էր հասկանում, որ ո՛չ Ուղղիչ Տունն է նախկին բանտը, ոչ էլ ես՝ նրանից վախեցողը: Ուղղիչ Տունը նպաստավոր վայր չէր ժիգանական հերոսությունների ու սխրագործությունների համար, յուրաքանչյուր այդպիսի փորձ կարող էր նետել հերոսին մի հեռու մեկուսարան, ուր ո՛չ Ուղղիչ Տան քնքուշ ռեժիմը կլիներ, ո՛չ էլ վարչության ավելի քան քնքուշ վերաբերմունքը: Մեզ մոտ ոչ միայն խստիվ արգելված էր մարմնական պատիժը, այլև հասարակ հայհոյանքի համար կարող էր դուրս թռչել պաշտոնից վարչության որևէ ներկայացուցիչ: Էլ ես չեմ խոսում մշտապես բաց կամերաների, քաղաք գնալու հնարավորության, արձակուրդների և այլ սքանչելի բաների մասին, որոնցից կարող էր լիովին օգտվել յուրաքանչյուր կալանավոր: Բաղդասարն այդ բանն ինձանից լավ էր հասկանում և ամեն կերպ աշխատում էր ժամանակավորապես զսպել իր ժիգանական բնազդները:

Վերջին ժամանակներում իրեն միանգամայն հանգիստ էր պահում Բաղդասարը և ամեն կերպ աշխատում էր ուղղված կալանավոր երևալ: Ուզում էր նույնիսկ վերևի կամերաներից իջնել ներքև, ուր տեղավորված էին մեծ մասամբ աշխատավոր, պատահական, ոչ «պրոֆեսիոնալ» կալանավորները: Անգամ խնդրում էր, որ իրեն

գործ տան կուլտբաժնում, բայց երբ առաջարկեցին մի տեխնիկական գործ՝ հրաժարվեց: Այստեղ էլ, ինչպես «բռունցքային» գործերում, ուզում էր եթե ոչ առաջինը, գոնե վերջինը ևս չլինել:

Այսպես էր Բաղդասարը:

Ուղղիչ Տնից դուրս գալուց հետո ես տեղեկացա որ նա, այնուամենայնիվ, ինչ-որ հանցանքի համար ուղարկվել է մեկուսարան: Նայես ի՞նչ է անում հիմա, ի՞նչ ժիգանական սխրագործություններ, Նոր-Բայազեդի մեկուսարանում Բաղդասարը...

Ինչպես այս գլուխը, այնպես էլ ընդհանրապես Բաղդասարի մասին գրելիս, միշտ ծակում է ուղեղս այն միտքը, թե ի՞նչ պիտի մտածի Բաղդասարը՝ իր մասին գրածներս կարդալիս: Երևի նրա մեջ պիտի ամրանա այն համոզմունքը, թե ես «լրտես» եմ եղել և այժմ էլ մատնում եմ իրեն հրապարակորեն... Ու է՛լ ավելի պիտի ամրանա Բաղդասարի սրտում առանց այդ էլ չափազանց խոր նստած անվստահությունը դեպի ինտելիգենտները...

Լսո՞ւմ ես, սիրելի՛ Բաղդասար. — իզո՛ւր ես կասկածում: Քո մասին իմ տպավորությունների գրքում արված այս զրույցները տեսական զրույցներ են միայն, ուրիշ ոչինչ: Եվ միանգամայն վստահ եղիր, որ սրանից չի գա քեզ և ո՛չ մի վնաս:

Ազնի՛վ խոսք, Բաղդասա՛ր:

XIX. Ովքե՞ր են Ուղղիչ Տան ներքին, կենցաղային հեգեմոնները, Մադոյի հացադուլը, Սերյոժի թունավորումը, հին գայլերը, եզրակացություններ

Քրեական կորպուսի ութերորդ կամերան տեղափոխվելուց հետո միայն ես միանգամայն համոզվեցի, որ Ուղղիչ Տան ներսում, կալանավորների ներքին կենցաղային միջավայրում, զուտ կալանավորական հասկացողություններ և բարոյական նորմեր ստեղծողները ո՛չ այլ ոք են, եթե ոչ լյումպեն կալանավորները: Նրանք դեռևս դրսում, Ուղղիչ Տուն մտնելուց առաջ, հին, փորձված, նախկին բանտային հերոսներից ժառանգած որոշ «դաստիարակությամբ» էին Ուղղիչ Տուն մտնում և աշխատում տարածել այստեղ իրենց ազդեցությունը, հաստատել ներքին կալանավորական կենցաղում իրենց «հոգևոր», «գաղափարախոսական» հեգեմոնիան:

Իբրև շերտ, իբրև խմբավորում՝ ամենից կազմակերպվածներն էին նրանք, կազմակերպված ոչ թե գիտակցաբար, ձևականորեն, այլ տարերայնորեն, բնականաբար: Այս հանգամանքին օգնում էր նաև այն, որ նրանցից շատերը դրսում, դրսի աշխարհում ևս իրար հետ են եղել, ապրել ու «աշխատել» են

միևնույն պայմաններում, շատ անգամ միևնույն մարդկանց հետ: Եվ սրանք էին էլի, որ կապ ունեին դրսում մնացած իրենց ընդհանուր ընկերների, իրենց նման լյումպեն ժիգանների հետ, որոնցից և ժամանակ առ ժամանակ, թեկուզ շատ չնչին չափով, բայց այնուամենայնիվ ստանում էին նյութական օժանդակություն և երբեք չէին կտրում նրանց հետ իրենց բարոյական կապը: Երբ նրանցից մեկը քաղաք էր գնում բոլորն էլ հանձնարարում էին բարևել այսինչ կամ այնինչ ընդհանուր ծանոթին, հանձնարարություններ էին անում և միշտ շատ կենդանի հետաքրքրություն ցույց տալիս դեպի դրսի ընկերները: Դա մի ամբողջ կաստա էր, պրոֆեսիոնալ-ժիգանների մի ամբողջ աշխարհ, որ թե՛ իր առանձին կաստայական շահերն ուներ և թե՛ դրանց հողի վրա առաջացած կաստայական գաղափարախոսությունը: Հենց այդ կաստայի ամենացայտուն ներկայացուցիչն էր, ամենալավ արտահայտիչը — մեր Բաղդասարը: Այս մարդկանցից յուրաքանչյուրի համար սովորական բան էր Ուղղիչ Տունը, սա նրանց սոցիալական պայքարի մշտական պայմաններից մեկն էր, և պարզ էր, որ սրանք պետք է լինեին Ուղղիչ Տան ներսում «բանտային» հոգեբանության ու բարոյական հասկացողությունների կրողներն ու ջատագովողները: Եվ այս իմաստով, իհարկե, միանգամայն իրավացի էր, իր կաստայի պայմաններից ելնելով՝ միանգամայն տրամաբանական էր Բաղդասարը, երբ ասում էր մեզ.

— Ինչպե՞ս կարող ենք մենք և դուք հավասար կալանավորներ լինել, ինչպե՞ս կարող ենք հավատալ ու վստահել իրար:

Նա, իհարկե, չէր ասում, բայց ինքնին հասկանալի էր, որ ուզում է հասկացնել, թե Ուղղիչ Տունը մեր կյանքում մի պատահական նրբափողոց է, որից մենք վաղը դուրս կգանք և կաշխատենք էլ երբեք չվերադառնալ, — այնինչ նրա ու իր նմանների համար՝ գոյության պայքարի անխուսափելի պայմաններից մեկը, որից նրանք ևս, իհարկե, աշխատում են խուսափել, բայց, իհարկե, ո՛չ այն իմաստով, ինչ իմաստով որ մենք: Այս բանը Բաղդասարը շատ լավ էր հասկանում, որովհետև նա իր նմաններից մեկն էր, որ իր կաստայական գիտակցությունը հասցրել էր մշակված աշխարհայացքի, ժիգանական յուրօրինակ կենսափիլիսոփայության: Այս ամենից հետո միանգամայն հասկանալի և բնական է, որ Ուղղիչ Տան բնակչության մեջ այս տարրն էր, որ իրեն բացարձակապես հակադրում էր վարչությանը: Ուղղիչ Տան վարչությունը սրանց, այսպես ասած՝ կաստայական թշնամին էր՝ ինչ վարչություն էլ դա լիներ: Այս հակադրությունը չէր կրում, իհարկե, ո՛չ մի քաղաքական բնույթ: Սա պարզ է ինքնին և ոչ մի բացատրություն չի պահանջում: Ինչպես չկան «լավ» թշնամիներ, այլ կան թշնամիներ, որոնց «վատությունները» կարող ենտարբերվել իրարից քանակով ու աստիճանով, — այնպես էլ սրանց աչքին հավասարապես թշնամիներ էին նախկին բանտային վարչությունը և ներկա խորհրդայինը: Իրենք էլ շատ լավ էին գիտակցում, որ տարբերությունն այս թշնամիների մեջ հսկայական է, բայց դա չէր փոխում հարցն ըստ էության: Թշնամին թշնամի էր մնում, և տարբերությունը նրանց աչքին միմիայն «ձևական» էր: Եվ

նրանք, իբրև պրոֆեսիոնալ պայքարողներ այդ թշնամու դեմ ծանոթ էին Ուղղիչ Տան պայքարի բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներին: Հացադուլ, մահացու հացադուլ, բողոքներ դատախազությանը, սպառնալիք և ուղղակի ահաբեկում մատնիչների — այս բոլոր զենքերից նրանք հարկ եղած դեպքում օգտվում էին լիովին: Ավելին՝ նրանք կապ էին պահում և այլ Ուղղիչ Տների հետ, իհարկե՝ այդ տների համապատասխան տարրերի հետ, և նրանք ծանոթ էր շատ անգամ հեռավոր Ուղղիչ Տների անցուդարձը: Նրանցից շատերը եղել էին և այլ Ուղղիչ Տներում ու հաճախ ոգևորված պատմում էին իրար այսինչ կամ այնինչ անդրկովկասյան, կամ անգամ համամիութենական մասշտաբով հայտնի ժիգանի հերոսություններն ու սխրագործությունները: Շատ անգամ արյունոտ ու զարհուրելի լեգենդներ էին դրանք, պինկերտոնյան գրականությունը հիշեցնող լեգենդներ, որոնք սակայն հմայում էին նրանց սիրտը և ռոմանտիկ, հերոսական փայլ տալիս այդ տկլոր մարդկանց աչքերին:

Մի անգամ ես պատմեցի Բաղդասարին մի ռուս բանդիտի մասին, որ քսանից ավելի հարձակումներ էր կատարել թալանի նպատակով, որոնց ժամանակ սպանել էր 117 հոգի: Այդ մասին ես կարդացել էի մի ամսագրում, ուր բերված էր և նրա դատավճիռը: Հայտնեցի Բաղդասարին և այդ: Բաղդասարի աչքերը վառվեցին մի ամեհի բոցով, և նա ձեռնթափ բացականչեց.

— Եվ նրան գնդակահարեցի՞ն... Ափսո՜ս... Այդպիսի քաջերին գնդակահարում են, իսկ խեղճերին թողնում...

Ահա՛ այդ մարդկանց հոգեբանության ամենացայտուն արտահայտությանը:

Ես դեռ նոր էի ընկել Ուղղիչ Տուն, երբ մի անգամ երեկոյան քրեական կորպուսի միջանցքը մտնելիս նկատեցի, որ մի խումբ կալանավորներ իրար մոտ խռնված ինչ-որ խորհրդավոր փսփսում են ու նայում հատակին, իսկ մեկը՝ գլուխը կախ և ձեռքերով քիթը բռնած՝ հեռանում է նրանցից: Մոտեցա, — ես արդեն դեմքերով բոլորին ճանաչում էի, — Վալոն էր, Խուժան-Խաչոն, Մազոն, Սերյոժը և էլի մի քանի ռեցիդիվիստներ: Նայեցի հատակին արյան կաթիլներ: Նկատեցի և այն, որ ես հենց որ մոտեցա՝ նրանք լռեցին և աշխատեցին ցրվել:

— Ի՞նչ բան է, — հարցրի Խաչոյին:

— Ոչի՛նչ, բան չկա, — ժպտալով պատասխանեց Խուժան –Խաչոն. - մարդու քիթ արնավ:

Տեսա, որ չեն ուզում ասել, օրորեցի գլուխս ու հեռացա: Պարզ էր, որ ծեծել էին այն հեռացող կալանավորին, որին ես չէի ճանաչում: Երբ երկու քայլ հեռացա նրանցից՝ Սերյոժը մոտեցավ իմ հետևից և խորհրդավոր կերպով ականջիս շշնջաց.

— Թիֆլիսա բերդը շպիոնություն է արած՝ մի քիչ խրատեցինք...

Եվ ես հիշում եմ մի քանի այդպիսի դեպքեր:

Մի անգամ ներկայացում կար թատրոնում, երբ մոտեցավ ինձ Մադոն, Սերյոժի ընկերը, մի ռեցիդիվիստ երիտասարդ, և հայտնեց, որ պետը Սերյոժին մեկուսարան է դրել: Խնդրում էր միջամտեմ, որ ազատի: Այդպիսի խնդիրներով նրանք հաճախ էին ինձ դիմում, որովհետև սկզբից ևեթ ես ընտրվեցի կուլտկոմիսիայի նախագահ և, որպես այդպիսին, կարող էի բարեխոսել վարչության առաջ այս կամ այն կալանավորի համար: Խոսեցի պետի հետ, որ նստած էր դահլիճում. նա ասաց, որ արդեն կարգադրել է ազատել: Մեկուսացնելու պատճառը մի ինչ-որ երիտասարդ կալանավորի բողոքն է եղել, թե իբր Սերյոժը նրան անպատշաճ առաջարկություն է արել: Գուցե զրպարտություն էր, սակայն տվյալ դեպքում այս չէ էականը, այլ Սերյոժի վարմունքն իբրև ռեցիդիվիստի, որին քաջ ծանոթ էին վարչության դեմ պայքարելու բոլոր միջոցները:

Երբ ես հայտնեցի Մադոյին, որ արդեն կարգադրված է Սերյոժին ազատել — նա գնաց: Սակայն չանցած երեք րոպե՝ նա եկավ հևիհև և վախեցած հայտնեց.

— Սերյոժը թունավորվել է...

— Ո՞նց թե թունավորվել...

— Քիմիական թանաք է խմել. հրեն բերան-մերան կապտած՝ մեռնում ա...

Վազեցինք ներքև և միջանցքում հանդիպեցինք հսկիչներին ու մի քանի կալանավորների, որ Սերյոժին տանում էին հիվանդանոց: Կուրծքը բաց, երեսն ուռած, շրթունքներն ու ատամները քիմիական թանաքի գույն ստացած՝ Սերյոժը հառաչում էր, տնքում և ձեռքերով սեղմում կոկորդը՝ իբր խեղդվում է: Անմիջապես մտածեցի, որ սարքած բան կլինի: Տարան հիվանդանոց, խողովակով ջուր լցրին կոկորդը, սիրտը թափեց և հանգստացավ: Չե՞ս ամաչում — ասաց պետը նրան, երբ նա ոտքի կանգնեց և լվաց երեսը. — սա ի՞նչ անամոթություն է:

— Բյա ի՞նչ անեմ, հընգե՛ր պետ. ընձի լավ էր դանակով տայիր՝ փորս-մորս թափեիր, քանց թե հավատայիր էդ խոսքին...

Ինչպես իմ, այնպես էլ պետի կարծիքով Սերյոժի նկատմամբ «էդ խոսքին» կարելի էր հավատալ, սակայն փաստ չկար, վկաներ չկային — և Սերյոժը տոնում էր իր հաղթանակը:

Մի անգամ էլ կանգած էի պետի առանձնասենյակում, մռայլ ժպիտը դեմքին՝ ներս մտավ կրկին այդ Մադոն, Սերյոժի ընկերը:

— Ի՞նչ կա, — հարցրեց պետը չոր՝ իր զարմանալի հոտառությամբ իսկույն ըմբռնելով, որ էլի տրագի-կոմիկական պատմություն է պատահելու:

Մադոն չպատասխանեց, այլ լուռ մոտենալով դրեց պետի առաջ մի փոքրիկ գրություն: Պետը կարդաց, սառը նայեց նրան և հանգիստ պատասխանեց.

— Լա՛վ: Էսօր թուղթդ կուղարկեմ: Ուրիշ ոչի՞նչ:

Ու չհեռացրեց սառը, թափանցող հայացքը Մադոյի դեմքից — մեկ, երեք, հինգ վայրկյան: Մադոն մեղավոր ժպտաց:

— Բա ի՞նչ անեմ, ընկեր պետ, մեռնում եմ:

— Է, որ հացադուլ արիր — պիտի սաղանա՞ս:

— Ասում եմ՝ բալքամ բալնիցեն ղրկեն՝ ապելացի անեն…

— Ի՞նչ «ապելացի»:

— Գրիժես խեղդում ա: Մեռնում եմ:

Պետը, որի դեմքի ոչ մի մկանը դեռ չէր շարժվել — անակնկալ կերպով ծիծաղեց: Ծիծաղը փոխվեց քրքիջի, ձեռքը ձեռքին խփեց, հետո հազաց և հանկարծ նույն լուրջ, սառը դեմքն ընդունելով՝ հանդարտ, սառը ձայնով, որի մեջ նախատինքի շեշտ կար, ասաց:

— Առ: Ամոթ է: Ճղի դե՛ն գցի: Գնա՛:

Մադոն, միշտ նույն մեղավոր-հիմարական ժպիտը դեմքին՝ մոտեցավ սեղանին, վերցրեց իր գրությունը, ճղեց. գնաց: Երբ Մադոն հեռացավ՝ պետն ինձ ասաց:

— Էսպես էլ մարդիկ կլինեն, չես հասկանում... Հացադուլ եմ անում, թե ինչ է՝ գրիժա ունեմ, դատախազին կանչի: Թե գրիժա ունես — հրե՛ն հիվանդանոցը, հրե՛ն բժիշկը: Թե դու գրիժա ունես — դա էլ ունի: Ինքն էլ ամաչեց իրա արածից:

Բայց և այնպես, մի օր անց Մադոն այնուամենայնիվ հացադուլ հայտարարեց և դատախազն եկավ: Եկավ այլ գործերով, ինչպես գալիս էր հաճախ. Մադոն ինքն էլ գիտեր, որ առանց իր հացադուլի էլ նա կգա, և ինքը կարող է հայտնել նրան իր բաղձանքը: Սակայն էապես այդ չէր նրան հետաքրքրողը: Նա «բողոքել» էր ուզում, «պայքարել», ինչպես իսկական ռեցիդիվիստ, ժիգանական հերոս:

Ես ներկա էի դատախազի հետ ունեցած նրա զրույցին և տեսա այդ հերոսական պայքարը:

— Դուք ինչի՞ դեմ եք բողոքում, — սառը հարցրեց դատախազը:

— Գրիժա ունեմ՝ չեն ուղարկում ապելացի:

— Բժիշկը նայե՞լ է:

— Նայել է:

— Ի՞նչ է ասում:

— Ասում է... ասում է... Ընկե՛ր դատախազ, մեռնում եմ — չեն ուղարկում ապելացի անեն...

— Եթե կարիք լինի ուղարկելու՝ կուղարկեն, — հանգիստ ասում է դատախազը. — ուրիշ բողոք չունե՞ք:

— Ո՛չ, ընկեր դատախազ:

— Դուք ազատ եք:

Սրանով էլ վերջացավ Մադոյի ցույցը, Մադոյի հերոսական պայքարը Ուղղիչ Տան վարչության դեմ...

Ի՞նչ շահեց Մադոն սրանից — չգիտեմ, բայց նա գոհ էր: Հարկավոր էր ապացուցել, որ նա կարող է հացադուլ հայտարարել և կանչել դատախազին — և նա ապացուցեց: Ուրիշ բան արդեն չէր էլ պահանջվում ապացուցելու: Հետագայում ես լսեցի, թե Մադոն ինչպիսի վառ, հերոսական գույներով է նկարագրել կամերաներում իր այդ բողոքը դատախազին: Դա մի փոքրիկ լեգենդ էր, մի փոքրիկ ռեցիդիվիստի մի փոքրիկ լեգենդ...

Սակայն ես մի անգամ տեսա, թե երբեմն ի՛նչ աստիճանի կարող է հասնել այդ մարդկանց համառությունը և ի՞նչ միջոցների կարող են երբեմն նրանք դիմել՝ իրենց նպատակին հասնելու նկատառումով: — Նրանք հին գայլեր էին երևում, այդ երկու թուրք կալանավորները, որ ուղարկված էին Բաթումից՝ Պարսկաստան աքսորելու: Նրանց ձերբակալել էին Բաթումում պատահաբար, իբրև կասկածելի անձնավորությունների: Մոտներից դուրս էր եկել մեծ քանակությամբ դրամ, իսկ թե որտեղի՞ց է դրանց մոտ այդ դրամը չեն պատասխանել: Անցագիրներ ևս չեն ունեցել: Հայտնել են, թե երևանցիներ են: Էտապով ուղարկել էին Երևանի Ուղղիչ Տունը, որ այստեղ ճշտեն նրանց ով լինելը, իսկ եթե չճշտվի՝ աքսորեն Պարսկաստան:

Բայց Երևանում ևս նրանք չկարողացան երաշխավորներ ներկայացնել: Տրված էր որոշ ժամանակա միջոց, որից հետո նրանք, ըստ ուղարկվող իշխանությունների որոշման՝ պիտի տարվեին պարսկական սահմանը և ազատ արձակվեին: Նրանք չէին ուզում Պարսկաստան անցնել, այդ հին գայլերը, իսկ ժամանակն անցնում էր, մոտենում էր առաքման օրը: Նրանք հեռագրել էին Բաթում, աջարական իշխանություններին, որպեսզի մի շաբաթ ևս թույլատրեն մնալ, մինչև երաշխավորներ ներկայացնեն: Երկու օր էր մնացել էտապին, իսկ պատասխան չկար: Եվ ահա նրանք որոշել էին բողոքել:

Հետաքրքիրն այն էր, որ նրանք մեր Ուղղիչ Տունն ընկնելուն պես՝ իսկույն կապ հաստատեցին Բաղդասարի հետ: Նրանցից մեկը հենց այն կալանավորն էր, որին ես տեսել էի մեր կամերայում՝ Բաղդասարի հետ «բայբուրդ» խաղալիս: Նրանք շատ շուտ էին ճանաչում ու գտնում իրար — քրեական աշխարհի այդ ասպետները:

Այդ օրը ես նստած էի կամերայում, — ժամը մոտավորապես առավոտյան 11-ն էր — երբ հանկարծ ներս ընկավ Բաղդասարը.

— Թուրքերը էն ա՝ փորները ճղել — դատախազին են ուզում: Գնացե՛ք տեսեք, — ասաց նա հանգիստ:

— Ո՞ր թուրքերը:

— Էն բաթումցիները: Հրեն սեկրետում պառկած՝ արյունը ջրի նման թափվում է ցած: Գնացեք, տեսեք:

Գնացի մեկուսարանը: Այնտեղ էր արդեն հիվանդանոցի բժիշկը: Այնտեղ հավաքվել էին և մի քանի կալանավորներ և երկու հսկիչ:

Նրանք պառկած էին երկու կողք-կողքի դրած կոյկաների վրա, շապիկ-վարտիքով, վրաներին վերմակ: Մեկը վիրավորել էր իրեն իր աջ կողից, մյուսը երկու տեղից՝ կողից և փորից: Վիրավորել էին իրենց — պատուհանից պոկած ապակու կտորով: Վերքերը խոր չէին, սակայն բավականին արյուն էր եկել և դեռ շարունակում էր գալ: Հավաքված արյունը լճացել էր կողերին և համարյա ամբողջովին ներկել նրանց շապիկները: Արյունոտ էին և նրանց ձեռքերն ու դեմքերը: Այս ամենը թողնում էր ծայր աստիճանի ճնշող, քստմնելի տպավորություն:

Ներս մտնելով ես չափազանց զարմացա, որ բժիշկը կանգնած է այդտեղ, արյունը հոսում է մարդկանց վերքերից, իսկ նա չի օգնում, չի կապում վերքերը:

— Ինչո՞ւ չեք կապում, — հարցրի զարմացած:

— Չեն թողնում հիմարները, ասում են՝ մինչև դատախազը չգա, չենք թողնի:

— Ո՞նց թե. կապեցեք զոռով:

— Չի կարելի, — ասաց բժիշկը հանգիստ, ինչպես ասում են ամենասովորական բաները. — օրենք չկա: Եթե չեն ուզում՝ չի կարելի զոռով:

Շվարած՝ չգիտեի ինչ պատասխանել: Թուրքերեն ասի նրանց, որ եթե սիրով թույլ չտան՝ ստիպված կլինեն զոռով կապել:

— Խորհրդային բանտերում բռնություն չկա, էդպիսի օրենք չկա գրված, — հանգիստ պատասխանեց նրանցից մեկը. — մինչև դատախազը չգա՝ չի կարելի:

Իսկ արյունը շարունակում էր հոսել ու հոսել, բայց նրանք հանգիստ էին, չէին անհանգստանում:

— Բայց թե ո՞նց կլինի, — դիմեցի բժշկին. — Էսպես հո կարող են մեռնել...

Մի՛ք անհանգստանա, — ժպտալով պատասխանեց բժիշկը. — վերքերը վտանգավոր չեն: Չկարծեք թե առաջին անգամ են սրանք այս բանը փորձում, հին գայլեր են երևում... Այնպես չէին կտրի, որ վնասվեն: Իսկ մինչև դատախազը չգա՝ ոչ մի դեպքում թույլ չեն տա կապել: Ամբողջ պատմությունն էլ հենց դրա համար է սարքած...

Ես նայում էի նրանց, այդ հին գայլերին, որոնք պառկած էին հանգիստ, բժիշկը կանգնած էր կողքներին, արյունը հոսում ու հոսում էր կողերից, բայց նրանք համառ կերպով արգելում էին օգնություն հասցնել: «Ցնցող տպավորությունը» պահում էին դատախազին: Նրանցից մեկը մոտ 40 տարեկան կլներ, մյուսը՝ 30. երկուսն էլ առողջ տղամարդիկ, սափրած գլուխներով ու դեմքերով, ուղիղ, հաճելի տղամարդկային դիմագծերով: Քաղաքներում ապրած լյումպեններ էին երևում, հին աֆերիստներ, հին գայլեր: Եվ պարզ էր, որ առաջինը չէր մեր Ուղղիչ Տունը,ուր ընկել էին նրանք: Քաջ ծանոթ էին ուղղիչ-տնային բոլոր օրենքներին: Պարզ էր և այն, որ նրանք նույնքան հեռու էին երևանաբնակ թուրքեր լինելուց, որքան անցանկալի էր նրանց համար Պարսկաստան ուղևորվելը: Նրանք, իմ կարծիքով, աջարացիներ էին կամ տրապիզոնցիներ. գոնե այդպես էին ասում նրանց դիմագծերը: Երևանի թուրքերը, որ էապես պարսիկներ են կամ ադրբեջանական թաթարներ, ո՛չ շեկ մազեր ունեն, ո՛չ կապույտ աչքեր, ո՛չ էլ ուղիղ դիմագծեր:

Վերջապես եկավ դատախազը և հայտնեց, որ իրենք էլ են հեռագիր ուղարկել, բայց պատասխան չի ստացվել: Հասկացրեց նրանց, որ իրենցից չի կախված այս գործը, մի բան, որ այդ աֆերիստները ևս շատ լավ գիտեին: Խնդրեցին մի հեռագիր ևս տալ, դատախազը համաձայնվեց — և նրանք թույլ տվին կապել վերքերը: Հետո նրանց տեղափոխեցին հիվանդանոց:

Երկու օր անց նրանք արդեն ոտքի վրա էին — այդ հին աֆերիստները, հին գայլերը:

Այո՛ սրանք էին իսկական կալանավորները և Ուղղիչ Տան ներքին, զուտ կալանավորական կյանքում ուրույն-կալանավորական տրամադրություններ ստեղծողները: Սրանք ա՛յն առանցքն էին, որի շուրջը դառնում էր իսկական կալանավորների մասսան, ա՛յն կալանավորների, որոնք պատահական տարրեր չէին Ուղղիչ Տանը և որոնց հանցագործությունը չէր կրում պատահական բնույթ: Գյուղական բանդիտները, խիստ մեկուսացման ենթարկված մարդասպաններն ու գողերը, որոնք էապես չէին պատկանում այս ժիգանների շրջանին — ներքուստ համերաշխ էին սրանց հետ, բաժանում էին կաստայական հասկացողությունները և անխոս ենթարկվում սրանց բարոյական նորմերին: Այս շրջանից դուրս էին մնում միայն պատահական հանցագործները, գյուղացիների և նախկին խորհրդային ծառայողների խոշորագույն տոկոսը, որոնք ճնշող մեծամասնություն էին կազմում: Ինչ վերաբերում է լյումպեններին իմ խորին համոզմունքով՝ անուղղելի տարրեր են սրանք և սրանց համար ոչ մի նշանակություն չունի, սրանց վրա ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ մեր ուղղիչ քաղաքականությունը: Ավելիշուտ սրանք կարող են փչացնել, իրենց ազդեցության տակ առնելով՝ ուղղիչ ճանապարհից թեքել և՛ այն կալանավորներին, որոնք այլ պայմաններում միանգամայն ուղղելի տարրեր են, այնինչ սրանց շրջանն ընկնելով՝ տարվում են ժիգանական ռոմանտիզմով և դառնում անուղղելի հանցագործներ: Օրինակ՝ մեր կամերայի Գլդանը: Գյուղացի, հազիվ չափահաս միերիտասարդ, որ դատապարտված էր գողության համար: Հարկավոր էր տեսնել, թե ինչպիսի՜ ոգևորությամբ էր լսում ժիգանների արկածային վեպերը, որպիսի՜ փայլ էին ստանում այդ լեգենդները լսելիս նրա խոշոր, դեռ աշխարհ չտեսած աչքերը, որպեսզի միանգամայն պարզ լիներ այդ: Կարող եմ բերել և ուրիշ շատ օրինակներ: Բայց իբրև ամենալավ ապացույց՝ հիշեմ և մի այլ երիտասարդի, այս անգամ արդեն նախկին խորհրդային ծառայողի, որ Ուղղիչ Տուն էր ընկել յուրացման համար: Նախկին կոմերիտական էր, շատ սրամիտ կուպլետներ էր գրում պատի թերթում: Սակայն նրան տեղավորել էին վերի կամերաներից մեկում, և նա այն աստիճան ժիգանների ազդեցության տակ էր ընկել, որ մեզ շատ դժվարությամբ հաջողվեց պոկել նրան այդտեղից և լծել կուլտկրթական աշխատանքի: Սակայն, կարծեմ, այս էլ չօգնեց, և նա այնպես էլ հեռացավ Ուղղիչ Տնից՝ իր հոգում տանելով այն այրող վարակը, որին կարելի է «ժիգանական ռոմանտիզմ» անունը տալ: Ուղղիչ Տունը այդ վարակիչ, այլասերող տարրերից փրկելու միակ միջոցը, իմ խորին համոզմունքով, — դրանց բոլորովին, միանգամայն առանձնացնելն է, այնպես, որ նրանք ոչ մի շփում չունենան այլ կալանավորների հետ: Ես կալանավոր էի, և ես տեսնում էի, որ դրանք, այսպես թե այնպես, կալանավորական ներքին կենցաղում կարողանում են տարածել իրենց «հոգևոր հեգեմոնիան»: Իհարկե, այս բանը բացարձակ բնույթ չէր կրում և չէր էլ կարող կրել շնորհիվ այն մթնոլորտի, որ ստեղծել էր Ուղղիչ Տան պատերում կուլտբաժինը: Բացի այս՝ սրանց ազդեցությունը կասեցնելու գործում հսկայական դեր էին կատարում արհեստանոցները վարչության ձեռք առած խիստ միջոցները՝ ամեն կերպ վերացնելու կալանավորական խմբավորումները: Սակայն պիտի ասել, որ բոլոր այս միջոցներն էլ կիսամիջոցներ էին, որ չէին կարող

միանգամայն արմատախիլ անել ռեցիդիվիստների ազդեցությունը: Խոսք չկա, որ եթե վերոհիշյալ միջոցները մի փոքր թուլանային՝ Ուղղիչ Տան ներքին, կենցաղային ռեժիմն անմիջապես կանցներ բանդիտների և ռեցիդիվիստների ձեռքը, և նրանք արդեն բացարձակապես կտարածեին կալանավորական ամբողջ մասսայի վրա իրենց ո՛չ միայն «հոգևոր», այլև «մարմնական» հեգեմոնիան...

XX. Ուղղիչ Տան գժերը. Արտաշ–«թագավորը», Հայրոն, Մահմեդը, Ալին, «Անահիտը»

Երևանի Ուղղիչ Տունն ընկնում էին երբեմն կատարյալ խելագարներ, կամ, ինչպես կալանավորներն էին ասում՝ «գժեր», որոնք փայլուն ասուպների նման սահում էին Ուղղիչ Տան երկնակամարով ու թողնում կալանավորների հիշողության մեջ անջնջելի հետքեր...

Նրանք ձերբակալվում և Ուղղիչ Տուն էին բերվում որևէ հանցանքի համար, իսկ երբ պարզվում էր նրանց հոգեկան խանգարված վիճակը՝ տեղափոխվում էին հոգեկան հիվանդանոց:

Նրանցից ամենահետաքրքիրն էր, իհարկե, — Արտաշ-թագավորը: Բարձրահասակ, թիկնեղ, մեծ, խոշոր գլխով, սև, խուզած մազերով և հարբեցողի բորբոսնած դեմքով մոտ 40 տարեկան միաժդահա էր Արտաշ-թագավորը: Բոբիկ, ճղոտած շորերով, համարյա կիսատկլոր, մարմնի ու դեմքի վրա սիֆիլիսի կապույտ, թարախակալ վերքեր... Յուրաքանչյուր օր հիվանդանոցում խնամքով կապում էին այդ վերքերը, բայց նա, երբ նրան առանձին կամերայից բերում էին դուրս, քրեական կորպուսի բակը՝ նստում էր գետնին, արևի տակ, բաց էր անում վերքերը և սկսում փորփրել...

Քստմնելի տպավորություն էր թողնում այդ պահին Արտաշ-թագավորը, ինքն էլ դառնում էր մութ ու քստմնելի, ինչպես իր վերքերը:

Լենինականցի արհեստավոր էր — և, որպես իսկական լենինականցի՝ ուներ աներևակայելի, հարյուրհարկանի հայհոյանքների անսպառ պաշար: Ինչ-որ մարդու էր կարծեմ քարով տվել —սպանել. լավ չեմ հիշում կատարած հանցանքը: Եվ սա տվյալ դեպքում նշանակություն չունի, որովհետև ես ուզում եմ պատկերել Արտաշ-թագավորին այնպես, ինչպես ես տեսա նրան Ուղղիչ Տանը, — տալ մարդկային այդ քիմերային նմուշի ճշգրիտ նկարագրությունը: Եվ, միևնույն ժամանակ, կալանավորների վերաբերմունքը դեպի այդ տխուր անձնավորությունը:

Երբ նա գալիս նստում էր բակում և սկսում փորփրել իր վերքերը՝ կալանավորները շրջապատում էին նրան — և սկսվում էր մենամարտը: Տարօրինակ մարդիկ էին այդ տեսակետից ևս կալանավորները. Արտաշ-թագավորը նրանց համար ոչ թե մարդկային անկման զարհուրելի մի նմուշ էր, այլ... հասարակ զվարճալիք: Չնայած

հսկիչների բոլոր ջանքերին՝ առիթ չէին փախցնում նրա հաշվին մի փոքր զվարճանալու: Քար էին գցում վրան, փոքրիկ ավազաքարեր, ծխախոտ տալիս՝ միջին մազեր, կամ այլ կեղտոտություններ, վրան ջուր լցնում, հետևից գաղտագողի մոտենալով՝ հրում, որ ընկնի, — և նման հազար ու մի տեսակ բարբարոսություններ: Եվ տարօրինակն այն էր, որ սա անում էին ոչ միայն լյումպեններն ու ժիգանները, այլև համարյա բոլոր կալանավորները, նույնիսկ ինտելիգենտներից մի քանիսը:

Զարհուրելի փրփրում էր այդ ամենից Արտաշ-թագավորը և պատասխանում հարյուրհարկանի հայհոյանքներով: Հայհոյում էր հյութեղ, ըմբոշխնելով. երևում էր, որ դա, բացի ինքնապաշտպանության զենք լինելը՝ հաճելի էր նրան և որպես արվեստ, որի մեծագույն վարպետներից մեկն էր ինքը, այդ Արտաշ-թագավորը: Եվ նա շատ անգամ տեղից էլ չէր վեր կենում — բավականանում էր հայհոյանքներով: Մյուս կողմից, ճշմարտության չդավաճանելու համար, հարկավոր է ասել, որ Արտաշ-թագավորի և կալանավորների միջև տեղի ունեցող այդ զզզզոցը ավելի շուտ վայրենի հանաքի, ժամանցի բնույթ էր կրում, քան լուրջ հալածանքի: Մի հոտենտոտյան, մարդկային բանականությունից վեր գտնվող ժամանց, որ վերջ ի վերջո երկու կողմերին էլ մեծ հաճույք էր պատճառում: Կալանավորների աչքին Արտաշ-թագավորը քոսոտ, հալածված շան նման մի բան էր, — քոսոտ, հալածված շուն, որպիսիներին այնքան սիրում են որևէ անկյուն մտցնել ու մահակները բերանը խոթելով՝ գազազեցնել գեղջուկ երեխաները: Իսկ Արտաշ-թագավորի համար նրանց հայհոյելը և նրանց դեմ գազազելը, ինչպես երևում էր՝ իր կուտակված եռանդը վատնելու սովորական մի ձև էր, որից նա վերջ ի վերջո այնքան էլ չէր դժգոհում, ինչպես առաջին հայացքից կարելի էր կարծել: Սրա ամենալավ ապացույցն այն էր, որ երբ մի քանի րոպե կալանավորները, հսկիչի կողմից մի կողմ քշվելով, դադարեցնում էին իրենց հալածանքը՝ Արտաշ-թագավորը հանկարծ ինքն էր սկսում իր հայհոյանքային արշավանքը: Եվ մարդկա՛նց դեմ հաճախ, որոնց մտքովն անգամ չէր անցնի մասնակցել իր դեմ եղած կալանավորների ընդհանուր ֆրոնտին:

Սակայն երբեմն, որևէ չափից արդեն անց բարբարոս «հանաքից» հետո (ինչպես, օրինակ, դույլով ջուր լցնելը, կամ գլխին նեխած ձու խփելն էր) — լուրջ, առանց հանաքի զայրանում ու կատաղում էր Արտաշ-թագավորը — և նա զարհուրելի էր այդ պահերին:

— Ե՛ս եմ Արտաշ թագավորը հայոց, — խռպոտ, արնախեղդ ձայնով մռնչում էր նա, թողնում իր վերքերը, վեր թռչում տեղից և հարյուհարկանի հայհոյանքներ թափելով ու ծայրաստիճանի երկար, մինչև ծունկերը հասնող, օրանգուտանային ահռելի ձեռքերը թափահարելով՝ հարձակվում էր կալանավորների վրա: Կալանավորները զարհուրած կորպուսն էին փախչում ու մտնում կամերաները: Այսպես էր Արտաշ-թագավորը: Մի շաբաթ միայն նա մնաց Ուղղիչ Տանը: Հետո նրան տեղափոխեցին հոգեկան հիվանդանոց:

Ուղղիչ Տան հետևյալ հռչակավոր գիժը — Հայրոն էր, բայց սա արդեն լիակատար հակապատկերն էր Արտաշ-թագավորի: Նույնպես
լենինականցի, բարձրահասակ, բայց ավելի երիտասարդ, քան Արտաշ-թագավորը: 30 — 32 տարեկան, կապույտ, խոհուն աչքերով, լուրջ, լուռ. խաղաղ խելագարություն ուներ այդ համակրելի դեմքով երիտասարդը: Ահռելի ուժ ուներ — ինչպես պատմում էին կալանավորները: Սրան ոչ միայն չէին
անհանգստացնում, այլև սրանից մի տեսակ, կարծես, քաշվում ու ակնածում էին կալանավորները: Հոգատարվերաբերմունք ունեին դեպի նա: Չիմացողը չէր էլ կասկածի, թե աննորմալ է: Խելագարության պահեր ուներ, մնացած ժամանակ հանգիստ էր, լուռ, խաղաղ — ծայր աստիճանի ինքնամփոփ ու լուրջ: Թեկուզ մեկուսացման սենյակում էր ապրում, բայց հաճախ դուրս էր գալիս բակ, մտնում կամերաները, լուռ կանգնում, նայում սրան–նրան հանգիստ, ոչ ոքի չէր դիպչի, չէր խոսի ոչ ոքի հետ: Եթե բան հարցնեին՝ կարճ, երկու խոսքով կպատասխաներ, կամ չէր պատասխանի: Խոսելիս էլ շատ ինտիմ ձայնով էր խոսում՝ բարեկամական, մտերիմ պատրաստակամությամբ գլուխը թեքելով դեպի խոսակիցը: Երբ ես նրան առաջին անգամ տեսա — մտքովս անգամ չանցավ, թե աննորմալ է և երբեմն դառնում է կատաղի խելագար:

— Մին պապիրո՛ս տուր Հայրոյին, — ասաց ինձ Բենժամենը: Տուփը երկարեցի Հայրոյին, որին առաջին անգամ էի տեսնում և կարծում էի, թե սովորական կալանավոր է:

— Շնորհակալ եմ, — վախեցած պատասխանեց Հայրոն և ձեռքերը շտապով վերև բարձրացրեց, որ հանկարծ պատահմամբ չդիպչի իմ տուփին: Տարօրինակ թվաց այդ և մեկ էլ աչքերի արտահայտությունը. աչքերում անհանգստություն
կար, կասկածանք. կարծես շտապում էր խուսափել ինչ-որ վտանգից:

Գիժ ա, — ինձ մի կողմ քաշելով շշնջաց ականջիս Բենժամենը. — միշտ ըտենցա: Մարդուց բան վերցնել չունի: Էս ամբողջ Ուղղիչ Տանը մենակ ինձնից կվերցնի, մեկ էլ էն մեր Սուրենից: Հաց ուտել չունի, մինակ էն սուպն է խմում: Գիտաս հի՛նչ ուժ ունի՞ — որ ուզի էն դուռը կպոկի...

Ու ցույց տվեց կորպուսի երկաթյա դուռը:

Հայրոն խելագարության պահուն սպանել էր իր մորը, և նրան ձերբակալել էին ու բերելՈւղղիչ Տուն: Կասկածում էին թե սիմուլյանտ է, բայց հիմք չունեին այդ կասկածները: Վերջում նրան տեղափոխեցին հոգեկան հիվանդանոց:

Հայրոյին ես չտեսա կատաղի խելագարության պահերին: Սակայն պատմում էին, որ այդ վայրկյաններին նա զարհուրելի է լինում: Կոտրում է, խփում, ջարդում, — կարող է և սպանել: Խելագարությունն, ասում էին, սկսվում է անհանգստությունից: —

Լուռ, մտազբաղ, առանց շուրջը նայելու, անհանգիստ շրջում է միջանցքներում — և հանկարծ սկսվում է կատաղությունը: Վա՜յ նրան, ով այդ պահերին Հայրոյի ձեռքն ընկնի...

Սակայն Հայրոն, Ուղղիչ Տան այդ լեգենդական խելագարը, իմ հիշողության մեջ մնացել է որպես լուռ, խաղաղ, չափազանց համակրելի դեմքով ու խոհուն աչքերով մի երիտասարդ, որից ամբողջովին խաղաղություն էր բուրում... Ու չգիտեմ ինչու՝ նրան հիշելիս իմ միտքն են գալիս աշնան խաղաղ իրիկունները, երբ նստած պարապում ես սենյակում և հետզհետե սենյակ է մտնում իրիկնային հանգիստը: Մի քիչ տխուր է լինում կարծես մարդ, մի քիչ մրսում է ներքուստ, և կարծես խաղաղ իրիկվա հետ մեկտեղ սենյակ է մտնում մի մտերիմ բարեկամ...

Մեկ էլ ես հիշում եմ Հայրոյին իր մեկուսացման կամերայում թախտի վրա պառկած: Լուռ, փոքրիկ կամերա — մեջտեղում դրած թախտին մի խաղաղ մարդ պառկած: Առանձնապես խորհրդավոր տպավորություն էր թողնում թերևս և այն, որ մենք նայում էինք փակ դռան փոքրիկ, երկաթյա պատուհանից ու գիտեինք, որ ներսում պառկած այդ մենակ, խաղաղ մարդը կարող է բարձրանալ հանկարծ և անհանգիստ, սարսափ առած գազանի նման քայլել միջանցքներում... Ու կատաղել հանկարծ, ինչպես կարող է կատաղել մահ տեսած գազանը, կամ կատաղի խելագարը...

Ուղղիչ Տանը կային և երկու թուրք գժեր, որոնցից մեկի անունը Մահմեդ էր, մյուսինը՝ Ալի: Բայց սրանք արդեն «հասարակ» գժեր էին և ոչ մի դեպքում չէին կարող մրցել Արտաշ-թագավորի և Հայրոյի հետ ու նրանց պատվին արժանանալ:

Մահմեդը հիսունն անց, միջահասակ, երեսն ու գլուխը պարսկական ոճով սափրած գյուղացի պարսիկ էր, դերվիշի արտաքինով: Թե ինչո՞ւմ էր կայանում նրա գժությունը — ես մինչև վերջ այնպես էլ չհասկացա: Լուռ դուրս էր գալիս բակ ու պատի տակ պպզում, ինչպես պարսիկ դերվիշները, կամ աֆիոն ծխողները: Ձեռքը դնում էր ականջին ու միտք անում: Միշտ արևոտ կողմն էր նստում և հաճախ փոքրիկ քարեր էր ունենամ, որ փռում էր գետնին ու խաղում հետները խորասուզված:

Մի անգամ ես նրան հարցրի.

— Ի՞նչ ես միտք անում, Մահմե՛դ:

— Ոչինչ, արև՛ է. — պատասխանեց տխուր, խեղճ ձայնով ու մատով ցույց տվեց արևոտ երկինքը: Հետո շարունակեց խաղալ իր քարերի հետ:

Մի ուրիշ անգամ ես տեսա Մահմեդին՝ պպզել էր պատի տակ՝ ձեռին մի քանի հատ չորացած ծաղիկներ: Երևի պատերի արանքից էր
պոկել: Տխուր, խորասուզված՝ նայում էր չորացած ծաղիկներին:

— Այդ ի՞նչ է, Մահմեդ, էլի ի՞նչ ես մտածում, — հարցրի մոտենալով:

— Ոչինչ՛, — նույն տխուր, խեղճ ձայնով պատասխանեց Մահմեդը. — ծաղիկնե՛ր են: Չորացա՛ծ ծաղիկներ:

Ինչպես երևում էր արևելյան մենակյաց դերվիշ էր, բառիս ոչ մասնագիտական իմաստով, Մահմեդը: — Արևելյան գեղջուկ իմաստուն, որին կալանավորները զժի տեղ էին դրել: —Արևելյան տխուր հայեցող, որի աշխարհի անհունությունից ու անէությունից ելք փնտրող հողին ծխվում էր դեպի երկինք, ինչպես հիմարացնող աֆիոն...

Այնինչ նրան միանգամայն հակառակ՝ բառիս առօրյա փողոցային իմաստով մի «գիժ» էր Ալին՝ 25 — 26 տարեկան մի թուրք երիտասարդ, որ Ուղղիչ Տուն էր ընկել, ինչպես և Մահմեդը՝գողության համար: Բարակ, միջահասակ, բոբիկ, միշտ ճղոտած շորերով, կեղտոտ երեսով ու քթով՝ հիմարական ժպիտը դեմքին: Մոտենում էր հանկարծ, թևիցդ քաշում, կանգնեցնում, շեշտակի նայում երեսիդ ու ժպտում հիմարաբար, կարծես տնազ էր անում: Ու հանկարծ կրկին քաշում էր թևիցդ.

— Ինձ հա՛ց տուր:

Կամ.

— Տո՛ւր ինձ 50 կոպեկ:

Եվ երբ զարմանք էիր հայտնում — անսպասելի կերպով, բարձր, հիստերիկ ծիծաղով ծիծաղում էր հանկարծ: Թողնում էր քստմնելի տպավորություն, ինչպես ռուսական յուրոդիվիները:

Կալանավորները շատ էին սիրում ծիծաղեցնել նրան: Որ վայրկյանին էլ մոտենային ու ասեին.

— Ալի՛ գյո՛ւլ,—

անմիջապես կբանար բերանը և հանկարծակի, առանց նախաբանի, կծիծաղեր, — բարձր, զիլ հիստերիկ ծիծաղով, որ անսովոր մարդու վրա կարող էր իսկական խելագարային ծիծաղի տպավորություն թողնել:

Անպայման աննորմալ էր նա, այդ Ալին, սակայն բավականին հեռու էր խելագարությունից: Կալանավորները սիրում էին նրան ծիծաղեցնել, հարցեր տալ, որոնց նա հաճախ բավականին սրամիտ պատասխաններ էր տալիս, — բայց չէին նեղացնում: Հաճախ հաց էին տալիս, ծխախոտ, — և ես ոչ մի անգամ չտեսա, որ նրան խփեն կամ հալածեն, ինչպես Արտաշ-թագավորին:

Երևանի Ուղղիչ Տանը, վերջապես, կար ևս մի կալանավոր, որ ամեն կերպ ձգտում էր խելագարի համբավ շահել, բայց կալանավորները համառ կերպով չէին հավատում նրան: Դա քառասունի մոտ, միջահասակ, լիքը, սև դեմքով ու աչքերով մի կիսագյուղացի էր, թերևս արհեստավոր, կամ գյուղական չարչի, որ սպանել էր կնոջը և Ուղղիչ Տուն բերվել՝ ձերբակալված հանցանքի վայրում: Ես Ուղղիչ Տանն էի, երբ նրան բերեցին: Չափազանց անհամակրելի, բոշայի սև դեմք ուներ, խոշոր, խուզած գլուխ, թողնում էր ծայր աստիճանի վանող տպավորություն: Բերեցին այդ կալանավորին, տարան մեկուսարանը, ուր պահվում էին քննության տակ գտնվողները: Մեկուսարանի պատուհանները դեպի բակ էին նայում: Մենք ներքևում պատահմամբ կանգնած զրույց էինք անում, երբ հանկարծ մեկը պատուհանից հատու կանչեց.

— Անա-հի՛տ...

Վերև նայեցինք՝ այդ կալանավորն էր: Հենց այդ վայրկյանին նա բռունցքով փշրեց պատուհանի ապակիները: Մենք վեր վազեցինք: Հսկիչն այնտեղ էր, փորձում էր նրան բռնել, բայց չէր հաջողվում: Մենք որ ներս մտանք նա շուռ եկավ դեպի մեզ: Կրկին կանչեց.

— Անա-հի՛տ...

— Ի՞նչ է, ո՞ւմ ես կանչում:

— Կնկա՛նս, Անահիտին... Չեն թողնի որ՝ էրթամ տեսնիմ... Ես կսեմ ջրի էր գնացե, կսեն թե մեռել է... Կսեն թե ես եմ սպանե...

— Անա-հի՛տ...

— Լա՛վ, ընչի՞ ես գոռում, — բարկացավ կալանավորներից մեկը: — Այդ կասկածելի կալանավորն սկզբից ևեթ չշահեց կալանավորների համակրանքը:

— Ինչդ չբարկանամ օր՝ ջղայնանամ կը... Ընձի ինչի են բռնե՝ չեն թողնի է՛րթամ տուն՝ կնկանս տեսնիմ... Ես ի՞նչ եմ էրե օր... Անահիտը գնաց ջրի, տեյ հիմի պիտի գար...

— Անա-հի՛տ...

— Չոռ ու ցա՛վ, — բարկացավ միևնույն կալանավորը, — քո՛ւ Անահիտի... այստեղն ու այնտեղը...

Այո՛, սկզբից եթե այդ ավազակը չշահեց կալանավորների վստահությունը: Կալանավորները հոտառությամբ կարծես զգում էին, որ նա դիտմամբ է անում: Ամեն ինչ կարող էր դուր գալ կալանավորներին, բացի սիմուլյանտությունը:

Նրան փակեցին ներքևի մեկուսարանի կամերաներից մեկում, և այդ վայրկյանից օրվա ո՛ր պահուն էլ մոտենալու լինեինք՝ նրա պատուհանից կլսվեր.

— Անա-հի՛տ...

Կանչում էր մի տեսակ բարկացկոտ, նեղսրտած, հրամայող շեշտով: Կարծես հե՛նց այդտեղ, հարևան սենյակում էր Անահիտը, բայց դիտմամբ չէր գալիս, որ բարկացնի: Վերջ ի վերջո նա այնքան ջղայնացրեց կալանավորներին, որ երբ դուրս էր գալիս մեկուսարանից հսկիչի ուղեկցությամբ որևէ տեղ գնալու մոտենում էին նրան բարկացկոտ, արհամարհանքով ասում.

— Տո , չե՞ս ամաչում... Քու Անահիտի...

Մեկմեկ էլ խփում էին գլխին, բայց ձայն չէր հանում: Առհասարակ վախենում էր կալանավորներից:

Մի անգամ էլ իմ ներկայությամբ մոտեցավ նրան մի կալանավոր և ասաց ականջին իբր թե գաղտնի, որպես ընկերական խորհուրդ.

— Հերի՛ք է. ամոթ է, ահագին տղամարդ ես...

— Իյա՛, ի՞նչ կենեմ օր, — Գողի պես մի կողմ նայելով, պատասխանեց այդ մարդը. — Անա՛հիտ...

— Ձահրումա՛ր, — բարկացավ կալանավորը և բամփեց նրա գլխին: Մյուսները զվարթ հռհռացին, թքեցին ու հեռացան:

Ու անունը դրին «Անահիտ»:

Սիմուլյանտ էր նա, թե ոչ — դժվար է ասել: Սակայն իմ կարծիքն էլ այն էր, ինչ որ մյուս կալանավորներինը: Վստահության չէր ներշնչում դեպի իր անձնավորությունը բոշայի կերպարանքով ու տափակ, կեղտոտ գլխով այդ մարդը: Բայց ո՞վ իմանա: Մինչև իմ Ուղղիչ Տնից հեռանալը շաբաթը մի անգամ նրան քննելու էր գալիս մի բժիշկ, նա էլ, կարծեմ, ավելիշատ մեր կողմն էր թեքվում, քան ընդունում այդ

անհրապույր մարդու աննորմալությունը: Ի՞նչ որոշվեց վերջ ի վերջո — տեղեկություն չունեմ:

Սակայն մինչև հիմա էլ ես հաճախ հիշում եմ նրա կանչը — և դա ինձ միշտ մի տեսակ քստմնելի, անհաճո զգացմունք է պատճառում: Կարծես մի տեսակ կեղտոտ բանի ես քսվում, կամ լփռոտ, լորձունքոտ կենդանու...

Եվ հիմա էլ, երբ գրում եմ այս տողերը, ականջիս հնչում է նրա ձայնը.

— Անա՛-հի՛տ...

XXI. Վերջին օրերս Երևանի Ուղղիչ Տանը. Ասլան-բիձի տետրակները, Սուրենի պիեսը, «Նռան հատիկները» և երեք «խուժանները»-իմ երեք եղբայրները

Անձնական տեսակետից Երևանի ուղղիչ տանն անցկացրած իմ վերջին օրերը նման էին մի ծանր, աներևակայելի կոշմարի: Իմ հոգեկան կացության տեսակետից: Երևակայեցեք, որ այնքան էլ ուրախ մտքեր չեն կարող շրջագայել մարդուս ուղեղում, երբ նա իրերի այս կամ այն բերումով ընկած է Ուղղիչ Տուն, փակված չորս պատերի մեջ, ստիպված է ապրել լյումպեն ռեցիդիվիստների շրջանում, իսկ Ուղղիչ Տնից մի քանի քայլ անդին երևում են գերեզմանատան քարերը, ուր մի փոքրիկ հողաբլրի ներքո հանգչում է քո ամենասիրած մարդու, հերոսական բարեկամի, քո կնոջ, ընկերոջ աճյունը... Այո՛, ուրախ մտքեր և բարձր տրամադրություն մարդ չէր կարող ունենալ այդպիսի անձնական պայմաններում — և իմ վերջին օրերը Երևանի Ուղղիչ Տանը նման էին զարհուրելի կոշմարի...

Սակայն անձնական այդպիսի ծանր կացության, համարյա խելագարային այն մշուշի միջից ինձ այսօր պատկերանում են մի քանի դեմքեր ու դեպքեր, որ Ուղղիչ Տանն անցկացրած իմ վերջին օրերի ամենացայտուն հիշողություններն են, անմոռանալի դեպքերը: Դրանց մասին է ահա, որ ես կուզեի գրել իմ հիշողությունների գրքի այս վերջին հատվածում:

Մի անգամ, Ուղղիչ Տնից դուրս գալուցս մի քանի օր առաջ, գլխիկոր շրջում էի քրեական կորպուսի միջանցքում, երբ իմ դեմ ելավ, ծառացավ իր ամբողջ վիթխարի հասակով — Ասլան-բիձեն: Եթե հիշում եք՝ սա այն, արդեն բավականին ծերացած, բանդիտն էր, որ սարերն էր ընկել իր զարմանալի կնոջ զարմանալի սիրո շնորհիվ, մի քանի տարի ղաչաղության արել և ապա ընկել Ուղղիչ Տուն, ուր և գրագետ էր դարձել — այդ գյուղացի բանդիտը: Նա արդեն ծերացած, անշառ մարդ էր — և Կենտգործկոմը նրան ներումն էր շնորհել:

Հնգե՛ր Չարյանց, մին խնդիրք ունեմ ձեզանից,— ասաց ինձ Ասլան-բիձեն ու խեղճ, նվաստացած ժպտաց:

— Ասա՛, Ասլան-բիձա:

Այդտեղ ես նկատեցի, որ Ասլան-բիձեն ձեռին բռնած ունի մի քանի տետրակներ, որոնց և նայում է շուտ-շուտ:

— Ես մին հալիվոր մարդ եմ, — ասաց Ասլան-բիձեն,- ո՛չ ժառանգ ունեմ, ո՛չ գերդաստան... Հենց ե՛ս եմ որ կամ էս աշխարքումս... Հի՛նչ որ ունեմ — հենց է՛ս ա որ կա ինձանից ժառանգութեն...

Եվ Ասլան-բիձեն մեկնեց ինձ իր տետրակները:

— Ըստի ես գրել եմ իմ պատմութենը...Հենց ամբողջը գրել եմ հի՛նչ որ կա՝ գրել եմ... Ձեզանից խնդրվում եմ պահեք էս ինձանից ժառանգութեն, որ Ասլան-բիձի անումը էս աշխարքից չկորչի... Հենց ե՛ս եմ ու էդ — էլ ո՛չ ժառանգ ունեմ, ո՛չ հարստութին...

Նայեցի Ասլան-բիձին՝ լացի պես, մի բան խոնավացրել էր աչքերը: Երևում էր, որ թեկուզ ազատվում է, բայց տխուր է այդ մարդը, այդ հալիվոր բանդիտը,— մահո՛ւ չափ տխուր:

— Լա՛վ, Ասլան-բիձա, տո՛ւր ինձ՝ կպահեմ քո ժառանգությունը,— ասացի ես Ասլան-բիձին, և նա տվեց ինձ իր տետրակները: Դեղին կողերով, մի փոքր խունացած, վեց հատ տետրակներ էին դրանք՝ բոլորն էլ խիտ լցրած ծուռ, խառը, բարակ գրերով, որոնք հիշեցնում էին նոր սովորող երեխայի գրեր:

— Շա՛տ շնորհակալ եմ քեզանից,— ասաց Ասլան–բիձեն. — դե, մնացեք բարով...

Եվ Ասլան-բիձեն սեղմեց իմ ձեռքը, կարոտով մի հայացք գցեց իր տետրակներին ու գնաց:

Երևանի Ուղղիչ Տան կուլտբաժնին ես հանձնեցի դեղին, մի փոքր խունացած, մանկական գրերով լցրած այդ տետրակները, որոնց մեջ Ասլան-բիձեն գրել էր իր կյանքի պատմությունը: Եթե ձեզանից մեկն ու մեկը գնա Երևանի Ուղղիչ Տունը և մտնի կուլտբաժին՝ այնտեղ ձեզ ցույց կտրվեն Ասլան-բիձի այդ դեղին, խունացած տետրակները:

Այդ օրերին էր կրկին, երբ մի անգամ բակում բռնեց ինձ Սուրենը, այդ բարակ, գունատ երիտասարդը, Նիկոլի ու Խաչիկի ընկերը: Ամոթխած ժպիտը դեմքին՝ նա ևս պարզեց ինձ բարակ մի տետրակ և, մի կողմ նայելով, ասաց.

— Սա իմ պիեսան է, այստեղ եմ գրել: Եթե ժամանակ կունենաք՝ կարդացեք:

Ու առանց պատասխանի սպասելու՝ հեռացավ:

Դա կապույտ կողով մի աշակերտական տետրակ էր, ընդամենը տաս-տասներկու թերթից: Շապիկի վրա գրված էր պիեսի անունը և հեղինակի ազգանունը: Բաց արի և սկսեցի կարդալ: Գործող անձինք երկուսն էին՝ Ֆրիդրիխը և Ֆրանցը: Դիալոգն սկսվում էր նրանից, որ նրանք, այդ երկու ավազակները, Ֆրիդրիխն ու Ֆրանցը մեղադրում էին իրար լավ ընկերներ չլինելու և իրար դավաճանելու համար: Ապա պարզվում էր, որ նրանք մի շատ հաջող «գործ» են կատարել և այժմ չգիտեն՝ ո՞նց բաժանեն ավարը, որպեսզի երկուսն էլ խաբած չլինեն իրար: Պիեսը վերջանում էր նրանով, որ վերջ ի վերջո բավականին հասարակ ձևով երկուսն էլ թունավորում են իրար — ինչպես այդ լինում է բոլոր լուբոկային-բարոյախոսական լեգենդներում ու պատմվածքներում: Սակայն ի պատիվ Սուրենի հարկավոր էր ասել, որ դիալոգները սարքած էին բավականին սահուն — թեկուզ այդ, մյուս կողմից, կարող էր և ապացույց ծառայել, որ հեղինակին բավականին ծանոթ է Ֆրիդրիխի ու Ֆրանցի հոգեբանությունը...

Բայց և այնպես այդ գունատ երիտասարդը իր գունատ տետրակով իմ վրա բավականին հաճելի, մի փոքր լիրիկական տպավորություն թողեց: Եվ ես երբևիցե դժվար թե մոռանամ այդ գունատ մորֆինիստի դեմքը ու գունատ այդ տետրը, որի մեջ միամիտ ջրի ու երշիկի միջոցով միաժամանակ թունավորում էին իրար կեղծ կլասիկ ավազակներ Ֆրիդրիխն ու Ֆրանցը...

Տետրակը տալուց երկու որ անց՝ կրկին ինձ մոտ եկավ Սուրենը, բայց ո՛չ տետրակը հետ վերցնելու գործով:

— Ընկե՛ր Չարենց, — ասաց նա ինձ միշտ մի կողմ նայելով ու ամոթխած, զուսպ ժպտալով. — ձեզ մի խնդրանք ունեմ՝ խնդրում եմ չմերժեք...

— Ասա՛, Սուրեն:

-Խնդրում եմ խնդրեք պետի՛ն, որ թույլ տա ինձ ու Խաչիկին՝ գնանք Էջմիածին Նիկոլի հետ աշխատելու: Գնանք մանտյորություն սովորենք:

— Լա՛վ, կխնդրեմ: Կարծում եմ կթույլատրի, եթե խոսք եք տալիս, որ ձեզ լավ կպահեք:

— Ինչ եք ասում, ընկեր Չարե՛նց, — ասաց նա լուրջ ու տխուր. — այսպես որ մնացինք ի՞նչ է լինելու մեր վերջը... Հիմա իմ նպատակն է մանտյորություն սովորել ու ապա, ազատվելուց հետո, գնալ Լենինական այդ գործով պարապվելու... Մորս էլ հետս կտանեմ ու միասին կապրենք...

Գունատ դեմքին կարոտանք ու թախիծ կար, երբ նա ասում էր այդ խոսքերը: Այդպիսի թախիծ է լինում երիտասարդ թոքախտավորների դեմքին, երբ նրանք սանատորիաների պատշգամբներում նստած՝ երազում են
գարուն, կյանք, հնչուն, գարնանային աղջիկներ ու գարնանային արև..

Մի քանի օր անց Սուրենը և Խաչիկը գնացին Էջմիածին աշխատելու: Այնտեղ աշխատում էր մեր կալանավոր-մանտյորների արտելը, և մենք շուտով լսեցինք, որ Սուրենն ու Խաչիկը ցույցեն տալիս մանտյորական ամենայն եռանդ և ընդունակություններ:

Վերջին օրերին երեկոները հաճախ մեր կամերան էր գալիս Գուրգեն անունով մի կալանավոր: Լենինականցի էր, իսկական հին գյումրեցի, հարբեցող, բայց առաջնակարգ վարպետ ոսկերիչ:

Ուղղիչ Տանը նա ոսկերչական արհեստանոց ուներ և ամբողջ ժամանակ աշխատում էր արհեստանոցում: Դատապարտված էր, պատահական սպանության համար, տասը տարվա կալանքի: Սկզբի անգամից չգիտեմ ինչու նա շահեց իմ համակրությունը: Գյումրվա լոթիական տրադիցիաներով մեծացած, էապես շատ ընկերական ու աշխատասեր մարդ էր, որ դժբախտության էր հասել բացառապես հարբեցողության շնորհիվ: 30 — 35 տարեկան, միջահասակ, աշխատանքից այրված դեմքով, մեքենայով խուզած մազերով: Ուներ խոսելու ու պատմելու չափազանց պատկերավոր, յուրօրինակ ձև:

Մի անգամ երեկոյան ինչ-որ նման նյութերի շուրջը դարձող զրույցի ժամանակ մեր կալանավորներից մեկը, որի երեխան հենց այդ պահին մահացել էր գյուղում, այն միտքը հայտնեց, թե երբ ազատվի ու գնա գյուղ՝ պետք է բաց անել տա գերեզմանը, որ մի անգամ նայի, կարոտն առնի:

— Էդի բանը չանե՛ս, մեռնի՛ս էլ՝ չենե՛ս, — անհանգիստ վեր թռչելով տեղից և շուռ գալով նրա կողմը, վախեցած բացականչեց Գուրգենը. — Էդև հիվանդություն գուքա վրեդ՝ էլ ազատվելիք չկա...

— Ո՞նց թե, — հարցրեց զարմացած:

— Հըբը՞ ես իշտը էդպես դարձա, երբ օր հերս մեռավ... Հորս շատ կսիրեի՝ ինիկ ամենաթանկ բանն էր ընձի համար: Մի անգամ հարբած գնացի, բացի գերեզմանը՝ իդտից հետև վրես սեր ընկավ, էլ ձեռք քաշել չկրցա... Իդիկ տեսակըմ սեր է, մեռելի սեր... Գիշերները կերթայի գերեզմնները կքնեի: Թեզ-թեզ կբանայի գերեզմանը՝ կաշեի... Իդիկ գիտե՞ս ինչդ կեղնի...

— Ի՞նչդ...

— Մեռնելեն իրեք շաբաթ էդև օր էրթաս բանաս՝ վրեն ճերմակ սալանդոստի պես բան կեղնի էկած. իդիկ պիտի հանես, որ նոր էրևա էրեսը... էրեսն էլ լխկած կեղնի՝ իչըղ օր մեջը ջուր լցած: Ես էնպես սեր ունեի աշելու, որ հեչ բան չէր օգնե: Երկու օր օր չաշեի՝ խելռածի պես կեղնեի... Հնգերներուս հետը դահուլ-զուռնով կերթայի գերեզմընները՝ կբանայի գուլայի... էդև օր ձեռք քաշեմ իդի բանեն՝ վրեն քար քաշել տվի, հըմը էլի չօգնեց: Հիմի էլ կողքեն կփորեի՝ կհանեի: Մի անգամ էլ փորի, գլուխը գուզեի քիչըմ առաջ քաշեմ՝ պոկվավ, ձեռքս մնաց... Հանի դրի քարին... Մեջեն — նռի հատիկները գիտե՞ս — էդպես կարմիր ճիճուներ թափան... Ինչըղ որ նռի հատիկ... Իշտը իդո՛նք են մեռելներուն ուտողը...

Սարսափած մենք նայում էինք Գուրգենին, և մեզ զարհուրելի զառանցանք էր թվում նրա այդ կոշմարային պատմությունը: Մեռելներին, մանավանդ սիրելի մեռելներին, մենք սովորել ենք ու սիրում ենք պատկերացնել լուսավոր, անմարմին ու սրբացած, ինչպես նրանց հիշատակը: Նույնիսկ այնտեղ, դագաղում՝ մենք պատկերացնում ենք նրանց ննջած խաղաղ, եթերային քնով՝ դեմքերին տխրություն ու ժպիտ, հրաժեշտի խաղաղ տխրություն ու հեռացման իրիկնային ժպիտ: Մարդկային այս սրբազան նախապաշարմունքի նվիրական լեգենդն էր ոտնակոխ անում իր կոշմարային ռեալիզմով այդ քիմերային Գուրգենը — և դա թողնում էր ծայր աստիճանի ծանր, ճնշող, քստմնելի տպավորություն...

Այդ գիշեր մինչև լույս ես չքնեցի և անհանգիստ շրջում էի քրեական կորպուսի վերի միջանցքում, և կյանքը, աշխարհը, երկինքն ու արեգակը, այն ամենը, ինչ որ պայծառ է ու գեղեցիկ մեր այս վայրկենական կյանքում — ինձ թվում էր ճերմակ, քստմնելի, խունացած «սալանդոստ»՝ իջած «նռան հատիկների» նման կարմիր ճիճուներով վխտացող իմ ուղեղի վրա...

Վերջապես վերջին հիշողությունը, որ մնացել է իմ մտքում այդ վերջին օրերից այն երեք չարաճճի, ցրտից այրված դեմքերով ու սև, պսպղուն աչքերով «խուժաններն» են, որոնց մի ցուրտ երեկո կայարանի ճանապարհին հավաքել էր մեր պետը, դրել կառք և բերել Ուղղիչ Տուն: Երբ ես գնացի այդ «խուժաններին» տեսնելու՝ նրանք արդեն քնել էին գրասենյակում, վառարանի մոտ, և նրանց փոքրիկ, կեղտոտ, բայց չափազանց հաճելի դեմքերին արդեն խաղաղ հանգստանում էր փողոցի ցրտից հետո տաք վառարանի պարգևված անհուն երանությունը:

Մեծ ուրախություն և հաճույք պատճառեցին Ուղղիչ Տան բնակչությանը այդ երեք «խուժանները»: Նրանք երեքն էլ ութից-տաս տարեկան, բայց համարձակ, արդեն կյանքի հսկայական փորձ ունեցող, խելքները գլխներին «տղամարդիկ» էին, որ եթե փողոցում մնային՝ պիտի դառնային անշուշտ գողեր ու ռեցիդիվիստներ: Վալոյին, Խուժան-Խաչոյին, Մաչոյին ու Հյուսեինին

«հաջորդողներն» էին դրանք, հանցագործ աշխարհի կադրերը լրացնելու եկող «պիոներները»...

Երբ առավոտյան ես նրանց նորից տեսա հարցրի.

— Էս ի՞նչ տեղ եք ընկել, գիտե՞ք, թե չէ:

Երկուսը, հասկացող մարդկանց հեգնական ժպիտով, վերից վար ժպտացին, իսկ մեկը, ամենափոքրը, պատասխանեց.

— Տուրմե՛ն է…

Այդ օրը նրանց նոր շորեր հագցրին և տեղափոխեցին Ուղղիչ Տան խոզաբուծարանը, որ գտնվում էր մեր շենքի դիմացը: Հին կալանավորական շորերից մի գիշերվա ընթացքում փոքրացրին ու ծիծաղելի–խոնթոշ զգեստներ կտրեցին նրանց համար Անուշն ու Մարգարիտը: Նրանք ապրում էին ծառայողների սենյակի մի անկյունում և գոհ էին իրենց վիճակից: Պետը հարց էր հարուցել, որպեսզի նրանց մանկատուն ընդունեն, բայց գործը ձգձգվում էր: Ես նրանց այդտեղ էլ թողի, այդ երեք փոքրիկ «խուժաններին» Ուղղիչ Տան վերջին օրերիս երեք այդ իմ փոքրիկ ընկերներին — իմ երեք եղբայրներին...

1927